

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐԻ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

**The National Academy of Sciences of the Republic of Armenia
H.Acharian Institute of Language**

**Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна**

MERI A. SARGSYAN

**GENERAL LINGUISTIC VIEWS OF
G. JAHUKYAN**

МЕРИ А. САРГСЯН

**ОБЩЕЛИНГВИСТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ
Г. ДЖАУКЯНА**

Yerevan – 2017 – Ереван

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐԻ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԱՍՈՂԻԿ
2017

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22
Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լ. Ս. Հովսեփյան
Գրախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան
Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ.Լ. Կատվալյան

Սարգսյան Մերի Արթուրի

Ս 259 Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներ/
Մ. Ա. Սարգսյան.- Եր.: Ասողիկ, 2017.- 276 էջ:

Գիրքը նվիրված է Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական ժառանգությանը, նրա հայացքների ձևավորմանը և զարգացմանը, նրա դերին համաշխարհային լեզվաբանության պատմության մեջ: Լինելով Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական ժառանգության համակողմանի գնահատման և ներկայացման առաջին փորձը՝ սույն աշխատանքը կարող է նպաստել Գ. Ջահուկյանի գիտնականի մասին ընդհանուր պատկերացում կազմելուն: Այն կարող է օգտակար լինել թե՛ Գ. Ջահուկյանի գիտական ժառանգությամբ զբաղվողների, թե՛ առհասարակ ընդհանուր և հայ լեզվաբանության պատմությամբ զբաղվողների, ինչպես նաև մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22

ISBN 978-9939-50-381-3

©Սարգսյան Մ. Ա., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....7

ԳԼՈՒԽ 1

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ.....14

Ա. Լեզվաբանության պատմության շրջանաբաժանման հարցը.....15

Բ. Լեզվի բնույթի, լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցը.....28

Գ. Լեզվաբանության կառուցվածքի հարցը.....49

1. Լեզվաբանական գիտակարգերի հարցը.....56

2. Լեզվաբանության բաժինների և լեզվի մակարդակների հարցը.....69

ԳԼՈՒԽ 2

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԽՆԴԻՐԸ. ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....91

Ա. Կադապարի ըմբռնումը լեզվաբանության մեջ.....99

Բ. Կադապարի ջահուկյանական ըմբռնումը.....115

Գ. Համընդհանուր լեզվաբանական կադապարը համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ.....140

ԳԼՈՒԽ 3

ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ.....166

Ա. Հնչույթի ջահուկյանական ըմբռնումը.....166

Բ. Քերականական կարգի ջահուկյանական ըմբռնումը..172

1. Բայասեռի հարցը.....184

2. Տիպարի հարցը.....189

<i>Գ. Խոսքի մասերի դասակարգման հարցը.....</i>	<i>192</i>
<i>Դ. Ստորոգման հարցը</i>	<i>206</i>
<i>Ե. Շարույթի ըմբռնումը.....</i>	<i>211</i>

ԳԼՈՒԽ 4

ՏԵՐՄԻՆԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	217
<i>Ա. Տերմինաստեղծման ջահուկյանական սկզբունքները..</i>	<i>217</i>
<i>Բ. Նորաստեղծ տերմինների քննություն տարբեր դասակարգումներով.....</i>	<i>229</i>
<i>Գ. Գ. Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կադապարի տերմինաբանությունը.....</i>	<i>246</i>
SUMMARY	254
РЕЗЮМЕ.....	257
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	260
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	268

ԱՌԱՋԱԲԱՆ

20-րդ դարում լեզվաբանության պատմության մեջ շատ էական բացահայտումներ եղան, ասպարեզ եկան լեզվաբաններ, որոնք փոխեցին լեզվի մասին գիտության ընդհանուր պատկերը: Իր հոդվածներից մեկում Վ. Վինոգրադովը նշում է, որ կան երկու տիպի լեզվաբաններ: *Մտաջիների* համար հետազոտության էությունը առանձին լեզվաբանական կառույցների կերտումն է, որն արտացոլում է բազմաբնույթ լեզվական շինության մասնավոր դրսևորումները: Լեզվաբանության ընդհանուր խնդիրները այսպիսի լեզվաբանների համար ծառայում են լոկ որպես փայտամած իրենց շինությունը կառուցելու համար: Նույնիսկ այն ընդհանուր տեսական եզրահանգումները, որ ի հայտ են գալիս աշխատանքի արդյունքում որպես հասուն պտուղներ, նրանց գիտական ձգտումների համար ցանկալի նպատակներ չեն: *Երկրորդ տիպի* լեզվաբանների համար լեզվաբանության ընդհանուր խնդիրները միշտ առաջնային դեր են ունենում: Որքան էլ նրանք խոր ուսումնասիրեն այս կամ այն լեզուն կամ առանձին լեզվական փաստը, այդ ամենը նրանք դիտարկում են լեզվի ընդհանուր տեսության դիտակետից¹: Լեզվաբանների երկրորդ խմբի ներկայացուցիչ պետք է համարել Գ. Ջահուկյանին: Նա մեծ ուշադրություն է դարձրել տեսական նշանակություն և կարևորու-

¹ Ст' у В. Виноградов, Памяти академика Льва Владимировича Щербы (1880-1944): Сборник статей. Л.: Изд-во Ленинградского гос. ун-та им. А. А. Жданова, Л., 1951, էջ 31-62:

յուն ունեցող այնպիսի խնդիրների ու հարցերի, առանց որոնց հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել լեզվի կառուցվածքի, գործառության և զարգացման մասին: Այս բոլոր հարցերին, բնականաբար, անդրադարձել են նաև այլ լեզվաբաններ, սակայն Գ. Ջահուկյանը իր լեզվաբանական տեսության դիրքերից է քննում այդ հարցերը՝ տալով դրանց բոլորովին ինքնատիպ լուծումներ:

Գ. Ջահուկյանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, որ թեև մասամբ ուսումնասիրված է, սակայն լիովին չբացահայտված դեռ շատ հարցեր կան: Նկատելի է, որ վերջին ժամանակներում լեզվաբանական զանազան հարցերի ջահուկյանական մեկնաբանություններն ու ըմբռնումները նոր հետևորդներ են գտնում: Վստահաբար կարելի է ասել, որ Ջահուկյանի աշխատությունները մեծ ազդեցություն են ունեցել իր ժամանակակիցների և հետագա սերունդների վրա: Այդ են վկայում հեղինակի որոշ ըմբռնումների արտացոլումները ժամանակակից լեզվաբանների ուսումնասիրություններում, ինչպես նաև բազմաթիվ գրախոսությունները՝ նվիրված նրա զանազան աշխատություններին և հոդվածներին²: Գ. Ջահուկյանի գիտական ժառանգությունը մեծ հետաքրքրություն է

² Տե՛ս Մ. Խամոյան, *Новое в армянском и общем языкознании*, «Պատմաբանասիրական հանդես», 1979, հ. 4, էջ 278-281; Ю. Степанов, Э. Туманян, Рец. на кн.: Джаукян Г. Б. *Общее и армянское языкознание*, “Серия литературы и языка”, т. 39, н. 2, 1980, с. 174-177; Պետրոսյան Հ., Գրախոսություն. Գ. Բ. Ջահուկյան, *Լեզվաբանության պատմություն, հատ. I, Երևան, 1960, 635 էջ, II հատոր, Երևան, 1962, 603 էջ*, «Պատմաբանասիրական հանդես», 1964, հ. 4, էջ 239-242; А. Мовсесян, Рец. на кн.: Джаукян Г., *История языкознания*, т. 1-2, Ер., 1960-1962, т. 1, 1960, 635 с.; т. 2, 1962, 602 с., “Вопросы языкознания”, 1965, № 5, с. 133-137.

գտել հայ լեզվաբանների շրջանում, սակայն ցավալիորեն պետք է նշել, որ արտասահմանում Ջահուկյանի անունը դեռևս լայնորեն հայտնի չէ, թեև հեղինակը աշխատություններ ունի թե՛ ռուսերեն, թե՛ անգլերեն: Չնայած հեղինակի աշխատություններն ուսումնասիրվել են, կազմվել է նրա կենսամատենագիտությունը³, որոշ հետազոտողներ անդրադարձել են լեզվական այս կամ այն խնդրի ջահուկյանական մեկնաբանություններին, սակայն ընդհանուր լեզվաբանական տեսակետից շատ ու շատ հարցեր մնացել են ըստ պատշաճի չուսումնասիրված: Բացի այդ՝ գրեթե անդրադարձ չի եղել հեղինակի տերմինակերտման առանձնահատկություններին:

Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները կարևորվում են ոչ միայն զուտ տեսական հարցերի արծարծման, այլև լեզվաբանության պատմական զարգացման տեսակետից: Ջահուկյանը այն հայ լեզվաբաններից էր, որ առաջ քաշեց լեզվաբանական նոր մեթոդներ, մշակեց լեզվի ուսումնասիրության նոր հայեցակարգ և քննադատաբար ներկայացրեց կառուցվածքային լեզվաբանության որոշ ներկայացուցիչների աշխատությունները:

Գ. Ջահուկյանն իր ժամանակի լավագույն լեզվաբաններից էր, տիրապետում էր շատ լեզուների, հրաշալի տեղյակ էր թե՛ նախորդող, թե՛ իրեն ժամանակակից լեզվաբանների և հետազո-

³ Տե՛ս «Գևորգ Բեգլարի Ջահուկյան», Նյութեր ՀՀ գիտնականների կենսամատենագիտության, հ. 58, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 71 էջ:

տողների ձեռքբերումներին, նոր ուսմունքներին: Նրա հետազոտության շրջանակները շատ լայն էին. պետք է նշել, որ հեղինակը կարողանում էր ճշգրիտ ձևով օգտվել իր նախորդների ձեռքբերումներից, գտնել այն էականը, որը կարող էր մշակման արդյունքում նոր պտուղներ տալ: Հետևաբար՝ երբեմն դժվար է լինում հստակ որոշել՝ տվյալ ձեռքբերումը լիովին հեղինակի մտքի և գիտական պրպտումների արդյունք էր, թե՛ մասամբ: Հեղինակի աշխատությունների տեսական հարցադրումների մեջ ընդհանուր շատ բան կա նորագույն լեզվաբանության որոշ դրույթների հետ, բայց Ջահուկյանի պնդմամբ դրանք իր իսկ խորհրդածությունների արդյունքն են:

Նոր գաղափարներով ու մտքերով հարուստ են հեղինակի գրեթե բոլոր աշխատությունները: Ամենուր հեղինակը հանդես է գալիս նորամուծություններով՝ թե՛ նոր հարցեր առաջ քաշելիս, թե՛ տարբեր խնդիրներ նորովի ներկայացնելիս, թե՛ տերմինաստեղծման առումով: Իր ինքնատիպ մտածողության շնորհիվ հեղինակը միշտ հանգել է նոր մտքերի և լեզվաբանական խնդիրների լուծման նոր ճանապարհների, երբեմն էլ լեզվական երևույթների ներկայացման ու մեկնաբանության նոր միջոցների և տարբերակների:

Ընդհանուր լեզվաբանական և տեսական զանազան հարցեր Գ. Ջահուկյանի ուշադրության կենտրոնում եղել են՝ սկսած իր գիտական գործունեության սկզբնական շրջանից: Այդ են վկայում հեղինակի առաջին հոդվածները, վաղ շրջանի հետաքրքրությունների և դասախոսությունների թեմատիկան: Իր բոլոր

լեզվաբանական նախաձեռնություններում հեղինակը ձգտել է լեզվական նյութի ինքնուրույն, խոր և համակողմանի ուսումնասիրության: Հետևաբար՝ Ջահուկյանը չի սահմանափակվել իր ներկայացրած նախնական գաղափարներով, այլ իր ողջ գիտական գործունեության ընթացքում զարգացրել, հարստացրել ու կատարելագործել է իր գաղափարները, սկզբունքներն ու հայացքները: Հատկապես հիշատակության արժանի են լեզվաբանության պատմության շրջանաբաժանման, լեզվական մակարդակների, կադապարման մեթոդի, լեզվի տեսության հարցերը, որոնք հեղինակի աշխատություններում ներկայանում են աստիճանական զարգացմամբ:

Լեզվական կադապարների բնույթի, ընդհանրական կարգերի, լեզվաբանության կառուցվածքի վերաբերյալ մի շարք հարցեր Ջահուկյանին զբաղեցրել և շատ կողմերով նրա մտքում ձևավորվել էին վաղուց՝ դեռևս ուսանողական շրջանից սկսած՝ 1930-ական թվականների վերջերից: Եվ այդ ժամանակաշրջանից էլ Ջահուկյանը աշխատում էր լեզվաբանական նկարագրության ընդհանուր և միասնական սկզբունքների մշակման ուղղությամբ: Նրա նպատակն էր միևնույն սկզբունքներից ելնելով, մի քանի պարզ գործողությամբ ընդգրկել լեզվի ամբողջ համակարգը՝ և՛ արտահայտության պլանը, և՛ բովանդակության պլանը, և՛ դրանց փոխհարաբերությունը: Ընդհանրական տեսություն ստեղծելու, լեզվի բոլոր մակարդակները մեկ ընդհանուր սկզբունքով դիտարկելու ցանկություն ունեցել են շատ լեզվաբաններ (Ն. Խոմսկի, Լ. Ելմսլև), սակայն նրանցից ոչ մեկը չկարողացավ հասնել

լիարժեք ընդհանրության, կամ այդ տեսությունը մնաց տեսական մակարդակում: Թերևս միայն Ջահուկյանն էր, որ ոչ միայն մշակեց տեսության սկզբունքները, այլև հանդես եկավ դրա գործնական կիրառումով (մասնակիորեն): Իր համընդհանուր լեզվաբանական կադապարի ուսմունքը կիրառեց հնչույթաբանության նկատմամբ, քանի որ, ինչպես նշում է հեղինակը, լիարժեք ընդհանրացման կարելի է հասնել հենց այս ոլորտում: Հետագայում Ջահուկյանը իր տեսությունը կիրառեց ժամանակակից հայերենի բառակազմության և իմաստաբանության նկատմամբ: Անշուշտ, տեսության կիրառման ոլորտը այսքանով չի սահմանափակվել. Ջահուկյանն իր ընդհանուր լեզվաբանական հայացքները մշակել, ըմբռնումները ներկայացրել է հենց համընդհանուր լեզվաբանական կադապարի ուսմունքի ազդեցությամբ: Այսինքն՝ ցանկացած լեզվական և լեզվաբանական խնդիր հեղինակը լուծել է ըստ համընդհանուր լեզվաբանական կադապարի ընձեռած հնարավորություններին:

Ձեռնարկելով անվանի լեզվաբանի ընդհանուր լեզվաբանական հայացքների ուսումնասիրությունը՝ նկատի ենք ունեցել այն ծառայությունները, որ մատուցել է Գ. Ջահուկյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը՝ ընդհանուր լեզվաբանական զանազան հարցերի գիտական և ճշգրիտ լուծումներ տալու բնագավառում: Այսօր էլ գիտական վեճերի և տեսակետների բախման առարկա են դառնում ընդհանուր լեզվաբանական այնպիսի հարցեր, որոնցից շատերի գիտական և սպառնիչ պատասխանները տվել է Գ. Ջահուկյանը:

Սույն մենագրությունը նվիրված է հեղինակի ընդհանուր լեզվաբանական ժառանգությանը, նրա հայացքների ձևավորմանը և զարգացմանը, նրա ներդրումին համաշխարհային լեզվաբանության պատմության մեջ: Մեր նպատակն է ներկայացնել Գ. Ջահուկյան գիտնականի դերը ընդհանուր լեզվաբանական որոշ հարցերի կանոնակարգման և հստակեցման, լեզվաբանական նոր սկզբունքների և տեսության առաջադրման և կիրառման, լեզվաբանական մեթոդների մշակման և մի շարք այլ հարցեր նորովի ներկայացնելու ասպարեզում:

Սույն ուսումնասիրությունն ըստ էության առաջին փորձն է Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքների արժևորման և գիտական շրջանառության մեջ դնելու բնագավառում: Շատերն են անդրադարձել Գ. Ջահուկյանի գիտական ժառանգությանը, սակայն պետք է նշել, որ հեղինակի ընդհանուր լեզվաբանական հայացքները համակողմանի և ամբողջական ուսումնասիրության չեն ենթարկվել:

ԳԼՈՒԽ 1

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Լեզվաբանության տեսության առանցքային հարցերը գրեթե միշտ ունեցել են արդիական հնչեղություն: Այս բնագավառում մեծ ներդրում ունի Գ. Ջահուկյանը: Նա ուսումնասիրել է լեզվաբանական տեսության այնպիսի հարցեր, ինչպիսիք են լեզվի և մտածողության, տրամաբանական և լեզվաբանական կարգերի (կատեգորիաների), լեզվական և արտալեզվական իրակությունների փոխհարաբերությունները, լեզվական մակարդակների դասակարգումը, լեզվական միավորների ու դրանց տարբերակիչ հատկանիշների առանձնահատկությունները, լեզվի ուսումնասիրության մեթոդներն ու հայեցակարգերը և այլն:

Սույն գլխում անդրադարձել ենք անվանի լեզվաբանի այն ձեռքբերումներին, որոնք կատարվել են հիշյալ հարցերին գիտական և սպառիչ պատասխաններ տալու բնագավառում: Առավել ուշադրություն ենք դարձրել լեզվաբանության տեսության որոշ հարցերի ջահուկյանական մեկնաբանություններին՝ միաժամանակ նկատի ունենալով նրան ժամանակակից և հետագա լեզվաբանական մտքի ձեռքբերումները:

Ա. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Լեզվաբանության պատմության, ինչպես նաև դրա շրջանաբաժանման խնդիրը լեզվաբանության տեսության մեջ (անդրլեզվաբանության մեջ) առանցքային դեր ունի: Շրջանաբաժանումը որոշակի փաստերի պատմական դասակարգումն է: Հետազոտողը նյութի համաժամանակյա դիտարկման դեպքում առանձնացնում է որոշակի համակարգեր, այդ համակարգերի մեջ էլ՝ ենթահամակարգեր, նյութի դիտարկման տարաժամանակյա կամ պատմական մոտեցման դեպքում առանձնացվում են որոշակի շրջաններ, այնուհետև այդ շրջանների մեջ՝ ենթաշրջաններ, ապա նյութը դասակարգվում է ըստ այդ շրջանների և ենթաշրջանների, ներկայացվում են դրանց փոխհարաբերություններն ու փոխադարձ անցումները: Լեզվաբանության պատմության խոր իմացությունը հնարավորություն է տալիս խուսափելու հնարավոր սխալներից, ճիշտ կողմնորոշվելու գիտության ասպարեզում և գնահատելու և արժևորելու անցյալի ձեռքբերումները: Գ. Ջահուկյանի խորին համոզմամբ լեզվաբանության պատմաբանի գլխավոր խնդիրներից մեկը գիտական շրջանաբաժանման և նյութի սիստեմավորման ռացիոնալ եղանակների մշակումն է: Այդ է պատճառը, որ հեղինակը իր կոթողային աշխատություններից մեկի՝ «*Լեզվաբանության պատմության*» առաջին հատորի ներածության մեջ նախ և առաջ անդրադարձել է հենց այս հարցերի քննությանը: Հետագայում,

վերանայելով այս աշխատության մեջ ներկայացվող որոշ սկզբունքներ, Ջահուկյանը շրջանաբաժանման խնդրին անդրադառնում է նաև իր մեկ այլ, ոչ պակաս արժեքավոր «*Общее и армянское языкознание*» աշխատության մեջ:

Պետք է նշել, որ «*Լեզվաբանության պատմություն*» աշխատությունը արժեքավոր դեր ունի լեզվաբանության պատմության և տեսության բնագավառում նախ ներկայացվող նյութի լայն ընդգրկմամբ, ապա վերլուծության նոր եղանակներով, առաջադրվող նոր մեթոդներով ու հարցերով:

Ինչպես նշեցինք, աշխատության ներածության մեջ հեղինակն անդրադառնում է լեզվաբանության պատմության շրջանաբաժանման հարցերին: Հայտնի է, որ լեզվաբանության պատմությունը սովորաբար բաժանում են «*նախազիտական*» (մինչև 19-րդ դ.) և «*զիտական*» (19-րդ դարը և հետո) շրջանների: Այս ավանդական բաժանման համար հիմք է ծառայում այն փաստը, որ մինչև 19-րդ դարը լեզվաբանությունը որպես առանձին գիտություն չէր ձևավորվել, այլ գոյություն ուներ մասամբ քերականության ու բառարանագրության ձևով, մասամբ էլ՝ փիլիսոփայական, բանասիրական ու ճարտասանական ուսմունքների մեջ: Մինչդեռ 19-րդ դարում լեզվաբանության տարբեր բնագավառները միավորվում են որպես մեկ գիտություն: Այսինքն՝ այս երկու շրջանների սահմանազատման գլխավոր հիմքը 19-րդ դարում լեզվի նկատմամբ պատմական մոտեցման առաջացումն է⁴:

⁴ St' u http://homepages.tversu.ru/~ips/Hist_06.htm#6.1, И. П. Сусов, История языкознания, М., 2006:

Պետք է նշել սակայն, որ Գ. Ջահուկյանը վերոնշյալ ավանդական շրջանաբաժանումը որոշ առումներով թերի է համարում: Առաջին խնդիրը, որ մատնանշում է հեղինակը, վերաբերում է շրջանաբաժանման անվանումներին: Ջահուկյանը դրանք անհաջող է համարում՝ նշելով, որ թեև «նախագիտական» անվանումը դեռ չի նշանակում, թե մինչև 19-րդ դարը գիտական ուսումնասիրություն չի եղել, բայց, այնուամենայնիվ, այն կարող է թյուրիմացությունների տեղիք տալ:

Հաջորդ խնդիրը վերաբերում է նախորդ շրջանի ոչ լիարժեք արժևորմանը: Ինչպես գիտենք, ավանդական շրջանաբաժանումը գործածության մեջ է մտել 19-րդ դարում, իսկ այդ ժամանակ իշխող միակ գիտական հայեցակետը պատմականն էր, ուստի, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, նախորդ շրջանը թերի ներկայացնելու խնդիր կար: Մինչդեռ այդ շրջանում բավական լուրջ ուսումնասիրություններ են արվել, օր.՝ մշակվել են առանձին լեզուների ստատիկ վերլուծության սկզբունքները, կատարվել են նյութի սիստեմավորման ուղղությամբ աշխատանքներ, որոնք նույնիսկ օգտագործվել են հաջորդ շրջանի ներկայացուցիչների կողմից:

Գ. Ջահուկյանի կարծիքով հաջորդ խնդիրը կամ թերությունը նյութի բաշխումն է, որ վերաբերում է թե՛ ավանդական, թե՛ հետագայում առանձին հեղինակների ներկայացրած շրջանաբաժանումներին: Որոշ հետազոտողներ նյութը դասակարգում են ըստ լեզվաբանների, ոմանք՝ ըստ ուղղությունների, ոմանք՝ ըստ լեզվաբանության բաժինների ու գիտակարգերի, ոմանք էլ՝ ըստ

տվյալ շրջանում տիրապետող խնդիրների: Հետևաբար, եթե շրջանաբաժանման հարցում որոշակի միասնականություն կար, ապա նույնը չի կարելի ասել նյութի համակարգման մասին: Գ. Ջահուկյանի խորին համոզմամբ բոլոր դեպքերում էլ որոշակի սկզբունքներ չեն մշակվում: Ուստի հեղինակը իր առջև խնդիր էր դրել հաղթահարել վերոնշյալ աշխատությունների մեջ եղած այդ կարգի թերությունները և նյութը ներկայացնել միասնական գիտական սկզբունքներով: Եվ իրավամբ պետք է նշել, որ հեղինակն իր առջև դրված խնդիրներին լիարժեք լուծում է տվել: Ավելին, չի անտեսել ավանդական մոտեցումն ու ձևակերպումները՝ անհրաժեշտության դեպքում հենվելով դրանց վրա:

Ինչպես գիտության ցանկացած բնագավառում, այնպես էլ լեզվաբանության պատմության շրջանաբաժանման մեջ նյութի ներկայացման ձևը շատ կարևոր է: Այն պետք է օժտված լինի նյութի մատուցման ռացիոնալությամբ և միջոցների խնայողությամբ, բացի այդ՝ լեզվաբանին տրամադրի առավելագույն քանակի գիտելիք: *Առավելագույն քանակի գիտելիք* ասելով՝ Ջահուկյանը նկատի ունի մի քանի հանգամանք. ներկայացվող նյութը պետք է ընդգրկի հնարավոր բոլոր երկրներն ու ժողովուրդներին, ներկայացնի լեզվաբանության բոլոր բնագավառներում նրանց ունեցած ձեռքբերումների լիարժեք ու համակողմանի վերլուծությունը, ըստ հնարավորին լիարժեքորեն բացահայտի լեզվաբանության և գիտության մյուս ճյուղերի կապերը:

Նյութի մատուցման ռացիոնալություն և միջոցների խնայողություն ասելով՝ առաջին հերթին նկատի է առնվում

պատմականորեն և տրամաբանորեն հիմնավորված, հստակ շրջանաբաժանումը, ինչպես նաև դասակարգման միասնական սկզբունքների մշակումը և մատուցվող նյութի ռացիոնալ բաշխումը:

Լեզվաբանության պատմության շրջանաբաժանման միասնական սկզբունք և նյութի սիստեմավորման ռացիոնալ եղանակներ մշակելու համար Ջահուկյանը հաշվի է առնում այն խնդիրները, որոնք առնչվում են այդ բնագավառին: Դրանք նա քննում է երկու խմբերում⁵.

1. *լեզվաբանության տեսության (կոնցեպցիայի) խնդիրները*. այս խմբում ընդգրկվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են լեզվի բնույթին, ծագմանն ու գործառնանքը, այլ երևույթների հետ լեզվի ունեցած հարաբերությանը, ինչպես նաև այլ գիտությունների շարքում լեզուն ուսումնասիրող գիտության գրաված տեղի հարցերը,

2. *լեզվաբանական մեթոդի խնդիրները*. այս խմբում քննում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են լեզվի նկատմամբ ունեցած մոտեցմանը, լեզվի ուսումնասիրության եղանակներին, լեզվական նյութի սիստեմավորմանը, լեզվական գիտակարգերի ու լեզվաբանության բաժինների առանձնացմանն ու խմբավորմանը:

Պետք է նշել, որ լեզվաբանությունը, ինչպես գիտության մյուս բնագավառները, հասարակության որոշ կարգի պահանջումների (լեզու սովորելու, կիրառելու, ուսումնասիրելու և այլն) բավարարման նպատակ ունի: Լեզվաբանության ուսումնասի-

⁵Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1960, էջ XXI:

րության առարկան մարդկային լեզուն է, որը Ջահուկյանն իրավացիորեն համարում է բազմապլանային երևույթ: Իսկ ինչպես գիտենք, մարդկային գիտելիքներն առաջին հերթին դրսևորվում են լեզվի միջոցով, բացի այդ՝ տրամաբանական և հոգեկան երևույթներն էլ իրենց նյութական արտահայտությունն են ստանում լեզվի մեջ: Այսինքն՝ պետք է նկատի ունենալ, որ հասարակության պահանջումները միայն գործնական բնույթ չունեն. եթե սկզբնապես գիտության զարգացումը նպատակ ուներ բավարարելու հասարակության գործնական պահանջումները, ապա աստիճանաբար առաջ են գալիս նաև տեսական հետաքրքրություններ: Հետևաբար՝ լեզվաբանների առաջնային խնդիրն է այդ պահանջումների բավարարումը, բացի այդ՝ որքան հնարավոր է լեզվի ուսումնասիրության ռացիոնալ եղանակների մշակումը, տվյալ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխանող մեթոդի հայտնաբերումն ու կատարելագործումը, ինչպես նաև լեզվաբանության ուսումնասիրության առարկայի և նպատակների մասին ճշգրիտ պատկերացումների մշակումը:

Գիտության զարգացման յուրաքանչյուր բնագավառ որոշակի անկախություն ունի, ելնում է իր զարգացման նախորդ ընթացքից, այսինքն՝ որոշակի պատրաստի նյութից: Այսինքն՝ պետք է նշել, որ որևէ բնագավառի հարաբերական անկախությունն առաջին հերթին դրսևորվում է նրա ուսումնասիրության առարկայի հետազոտության մեջ: Ուստի անհրաժեշտ է կատարելագործել գոյություն ունեցող եղանակները, վերացնել իշխող մեթոդի հակասությունները, մշակել հետազոտության նոր եղանակներ,

ունենալ առարկան ավելի բազմակողմանիորեն ընդգրկելու նպատակ:

Ինչ վերաբերում է լեզվաբանական մեթոդի զարգացման ու լեզվաբանության տեսության փոխհարաբերությանը, ապա դրանք փոխկապակցված են: Անհնար է դրանք անջատել ու առանձնացնել իրարից, քանի որ «մեթոդը և տեսությունը, վերջիվերջո, հանդես են գալիս գիրկընդիսառն, փոխադարձ կապի մեջ, և մեթոդի թերություններն ու արժանիքները հաճախ որոշվում են տեսության (կոնցեպցիայի) բնույթով»⁶: Այդ իսկ պատճառով Գ. Ջահուկյանը լեզվաբանության պատմության շրջանների մեջ ենթաշրջաններ առանձնացնելիս և բնութագրելիս նկատի է ունեցել լեզվաբանական մեթոդի ուղղվածությունը, «այն հանգամանքը, թե տվյալ շրջանում իշխող մեթոդը ինչ կողմով է ուղղված դեպի հասարակության պահանջմունքները, հասարակության որ կարգի պահանջմունքներն է բավարարում, սրա հետ կապված ինչ երանգ է ստանում և ինչ հարաբերության մեջ է գտնվում լեզվաբանության պատմության նախորդ փուլի հետ»⁷: Այսպիսով՝ լեզվաբանության զարգացման տվյալ փուլն առնչվում է հասարակության այս կամ այն շրջանի լեզվական հետաքրքրությունների հետ:

Պետք է նշել սակայն, որ զարգացման յուրաքանչյուր փուլում գոյություն ունեն լեզվի տարբեր ըմբռնումներ, որոնք հանդես են գալիս լեզվաբանական հոսանքների ու հայեցակարգերի ձևով:

⁶ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1960, էջ XXIII:

⁷ Տե՛ս նույն տեղում:

Լեզվաբանները լեզվի բնույթի, ծագման, զարգացման ու գործառնական հարցերը քննելիս ելնում են գոյություն ունեցող ընդհանուր ըմբռնումներից կամ առաջ են քաշում սեփական ըմբռնումներ, որոնք, սակայն, լեզվաբանության զարգացման տարբեր փուլերում տարբեր կերպ են դրսևորվում:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ Գ. Ջահուկյանը *մեթոդը* հիմք է ընդունում լեզվաբանության պատմության հարցերի ժամանակային, իսկ *տեսությունը* (կոնցեպցիան)՝ տարածական խմբավորման համար, իսկ ենթաշրջանների առանձնացման *սկզբունքը* հանդես է գալիս որպես դրանք կապող օղակ:

Ինչպես նշում է հեղինակը, իր սկզբունքները լիովին «մաքուր» ձևով չեն կարող հանդես գալ հետևյալ պատճառներով.

1. Լեզվաբանության պատմությունը՝ որպես գիտակարգ, որոշակի ժառանգորդականություն ունի, իսկ դա չի կարելի անտեսել: Ջահուկյանն այդպես էլ վարվում է. իր շրջանաբաժանման մեջ կիրառում է երկու տիպի անվանումներ, որոնցից առաջինը բնորոշ է իր սկզբունքին, իսկ մյուսը՝ ավանդականին: Օր.՝ «պսիխոֆիզիոլոգիզմ» ընդհանուր անվանման հետ տրվում են «երիտքերականություն», «Կազանի լեզվաբանական դպրոց», «Մոսկվայի լեզվաբանական դպրոց» և այլ անվանումներ:

2. Անվանումները չեն կարող սպառել բնութագրվող հայեցակարգի էությունը, դրանք պայմանական բնույթ ունեն:

3. Այս կամ այն շրջանը մյուսից կտրուկ չի առանձնանում, դրանց միջև անցումային որոշակի շրջան կա, բացի այդ՝ լեզվաբանները միշտ չէ, որ գործել են ժամանակագրական

առումով հստակ սահմանազատված շրջաններում: Այսպիսով՝ հեղինակը տվյալ լեզվաբանին ներկայացնում է այն ժամանակաշրջանում, որին վերաբերում են նրա ստեղծած լեզվաբանական հիմնական արժեքները:

4. Երբեմն տվյալ լեզվաբանի գործունեությունը հստակ կերպով չի առնչվում որևէ ուղղության հետ, սակայն կարևորվում է լեզվի ուսումնասիրության այս կամ այն բնագավառում ձեռք բերած արդյունքներով: Նմանատիպ դեպքերում Գ. Ջահուկյանը վարվում է հետևյալ կերպ. լեզվաբանական առանձին ուղղությունների և դրանց ներկայացուցիչների հիմնական հայացքների բնութագրումից հետո ներկայացնում է տվյալ ենթաշրջանում լեզվի առանձին բնագավառներում ձեռք բերված նվաճումները:

Այս բոլոր սկզբունքային առանձնահատկությունները, ինչպես նաև նախորդ հեղինակների թերացումները նկատի ունենալով՝ Գ. Ջահուկյանը «Լեզվաբանության պատմություն» աշխատության ներածական հատվածում կատարում է լեզվաբանության պատմության շրջանաբաժանումը, որն իրոք կարևոր ձեռքբերում էր ոչ միայն հայ լեզվաբանական մտքի, այլև ընդհանուր լեզվաբանության զարգացման համար: Իր մյուս ուսումնասիրության մեջ՝ «*Общее и армянское языкознание*» աշխատության համապատասխան հատվածում, հեղինակը որոշ դիտարկումներ ներկայացնում է գծապատկերներով, մենք նպատակահարմար ենք գտնում լեզվաբանության պատմության ջահուկյանական շրջանաբաժանումն ամբողջովին ներկայացնել աղյուսակների տեսքով՝ ըստ առանձին շրջանների (տե՛ս Հավելված 1):

Վերոնշյալ շրջանաբաժանումը, անկասկած, մեծ դեր ունի լեզվաբանության պատմության համար: Այն կարևոր է ոչ միայն երեք հիմնական շրջանների առանձնացման, դրանց բազմակողմանի բնութագրման և վերլուծության տեսակետից, այլև այնպիսի հարցերի ընդգրկման առումով, որոնք կազմում են այդ շրջանների էությունը: Լեզվաբանության պատմության յուրաքանչյուր շրջան համակողմանի բնութագրվում է, բացի այդ՝ ներկայացվում են առանձին շրջաններում նյութի քննությանը բնորոշ հատկանիշները, որով, անշուշտ, ամբողջանում է ժամանակաշրջանի լեզվական ուսումնասիրության պատկերը: Վերևում նշել էինք, որ իր հետագա ուսումնասիրությունների մեջ Ջահուկյանը որոշ հավելումներ ու նոր դիտարկումներ է անում: Մասնավորապես՝ «*Общее и армянское языкознание*» աշխատության մեջ նշում է, որ «Լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ նկատի չեն առնվել սերող քերականության սկզբունքներն ու մեքենական թարգմանության վերաբերյալ տեսական եզրակացությունները, քանի որ աշխատությունն ավարտված էր նախքան սերող քերականության սկզբունքների տարածումը⁸: Հետևաբար՝ շրջանաբաժանումը մասնակի փոփոխության կարիք ունի: Օր.՝ «Լեզվաբանության պատմության» մեջ 20-րդ դարը բնորոշվում է որպես ստատիկ-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան, բայց, նկատի ունենալով սերող քերականության սկզբունքների տարածումը, այն, որ այս շրջանում նախապես տիրապետող էր լեզվի կառուցվածքի վերլուծությունը, այնուհետև

⁸ Տե՛ս Գ. Դձաուկյան, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, էջ 59:

անցում կատարվեց դեպի համադրում, հետագայում՝ երկու սկզբունքների համատեղում, անվան մեջ ճշգրտում պետք է մտցնել: Ուստի՝ նպատակահարմար է կոչել *համակարգային-օպերացիոնալ լեզվաբանության* ձևավորման շրջան:

Մեկ այլ խնդիր էլ կա մեթոդի հետ կապված: Եթե «Լեզվաբանության պատմության» մեջ *մեթոդ* տերմինը գործածվում էր լայն իմաստով, ապա «*Общее и армянское языкознание*» աշխատության մեջ Ջահուկյանը նպատակահարմար է գտնում նեղացնել տերմինի իմաստային ծավալը՝ նկատի ունենալով միայն առանձնացվող շրջանների բնորոշ հատկանիշների ամբողջությունը: Մեթոդը պետք է դիտարկել որպես տվյալ շրջանի ընդհանուր խնդիրներից, լեզվի նկատմամբ հայեցակարգից, լեզվաբանության կառուցվածքից, բաժիններից ու գիտակարգերից բխող հատուկ մեթոդների որոշակի ամբողջություն: Սրանով էլ պայմանավորված՝ որոշակի փոփոխության պետք է ենթարկել նաև լեզվաբանական դպրոցների և ուղղությունների առանձնացման ընդհանուր սկզբունքը: Դրանց հիմքում պետք է լինի ոչ թե լեզվի հայեցակարգը՝ նեղ իմաստով, այլ լեզվաբանների ընդհանուր հայեցակարգը, նրանց աշխարհընկալման փիլիսոփայական հիմքը, լեզվի բնույթի վերաբերյալ նրանց տեսակետը: Հետևաբար՝ լեզվաբանության պատմությունը ներկայացնելիս պետք է տալ ոչ միայն տարբեր շրջանների և ենթաշրջանների, լեզվի ընդհանուր հայեցակարգի, տիրապետող մեթոդների ընդհանուր բնութագիրը, այլև նոր մեթոդների կիրառման, նոր հայեցակարգի կիրառման արդյունքները: Այսինքն՝ Ջահուկյանը ցանկանում է ներկայացնել

օբյեկտի ուսումնասիրության ասպարեզի ձեռքբերումներն ու առաջընթացը: Ուստի տվյալ շրջանի ընդհանուր նկարագրությունից հետո պետք է ներկայացվեն առանձին լեզուների և լեզվախմբերի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև լեզվի առանձին կողմերի ուսումնասիրության բնագավառի ձեռքբերումները:

Անդրադառնալով տարբեր շրջանների և ենթաշրջանների առանձնացման սկզբունքի հարցին՝ Ջահուկյանը հավատարիմ է մնում «Լեզվաբանության պատմության» մեջ ներկայացված իր հայացքներին, այն է՝ տարբեր շրջանների և ենթաշրջանների առանձնացման ժամանակ պետք է հիմնվել ոչ թե մեկ հատկանիշի, այլ հատկանիշների ամբողջության վրա: «*Общее и армянское языкознание*» աշխատության մեջ ևս պահպանվում են առանձնացված 11 հատկանիշները: Եթե հեղինակն ի սկզբանե ընդամենը առանձնացնում էր այդ հատկանիշների ամբողջությունը, ապա այստեղ նաև շեշտում է, որ կատարվում է ոչ թե մի հատկանիշի վրա հիմնված, այլ *բազմահատկանիշ շրջանաբաժանում*: Բացի այդ՝ չէր նշվում այդ հատկանիշների փոխհարաբերությունը: Այս բացը ևս հեղինակը լրացնում է «*Общее и армянское языкознание*» աշխատության մեջ:

Ինչ վերաբերում է հեղինակի հայեցակետը կազմող առանցքային հարցերին, ապա դրանք ևս ներկայացրել ենք աղյուսակի տեսքով՝ ըստ ժամանակաշրջանների՝ նկատի ունենալով հեղինակի երկու աշխատությունների տվյալները (տե՛ս Հավելված 2): Ընդ որում՝ 8-րդ և 10-րդ հատկանիշները նշվում են միայն «Լեզվաբանության պատմության» մեջ, իսկ 11-14-րդ հատ-

կանիշներն ավելացվել են *«Общее и армянское языкознание»* աշխատության մեջ:

Այսպիսով՝ Գ. Ջահուկյանը մշակում է լեզվաբանության պատմության շրջանաբաժանման ուրույն և բավական միասնական սկզբունքներ, հստակեցնում նյութի համակարգման եղանակները և դրանով իսկ որոշակի դարձնում իր հայեցակետը լեզվաբանության պատմության երեք շրջանների նկատմամբ: Անշուշտ, գիտության զարգացման այժմյան մակարդակից դիտարկելիս Ջահուկյանի շրջանաբաժանումը՝ որոշակի հավելումների կարիք է զգացվում, սակայն անժխտելի է նրա մնայուն տեղը ընդհանուր լեզվաբանության պատմության մեջ: Բավական է նշել միայն, որ մինչ օրս այն մնացել է չգերազանցված:

**Բ. ԼԵԶՎԻ ԲՆՈՒՅԹԻ, ԼԵԶՎԻ և ԽՈՍՔԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

Ինչպես գիտենք, լեզվաբանության ուսումնասիրության առարկան լեզուն է: Սակայն տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե լեզու ասելով ինչ պետք է հասկանալ: Լեզվի բնույթի վերաբերյալ տարբեր տեսակետներ կան, որոնցով էլ պայմանավորված է լեզվաբանության նպատակների և խնդիրների հարցը: Լեզվի բնույթի, լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցերին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը իր տարբեր աշխատություններում և հոդվածներում: Լեզվի և խոսքի իր ըմբռնումը Գ. Ջահուկյանը զարգացրել է ԵՊՀ-ում կարդացած իր դասախոսություններում, իսկ առաջին անգամ գրավոր ձևով՝ «Լեզվաբանության պատմության» 2-րդ հատորում: Լեզվի և խոսքի փոխհարաբերության ջահուկյանական ըմբռնումը տարբերվում է եղած ըմբռնումներից: Խոսելով լեզվի և խոսքի հակադրության մասին՝ հեղինակը նշում է, որ բավարար չափով հաշվի չեն առնվում դրանց անցումները, դրանք դրվում են կողք կողքի, խստորեն հակադրվում են միմյանց⁹: Սակայն նախքան լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցի քննությունը, ներկայացնենք լեզվի բնույթի հետ կապված խնդիրները: Գ. Ջահուկյանը, անդրադառնալով այս հարցին, իր «Общее и армянское языкознание», հետազայում նաև «Универсальная теория языка»

⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 2, Ե., 1962, էջ 471:

աշխատությունների մեջ ներկայացնում է լեզվի բնույթի վերաբերյալ տարբեր տեսակետները և մանրամասն քննում տարակարծություններ առաջացնող խնդիրները¹⁰:

Ըստ առաջին տեսակետի՝ տարակարծությունների տեղիք է տալիս լեզվի սահմանների հստակ որոշման հարցը: Եթե նկատի ունենանք, որ լեզվաբանության ուսումնասիրության առարկան մարդկային լեզուն է, ապա պետք է հստակեցնել, թե լեզվաբանությունը ինչ չափով պետք է ուսումնասիրի կենդանիների «լեզուն»՝ մարդկային լեզվի ծագման հարցը բացահայտելու համար, ինչ չափով անդրադառնա անդրլեզուներին, ձևայնացված և արհեստական լեզուներին՝ նախատեսված գիտության և հասարակական կյանքի տարբեր ոլորտների կամ մեքենական թարգմանության համար: Գ. Ջահուկյանն իրավացիորեն նշում է, որ խելամիտ կլիներ սահմանափակել լեզվաբանության ուսումնասիրության առարկան, այսինքն՝ կենդանիների «լեզվով» հետաքրքրվել այնքանով, որքանով դա օգնում է բացատրել մարդկային լեզվի ծագումը և գործառույթը, կամ արհեստական լեզուներով այնքանով, որքանով դրանց ուսումնասիրության խնդիրներն առնչվում են լեզվաբանության ընդհանուր խնդիրներին և այլն: Մինչդեռ իրականում լեզվաբանության ուսումնասիրության խնդիրները բավական լայն ընդգրկում ունեն: Իսկ դա, Ջահուկյանի խորին համոզմամբ, հանգեցնում է հակառակ երևույթին՝ ուսումնասիրության օբյեկտի նեղացմանը, որի հետևանքով էլ լեզվաբանությունը հեռանում է հումանիտար այլ գիտություններից,

¹⁰ Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 15-69:

իսկ լեզվի ուսումնասիրությունն այլևս չի դիտարկվում հասարակության պատմության և մշակույթի համատեքստում:

Լեզվի նկատմամբ նման մոտեցման նախանշաններ կային ժամանակակից լեզվաբանության ներկայացուցիչների (ստրուկտուրալիստների, Ն. Խոմսկու դպրոցի ներկայացուցիչների) հայացքներում: Վերջիններս մի կողմից ընդլայնում էին լեզվաբանության խնդիրների շրջանակը՝ մինչև անգամ վերածելով այն ընդհանուր նշանագիտության տեսության, մյուս կողմից՝ նեղացնում: Նման մոտեցում կարելի է նկատել Մոսյուրի հայացքներում: Մի կողմից՝ լեզուն համարելով պայմանական նշանների համակարգ՝ այն դիտարկում է մյուս նշանային համակարգերի հետ միևնույն հարթության վրա, դրանց միջև հստակ սահմաններ չի դնում և դրանով իսկ ընդլայնում է լեզվաբանության խնդիրների շրջանակը: Մյուս կողմից՝ լեզուն համարելով «քերականական համակարգ, որ պոտենցիալ գոյություն ունի ցանկացած ուղեղում կամ ավելի ճիշտ անհատների մի ամբողջ խմբի ուղեղներում»¹¹, իսկ լեզուն էլ որպես լեզվաբանության առարկա դիտարկելով «ինքն իր մեջ և ինքն իր համար»՝ Մոսյուրը լեզվաբանությունը հեռացնում է հումանիտար գիտությունների ավելի լայն խնդիրներից:

Ըստ երկրորդ տեսակետի՝ տարակարծությունների տեղիք է տալիս լեզուն իր ողջ բարդությամբ և բազմապլանությամբ ընդգրկելու դժվարությունը: Խոսելով լեզվի մասին՝ որպես նշանային համակարգի՝ Մոսյուրը և նրա շատ հետևորդներ այն

¹¹ Ф. де Соссюр, Курс общей лингвистики, Е., 1999, с. 38.

հասկանում էին, ինչպես նշել ենք, շատ նեղ իմաստով՝ որպես հարաբերությունների համակարգ, այսինքն՝ որպես քերականական համակարգ¹², մինչդեռ լեզուն այն է, ինչ մարդուն դարձնում է մարդ: Չկա կյանքի որևէ բնագավառ, որը ինչ որ կերպ չգտնի իր արտացոլումը մարդկային լեզվում: Այսինքն՝ լեզուն պետք է դիտարկել որպես մի երևույթ, որն արտահայտում է մարդկային գիտելիքների, մտքերի, ցանկությունների, կամքի և զգացմունքների ամբողջությունը: Գ. Ջահուկյանը նշում է, որ ասել, թե լեզուն համակարգ է կամ կառուցվածք, բավարար չէ, քանի որ լեզուն նաև հաղորդելի միավորների և կառուցվող տարրերի անընդհատ փոփոխվող և հարստացող ամբողջություն է: Այս առումով Գ. Ջահուկյանի պատկերացումը տարբեր է կառուցվածքային լեզվաբանության հիմնական պատկերացումից:

Իրականում լեզուն շատ բարդ համակարգ է, համակարգերի համակարգ, ընդ որում՝ դինամիկ: Լեզվի մեջ ընդգրկվում են այնպիսի համակարգեր, ինչպիսիք են կառուցվածքային ենթահամակարգերը (հաճախ կոչվում են համակարգեր, օր.՝ հնչյունական համակարգ, ձևաբանական համակարգ, բառակազմական համակարգ ևն), տվյալ պատմական շրջանում տիրապետող համակարգը, ինչպես նաև նախորդող և հաջորդող վիճակների (համակարգերի) տարրեր և մնացորդներ, այլ լեզուների մասնակի համակարգեր (սրանք ընդգրկվում են տվյալ լեզվում փոխառությունների և փոխհարաբերության հետևանքով), արտալեզվական համակարգերի դրսևորումներ (սրանք դրսևորվում

¹² См. у Ф. де Соссюр, Труды по языкознанию, М., “Прогресс”, 1977, էջ 52:

են լեզվի արտահայտության և բովանդակության պլաններում լեզվի բազմակողմանի կապերի շնորհիվ, որոնց հիման վրա էլ ձևավորվում են տեսական և կիրառական նոր միջգիտակարգեր): Այսինքն՝ որևէ լեզվի ուսումնասիրության ընթացքում չի կարելի սահմանափակվել միայն տվյալ լեզվի տարրերի և տարբեր կաղապարներում դրանց համադրության որոշմամբ կամ զուտ լեզվի գործառության մեխանիզմի ուսումնասիրությամբ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև արտալեզվական համակարգում ընդգրկված տարրերը, այն է՝ տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմական կյանքը, մշակույթը, սովորույթները ևն: Պետք է նկատի ունենալ նաև մյուս համակարգի տարրերը, օրինակ՝ որևէ ոլորտի տերմինաբանության ուսումնասիրության ժամանակ անհնար է սահմանափակվել միայն լեզվական տարրերի ուսումնասիրությամբ, որոշակի գիտելիքներ են պետք նաև տվյալ ոլորտի մասին:

Բացի այդ՝ համակարգի հասկացությունը միշտ օբյեկտը ներկայացնում է իդեալական տեսքով, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է համակարգի տեսությանը զուգահեռ ունենալ նրա գործառության տեսությունը: Երկրորդ՝ լեզուն, ինչպես յուրաքանչյուր համակարգ, պետք է ունենա միջավայր, որտեղ գործառում է, որտեղ դրսևորում է իր հատկանիշները, իր վարքը: Մոսյուրը կարծում էր, որ ցանկացած լեզվի համար այդպիսի միջավայր է համարվում հասարակությունը՝ մարդկային խումբը, և այն ստեղծված է, որպեսզի բարելավի մարդու կյանքը հասարակության մեջ: Մինչդեռ Ջահուկյանի կարծիքով դա շատ վիճելի հարց է, գուցե լեզուն ունի որոշակի ինքնուրույնություն և ինքն է ազդում

միջավայրի վրա: Բացի այդ՝ ինչպես յուրաքանչյուր համակարգ՝ լեզուն պետք է լինի կառավարվող: Այստեղ նկատի է առնվում ոչ միայն մեխանիզմների կենսաբանական կառավարումը ուղեղում, այլև հասարակության մեջ լեզվի մշակումն ու պլանավորումը:

Ըստ երրորդ տեսակետի՝ տարակարծությունների տեղիք է տալիս լեզվում *ձևի* և *բովանդակության՝ արտահայտության* և *բովանդակության պլանների* հստակ սահմանազատման դժվարությունը: Մինչ այդ հարցին անդրադառնալը նշենք, որ ձևի հասկացությունը ոչ միանշանակ է ներկայացվում ոչ միայն փիլիսոփաների, այլև լեզվաբանների կողմից: Փիլիսոփայության մեջ ավելի ընդունված է ձևի և բովանդակության հակադրությունը, քան թե ձևի և սուբստանցիայի, քանի որ բովանդակությունը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական: «Ձև» տերմինը ոչ միանշանակ է ընկալվում ավելի շատ լեզվաբանության մեջ, քան՝ փիլիսոփայության: Այդ իսկ պատճառով Լ. Ելմալը հակադրում էր բովանդակության պլանը ոչ թե «ձևի պլանին», այլ արտահայտության պլանին՝ դրանցից յուրաքանչյուրի համար առանձնացնելով ձև և սուբստանցիա: Ինչպես նշում է Ջ. Լայոնզը, «ձև» և «ձևային» տերմինների համար լեզվաբանության մեջ կարելի է առանձնացնել որոշ հիմնական կիրառություններ¹³. «ձևային» ասվում է ի հակադրություն «իմաստաբանականի», «նյութականի», «ներըմբոնդականի», «հասկացականի»: Ձևի ջահուկյանական ընկալումը հիմնվում է բառի նախնական սուբստանցիոնալ իմաստի

¹³ Sté u Дж. Лайонз, Введение в теоретическую лингвистику, М., 1978, էջ 148-149:

վրա (այս մասին տե՛ս համընդհանուր լեզվաբանական կադապարին նվիրված բաժնում):

Ընդունված է համարել, որ լեզվաբանության իդեալը այնպիսի կադապարի ստեղծումն է, որը կբացատրի լեզվի բոլոր կողմերն ու ողջ մեխանիզմը: Այս խնդիրը լեզվաբանության մեջ տարբեր կերպ է լուծվում: Մտրուկտուրալիստները և Ն. Խոմսկին փորձում են լուծել՝ դուրս չգալով լեզվի սահմաններից և միաժամանակ շեղվելով նյութական ձևից, լեզվի մեխանիզմն ուզում են հասկանալ միայն լեզվական տարրերի ներքին կապերի և փոխհարաբերության հիման վրա, այսինքն՝ լեզուն զերծ պահելով սուբստանցից: Նորագույն լեզվաբանության հիմնական փաստարկներից մեկը՝ ձևակերպված Սոսյուրի կողմից, հետևյալն է. «Լեզուն ձև է, այլ ոչ թե սուբստանց»¹⁴: Այսինքն՝ լեզվի նշանային համակարգի բաղադրիչների հակադրության բնույթը կախված չէ սուբստանցի բնույթից:

Հետագայում Լ. Ելմսլեր ընդհանրացնում է ձևի և սուբստանցի հասկացությունները արտահայտության և բովանդակության պլանների համար՝ խոսելով արտահայտության և բովանդակության պլանների ձևի և սուբստանցի մասին¹⁵: Բացի այդ՝ նա նշում է, որ ձևի և սուբստանցի փոխհարաբերությունը հնարավոր է, քանի որ դրանք անկախ են իրարից: Ընդգծելով Ելմսլերի աշխատության թերությունները՝ Ջահուկյանը, այնուամե-

¹⁴Տե՛ս Փ. де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, էջ 154:

¹⁵ Տե՛ս Լ. Ельмслев, Прологомены к теории языка, “Новое в лингвистике”, вып. 1, М., 1960, էջ 310-314:

նայնիվ, բարձր է գնահատում համընդհանուր տեսությունն ստեղծելու նրա փորձը¹⁶:

Այսպիսով՝ Սոսյուրը և Ելմսլը լեզուն դիտարկում են որպես հարաբերությունների սահմանափակ համակարգ, որը գոյություն ունի ինքնին: Մինչդեռ, Գ. Ջահուկյանը համոզված է, որ խնդրի լուծումը հակառակ մոտեցման մեջ է: Եթե նկատի ունենանք, որ լեզվական բովանդակությունը արտահայտում է արտաքին աշխարհը, դրա կապերը, առանձնահատկությունները և հարաբերությունները, իսկ լեզվական արտահայտումը բավական նյութական է, դժվար չէ հասկանալ, որ չի կարելի լեզվականը բացատրել միայն լեզվականով, լեզվի էությունը բացատրելու համար պետք է ելնել աշխարհի նյութական ամբողջությունից: Եթե լեզվակիրներն ապրում են նյութական աշխարհում, խոսում են նրա մասին նյութական միջոցներով, ապա պարզ է, որ լեզվի համընդհանուր տեսություն ստեղծելը, առանց նկատի ունենալու նրա նյութահարաբերակցական հիմքը, անհնար է: Այսինքն՝ միանգամայն համոզիչ է Ջահուկյանի փաստարկը, որ արտահայտության և բովանդակության պլանում միայն միավորների հակադրությամբ չի կարելի հասկանալ լեզվի բնույթը՝ առանց նկատի ունենալու նյութական աշխարհի իրերի հարաբերությունները: Եթե մարդ չգիտի իրերի բնույթը, հակադրությունների ոչ մի համակարգ հնարավորություն չի տա հասկանալու փոխաբերության էությունը. չիմանալով խոզի կամ ավանակի էությունը՝ անհասկանալի կլինի նաև մարդու հետ դրանց

¹⁶ См. у Г. Джаукян, Универсальная теория языка, М., 1999, էջ 5:

համեմատությունը: Ինքնին լեզվի բնույթը կարելի է հասկանալ՝ միայն դուրս գալով նրա սահմաններից: Այդ իսկ պատճառով էլ լեզվի համընդհանուր տեսության հիմնախնդիրների մասին ջահուկյանական պատկերացումը ուղղակիորեն հակադրվում է Սոսյուրի կառուցվածքային ըմբռնմանը: Լեզվի բնույթը հասկանալու տեսակետից ժամանակակից լեզվաբանական ուղղություններից Ջահուկյանի մոտեցմանը հակադրվում են ստրուկտուրալիզմը և նրա հիման վրա ձևավորված սերող քերականությունը: Համեմատաբար մոտ է ֆունկցիոնալ (գործառական) լեզվաբանությունը, որ առաջին պլան է մղում լեզվի հաղորդակցական գործառույթը, այսինքն՝ նրա բնական առանձնահատկությունները: Իրական ուղղությունը ոչ թե ձևից դեպի սուբստանցն է, այլ սուբստանցից դեպի ձևը. ձևի գոյությունը պայմանավորված է սուբստանցով, այլ ոչ թե հակառակը:

Ըստ չորրորդ տեսակետի՝ տարակարծությունների տեղիք է տալիս լեզվի և խոսքի փոխհարաբերության հստակ բնորոշման դժվարությունը: Ինչպես գիտենք, լեզվաբանության ուսումնասիրության առարկան լեզուն է, սակայն հարց է ծագում. ի՞նչ դեր ունի այստեղ խոսքը: Գուցե լեզու ասելով պետք է հասկանալ սոսյուրյան իմաստով langage, այսինքն՝ լեզվի (langue) և խոսքի (parole) ամբողջություն: Ջահուկյանը, անդրադառնալով «լեզու-խոսք» երկատմանը, ինչպես նաև դրա փոխարինմանը եռատմումով՝ «լեզու-նորմ-խոսք», նշում է, որ նույնիսկ վերջինը չի լուծում խնդիրը, այլ ավելի է բարդացնում այն: Ուստի այս հարցի վերաբերյալ որոշ դիտարկումներ է անում.

• Լեզվի և խոսքի հակադրությամբ *լեզու* հասկացությունը սովորաբար չի մասնատվում: Մասնատում ասելով՝ Ջահուկյանը չի հասկանում այն *Ելմսլնի* ձևով (լեզուն՝ որպես սխեմա, նորմ, ուզուս), այլ հարցը ներկայացնում է լեզվի ընդգրկման տեսակետից: Նրա կարծիքով *լեզու* հասկացությունը միատարր չէ: Լեզու ասելով հասկանում ենք այն հիմնականում երեք իմաստով.


1. *Ընդհանուր*՝ մարդկային լեզուն, լեզուն որպես համամարդկային արժեք, որպես հասարակայնորեն կազմակերպված մարդու որոշակի ունակություն, խոսողական կարողություն: Չնայած սոսյուրյան langage-ը երբեմն այս իմաստով են հասկանում, սակայն չի կարելի այն համարել լեզվի (հասարակական երևույթի) և խոսքի (անհատական երևույթի) ամբողջություն: Լեզուն այս ընդհանուր հասկացությամբ դիտարկվում է իդեալականորեն, որպես այն ամենի ամբողջություն, ինչ ընդգրկվում է առանձին լեզուներում, պանխրոնիկ մի բան՝ գուրկ հակասությունից: Այսպիսի մոտեցմամբ լեզվակիրները կլինեն իդեալական խոսող անհատները:

2. *Մասնակի*՝ ժողովրդի կամ նրա մի հատվածի լեզուն, լեզուն որպես տվյալ հասարակական խմբավորման արժեք՝ մարդկության մի մասի, տվյալ ժողովրդի ներսում հաղորդակցումն իրականացնող ընդհանուր միջոց՝ «լեզու» բառի գործածությունը սոսյուրյան langue իմաստով: Այս դեպքում, ի տարբերություն նախորդ՝ ընդհանրական-իդեալական ձևի, այն հիերարխիկ է, կարող է կազմել ընդհանրացման տարբեր մակարդակներ (տարածական տարբերակներ՝ բարբառ, խոսվածք են):

3. *Առանձնակի*¹⁷՝ անհատական լեզուն, լեզուն որպես անհատի՝ խմբավորման անդամի արժեք, տվյալ անհատի հաղորդակցումը հնարավոր դարձնող միջոց: Անհատի լեզուն գտնվում է խմբի լեզվի հետ շարունակական փոխհարաբերության մեջ. նման մոտեցման դեպքում չի կարելի համարել, որ լեզուն անհատից դուրս է, ինչպես դա անում է Մոսյուրը¹⁷: Հենց անհատներն են հասարակական խմբի լեզվի կրողները: Առանձնակի լեզվի տարբերությունը ընդհանրական-իդեալականից ցույց է տալիս նրա էությունը և որոշում իդեալին հասնելու նրա զարգացումը, որ կոնկրետ լեզվի դեպքում անհնար է, հնարավոր է միայն արհեստականորեն:

Լեզվի հասկացության վերոնշյալ եռամասն բաժանման հիման վրա պարզ է դառնում, որ խոսքը՝ որպես անհատական երևույթ, հակադրվում է խմբի լեզվին անհատի լեզվի միջոցով: Այս դեպքում հակադրություն է ստացվում մի կողմից խմբի լեզվի և անհատի լեզվի միջև, մյուս կողմից՝ անհատի լեզվի և նրա խոսքային արտահայտության՝ որպես հնարավորության և իրականության միջև:

Լեզվի (երեք իմաստով) և խոսքի միջև փոխհարաբերությունը Ջահուկյանը ներկայացնում է հետևյալ գծապատկերով.



¹⁷Տե՛ս Փ. де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, էջ 52:

Այսպիսով՝ Գ. Ջահուկյանը վերանայում է լեզվի ու խոսքի՝ *Մոսյուրի* ժամանակներից լեզվաբանության մեջ ընդհանրացած մոտեցումը: Մոսյուրը լեզուն և խոսքը տարբերում է հատկապես նրանով, որ առաջինին հատկացնում է հասարակական բնույթ, երկրորդին՝ անհատական: Գ. Ջահուկյանը գտնում է, որ այս դեպքում թույլ է տրվում հարցի դիալեկտիկական անըմբռնողություն: Խոսքը իրականանում է լեզվական միջոցներով և իր բնույթով սովորաբար ենթադրում է ընկալող, հետևաբար խոսքի և՛ նախադրյալը, և՛ նպատակը հասարակական են, ներքին խոսքն ու մենախոսությունը ածանցյալ են, և դրանց ժամանակ կիրառվում են այն միջոցները, որոնք առկա են երկխոսության ժամանակ: Այսինքն՝ խոսքը հակադրվում է ոչ թե լեզվին ընդհանրապես կամ լեզվին՝ առաջին և երկրորդ իմաստներով, այլ լեզվին՝ երրորդ իմաստով: Այդ դեպքում լեզվի և խոսքի հակադրությունն այլևս չի դիտարկվում որպես ընդհանուրի և անհատականի հակադրություն, այլ մի կողմից՝ որպես խմբի լեզվի և անհատի լեզվի, մյուս կողմից՝ անհատի լեզվի և նրա խոսքային իրացման հակադրություն՝ որպես հնարավորություն և իրականություն: Հետևաբար՝ խոսք ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն խոսքն ինքնին, խոսողության գործընթացը, այլև խոսքի ընկալումը: Լեզվի և խոսքի փոխհարաբերության նման մոտեցման դեպքում հասկանալի է դառնում, որ խոսքը լեզվաբանին հետաքրքրում է ոչ թե ինքնին, այլ որպես լեզվի դրսևորում՝ հնարավորություն տալով վեր հանելու ինչպես լեզվի

կաղապարները, այնպես էլ խոսքում այդ կաղապարները գործառող մեխանիզմները: Կիրենոնետիկայի տերմինաբանությունն օգտագործելով՝ Ջահուկյանը պատկերավոր ներկայացնում է այս գործընթացը հետևյալ կերպ. լեզվի ուսումնասիրության ժամանակ գործ ունենք «սև արկղի» հետ, և լեզվաբանի խնդիրն է մուտքային և ելքային տվյալների ուսումնասիրության հիման վրա վեր հանել լեզվի մեխանիզմը¹⁸: Սրա հետ կապված՝ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքներին. նախ՝ խոսքի ընդհանրական կաղապարը վերաբերում է լեզվի բնագավառին, այսինքն՝ խոսքն իրականացվում է լեզվի ընդհանուր կաղապարներով՝ անհրաժեշտության դեպքում լրացնելով մեկ այս, մեկ այն վանդակները, երկրորդ՝ խոսքային գործընթացի կառուցվածքը իրադրային է. այն հիմնվում է արտալեզվական իրադրության վրա, այսինքն՝ միայն բոլոր խոսքային գործընթացների ամբողջությունն է վեր հանում լեզվի ընդհանուր կաղապարները, որոնք խոսքի մեջ հանդես են գալիս մասնակիորեն: Ընդ որում՝ լեզվակրի լեզուն խմբի լեզվի մասն է կազմում, զարգանում և կատարելագործվում է նրանց փոխազդեցության միջոցով: Ըստ այդմ՝ կարելի է ասել, որ լեզվի բնույթը պայմանավորված է խոսքային գործընթացների իրականացման նպատակներով, խոսքային գործընթացների բնույթը՝ արտալեզվական իրադրություններով, մարդու շփման, ճանաչողության, ինքնարտահայտման պահանջների դրսևորմամբ: Լեզվի կառուցվածքի և նրա կաղապարների կատարելագործման

¹⁸ Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 15-69:

աստիճանը որոշվում է խոսքային գործընթացների արագ և լավ իրականացման աստիճանով, խոսքային գործընթացների կատարելագործման աստիճանը՝ արտալեզվական փաստերի լավ արտահայտման աստիճանով¹⁹:

• Լեզվի և խոսքի փոխհարաբերությունը որոշելիս, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Ջահուկյանը, պետք է հաղթահարել նախ այս հարցի մեխանիկական, ոչ դիալեկտիկական ըմբռնումը, այնուհետև՝ լեզվի մեկնաբանումը ժամանակակից լեզվաբանության որոշ նշանավոր ներկայացուցիչների կողմից: Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է լեզուն և խոսքը կողք կողքի դնել՝ առանց հաշվի առնելու դրանց՝ մեկը մյուսի մեջ ներթափանցելու հարցը: Այստեղից էլ հետևում է Սոսյուրի հետևյալ համոզմունքը. «պատմականորեն խոսքը նախորդում է լեզվին»²⁰: Ջահուկյանի խորին համոզմամբ չի կարելի խոսել դրանց՝ մեկը մյուսին փոխհաջորդելու մասին: Հեղինակը գտնում է, որ վերոնշյալ թյուրըմբռնման հիմք է դարձել այն, որ լեզուն և խոսքը դնում են իրար կողքի: Լեզուն ոչ միայն խոսքի նախադրյալն է, այլև՝ արդյունքը: Մարդը կարող է խոսել միայն այն դեպքում, եթե տիրապետում է լեզվին: Բացի այդ՝ Սոսյուրը լեզուն անհատի նկատմամբ արտաքին երևույթ է համարում, որ ինքնին չի կարող ո՛չ ստեղծել, ո՛չ փոխել լեզուն: Մինչդեռ Ջահուկյանը առանձնացնում է անհատի լեզուն: Այն յուրացվում է մանկությունից և ուղեկցում մարդուն մինչև մահ՝ կազմելով ժողովրդի լեզվի մի մասը: Անհատի

¹⁹ Տե՛ս նույնը, էջ 18:

²⁰ Փ. Де-Соссюр, Курс общей лингвистики, Е., 1999, с. 42.

լեզուն է հնարավոր դարձնում անհատի առանձին խոսողական ակտերը և ընդհանրապես նրա խոսքը: Անհատի լեզուն սկզբնապես յուրացվում է ուրիշների խոսքի հիման վրա և հետագայում սնվում ուրիշների խոսքով: Հետևաբար՝ կարևոր է հաշվի առնել, թե ում դիրքերից ենք մոտենում՝ խոսողի՞, թե՞ լսողի, հաղորդողի՞, թե՞ ընկալողի: Լեզուն որոշակի վիճակ է, խոսքը՝ որոշակի գործընթաց: Լեզուն մարդու պահանջմունքները բավարարում է խոսքի միջոցով: Լեզվի երկու բացատրություններից՝ լեզուն խոսքի իրականացման մեխանիզմ է, թե մարդու օրգանիզմի կողմից գործի դրվող որոշակի տարրերի, օրենքների և կաղապարների ամբողջություն, Ջահուկյանը ճիշտ է համարում երկրորդ մոտեցումը²¹: Հետևաբար՝ լեզվի և խոսքի փոխհարաբերությունը պետք է ներկայացնել ոչ թե «խոսք – խոսք- խոսք... լեզու- լեզու- լեզու...» կամ «լեզու- լեզու- լեզու... խոսք- խոսք- խոսք...», այլ՝ «լեզու-խոսք- լեզու-խոսք-լեզու- խոսք...»:

- Լեզվի և խոսքի կարևոր տարբերություններից է, Ջահուկյանի կարծիքով, *անմիջականությունը*: Այն ամենը, ինչ հանդես է գալիս որպես անմիջական գործընթաց, վերաբերում է խոսքին, այն, ինչ զրկվում է անմիջականությունից, դադարում է գործընթաց լինելուց և դառնում է հիշողության պահեստային փաստ, վերաբերում է լեզվին: Այսինքն՝ լեզվականը խոսքայինն է՝ զրկված անմիջականությունից, խոսքայինը լեզվականն է՝ ստացած անմիջական բնույթ և առնված գործընթացի մեջ: Սակայն այս դեպքում ևս լեզուն և խոսքը չի կարելի պատկերացնել իրար կողքի


²¹ Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 18:

դրված, այլ որպես իրար փոխհաջորդող երևույթներ: Այլ կերպ ասած՝ լեզուն հնարավորություն է տալիս մարդուն խոսել, իսկ խոսելը հարստացնում է լեզուն:

- Լեզվի և խոսքի հաջորդ տարբերությունը Ջահուկյանը համարում է լեզվի կառուցվածքայնությունը (ծավալայնությունը) և խոսքի գծայնությունը: Խոսքի դեպքում տեղի է ունենում համաժամանակյա միավորների ներքաշում գործընթացի մեջ, դրանց տարաժամանակացում: Խոսքը՝ որպես գործընթաց, ծավալվում է ժամանակի որոշ հատվածում, այն գուրկ է պատմությունից: Իսկական պատմության կրողը լեզուն է, որի առանձին դրսևորումները կարող են համեմատվել ըստ հաջորդականության:

- Լեզվի՝ մարդու մտածողական գործունեության հետ ունեցած փոխհարաբերության մասին խոսելիս հարց է ծագում. ունի՞ արդյոք լեզվի և խոսքի փոխհարաբերությունը իր գուգահեռ մտածական գործունեության մեջ: Լեզվի և մտածողության փոխհարաբերության բնորոշման մեջ որոշակի անհասկանալիություն կա: Լեզվաբանները խոսում են լեզվի և մտածողության փոխհարաբերության մասին, հոգեբանները՝ խոսքի և մտածողության: Հասկանալի է, որ այստեղ ամբողջ խնդիրը «մտածողություն» բառի երկիմաստության մեջ է: Ըստ առաջին իմաստի՝ *մտածողություն* բառը նշանակում է մտածելու գործընթաց, ըստ երկրորդ իմաստի՝ մտածելու կարողություն՝ որպես մարդու ունակություն: Այսինքն՝ մի դեպքում այն գործընթաց է բնորոշում, մյուս դեպքում՝ վիճակ, առաջին դեպքում հարաբերվում է խոսքին,

երկրորդ դեպքում՝ լեզվին: Ջահուկյանը վերջին դեպքում «մտածողություն» բառը փոխարինում է «գիտակցություն» բառով և ստանում հետևյալ գծապատկերը.



Գ. Ջահուկյանը կարծում է, որ լեզվի և խոսքի տարբերակումը իր զուգահեռն ունի նաև գիտակցության և մտածողության տարբերակման մեջ: Հետևաբար առաջարկում է խոսել ոչ թե լեզվի և մտածողության, այլ լեզվի և գիտակցության, համապատասխանաբար նաև՝ խոսքի և մտածողության կապի մասին: Մտածողությունը, ինչպես և խոսքը, անմիջական և գործընթացային բնույթ ունի: Մտածողության յուրաքանչյուր ակտ հենվում է գիտակցության վրա և վերածվում գիտակցության փաստի: Սակայն Ջահուկյանը նշում է, որ պետք է նկատի ունենալ, որ լեզվի մեջ կարևոր դեր են խաղում նաև ոչ գիտակցական երևույթները (օր.՝ ձայնարկությունները):

Ջահուկյանը, ներկայացնելով լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցը համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ, նշում է, որ ինչպես լեզուն, այնպես էլ խոսքը այստեղ համարվում են հոգևոր-նշանային կարգի երևույթներ, նրանց միջև նույնպիսի հարաբերություն կա, ինչպիսին որ

գիտակցության և մտածողության միջև²²: Բացի այդ՝ գիտակցությունը և լեզուն համարվում են կախվածության առգոյորոշ կարգի հոգևոր-նշանային դրսևորումներ, իսկ մտածողությունը և հաղորդակցումը (նաև խոսքը՝ որպես հաղորդակցման մի դրսևորում)՝ պատճառայնության գոյորոշ կարգի հոգևոր-նշանային դրսևորումներ: Եթե առգոյորոշ կարգերը բնորոշում են առարկայական հատկանիշները և հարաբերությունները, այսինքն՝ առարկաների «վիճակները», ապա գոյորոշ կարգերը բնորոշում են առարկաների հատկանիշների և հարաբերությունների հատկանիշներն ու հարբերությունները: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ խոսքը իրադրային է, և լեզվական իրադրությունը ամբողջովին կախված է հաղորդակցման գործընթացից՝ դրա իրականացման գործոններից, գործընթացի կողմերի նկատմամբ դրանց հարաբերությունից, հաղորդակցման տեղից և ժամանակից: Բացի այդ՝ չնայած այստեղ Ջահուկյանը կիրառում է *մարդկային լեզու* և *խոսք* արտահայտող նեղ իմաստով տերմիններ, բայց պետք է նկատի ունենալ, որ համընդհանուր լեզվաբանական տեսության համակարգում դրանց համապատասխանում են ավելի լայն հասկացություններ. լեզուն համարվում է նյութական արտահայտության ընդհանուր կարգի դրսևորում, որտեղ նկատի է առնվում հոգևոր-նշանային բովանդակության ցանկացած արտահայտություն՝ ներառյալ դիմախաղը, ժեստերը ևն: Նմանապես *խոսք* ասելով՝ պետք է հասկանալ հաղորդակցման կարգի որևէ

²² См. у Г. Джаукян, Универсальная теория языка, М. 1999, էջ 14:

դրսևորում, այսինքն՝ ցանկալի միջոցներով գործընթացի արտահայտման ցանկացած ձև:

Ինչ վերաբերում է լեզվի և խոսքի սուսյուրյան հակադրությանը, Ջահուկյանը նշում է, որ այդ հակադրության մեջ չկա դրա համար անհրաժեշտ նախապայման՝ հակադրության միայն մեկ տարբերակիչ հատկանիշ ունեցող նվազագույն զույգ: Սուսյուրը, հասկանալով այդ հակադրությունը որպես վիճակի և գործընթացի տարբերակում, միաժամանակ առանձնացնում է երկրորդ տարբերակիչ հատկանիշը՝ ընդհանուրն ու անհատականը: Մինչդեռ լեզուն՝ որպես վիճակ, կարող է լինել և՛ հասարակական, և՛ անհատական, իսկ այդ երկու դրսևորումների միջև կա փոխադարձ հարաբերություն: Սուսյուրյան այս բացթողումը Ջահուկյանը համընդհանուր լեզվաբանական տեսության համակարգում լրացնում է՝ «լեզու- խոսք» հակադրության փոխարեն դնելով «լեզու- հաղորդակցում» հակադրությունը, որի երկու բաղադրիչներն էլ ունեն ինչպես ընդհանուր (հասարակական), այնպես էլ առանձին (անհատական) դրսևորումներ: Եվ իսկապես, խոսքի և հաղորդակցման համեմատության դեպքում դժվար չէ պարզել, որ խոսքը, հաղորդակցման համեմատ, ավելի անհատական երևույթ է: Լեզուն՝ որպես գործընթաց, դրսևորվում է ոչ միայն խոսքում, այլև լսողական ընկալման մեջ՝ ըմբռնելով լսածը: Այսպիսով՝ լեզվի և խոսքի՝ որպես որոշակի կարգերի հակադրության դեպքում խոսքի հասկացությունը անհրաժեշտ է փոխարինել հաղորդակցման կարգով և տարբերակել խոսքը՝ որպես ազդակ (→) և խոսքը՝ որպես պատասխան (←), չեզոք կամ ինքնին խոսքը, որ ո՛չ հարց է, ո՛չ

պատասխան (\rightarrow —, որպես *n₁-n₂* հարաբերություն), երկխոսությունը (\leftrightarrow , որպես *h-h* հարաբերություն), մենախոսությունը (\dashv) և ինքնարտահայտումը՝ առանց հաղորդակցման նպատակադրման (0): Հենց այսպես է հաղորդակցման կարգը մտնում համընդհանուր լեզվաբանական տեսության համակարգ՝ վիճակի և գործընթացի մյուս կարգերի հետ կազմելով հոգևորության դրսևորումներից մեկը:

Լեզվի և խոսքի ըմբռնման ջահուկյանական մոտեցումը մասնակիորեն իր գուգահեռն ունի նաև Ա. Սմիռնիցկու ուսումնասիրություններում: Պետք է նշել սակայն, որ Ջահուկյանն իր աշխատություններում չի հիշատակում նման գուգահեռի մասին: Կարելի է ենթադրել, որ հեղինակը ծանոթ չէր վերջինիս հայացքներին, սակայն այլ բան է վկայում «Լեզվաբանության պատմության» մեջ Ա. Սմիռնիցկու որոշ ըմբռնումների քննությունը: Հետևաբար՝ կարծում ենք, որ Ջահուկյանը պարզապես չի ցանկացել ներկայացնել նման գուգահեռ, մանավանդ որ ժամանակագրական առումով այն նախորդել է իր ըմբռնմանը: Նշենք, որ Սմիռնիցկին ևս առաջ է քաշում լեզվի և խոսքի տարբերակման անհրաժեշտության հարցը, սակայն այն տարբերությամբ, որ լեզուն համարում է խոսքի մի բաղադրիչը: Թվում է՝ բոլորովին հակադիր մի ըմբռնում է: Սակայն առանձնացնելով լեզուն խոսքից՝ Սմիռնիցկին նշում է, որ որպես արդյունք մնում է «վերլեզվային մնացորդ», որն ինքնին լեզվաբանության ուսումնասիրության առարկա չէ: Այդ մնացորդը բաղկացած է երեք մասից՝ լեզվի գործառնման անհատական առանձնահատկություններից, լեզվական փաստերի օգտագործման հասարակայնորեն ձևավորված առանձնահատկություններից և

լեզվի գործածության հետևանքով խոսքի մեջ ձևավորված միջոցներից²³: Կարծում ենք՝ Սմիռնիցկու հենց այս դիտարկումն է հիմք հանդիսացել Ջահուկյանի համար լեզվի երեք դրսևորումները (մարդկային լեզու, խմբի լեզու, անհատի լեզու) առանձնացնելիս:

²³ См'у А. И. Смирницкий, Объективность существования языка, материалы к курсам языкознания, изд. Московского университета, Москва, 1954, էջ 14-33:

Գ. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԸ

Չնայած լեզվաբանության կառուցվածքի և դրա բաժինների փոխհարաբերության հարցը մեծ դեր ունի ընդհանուր լեզվաբանության և լեզվի տեսության մեջ, այնուամենայնիվ այն հազվադեպ է առանձին ուսումնասիրության նյութ դառնում: Գ. Ջահուկյանը նորամուծություններով է հանդես եկել նաև այս բնագավառում՝ վերոնշյալ հարցերին անդրադառնալով և լեզվաբանության կառուցվածքի իր մեկնաբանությունը, ինչպես նաև լեզվաբանական գիտակարգերի իր դասակարգումը (աստի-ճանական զարգացմամբ) ներկայացնելով մի շարք աշխատություններում («Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», «Общее и армянское языкознание», «Универсальная теория языка»):

Մինչև լեզվաբանության բաժինների քննությանն անդրադառնալը նախ ներկայացնենք, թե ինչ ասել է լեզվաբանության կառուցվածք: Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է լեզվաբանության կառուցվածք ասելով հասկանալ այն բոլոր գիտությունների ամբողջությունը, որոնց ուսումնասիրության առարկան մարդկային բնական լեզուն է: Իսկ մարդկային լեզուն, ինչպես գիտենք, շատ բարդ և բազմակողմանի երևույթ է, ուստի դրա ուսումնասիրության համար ճանաչողության զարգացմանը զուգընթաց ստեղծվել են որոշակի գիտաձյուղեր: Դրանք են լեզվաբանական գիտակարգերն (դիսցիպլիններ) ու բաժինները: Հարկ է նշել, որ լեզվաբանական գրականության մեջ դրանց առանձնացման հստակ սահմաններ չկան, երբեմն

հանդիպում են խիստ կամայական տարբերակումներ: Ջահուկյանը, առանձին ուսումնասիրության նյութ դարձնելով այս խնդիրը, գիտակարգերի և բաժինների տարանջատման հստակ սկզբունք է մշակում: Այն է՝ գիտակարգերի առանձնացման համար պետք է հիմք ծառայի օբյեկտի տարածաժամանակային ընդհանրականության աստիճանը, բաժինների համար՝ օբյեկտի բաղկացականությունը²⁴: Այսպիսով՝ լեզվաբանական գիտակարգերը լեզվի մասին գիտության բաժիններ են, որոնց ուսումնասիրության օբյեկտը լեզուն է՝ այդ հասկացության ընդհանրացման տարբեր աստիճանով, իսկ լեզվաբանության բաժինները լեզվի այնպիսի մասեր են, որոնք ուսումնասիրում են լեզվի կառուցվածքի տարբեր կողմերը: Լեզվաբանական գիտակարգերի և բաժինների միջև գոյություն ունի ազատ գուգորդման հարաբերություն: Մի կողմից՝ տարբեր գիտակարգեր կարող են ունենալ միևնույն բաժինները, մյուս կողմից՝ ամեն մի բաժին կարող է առանձնանալ ըստ տարբեր գիտակարգերի, ինչպես՝ ընդհանուր հնչյունաբանություն, պատմական հնչյունաբանություն ևն:

Ինչ վերաբերում է գիտակարգերի և բաժինների տարանջատման տարբեր մոտեցումներին, ապա անդրադառնալով դրանց՝ Ջահուկյանը մատնանշում է մի քանի *սլատճառ*:

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 37:

- **Գիտության մեջ սովորույթի դերը**

Գիտությունը մարդկային ստեղծագործության արգասիք է, հետևաբար՝ գիտության մեջ կարող է որոշակի կարևորություն ունենալ սուբյեկտիվ մոտեցումը՝ թե՛ սովորույթը, թե՛ գանազան հեղինակությունների դերը, թե՛ ժամանակի նորաձև միտումներով առաջնորդվելը: Երբեմն սովորույթի ուժով կիրառվում են ավանդական մոտեցումները՝ անտեսելով գիտության ժամանակակից վիճակն ու նոր տվյալները: Ինչպես գիտենք, պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրները հեղափոխեցին լեզվի ընկալման նկատմամբ պատկերացումները և լեզվի ուսումնասիրության մեջ սկսեցին կիրառել պատմական մոտեցումը՝ անտեսելով լեզվաբանության կառուցվածքի հարցը: Նրանք շարունակում էին կիրառել լեզվաբանական գիտակարգերի ավանդական բաժանումները՝ նյութի ավելի ռացիոնալ բաժանումը թողնելով առանձին լեզուների նորմատիվ և նկարագրական քերականությունների հեղինակներին: Հետագայում Ֆ. դը Սոսյուրը, առավելություն տալով լեզվի ուսումնասիրության համաժամանակյա (սինխրոնիկ) մոտեցմանը, լեզվաբանության առաջ կրկին նյութի ռացիոնալ դասակարգման խնդիր դրեց: Թեև, Սոսյուրն ինքը այս բնագավառում նկատելի առաջընթաց չունեցավ: Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները միայն մասնակիորեն հաղթահարեցին լեզվի համակարգման հակասությունները: Այս թերացումը բնորոշ էր նաև սերող քերականության ներկայացուցիչների աշխատանքներին, որտեղ լեզվաբանական գիտակարգերի ըմբռնումը մնում էր բավական

ավանդական հիմքի վրա: Թվում է, թե մերժելով կամ քննադատելով ավանդական մոտեցումով առաջնորդվող ներկայացուցիչներին՝ Գ. Ջահուկյանն առհասարակ դեմ է սովորույթին կամ ավանդույթին: Մինչդեռ պետք է նշել, որ այս հարցում Ջահուկյանը խիստ հետևողական և ռացիոնալ սկզբունք է դրսևորում՝ ճշգրտելով իր մոտեցումը: «Եթե սովորույթը հենվում է ռացիոնալ սկզբունքների վրա և ճշգրիտ արտահայտում է օբյեկտի կառուցվածքը, ապա այդպիսի սովորույթն անհրաժեշտ է. այդպիսի սովորույթի վրա է հենվում գիտությունը: Մինչդեռ դիտարկվող բնագավառում սովորույթը ոչ միշտ է համընկնում գիտության օբյեկտի և հենց գիտության ժամանակակից ըմբռնման հետ...»²⁵: Տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչներ, հարցը ոչ այնքան կարևոր համարելով, շրջանցում են այն կամ բավարարվում ընդհանուր դիտարկումներով: Նման մոտեցման դեպքում ի հայտ են գալիս հակասություններ ուսումնասիրության օբյեկտի տվյալների և նկարագրման համակարգի միջև:

- ***Տերմինաբանական հակասությունները***

Լեզվի կառուցվածքի առանձին կողմերի և լեզվաբանության բաժինների բնորոշման մեջ տերմինաբանական սահմանազատում չկա: Չկան առանձնացված և ընդհանուր կիրառություն գտած տերմիններ: Օր.՝ «քերականություն» տերմինը կիրառվում է մե՛կ այս, մե՛կ այն իմաստով: Երբեմն նկարագրական ձևով է բնորոշվում երևույթը, ինչպես օրինակ՝ հայերենի կառուցվածքի նկարագրություն, երբեմն օբյեկտն է նշվում գիտակարգի փոխարեն:

²⁵ Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 21:

Հարցն էլ ավելի է բարդանում, երբ գործ ենք ունենում մի քանի լեզուների հետ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին տերմինաբանությունը: Իհարկե, լեզվաբանության կառուցվածքն առաջին հերթին պայմանավորված է լեզվի կառուցվածքով, բայց լեզվական երևույթների ուսումնասիրության արդյունքների դասակարգումն ըստ առանձին բաժինների ևս կարևոր դեր ունի: Բացի այդ՝ տերմինաբանության մեջ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև լեզվի ուսուցման մեթոդաբանությունը, միևնույն հասկացությունների վրա հիմնվելու անհրաժեշտությունը՝ հետազոտության արդյունքների ամփոփումը ճշգրիտ իրականացնելու համար, ինչպես նաև արտալեզվաբանական չափանիշներն ու լեզվաբանության և գիտության մյուս ճյուղերի տվյալների համաձայնեցումը:

• ***Անհիմն և կամայական եզրահանգումները***

Որոշ հետազոտողներ հին համակարգի մեջ նոր տվյալներ են ներմուծում, կամայական եզրահանգումներ անում, տարբեր դիրքերից քննում ներկայացվող հարցը՝ առաջացնելով լեզվաբանության բաժինների և գիտակարգերի սահմանների ըմբռնման անհամակարգայնություն: Օր.՝ հայտնի է, որ լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտը լեզուն է, սակայն այս միտքը տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից տարբեր կերպ է հասկացվում և ներկայացվում՝ պայմանավորված ուսումնասիրության բնագավառի տարբերություններով, մեթոդաբանությամբ և հետազոտության հայեցակար-

գերով: Այս տարբերությունները, համապատասխանաբար, ազդում են նյութի սիստեմավորման և դասակարգման վրա:

- ***Լեզվի տարբերակայնության անտեսումը***

Որոշ հետազոտողների համար լեզվաբանության բաժինների և գիտակարգերի առանձնացման համար հիմք է ծառայում լեզու-խոսք հակադրությունը՝ առանց հաշվի առնելու լեզվի կառուցվածքի և դրա տարբերակայնության ուսումնասիրությունը: Լեզվի կառուցվածքի և դրա տարբերակայնության ուսումնասիրությունը կարող է իրականացվել կա՛մ հաջորդաբար՝ մեկը մյուսից հետո, կա՛մ մեկընդմեջ: Լեզվի և խոսքի փոխհարաբերության ջահուկյանական ըմբռնումը անհրաժեշտ է դարձնում «մեկընդմեջ քերականության» սկզբունքների մշակումը:

- ***Ընդհանուր և ոչ ընդհանուր լեզվաբանության խնդիրների տարբերակումը***

Լեզվաբանության և լեզվի մասին գիտության (գիտակարգերի) բաժինների առանձնացման ժամանակ պետք է հաշվի առնել ընդհանուր և ոչ ընդհանուր (մասնավոր, առանձնակի) լեզվաբանությունների խնդիրները և հստակ տարբերակել դրանք: Ջահուկյանը, առաջարկելով այս սկզբունքը, նշում է, որ այն պահպանված չէ որոշ հետազոտողների (Ռ. Յակոբսոն, Մ. Ֆանտ, Մ. Հալե) ուսումնասիրություններում²⁶: Թեև ընդհանրական և ոչ ընդհանրական լեզվաբանությունների տարբերակման խնդիր է դնում նաև Լ. Ելմսլը, սակայն Ջահուկյանի սկզբունքը էականորեն

²⁶ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 40:

տարբերվում է վերջինիս սկզբունքից: Ընդհանուր լեզվաբանությունը, ի տարբերություն ոչ ընդհանուր լեզվաբանության, պետք է կառուցվի ոչ թե առանձին լեզուների հայտնի փաստերի, այլ որոշ ընդհանուր սկզբունքների հիման վրա: Ընդհանուր լեզվաբանությունը քննում է հատկանիշները և հարաբերությունները, իսկ ոչ ընդհանուր լեզվաբանությունը՝ որոշակի հատկանիշ ունեցող կամ որոշակի հարաբերությամբ կապված միավորները: Ի տարբերություն Ջահուկյանի՝ Լ. Ելմսլը կարևորում էր միայն հարաբերությունները, ընդ որում՝ առանց հստակ որոշելու հարաբերությունների և հատկանիշների փոխհարաբերությունը: Ընդհանուր լեզվաբանությունը պետք է մի կողմից շեղվի տվյալ իմաստների և դրանց նյութական ձևավորման կոնկրետ միջոցներից, մյուս կողմից՝ հաշվի առնի դրանց ամբողջությունը: Այդ իսկ պատճառով էլ ընդհանուր լեզվաբանության համար գլխավոր գիտակարգեր են համարվում բովանդակության պլանի ուսմունքը՝ անկախ արտահայտության պլանից, և արտահայտության պլանի ուսմունքը՝ անկախ բովանդակության պլանից: Ոչ ընդհանուր լեզվաբանություններն առաջին հերթին գործ ունեն երկպլանային միավորների հետ՝ դիտարկելով դրանց արտահայտության պլանը, բովանդակության պլանը և այդ պլանների միավորման միջոցները առանձին-առանձին: Հետևաբար՝ լեզվաբանական գիտակարգերի դիտարկումը ընդհանուր լեզվաբանության խնդիրն է, մինչդեռ բաժինների դիտարկումը՝ ընդհանուր տիպաբանության խնդիրը: Լեզվաբանական գիտակարգերի քանակը և բնույթը կախված է

առանձնացվող մակարդակների և միավորների քանակից և բնույթից՝ նկատի ունենալով միավորների դիտարկման հնարավորությունը ստատիկ և դինամիկ տեսանկյունից, որ կառուցվածքային և սերող քերականությունների մեջ ոչ այնքան հետևողական է արվել: Լեզվաբանության բաժինների առանձնացման ժամանակ նկատի են առնվում առաջին հերթին տվյալ միավորի ներառման հնարավորությունը մյուսի մեջ, միավորների գծային և ոչ գծային փոխհարաբերությունները, արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը, հարացույցային և շարակարգային տեսանկյունների ընտրությունը, ստորոգման առկայությունը կամ բացակայությունը, հարաբերության կամ հատկանիշի առաջնային դերը, միավորի ինքնաբավ կամ ոչ ինքնաբավ բնույթը:

Եվ քանի որ արդեն պարզ է լեզվաբանական գիտակարգերի և լեզվաբանության բաժինների սահմանազատման ջահուկյանական սկզբունքը, անդրադառնանք գիտակարգերի քննությանը և տեսնենք, թե ինչ նորույթ է դրսևորել Ջահուկյանն այստեղ:

1. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՐՑԸ

20-րդ դարում լեզվաբանության մեջ նոր միտում է նկատվում. լեզուն սկսում են դիտարկել որպես հասարակական (սոցիալական) երևույթ: Եթե որոշ հետազոտողների հայացքներում դա ընդամենը տեսական հիմքեր ուներ, և դրանից համապատասխան եզրահանգումներ չէին արվում, ապա ոմանք դրան մեծ դեր էին

հատկացնում և համարում լեզվի էության բացահայտման հիմք: Այսպիսով՝ *առաջին ուղղության* կողմնակիցները «մաքրում էին» լեզվաբանությունն այլ գիտությունների տարրերից, իսկ լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտը՝ հարակից բնագավառներից և երևույթներից: Դրա հետևանքով էլ լեզվի *ներփակ* (իմանենտ) դիտարկումը վերածվեց ընդհանուր սկզբունքի, իսկ լեզուն սկսեց դիտարկվել որպես *մաքուր ձև*՝ որոշակի փակ կառուցվածք: *Երկրորդ ուղղության* ներկայացուցիչները փորձում էին հաղթահարել այս միակողմանիությունը, բացատրել լեզվի էությունը՝ ելնելով դրա հասարակական բնույթից, հաշվի առնելով այլ երևույթների հետ դրա զանազան կապերը: Փաստորեն առաջինների ուշադրության կենտրոնում ուսումնասիրության մեթոդների կատարելագործումն էր՝ մեթոդիկայի բարելավումը, իսկ երկրորդների ուսումնասիրության կենտրոնում՝ լեզվի բնույթի, տեսության և մեթոդաբանության հարցերը:

20-րդ դարի երկրորդ կեսին թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնների ազդեցությամբ այս երկու ուղղությունների մերձեցման միտում է նկատվում: Լեզվաբանները սկսում են գիտակցել, որ լեզվաբանությունը մեծ հաջողությունների կարող է հասնել այն դեպքում, եթե մի ուղղության ձեռքբերումները կիրառվեն մյուս ուղղության ներկայացուցիչների կողմից: Երկու ուղղությունների մերձեցման արտաքին ազդակ եղավ գիտությունների մերձեցման ընդհանուր միտումը՝ գիտական իմացությունների բնագավառների միավորման ուժեղացումը: Հատկապես կարևոր դեր ունեցավ

այնպիսի բնագավառների և գիտությունների առաջացումը, որոնք կապ են ստեղծում տարբեր գիտությունների միջև:

Լեզվաբանության պատմության նորագույն շրջանը բնորոշվեց ուսումնասիրության նոր բնագավառների և գիտակարգերի առաջացմամբ: Մի կողմից ի հայտ եկան հիմնական և հարակից գիտակարգեր, մյուս կողմից՝ սկսեցին սահմանազատվել տեսական և կիրառական լեզվաբանության ուսումնասիրության բնագավառները, մեծացավ անդրտեսության և անդրլեզվաբանության դերը, որը նաև մի բնագավառի կարևոր ձեռքբերումները դարձրեց մյուսների ձեռքբերումները: Եվ այսպես, լեզվաբանության մեջ ի հայտ եկան նոր միտումներ, իսկ դրան զուգընթաց՝ արվեցին լեզվաբանական գիտակարգերի դասակարգման առաջին փորձերը:

Լեզվաբանական գիտակարգերին առաջին անգամ անդրադարձել է ամերիկացի լեզվաբան *Ղ. Թրեյջերը*²⁷: Նա ոչ միայն առաջ քաշեց լեզվաբանական գիտակարգերի առանձնացման նոր սկզբունք, այլև հանդես եկավ նոր տերմինաբանությամբ: Լեզվի ուսումնասիրության ողջ բնագավառը վերջինս բնորոշեց որպես *մակրոլեզվաբանություն*, իսկ դրա համար առանձնացրեց երեք դրսևորում՝ *նախալեզվաբանություն*, որն ուսումնասիրում է լեզվաբանության համար անհրաժեշտ ֆիզիկական և կենսաբանական տվյալները, *միկրոլեզվաբանություն*, որը բուն լեզվաբանությունն է, *մետալեզվաբանություն*, որն ուսումնասիրում է լեզվի և մշակույթի մյուս համակարգերի համապատասխանությունը:

²⁷ St' u G. L. Trager, The field of linguistics, "Studies of linguistics (Occasional papers 1)", Norman (Oklahoma), 1949:

Հանդես գալով նոր տերմինաբանությամբ՝ Թրեյջերը ամեննին չէր պարտադրում դրանք, ավելին՝ կարծում էր, որ դրանք վերջնական չեն, և եթե գտնվեն ավելի հարմար տերմիններ, այս հարցը կվերանայվի: Չնայած դրան՝ *մակրոլեզվաբանություն* և *միկրոլեզվաբանություն* տերմինները լայն կիրառություն գտան: Ինչ վերաբերում է *մետալեզվաբանություն* տերմինին, ապա ներկայումս այն այլ իմաստով է գործածվում՝ որպես *մետալեզվի* ուսումնասիրության բնագավառ²⁸:


«Общее и армянское языкознание» աշխատության մեջ Ջահուկյանը, անդրադառնալով «մակրոլեզվաբանությանը»՝ որպես լեզվի մասին գիտության ընդհանուր բնագավառի և «միկրոլեզվաբանությանը»՝ որպես բուն լեզվաբանության, նշում է, որ նման մոտեցման դեպքում գիտակարգերի դասակարգումն էլ պետք է երկու ուղղությամբ ընթանա²⁹: Այսինքն՝ առանձնացվում են գիտակարգեր, որոնց ուսումնասիրության առարկան լեզվաբանական խնդիրներն են, և գիտակարգեր, որոնք բուն լեզվաբանության մեջ են ընդգրկվում: Ընդ որում՝ պետք է նշել, որ մակրոլեզվաբանության գիտակարգերի դասակարգմանը Ջահուկյանն անդրադարձել է միայն «Общее и армянское языкознание» աշխատության մեջ, մյուս աշխատություններում ներկայացվում է միայն միկրոլեզվաբանական, այսինքն՝ բուն լեզվաբանական գիտակարգերի դասակարգումը:

²⁸ Э. Хемп, Словарь американской лингвистической терминологии, М., 1964, с. 109-110:

²⁹ Տե՛ս Գ. Ժաուկյան, Общее и армянское языкознание, Е., 1978, էջ 38:

Այսպիսով՝ առաջին խմբի՝ մակրոլեզվաբանության գիտակարգերի դասակարգման համար պետք է դուրս գալ լեզվաբանության սահմաններից և նկատի ունենալ նաև մյուս գիտությունների դասակարգման տվյալները: Մինչդեռ, ինչպես գիտենք, գիտությունների միանշանակ ընդունված դասակարգում չկա, իսկ սխալ կամ ոչ ճշգրիտ դասակարգման հետևանքով սխալ եզրահանգումների վտանգ կա: Բացի այդ՝ բոլոր գիտություններն էլ այս կամ այն կերպ առնչվում են լեզվին, իսկ դա բավարար պայման չէ դրանք գիտակարգեր համարելու: Բայց, ինչպես իրավացիորեն նշում է Ջահուկյանը, կարելի է նկատի ունենալ այդ բոլոր գիտությունների առնչություններն ու փոխհարաբերությունները և դրա հիման վրա էլ կատարել գիտակարգերի դասակարգում: Տարբեր գիտությունների և լեզվաբանության հարաբերությունները պարզելու և ներկայացնելու համար Ջահուկյանն օգտվում է հարաբերությունների նշանակման իր առաջարկած համակարգից, որը կիրառվում է համընդհանուր լեզվաբանական կադապարի մեջ³⁰: Ըստ այդմ՝ օգտվելով հինգ *հարաբերիչներից* (հիմնական՝ —, հակադիր՝ ←, միջին՝ →, համատեղական՝ ↔, անդրադարձ՝ ↻)՝ ստանում է մակրոլեզվաբանության հինգ գի-տակարգ, որոնց հարաբերությունները ներկայացնում է համապատասխան զծապատկերով.

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 39:



Այսինքն՝ բուն լեզվաբանության համար Ջահուկյանը թողնում է *միկրոլեզվաբանություն* կամ *միկրոլինգվիստիկա* տերմինը, իսկ առաջին խմբի գիտակարգերի համար, ի տարբերություն Թրեյջերի, առաջարկում է *պրոլինգվիստիկա*, որպեսզի տերմինակերտման մեջ որոշակի միասնություն լինի (բոլոր տերմինները կազմվել են հունարեն նախածանցներով): Երկրորդ խմբի համար առաջարկում է *ապոլինգվիստիկա*, երրորդի համար՝ *պերիլինգվիստիկա*, իսկ վերջինի համար՝ թողնում է *մետալինգվիստիկա* տերմինը: Այնուհետև հեղինակը ներկայացնում է, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում այս գիտակարգերը լեզվաբանության հետ. պերիլինգվիստիկան և՛ ուղղված է դեպի լեզվաբանությունը, և՛ դրանից դուրս է, պրոլինգվիստիկան միայն դեպի լեզվաբանությունն ուղղվածություն ունի, իսկ ապոլինգվիստիկան՝ լեզվաբանությունից դուրս: Չնայած պետք է նշել, որ նման դասակարգումը պայմանական բնույթ ունի, քանի որ

գիտության զարգացման ժամանակակից փուլում տարբեր գիտաճյուղեր սերտ կապերի մեջ են, և դժվար է հստակ որոշել դրանց դասակարգման սահմանները: Այնուամենայնիվ, Ջահուկյանը պայմանականորեն ներկայացնում է նաև այդ գիտակարգերի ուսումնասիրության սահմանները, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ տվյալներից է օգտվում: Այսպես՝ **պրոլինգվիստիկայի** գիտակարգի մեջ ընդգրկվում են այն գիտաճյուղերը, որոնք օգտվում են ինչպես բնական, այնպես էլ ընդհանուր և սինթետիկ գիտությունների տվյալներից: Դրանք են *փորձառական հնչյունաբանությունը, լեզվաշխարհագրությունը, լեզվակենսաբանությունը, լեզվամարդաբանությունը, լեզվափիլիսոփայությունը, մաթեմատիկական լեզվաբանությունը, կիրենոետիկական լեզվաբանությունը՝ լինգվոնիկան, լեզվանշանագիտությունը*: **Ապրոլինգվիստիկայի** գիտակարգը կիրառական լեզվաբանության գիտակարգ է, որտեղ ընդգրկվում են հետևյալ գիտաճյուղերը՝ *լեզվի ուսուցման մեթոդիկան, կիրառական բարագիտությունը, տեխնոլեզվաբանությունը, պաթոլեզվաբանությունը*: **Պրելինգվիստիկայի** գիտակարգի մեջ ընդգրկվում են այն գիտաճյուղերը, որոնք կամուրջ են ստեղծում լեզվաբանության և մյուս հասարակական գիտությունների միջև, ինչպես՝ *պալեոլեզվաբանությունը, հանրալեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը*³¹: **Մետալինգվիստիկան** Ջահուկյանը լայն իմաստով է

³¹ Խոսելով հոգելեզվաբանության մասին՝ Ջահուկյանը նշում է, որ լեզվաբանական գրականության մեջ թյուր կարծիք է իշխում, թե լեզվաբանությունը զբաղվում է լեզվի, իսկ հոգելեզվաբանությունը՝ խոսքի

ըմբռնում, ուստի այս խմբին է դասում այն ամենը, ինչը բուն լեզվաբանությանը և մակրոլեզվաբանության մյուս բնագավառներին չի վերաբերում: Այս խմբում են ընդգրկվում *լեզվաբանության պատմությունը, լեզվաբանական տերմինաբանությունը, լեզվաբանական մեթոդաբանությունը, լեզվաբանական կառուցվածքայնությունը*:

Ինչ վերաբերում է **երկրորդ խմբի՝ միկրոլեզվաբանական գիտակարգերի** դասակարգմանը, ապա այս դեպքում այլ չափանիշներ են կիրառվում: Ջահուկյանը որպես կարևոր հատկանիշներ նշում է հետևյալը.

1. Ընդհանրացման աստիճանը,
2. Օբյեկտի դիտարկումը համաժամանակյա (սինխրոնիկ) և տարաժամանակյա կամ պատմական (դիախրոնիկ) տեսակետից,
3. Օբյեկտի փոփոխականությունը (վարիատիվությունը) և անփոփոխականությունը (ինվարիանտությունը):

Ըստ ընդհանրացման աստիճանի՝ «Общее и армянское языкознание» աշխատության մեջ հեղինակն առանձնացնում է 5 տիպի լեզվաբանություն՝ *ընդհանուր, մասնավոր, առանձնակի, բարբառագիտական, անհատական*³²: *Մասնավոր* լեզվաբա-

նումնապիրությամբ: Մինչդեռ իրականում ուսումնասիրության օբյեկտը լեզուն է՝ իր դրսևորման՝ խոսքի հետ մեկտեղ, բայց տարբեր տեսանկյուններից, տարբեր նպատակներով և տարբեր մեթոդներով:

³² Մյուս բոլոր աշխատություններում, ըստ ընդհանրացման աստիճանի, Ջահուկյանն առանձնացնում է լեզվի երեք դրսևորում՝ ընդհանրական,

նությունը, ինչպես նաև *բարբառագիտությունը*, օբյեկտի բնույթով պայմանավորված, կարող են ընդհանրացման տարբեր աստիճան ունենալ: *Առանձնակի* լեզվաբանությունն ուսումնասիրում է առանձին լեզուները: *Անհատական* կամ *հեղինակային* լեզվաբանությունն ուսումնասիրում է անհատների լեզուն՝ սովորաբար գրավոր ժառանգության միջոցով:

Ինչ վերաբերում է օբյեկտի դիտարկմանը համաժամանակյա (սինխրոնիկ) և տարաժամանակյա կամ պատմական (դիախրոնիկ) տեսակետներից, ապա, ըստ այդ հատկանիշի, կարելի է առանձնացնել երկու տիպի գիտակարգեր՝ *դիալինգվիստիկա* և *սիլլինգվիստիկա* (սինլինգվիստիկա): Դիախրոնիզմը համարվում է լեզվի բացարձակ որակ և դրսևորվում է նրա դինամիկայի մեջ, իսկ սինխրոնիզմը հանդես է գալիս որպես լեզվին տվյալ ժամանակահատվածում որոշակիորեն վերաբերող, բնորոշող հայեցակարգ: Օր.՝ որևէ հանրության լեզվի ուսումնասիրության համար համաժամանակյա կտրվածքը համարվում է կարևոր, քանի որ շփումը պահանջում է լեզվի հենց տվյալ վիճակի իմացություն: Ինչ վերաբերում է անհատական լեզվաբանությանը, ապա տվյալ դեպքում սինխրոնիզմի և դիախրոնիզմի խիստ տարբերակում չի կատարվում, բայց այն հնարավոր է:

Խոսելով լեզվի և խոսքի տարբերակման մասին՝ Մոսյորն առաջարկում էր առանձնացնել *լեզվի լեզվաբանություն* և *խոսքի*

առանձնակի և անհատական, դրանով էլ պայմանավորված գիտակարգերի այլ քանակ է ներկայացնում:

*լեզվաբանություն*³³: Մինչդեռ, խոսքի լեզվաբանություն՝ որպես այդպիսին, չհաջողվեց ստեղծել ո՛չ Սոսյուրին, ո՛չ էլ նրա հետևորդներին: Խնդիրն այն է, որ խոսքը՝ որպես լեզվի իրացում, լեզվաբանին հետաքրքրում է ոչ թե որպես նպատակ, այլ որպես միջոց, որպես լեզվի բացահայտման միջոց: Հետևաբար՝ լեզվի ուսումնասիրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Ջահուկյանը, կարող է երկու նպատակ ունենալ՝ 1. բացահայտել ընդհանուրը՝ որպես որոշակի լեզվական անփոփոխակ (ինվարիանտ), 2. ցույց տալ, թե ինչպիսի տարբերակներ կարող է ունենալ այդ անփոփոխակը: Այսպիսով՝ *լեզվի լեզվաբանության* և *խոսքի լեզվաբանության* փոխարեն Ջահուկյանն առաջարկում է տարբերակել *անփոփոխակային* և *փոփոխակային* լեզվաբանություն: Լեզուն գտնվում է մշտական փոփոխման մեջ և քանի որ գոյություն ունի տարբերակների ձևով, ուստի փոփոխակայնությունը լեզվի համար բացարձակ հատկանիշ է, իսկ անփոփոխակայնությունը հանդես է գալիս որպես վերացարկում և նկատի ունի փոփոխակների ամբողջությունը:

Ըստ *փոփոխակայնության (վարիատիվություն)* և *անփոփոխակայնության (ինվարիանտություն)* հատկանիշի՝ կարելի է առանձնացնել երկու տիպի գիտակարգեր.

1. Գիտակարգեր, որոնք ուսումնասիրում են անփոփոխակային օբյեկտը՝ որպես որոշակի իդեալական վիճակ, որը գոյություն ունի որպես ստանդարտ լեզու կամ կարող է վերականգնվել որպես այդպիսին:

³³ Տե՛ս Փ. де Соссюр, Курс общей лингвистики, Е., 1999:

2. Գիտակարգեր, որոնք ուսումնասիրում են օբյեկտի տարբերակները: Փոփոխակայնությունը լայն իմաստով ներառում է տարածաժամանակային, հասարակական-գործառական, կառուցվածքային-համակարգային տարբերակները:

Պետք է նշել սակայն, որ փոփոխակայնության տարածաժամանակային տարբերակներն արդեն նկատի են առնվել՝ ըստ առաջին հատկանիշի, բացի այդ՝ ընդհանրացման տարբերաստիճաններում և ժամանակագրական տարբեր կտրվածքներում կարևորվում է մե՛կ այս, մե՛կ այն տարբերակը, երբեմն էլ դրանք հանդես են գալիս միասնաբար, իսկ երբեմն դրանց միջև կապը լիովին խզվում է: Օր.՝ ռճագիտությունը, հանդես գալով որպես առանձնակի փոփոխակային լեզվաբանություն, ուսումնասիրում է հասարակական-գործառական և իրադրային-անհատական տարբերակները: Լինում են դեպքեր, երբ մեկ ընդհանուր գիտակարգն ուսումնասիրում է ն՛ անփոփոխակները, ն՛ բոլոր կամ որոշ փոփոխակներ: Օր.՝ համեմատական որևէ գիտակարգ կարող է ուսումնասիրել ընդհանուր լեզվի վերականգնումը՝ ն՛ լեզուների ցեղակցությունը պարզելու, ն՛ դրա տարածքային բնութագիրը կազմելու, ն՛ գոյություն ունեցող լեզուներում դրա հետագա տարբերակը փնտրելու համար:

Ի վերջո, վերոնշյալ հատկանիշները միավորելով (նախ՝ ըստ երկու հատկանիշների, այնուհետև՝ ըստ երեք հատկանիշների)՝ Ջահուկյանն առանձնացնում է միկրոլեզվաբանական նախ 10, այնուհետև՝ 20 գիտակարգ: Լեզվաբանական գիտակարգերի անվանումների մեջ Ջահուկյանը բազմաթիվ նոր տերմիններ է

կերտում, դրանց զուգահեռ ներկայացնում է նաև լեզվաբանական գրականության մեջ տվյալ երևույթների արդեն հայտնի անվանումները: Սակայն, ինչպես ժամանակին Թրեյջերը, Ջահուկյանը ևս նշում է, որ թե՛ վերոնշյալ դասակարգումը, թե՛ առաջարկվող նոր տերմինները վերջնական չեն:

Հետագայում, զարգացնելով հայացքները ընդհանուր լեզվաբանական իր վերջին աշխատության մեջ («Универсальная теория языка»), Ջահուկյանը, նկատի ունենալով «լեզու» հասկացության երեք հիմնական կիրառությունները՝ *ընդհանուր, առանձնակի* և *անհատական*, համապատասխանաբար առանձնացնում է լեզվաբանության երեք խումբ՝ *պանլեզվաբանություն, մոնոլեզվաբանություն, իդիոլեզվաբանություն*: Նկատի ունենալով, որ ընդհանրացումը բնորոշ է լեզվի նկատմամբ բոլոր տեսանկյուններին՝ պանլեզվաբանությունը կարելի է անվանել ընդհանրական լեզվաբանություն կամ լեզվի համընդհանուր տեսություն: Նշված երեք գիտակարգերից յուրաքանչյուրի համար էլ առանձնացնելով փոփոխակային (վարիատիվ) և անփոփոխակային (ինվարիանտ) հատկանիշներ՝ ի վերջո գիտակարգերի թիվը հասցնում է վեցի՝ 1. *ընդհանրական անփոփոխակային լեզվաբանություն* (ինվարիանտ պանլեզվաբանություն), 2. *ընդհանրական փոփոխակային լեզվաբանություն* (վարիատիվ պանլեզվաբանություն), 3. *առանձնակի անփոփոխակային լեզվաբանություն* (ինվարիանտ մոնոլեզվաբանություն), 4. *առանձնակի փոփոխակային լեզվաբանություն* (վարիատիվ մոնոլեզվաբանություն), 5. *անհատական անփոփոխակային լեզվաբանություն* (ինվարիանտ

իդիոլեզվաբանություն), 6. *անհատական փոփոխակային լեզվաբանություն* (վարիատիվ իդիոլեզվաբանություն)³⁴:

Ընդհանրական անփոփոխակային լեզվաբանության հիմնական խնդիրը համընդհանուր լեզվաբանական կադապարի կառուցումն է, որը, ըստ էության, առանձնակի լեզվաբանության կադապարների ընդհանրացումն է, հետևաբար՝ այն կիրառելի է բոլոր լեզուների նկատմամբ: Այս գիտակարգն ունի հարցերի ընդգրկման ամենալայն շրջանակը:

Ընդհանրական փոփոխակային լեզվաբանությունը համընդհանուր տիպաբանական տեսությունն է, որտեղ ներկայացվում են համընդհանուր լեզվաբանական կադապարի մեջ առանձնացված բովանդակության պլանի միավորների և միևնույն կադապարի մեջ նկարագրված արտահայտության պլանի միավորների փոխհարաբերությունը, առանձին լեզուների մակարդակների առանձնացումը, ինչպես նաև ընդհանրությունների տեսությունը:

Առանձնակի անփոփոխակային լեզվաբանությունը առանձին լեզվական հանրույթի ստանդարտ լեզվավիճակի, այսինքն՝ գրական, նորմավորված լեզվի նկարագրությունն է:

Առանձնակի փոփոխակային լեզվաբանությունը հիմնականում նկարագրում է առանձին լեզուների տարածական և ոճական տարբերակները՝ կազմելով բարբառագիտությունը և ոճագիտությունը:

³⁴ Տե՛ս Գ. Джаукян, Универсальная теория языка, М., 1999, էջ 17:

Անհատական անփոփոխակային լեզվաբանությունը զբաղվում է որևէ անհատի, մասնավորապես որևէ հեղինակի լեզվի ուսումնասիրությամբ:

Վերջապես, *անհատական փոփոխակային լեզվաբանությունը* ուսումնասիրում է որևէ անհատի խոսքային գործընթացի ընթացքում ի հայտ եկող ֆիզիոլոգիական և հոգեկան մեխանիզմները:

Ինչպես նախորդ աշխատություններում, այնպես էլ այս աշխատության մեջ Ջահուկյանը առանձնացնում է լեզվի համաժամանակյա (սինխրոնիկ) և տարաժամանակյա (դիսխրոնիկ) կտրվածքներ՝ դրանք համապատասխանաբար տարածելով նշված գիտակարգերի վրա, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրը դիտարկելով նաև այդ տեսանկյուններից՝ կրկնապատկելով դրանց քանակը: Լեզվաբանական գիտակարգերի փոխհարաբերությունն այստեղ ևս Ջահուկյանը ներկայացնում է համապատասխան գծապատկերով:

2. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՎ ԼԵԶՎԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Լեզվական մակարդակների գաղափարը քսաներորդ դարի լեզվաբանության հիմնարար հասկացություններից է, որը հենվում է *լեզվական կառուցվածքի* գաղափարի վրա: Հետևաբար՝ նախ պարզենք, թե ինչ է կառուցվածքն ընդհանրապես և մասնավորապես լեզվական կառուցվածքը: *Կառուցվածքը* որոշակի տարրերի, դրանց

հարաբերությունների և օբյեկտի ամբողջականության պայմանական միասնությունն է: Որպես ուսումնասիրության օբյեկտի կառուցվածքի բաղադրիչներ կարող են հանդես գալ տարբեր հասկացություններ: Գիտական գրականության մեջ (փիլիսոփայական) կառուցվածք ասելով՝ հասկանում էին ձև՝ որպես բովանդակության հակադրություն: *Լեզվական կառուցվածքի* հասկացությունը ի հայտ է եկել քսաներորդ դարում: Լեզվական կառուցվածքը միմյանց նկատմամբ ստորակարգային հարաբերության մեջ գտնվող միավորների խմբերն են: Պետք է նշել սակայն, որ գիտական գրականության մեջ «կառուցվածք» հասկացությունը միանշանակ չի ըմբռնվում. հաճախ այն դիտարկվում է «համակարգի» իմաստով³⁵: Իսկ ո՞րն է կառուցվածքի և համակարգի տարբերությունը: Ջահուկյանի եզրահանգումը հետևյալն է. տարբերությունը հարաբերությունների տիպն է: Կառուցվածքի մեջ այդ հարաբերությունները բնութագրվում են ստորակարգությամբ: Այսինքն՝ միավորները միևնույն հարթության վրա չեն գտնվում, կան ստորին և վերին կարգի միավորներ: Հետևաբար՝ կառուցվածքը ենթադրում է ներառման հարաբերություն: Ինչ վերաբերում է համակարգին, ապա այն միատեսակ հատկանիշներով բնորոշվող միավորների բազմություն է: Տվյալ համակարգը կարող է բաղկացած լինել այլ համակարգերից՝

³⁵http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/3407/%D0%A1%D0%A2%D0%A0%D0%A3%D0%9A%D0%A2%D0%A3%D0%A0%D0%90,

“Философская энцикопедия” в 5-х т., М., «Советская энциклопедия», под редакцией Ф. В. Константинова, 1960-1970.

ենթահամակարգերից, սակայն դա չի նշանակում, թե դրանց միջև ներառման հարաբերություն է: Համակարգի դեպքում բաղադրիչների միջև միավորման հարաբերություն է: Այսպիսով՝ կառուցվածքը ստորակարգությամբ միմյանց հետ կապված միավորների ամբողջությունն է, իսկ ինչ վերաբերում է մակարդակին, ապա վերջինս արտացոլում է այդ ստորակարգությունը, ուստի պարզենք, թե ինչ է մակարդակը:

«Մակարդակ» տերմինով նշանակում են ոչ միայն լեզվի ներքին կառուցվածքի հետ կապված երևույթները, այլև լեզվի զանազան կողմերը: Օր.՝ ասում են կառուցվածքի մակարդակ, նորմի մակարդակ, լեզվական կամ խոսքային մակարդակ և այլն: Սրանք, պետք է նշել, որ «մակարդակ» տերմինի ոչ ճշգրիտ կիրառություններ են, «մակարդակ» ասելով՝ պետք է հասկանալ լեզվի ներքին կառուցվածքի յուրահատկությունը, այսինքն՝ միմյանց հետ համակարգային կապերի մեջ մտնող միավորների խմբեր, որ այլ խմբերի նկատմամբ ստորակարգային են:

Մակարդակի հասկացությունը կապվում է կառուցվածքային լեզվաբանության հետ, քանի որ լեզուն ըմբռնվում է որպես կառուցվածք: Ամեն մի կառուցվածք ներկայացնում է մակարդակների որոշ ամբողջություն: Այսինքն՝ կառուցվածքը ենթադրում է որոշակի մակարդակներ, որոնց միջոցով այն վերլուծվում և համադրվում է: Պետք է նշել սակայն, որ կառուցվածքային լեզվաբանությունը մակարդակի ոչ մի հասկացություն չի ստեղծել:

Մակարդակների քանակի և դրանց միավորների վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ տարակարծություններ կան. լեզվաբանները մակարդակների տարբեր քանակ և միավորներ են առանձնացնում:

Ավելի տարածված է մակարդակների դասակարգումը՝ ըստ լեզվաբանության բաժինների ավանդական բաժանման՝ հնչյունաբանության, բառագիտության, շարահյուսության, իմաստաբանության: Մակարդակների նման ըմբռնմանն ավելի մոտ է *Է. Բենվենիստի*՝ լեզվաբանական վերլուծության մակարդակների *դասակարգումը*³⁶: Սա մակարդակների առաջին դասակարգումներից է. հատվածավորման (սեգմենտացիայի) և փոխարինման (սուբստիտուցիայի) հնարների գործադրմամբ առանձնացվում են հետևյալ մակարդակները.

1. *մերիզմատիկ* (տարրությային)՝ հնչյունների տարբերակիչ հատկանիշների մակարդակ. սրա միավորն է տարրությը,

2. *հնչույթային*. միավորն է հնչույթը,

3. *նշանային* (բառային մակարդակ). միավորն է բառը,

4. *ստորոգական* (նախադասության մակարդակ).

միավորն է նախադասությունը:

Բենվենիստը հատուկ մակարդակ չի առանձնացնում ձևույթի և բառակապակցության համար՝ կարծելով, որ ձևույթը նույն բառն է, բայց բառից տարբերվում է կապակցված լինելով, մինչդեռ բառը

³⁶ Տե՛ս «Новое в лингвистике», т. 4, М., 1965, էջ 434-449:

անկախ է: Ինչ վերաբերում է բառակապակցությանը, ապա վերջինս բառին հավասարագոր է համարում:

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով Բենվենիստի դասակարգմանը, որոշ հակասություններ է նկատում³⁷.

1. Բենվենիստը հավասարապես միավոր է համարում թե՛ տարրույթը, թե՛ հնչույթը, թե՛ բառը և թե՛ նախադասությունը: Վերջին երեքը լեզվի իրական միավորներն են, իսկ տարրույթները առանձին գոյություն չունեն, դրանք հնչույթների տարբերակիչ հատկանիշներն են, և կարելի է պարզաբանել միայն լեզվաբանական քննությամբ: Ելնելով դրանից՝ Ջահուկյանը մակարդակների թվից հանում է մերիզմատիկը:

2. Ինչ վերաբերում է հնչույթին, դժվար չէ նկատել, որ այն տարբեր է բառից և նախադասությունից: Հնչույթը միապլանային միավոր է և ունի միայն արտահայտության պլան՝ ձև: Իսկ նախադասությունը և բառը երկպլանային են: Հետևաբար՝ հակասություն է ստեղծվում: Ուստի Ջահուկյանը հնչույթայինը ևս հանում է մակարդակների միջից: Այսպիսով՝ Ջահուկյանը մակարդակային է համարում միայն երկպլանային միավորները՝ բառը և նախադասությունը:

3. Բենվենիստը տարբերակիչ հատկանիշներ առանձնացնում է միայն հնչույթների համար, բայց չէ՞ որ տարբերակիչ հատկանիշներ կարող է ունենալ ցանկացած

³⁷ Г. Джаукян, О соотношении лингвистических единиц и их различительных признаков, “Теоритические и практические вопросы преподавания иностранных языков”, Москва, 1970, с. 7-22.

լեզվական միավոր: Ուստի, եթե հնչույթի համար առանձնացվում են տարբերակիչ հատկանիշներ՝ տարրույթներ, ապա պետք է առանձնացնել նաև բառերի և նախադասությունների համար: Ջահուկյանն առաջարկում է լեզվական կառուցվածքին անդրադառնալիս նկատի ունենալ ոչ միայն մակարդակներն ու միավորները, այլև տարբերակիչ հատկանիշները: Հետևաբար՝ մակարդակների պատկերը աղյուսակի ձևով կունենա ոչ թե երկու, այլ երեք սյունակ՝ *մակարդակ – միավոր – տարբերակիչ հատկանիշ*.

	<i>մակարդակ</i>	<i>միավոր</i>	<i>տարբերակիչ հատկանիշ</i>
1	Մերիզմատիկ	Տարրույթ	—
2	Հնչույթային	Հնչույթ	Տարրույթ
3	Նշանային	Բառ	Բառային
4	Ստորոգական	Նախադասություն	Նախադասական

Մակարդակների մեկ այլ դասակարգում, ավելի մոտ սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ մակարդակների ըմբռնմանը, բայց դարձյալ դրանից տարբեր, առաջարկում է Գ. Գլխոնը՝ առանձնացնելով երկպլանային միավորներ՝ սկսած նախադասությունից մինչև դրա բաղադրիչներ, ինքնին նախադասությունը (sentence), պարզ նախադասությունը (clause), նախադասության մասը (phrase), բառը (word) և ձևույթը

(morpheme)³⁸: Ըստ Գլիսոնի՝ մակարդակներն ունեն հակառակ հաջորդականություն, ընդ որում՝ առաջին մակարդակը համարվում է բարդ նախադասությունը՝ բարդ նախադասություն (sentence), պարզ նախադասություն (clause), բառակապակցություն (phrase), բառ (word), ձևույթ (morpheme), հնչույթ (phoneme):

Մեկ այլ դասակարգում է առաջարկում ֆրանսիացի լեզվաբան *Ս. Մարտինեն*³⁹, որ առանձնացնում է երկու մակարդակ.

1. միապլանային մակարդակ՝ ֆոնեմա՝ հնչույթներ, որի միավորներին բնորոշ է նշանատարբերակիչ (դիստինկտիվ կամ օպոզիտիվ) գործառույթ,

2. երկապլանային մակարդակ՝ մոնեմա՝ իմաստակիր միավորներ և դրանց համակցություններ:

Լ. Ելմսլեր, մակարդակներ ասելով, հասկանում է արտահայտության պլանը և բովանդակության պլանը⁴⁰: Ջ. Լայոնզը հստակ տարբերակում է պլանները և մակարդակները՝ խոսելով երկու պլանների մասին՝ արտահայտության և բովանդակության, ինչպես նաև երկու մակարդակների՝ հնչյունաբանության և քերականության⁴¹:

Գ. Ջահուկյանն իր սկզբնական աշխատություններում համընդհանուր լեզվաբանական տեսության մշակման նախնական

³⁸ H. A. Gleason, An introduction to descriptive linguistics, Holt, Rinehart and Winston, 1961, p. 66.

³⁹ Տե՛ս Ա. Мартине, Основы общей лингвистики, “Новое в лингвистике”, вып. 3, М., 1963:

⁴⁰ Տե՛ս Լ. Ельмслев, Прологомены к теории языка, “Новое в лингвистике”, вып. 1, М., 1960:

⁴¹ Տե՛ս Դж. Лайонз, Введение в теоретическую лингвистику, М., 1978:

փուլում առաջարկում է միայն երկպլանային միավորների երկու մակարդակ՝ բառ, նախադասություն⁴²: Ընդ որում՝ այս երկու պլանների նկատմամբ երկու մոտեցում է ցուցաբերում. 1. հետազոտությունը սկսում է արտահայտության պլանից և գնում դեպի բովանդակության պլան, այսինքն՝ թե ինչ կապակցություններ կան և ինչ իմաստ են արտահայտում, 2. ընդհակառակը՝ նախ պարզում է իմաստները, հետո տեսնում, թե ինչ հնչակապակցություններով են արտահայտվում:

Հետագայում «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը նշում է, որ կարելի է առանձնացնել կառուցվածքային չորս մակարդակ՝ յուրաքանչյուրի մեջ էլ համապատասխանաբար երկուական ենթամակարդակ, սակայն այդ դեպքում հաշվի չեն առնվի ամբողջական խոսքի՝ տեքստի լեզվաբանական ուսումնասիրության հարցերը⁴³:

Գ. Ջահուկյանի համոզմամբ՝ լեզվի կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված՝ մակարդակային և ենթամակարդակային տարբերությունները կարող են արտահայտված լինել որոշ հատակությամբ և տարբեր միջոցներով ու եղանակներով: Բացի այդ՝ ենթամակարդակների մեջ կարելի է տարբերակել համապատասխան քանակությամբ իրար ստորադաս-

⁴² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967: Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969: Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974:

⁴³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 19:

վող մակարդակներ, որոնք, սակայն, մնում են այդ ենթամակարդակների սահմաններում և նոր ենթամակարդակներ չեն կազմում:

Ներկայումս, հատկապես ուսումնական դասընթացներում կիրառվող սկզբունքի համաձայն, շատ տարածված են «մակարդակ» տերմինի ոչ ճշգրիտ կիրառություններ, երբ յուրաքանչյուր միավորի համար մեկ մակարդակ են առանձնացնում: Գ. Ջահուկյանը ենթամակարդակների ու մակարդակների համար առանձնացնում է համապատասխան **միավորներ**: Օր.՝ *արմատ* (ենթամակարդակում՝ բուն արմատ, արմատահիմք կամ արմատական հիմք), *բառ* (ենթամակարդակում՝ բառույթ, բառածև), *շարույթ* (ենթամակարդակում՝ ենթաշարույթ, լիաշարույթ), *նախադասություն* (ենթամակարդակում՝ պարզ նախադասություն, բարդ նախադասություն):

Մակարդակների և մակարդակային միավորների ուսումնասիրության համար համապատասխանաբար առանձնացվում են լեզվաբանական հետևյալ **բաժինները**՝ *արմատագիտություն* (բուն արմատագիտություն, արմատահիմքի ուսմունք), *բառագիտություն* (բառակազմության ուսմունք, ձևաբանություն), *շարույթաբանություն* (ենթաշարույթի ուսմունք, լիաշարույթի ուսմունք), *շարահյուսություն* (պարզ նախադասության ուսմունք, բարդ նախադասության ուսմունք):

Ընդհանրապես մակարդակային և ենթամակարդակային միավորների միջև առկա է ներառման հարաբերություն, այսինքն՝ յուրաքանչյուր ստորին մակարդակի ու ենթամակարդակի միավոր ներառվում է ավելի բարձր մակարդակի ու ենթամակարդակի

միավորի մեջ, և համապատասխանաբար յուրաքանչյուր վերին մակարդակի ու ենթամակարդակի միավոր ներառում է ստորին մակարդակի ու ենթամակարդակի միավորը: Սակայն պետք է նկատի ունենալ երկու հանգամանք.

1. Առհասարակ յուրաքանչյուր մակարդակային և ենթամակարդակային միավոր բաղկացած է լինում միջուկից և առմիջուկային բաղադրիչից կամ բաղադրիչներից: Օր.՝ արմատական հիմքը կարող է բաղկացած լինել բուն արմատից՝ որպես միջուկ, և այնպիսի տարրերից՝ որպես առմիջուկային տարրեր, ինչպիսիք են աճականները, հնչափոխույթները, հատուկ հիմքակազմ տարրերը: Պետք է նշել սակայն, որ տվյալ մակարդակային միավորը կարող է բաղկացած լինել միայն միջուկից, այսինքն՝ ունենալ զրո առմիջուկային տարր: Այս դեպքում ներառման հարաբերությունը ներկայանում է որպես *հավասարության* հարաբերություն: Հնարավոր են նույնիսկ դեպքեր, երբ, օրինակ, արմատը ներկայանա միաժամանակ որպես արմատական հիմք, բուն բառ, բառաձև, ենթաշարույթ, շարույթ: Օր.՝ *պատ* բառը *պատ կա* նախադասության մեջ:

2. Պետք է նկատի ունենալ, որ եթե արմատային, բառային, շարույթային մակարդակային միավորների հարաբերությունը կարելի է ներկայացնել որպես ներառության կամ հավասարության հարաբերություն, ապա նույնը չէ նախադասական մակարդակի դեպքում: Այս դեպքում պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. նախադասությունը ոչ միայն ներառում է շարույթ կամ շարույթներ, այլև ունի մի յուրահատուկ տարբերակիչ

հատկանիշ՝ ստորոգում: Եթե նույնիսկ նախադասությունը բաղկացած լինի միայն մեկ շարույթից, ապա, միննույն է, չի կարող հավասար լինել նրան: Հավասարություն կարող է լինել միայն այն դեպքում եթե բոլոր մակարդակների համար տարբերենք ստորոգական և ոչ ստորոգական դրսևորումներ, կամ նախադասական մակարդակում հիմք ընդունենք միայն նախադասության ոչ ստորոգական (փոխակերպված) ձևը:

Գ. Ջահուկյանը կարևորում է մի հանգամանք ևս. պարզ նախադասության բուն տիպը համարում է գոյորոշ հարաբերություններ արտահայտող տեսակները, բարդ նախադասություններիինը՝ առգոյորոշ:

Ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության սկզբունքների՝ հեղինակը կարծում է, որ մակարդակ կարող են ստեղծել միայն թե՛ արտահայտության պլան (հնչյունական կողմ կամ արտահայտության համապատասխան այլ միջոցներ) և թե՛ բովանդակության պլան (իմաստ) ունեցող միավորները:

Այսպիսով՝ սրանց քննությունը կարելի է համարել 1. նրանց կառուցվածքային բոլոր տիպի կաղապարների սահմանում (ըստ առմիջուկային բաղադրիչների քանակի, հաջորդականության և պարտադրականության), 2. իրացման բոլոր հնարավոր միջոցների (արտահայտության պլան), արտահայտած իմաստների (բովանդակության պլան) և սրանց փոխհարաբերության եղանակների (համանունության, բազմիմաստության և հոմանիշության դեպքերի) բացահայտում, 3. կաղապարների ներքին ու արտաքին

հարաբերությունների և անցումների բոլոր հնարավոր տիպերի որոշում:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ մակարդակային միավորների քննությունը փաստորեն սահմանափակվում է առմիջուկային տարրերի քննությամբ. միջուկային տարրերի քննությունը կատարվում է ավելի ստորին մակարդակում՝ ենթամակարդակում:

Պայմանականորեն ընդհանրացնելով յուրաքանչյուր մակարդակային միավորի կադապարները՝ Գ. Ջահուկյանը մակարդակային միավորների կառուցվածքը ներկայացնում է հետևյալ բանաձևով՝ $A(a_1)(a_2)...(a_n)$: A -ն արտահայտում է միջուկը, a -ն՝ առմիջուկային բաղադրիչները: Մակարդակների առմիջուկային բաղադրիչները արտահայտելով փակագծերով՝ ըստ առանձնացված չորս մակարդակների՝ ստանում է մակարդակային միավորների փոխհարաբերության հետևյալ բանաձևը՝ $A(na) \subseteq A_1(na(na_1)) \subseteq A_2(na(na_1(na_2))) \subseteq A_3(na(na_1(na_2(na_3))))$: \subseteq նշանը ցույց է տալիս ներառահավասարական հարաբերություն: Կառուցվածքի կոնկրետ քննությունը բացահայտում է n -ի իսկական արժեքը յուրաքանչյուր մակարդակի համար, ընդհանուր կադապարային բանաձևի մասնակի դրսևորումները, տարասեռ կադապարները և յուրաքանչյուր կադապարի բաղադրիչների բուն իրացումները:

Գ. Ջահուկյանը հետագայում, նկատի ունենալով, որ լեզվի մեջ կան ոչ միայն անկախ միավորներ (բառ, նախադասություն), այլև եզրային և կախյալ, բաղադրյալ միավորներ, դրանց համար

առանձնացնում է ենթամակարդակներ⁴⁴: Մակայն այս դեպքում ևս մնում է երկպլանային միավորների սահմաններում: Բովանդակության պլանը և արտահայտության պլանը, անկախ երկպլանային միավորներից, կարող են դիտակվել միայն ընդհանրական անփոփոխակային լեզվաբանության մեջ: Առանձին լեզուներում խոսողների գիտակցության մեջ դրանք առանձին գոյություն ունենալ չեն կարող: Այդ իսկ պատճառով ընդհանրական փոփոխակային լեզվաբանության մեջ կարելի է խոսել երկպլանային միավորների մասին՝ որոշելով յուրաքանչյուր մակարդակում 1. արտահայտության պլանը, 2. բովանդակության պլանը, 3. դրանց փոխհարաբերությունը, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում պետք է առանձնացնել տվյալ դեպքին բնորոշ երևույթները: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ լեզվական միավորների արտահայտության և բովանդակության պլանները սովորաբար բնորոշվում են տարբեր կարգերով և եզրերով. միայն հազվադեպ՝ նկարագրական-նշանային (հնչյունանմանակման) կազմություններում, արտահայտության և բովանդակության պլանները կարող են բնորոշվել նույն կամ մասնակիորեն համընկնող կարգերով և եզրերով:

Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ մակարդակների ուսմունքը էականորեն տարբերվում է ընդունված ուսմունքներից և հիմնվում է որոշ հիմնական սկզբունքների վրա: Ուստի նախորդ աշխատություններում առաջարկված լեզվական մակարդակների

⁴⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003; *Общее и армянское языкознание*, Երևան, 1978; *Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике*, Москва, 1999:

առանձնացման կառուցվածքը որոշ փոփոխության է ենթարկվում «Универсальная теория языка» և հաջորդ՝ «Շարահյուսական ուսումնասիրություններ» աշխատություններում: «Универсальная теория языка» աշխատության մեջ հեղինակն առաջարկում է ավելի կատարելագործված և ժամանակակից գիտության պահանջներին համապատասխանող կառուցվածք: Ի տարբերություն նախորդ աշխատությունների՝ այստեղ որոշ լրացումներ և ճշգրտումներ են արվում⁴⁵:

Այստեղ մակարդակներ կարող են կազմել միայն երկպլանային միավորները, այսինքն՝ Մարտինեի տերմինաբանությամբ՝ մոնեմներն ու դրանց համակցությունները: Արտահայտության և բովանդակության պլանների բաղադրիչները, մասնավորապես հնչյւթները, ինքնին չեն կարող կազմել մակարդակներ: Դա խախտում է բաժանման տրամաբանական սկզբունքը. մի շարքին է դասում երկպլանային և միապլանային միավորները: Խոսելով լեզվի մակարդակային միավորների մասին՝ Ջահուկյանը կարծում է, որ պետք է նկատի ունենալ միայն գծային միավորները⁴⁶: Ընդհանրապես տարբեր հատկանիշները և մասնավորապես հնչյւթների տարբեր հատկանիշները (Բենվենիստի տերմինաբանությամբ՝ մերիզմները) չեն կարող մակարդակներ կազմել: Ջահուկյանի խորին համոզմամբ՝ չի կարելի մի կողմից՝ հնչյւթների տարբերակիչ հատկանիշների մակարդակ առանձնացնել, մյուս

⁴⁵ Տե՛ս Գ.Джаукян, Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, М., 1999, էջ 79-85:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

կողմից՝ ինքնին հնչույթների. դա կնշանակի, որ շփոթվում են հասկացությունների ծավալն ու բովանդակությունը: Չի կարելի մի շարքին դասել միավորներն ու հատկանիշները, դա տրամաբանորեն հակասական կլինի. չէ՞ որ մյուս միավորների համար (օրինակ՝ բառերի համար) հատկանիշների առանձին մակարդակ չի առանձնացվում: Հնչույթների տարբերակիչ հատկանիշները ներկայացնելով որպես դրանց կազմավորման համար անհրաժեշտ համապատասխան արտաբերումներ՝ խախտվում է մակարդակային միավորների գծայնության սկզբունքը:

Ժխտելով, որ մերիզմները կարող են կազմել առանձին մակարդակ, ի տարբերություն Բենվենիստի դասակարգման, սուբստանցիոնալ լեզվաբանությունը յուրաքանչյուր մակարդակի համար առանձնացնում է մակարդակային միավորներ և դրանց տարբերակիչ հատկանիշներ (բնորոշիչներ):

Նախապես սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ, ինչպես նշվեց վերևում, որպես ամենամեծ մակարդակային միավոր առանձնացվում էր ամբողջական (ավարտուն) նախադասությունը (sentence): Համարվում էր, որ տեքստի կառուցվածքը լեզվական-իմաստաբանական առումով որակապես նոր փաստեր չի հայտնաբերում, ինչպիսիք որ հայտնաբերվում են ամբողջական նախադասության սահմաններում: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր մակարդակի միավորներ դիտարկելիս նկատի են առնվում տվյալ միավորի հարացույցը կազմող այն ցուցիչները, որոնք հանդես են գալիս ավելի բարձր մակարդակի միավորների կառուցվածքի մեջ

(ենթամակարդակում): Այսպես, դիտարկելով ամբողջական նախադասությունները՝ ինչպես պարզ, այնպես էլ բարդ, դրանցում նկատի են առնվում այն միջոցները, որոնք ապահովում են տեքստի ամբողջականությունը: Այստեղ նկատի է առնվում նաև այն, որ մակարդակային միավորները առաջին հերթին համարվում են լեզվական, որոնց էլ խոսողի ուղեղում համապատասխանում են որոշակի կառուցվածքային կաղապարներ, իսկ այդ կաղապարների բաղադրիչները խոսքում իրացվում են տարբեր կերպ՝ իրադրությանը համապատասխան: Լայն տեքստի համար ուղեղում չկան որոշակի լեզվական կաղապարներ. տեքստի կառուցումը ամբողջովին կախված է արտալեզվական գործոններից, խոսքն, իհարկե, կառուցվածքի որակական ցուցիչների մասին չէ: Հետագայում Ջահուկյանը եկավ այն եզրակացության, որ առաջին հերթին տեքստը պետք է տարբերակել խոսքից, երկրորդ՝ տեքստի և տեքստային միավորների համար կարելի է կազմել լեզվական ընդհանուր կաղապարներ, երրորդ՝ առանց տեքստային մակարդակ առանձնացնելու՝ լեզվի շատ երևույթներ մնում են չբացահայտված⁴⁷: Ուստի ավելացվում է հենքի (տեքստի) մակարդակը: Ջահուկյանը կարծում է, որ մակարդակների քանակը և բնույթը որոշվում են այն մակարդակային միավորների քանակով և բնույթով, որոնք գտնվում են իրար հետ որոշակի փոխհարաբերության մեջ: Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ մակարդակներն ու ենթամակարդակներն առանձնացվում են՝ ըստ մակարդակային միավորների բնույթի և փոխհարաբերության: Մակարդակները կազմում են հիմնական

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

կառուցվածքային միավորները, ենթամակարդակները՝ դրանց միջանկյալ աստիճանները՝ ցածր կամ բարձր մակարդակին ձգտող: Ի վերջո՝ լրիվ համապատասխանություն է ձևավորվում մի կողմից մակարդակների և մակարդակային միավորների, մյուս կողմից՝ դրանք ուսումնասիրող բաժինների միջև. առանձնացվում են այնքան բաժիններ և ենթաբաժիններ, որքան մակարդակ և ենթամակարդակ կան, և համապատասխանաբար՝ մակարդակային և ենթամակարդակային միավորներ:

Ինչպես նշել ենք վերևում, սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ չի առանձնացվում *ձևույթային* հատուկ մակարդակ: Ձևույթային մակարդակի առանձնացումը խախտում է մոտեցման միասնականությունը՝ հանգեցնելով նույն միջոցների կրկնակի դիտարկման այն մակարդակներում, որոնց դրանք հարում են: Ջահուկյանը նշում է, որ այս դեպքում էլ ստեղծվում է այնպիսի դրություն, ինչպիսին ստեղծվում է ձևաբանության մեջ բոլոր խոսքի մասերի ավանդական դիտարկման ժամանակ: Այսպես՝ շաղկապի և կապի մասին խոսվում է ինչպես ձևաբանության մեջ խոսքի մասերի ընդհանուր դասակարգման ժամանակ, այնպես էլ շարահյուսության մեջ շարահյուսական կապակցման միջոցների դիտարկման ժամանակ: Ձևաբանությունը դիտվում է ավելի լայն առումով որպես, այսպես կոչված, դասույթաբանություն, որի մեջ ուսումնասիրվում են բառերի համադրական և վերլուծական բոլոր ձևերը, օրինակ՝

առդրային (կապային) համակցությունները (ոչ միայն *քաղաքում*, այլև *քաղաքի մեջ*)⁴⁸:

Ինչպես նշվել է վերևում, մակարդակային և ենթամակարդակային միավորների միջև առկա է ներառման հարաբերություն: Ընդ որում՝ ավելի բարձր մակարդակի կամ ենթամակարդակի միավորը կարող է բաղկացած լինել ոչ միայն միջուկային և առմիջուկային անդամներից, այլև մեկ միջուկային անդամից: Ինչպես «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ, այստեղ ևս մակարդակային և ենթամակարդակային միավորների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝ $U_1 \subseteq U_2 \subseteq \dots \subseteq U_n$, որտեղ U_1, U_2, \dots, U_n –ը միավորներն են, \subseteq -ն՝ ցածր մակարդակի միավորի ներառումը ավելի բարձր մակարդակում, \subseteq -ն՝ ներառումը կամ հավասարությունը, եթե բարձր մակարդակի միավորը բաղկացած է մեկ միջուկային բաղադրիչից՝ ցածր մակարդակի միավորից⁴⁹:

Ինչպես երևում է մակարդակների և ենթամակարդակների դասակարգման ներկայացումից, դրանք չեն համընկնում ընդունված շատ դասակարգումներին, բացի այդ՝ ունեն նաև մի շարք առանձնահատկություններ: Առաջին անգամ արմատայինը առանձնացվում է որպես հատուկ ցածր ենթամակարդակ: Ընդ որում՝ այն ընդգրկում է միայն իմաստակիր բառերի արմատներ:

⁴⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ծարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 11-13:

⁴⁹ Տե՛ս Գ. Դձաուկյան, Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, М., 1999, էջ 83:

Արմատի և բառակազմության ուսմունքները միացված են բառազիտության մեջ: Ձևային հատուկ մակարդակի բացակայության պատճառը բացատրվել է վերևում. այդ մակարդակում դիտարկվում են միայն արմատական այն ձևայիններն ու միջոցները, որոնց միջոցով դրանք ձևավորվում և փոխհարաբերության մեջ են մտնում բառային կամ բառակազմական ենթամակարդակների միավորների բաղադրիչների հետ: Այս ենթամակարդակի առանձնացումը հնարավորություն է տալիս նախ՝ ստեղծելու լեզուների տիպաբանություն՝ արմատի՝ որպես լեզվի արտաքին ձևի հիմնական դրսևորումներից մեկի կառուցվածքի բնույթով պայմանավորված, երկրորդ՝ կոնկրետ լեզվի հնչյունաբանությունը և իմաստաբանությունը դիտարկելու որպես արմատի արտաքին և ներքին կողմերի (կառուցվածքների) մասին ուսմունքներ, այսինքն՝ հանգել նկարագրության սկզբունքի միասնականության:

Յուրաքանչյուր մակարդակի համար ենթամակարդակների առանձնացումը կատարվում է միասնական սկզբունքներով՝ *համաբանության* հիման վրա: Յուրաքանչյուր մակարդակի ցածր ենթամակարդակ կազմվում է տվյալ մակարդակի համար անբաժանելի (չտրոհվող) միավորից, որը բարձր մակարդակի համար համարվում է հիմքային: Օրինակ՝ *բառային* մակարդակի համար այդպիսին համարվում է *արմատը*: Բարձր ենթամակարդակների միավորների դիտարկումը սկսվում է հոմոգեններից (համաձին)՝ հատուկ ուշադրության արժանացնելով երկբաղադրիչ տիպերը (հիպոլեքսեմաներ, հիպոսինտագմաներ, հիպոսինպրոտասեմաներ,

հիպոտեքստեմաներ), այնուհետև դիտարկվում են նաև հետերոզեն և բազմաբաղադրիչ տիպերը (հիպերլեքսեմաներ, հիպերսինտագմաներ, հիպերսինպրոտասեմաներ, հիպերտեքստեմաներ): Ուստի այս դասակարգման դեպքում ձևաբանությունը համարվում է դասույթային ենթամակարդակի մասին ուսմունքի՝ դասույթաբանության մի մասը, որի միավորը՝ դասույթը, ներառում է ինչպես բառաձևը՝ որպես ձևաբանության ուսումնասիրության օբյեկտ, այնպես էլ մյուս օժանդակ միջոցները, որոնց շնորհիվ վերջինս ձևավորում է որպես տարրական շարահյուսական միավոր:

Այն, ինչ սովորաբար դիտարկվում է որպես շարահյուսական մակարդակ, սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ դասակարգվում է երկու, եթե հաշվի առնենք նաև հենքայինը, ապա՝ երեք մակարդակի: Սովորական գործածության մեջ շարահյուսություն (սինտաքսիս) տերմինն ունի երկիմաստություն: Մի կողմից՝ շարահյուսությունը, սկսած Ապոլլոնիոս Դիսկոլոսից, դիտարկվում է որպես միավորների գուգորդումների ուսմունք⁵⁰, այսինքն՝ սոպյուրյան իմաստով իբրև շարույթաբանություն, մյուս կողմից՝ շարահյուսության ուսումնասիրության հիմքում դրվում է նախադասության կառուցվածքի և ստորոգման ըմբռնման՝ որպես նախադասության բովանդակության և իրականության կապը որոշակի իրադրության հետ: Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ միավորներն առանձնացնելիս առաջին պլան է մղվում դրանց

⁵⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1960, էջ 87:

կապակցելությունը, իսկ ստորոգումը՝ որպես քերականական կարգ, դիտարկվում է միավորների կառուցվածքի հետ կապված՝ որպես արտահայտության և բովանդակության պլանների համադրություն: Այստեղ Ջահուկյանը *բառակապակցություն* տերմինի փոխարեն գերադասում է *շարույթը*, քանի որ վերջինս կարող է կառուցվածքային առումով ներառել ինչպես բառակապակցությունը, այնպես էլ առանձին բառակապակցությունը, ինչպես ինքնուրույն գործածվող միջուկային բաղադրիչ: Սրանով իսկ դասույթը դիտվում է որպես շարահյուսության նվազագույն միավոր և շարույթի հետ միասին մտցվում միևնույն մակարդակի մեջ (դասույթային և շարույթային ենթամակարդակներով):

Վերևում ասվեց, որ տարբեր մակարդակների և ենթամակարդակների միավորների միջև ներառման հարաբերություն է. ցածր մակարդակի և ենթամակարդակի յուրաքանչյուր միավոր ներառվում է բարձր մակարդակի կամ ենթամակարդակի միավորի մեջ, և հակառակը՝ բարձր մակարդակի կամ ենթամակարդակի յուրաքանչյուր միավոր ներառում է ցածր մակարդակի և ենթամակարդակի միավոր, ընդ որում՝ բարձր մակարդակի միավորը կարող է բաղկացած լինել ցածր մակարդակի միայն մեկ միավորից: Մակարդակների և ենթամակարդակների համար ներմուծված տերմինների բացատրության ժամանակ (տե՛ս վերջին գլխում) պետք է նկատի ունենալ այդ առանձնահատկությունը: Այսպես, *բառույթ* ասելով՝ պետք է հասկանալ բառը՝ որպես բառակազմական ամբողջություն, որը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի արմատներից կամ արմատական հիմքերից:

Մակարդակների, մակարդակային միավորների և դրանք ուսումնասիրող բաժինների փոխհարաբերությունը (ներկայացված նոր տերմինաբանությամբ⁵¹) Ջահուկյանը ներկայացնում է համապատասխան աղյուսակով: Այսպիսով՝ հիմնական միավորների (բառի, շարույթի, նախադասության, տեքստի) քանակին համապատասխան՝ ձևավորվում է չորս մակարդակ՝ *բառային, շարային, նախադասական* և *հենքային*: Յուրաքանչյուր մակարդակում առանձնացվում է երկու ենթամակարդակ՝ *բառայինում՝ արմատային* և *բառույթային, շարայինում՝ դասույթային* և *շարույթային, նախադասականում՝ ասույթային* և *լրասույթային, հենքայինում՝ հինույթային* և *լիահինույթային*:

⁵¹ Տե՛ս չորրորդ գլխում:

ԳԼՈՒԽ 2

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԽՆԴԻՐԸ. ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ինչպես գիտության ցանկացած բնագավառի, այնպես էլ լեզվաբանական ուսումնասիրությունների համար կարևոր դեր ունեն *մեթոդները*: Հետազոտական աշխատանքի ճշգրիտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ են ոչ միայն ճիշտ ընտրված մեթոդներ և մեթոդաբանություն, այլև այդ մեթոդների ճշգրիտ կիրառություն: Բայց նախքան մեթոդների և մեթոդաբանության ընտրության ճշգրտության հարցերին անդրադառնալը, պարզենք, թե ինչ է մեթոդը: «*Մեթոդ*» բառը ծագել է հունարենից, թարգմանաբար նշանակում է *հետազոտության ուղի* կամ *եղանակ*: Լեզվաբանության մեջ «*մեթոդ*» կիրառվում է երկու իմաստով՝ ընդհանուր և մասնավոր⁵²: *Ընդհանուր* իմաստով մեթոդը հետազոտական հնարների կամ եղանակների ընդհանրացված ամբողջություն է՝ մեթոդիկա, որը կապված է որոշակի լեզվաբանական տեսության և ընդհանուր մեթոդաբանության հետ: Իսկ *մասնավոր* իմաստով մեթոդը լեզվի այս կամ այն բնագավառի հետազոտական որոշակի եղանակ է կամ տեխնիկական միջոց, որը հիմնվում է որոշակի տեսության վրա:

⁵²Տե՛ս <http://tapemark.narod.ru/les/298a.html>,

“Лингвистический энциклопедический словарь”, М., 1990:

Մեթոդ բառի հետ սերտորեն կապված է նաև *մեթոդաբանություն* բառը, որը ևս կիրառվում է երկու իմաստով: Իր բուն իմաստով այն նշանակում է մեթոդների մասին ուսմունք կամ տեսություն: Սակայն երբեմն այն կիրառվում է փոքր-ինչ այլ՝ ավելի լայն իմաստով՝ նշանակելով հայեցակարգ:

Գիտական գրականության մեջ, ինչպես իրավացիորեն նշում է Ջահուկյանը, չկա *մեթոդաբանություն* և *հայեցակարգ* հասկացությունների հստակ սահմանազատում, չկա նաև *մեթոդաբանություն*, *տեսություն* և *հայեցակարգ* հասկացությունների փոխհարաբերության վերաբերյալ որևէ հստակ դիրքորոշում կամ համընդհանուր ընդունելի որոշում: Նմանատիպ իրավիճակում է նաև ընդհանուր և մասնավոր մեթոդների փոխհարաբերության հարցը: Ինչ վերաբերում է լեզվաբանական մեթոդաբանության բնագավառի խնդիրներին, Ջահուկյանը, անդրադառնալով դրանց, մի քանի դիտարկում է անում⁵³: Մասնավորապես, հետազոտողի համար մեծ խնդիրներ է ստեղծում այն հանգամանքը, որ լեզվաբանական գրականության մեջ չկա *տերմինաբանական միասնություն*: Երբեմն միևնույն մեթոդին տարբեր անվանումներ են տրվում, երբեմն՝ հակառակը՝ տարբեր մեթոդներ նույն անունով են կոչվում: Բնականաբար, սա խանգարում է հետազոտական աշխատանքին, քանի որ կարող է մեթոդների սխալ ընտրության պատճառ դառնալ:

Մեթոդաբանական խնդիրներ կարող է առաջացնել նաև ժամանակակից ուղղություններին կուրորեն հետևելը: Հաճախ

⁵³ Տե՛ս Գ. Джаукян, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 44-45:

հետազոտական աշխատանքն ավելի ժամանակակից և արդիական դարձնելու համար որոշ հետազոտողներ կիրառում են այնպիսի մեթոդներ, որոնք համապատասխան չեն տվյալ աշխատանքի բնույթին:

Լեզվաբանական մեթոդների վերաբերյալ թյուր եզրահանգումների և կարծիքների պատճառ կարող է դառնալ գիտության մյուս բնագավառների շարքում լեզվաբանության տեղի ոչ ճշգրիտ որոշումը: Բնականաբար, եթե լեզվաբանությունը դիտարկվի որպես մաթեմատիկայի կամ կիբերնետիկայի բնագավառ, լեզվաբանական մեթոդների բնույթն էլ համապատասխան փոփոխության կենթարկվի:

Պետք է նկատի ունենալ սակայն, որ մեթոդաբանական խնդիրներ ծագում են առաջին հերթին *մեթոդ* հասկացության ոչ ճշգրիտ բնորոշման հետևանքով: Ջահուկյանի խորաթափանց հայացքից չի վրիպում, որ որոշ հեղինակներ *մեթոդ*, *մեթոդիկա* և *մեթոդաբանություն* տերմինները գործածում են ոչ թե իրենց բուն, այլ բոլորովին այլ իմաստներով: Ինչպես, օրինակ, Յու. Ստեպանովը ժամանակակից լեզվաբանության մեթոդներին անդրադառնալիս գուցադրում է մի կողմից՝ *մեթոդ*, *մեթոդիկա*, *մեթոդաբանություն*, մյուս կողմից՝ ամերիկյան լեզվաբանության մեջ ընդունված *նախալեզվաբանություն*, *միկրոլեզվաբանություն* և *մակրոլեզվաբանություն* տերմինները⁵⁴: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն

⁵⁴ Ст'у Ю. Степанов, Методы и принципы современной лингвистики, М., 1975, էջ 5:

նշում է Ջահուկյանը, վերջինները լիովին այլ իմաստ են արտահայտում⁵⁵:

Այսպիսով՝ լեզվաբանական մեթոդների մասին ճշգրիտ պատկերացում կարելի է կազմել միայն *մեթոդ, մեթոդիկա* և *մեթոդաբանություն* հասկացությունների իմաստների հստակ սահմանազատումից հետո: Ջահուկյանը դրանք գործածում է հետևյալ իմաստներով. *մեթոդը* կիրառում է որպես հետազոտության միջոց կամ եղանակ իմաստով, *մեթոդիկան*՝ որպես մեթոդների և հետազոտական հնարների ամբողջություն, *մեթոդաբանությունը*՝ որպես մեթոդների մասին ուսմունք:

Լեզվաբանական մեթոդների և մեթոդաբանության հարցերին անդրադառնալիս Ջահուկյանն առավելապես հետաքրքրված է ոչ թե լեզվի ուսումնասիրության որևէ կոնկրետ մեթոդով, այլ հետազոտական և լեզվական զանազան փաստեր բացահայտող մեթոդներով:

Ջահուկյանը համոզված է, որ լեզվաբանական մեթոդաբանության հիմնական խնդիրը մեթոդների դասակարգումն է: Այն հնարավորություն կտա բացահայտելու մեթոդների փոխհարաբերությունները, գուցադրելու լեզվաբանական մեթոդները և գիտության մյուս բնագավառների մեթոդները, դրա հիման վրա էլ առանձնացնելու ընդհանուր և հատուկ մեթոդներ, ինչպես նաև դիտարկելու լեզվի ուսումնասիրության մեջ ընդհանուր մեթոդների կիրառման առանձնահատկությունները:

⁵⁵ Այս հարցին անդրադարձել ենք ատենախոսության՝ «Լեզվաբանության կառուցվածքի հարցը» բաժնում:

Ինչպես նշել ենք լեզվաբանության պատմության շրջանաբա-
ժանման քննությանը նվիրված բաժնում, լեզվաբանության
պատմության մեջ ցանկացած շրջանի բնորոշ է հետազոտության
որևէ կոնկրետ մեթոդ: Հետևաբար, երբ փոխվում է ժամանա-
կաշրջանը, արտաքին և ներքին հանգամանքների ազդեցության
հետևանքով որոշակիորեն փոխվում է նաև լեզվի նկատմամբ
հայեցակարգը: Մա էլ, բնականաբար, լեզվի քննության նոր
մեթոդների առաջացման խնդիր է ստեղծում: Հաճախ նախորդ
շրջանում տիրապետող մեթոդին լիովին հակադիր մեթոդ է ի հայտ
գալիս: Բայց, ի տարբերություն լեզվի նկատմամբ հայեցակարգի,
հին մեթոդները լիովին չեն անհետանում: Դրանք շարունակում են
կիրառվել նաև հաջորդ շրջաններում, սակայն ոչ թե որպես
տիրապետող և հիմնական մեթոդներ, այլ ավելի մասնակիորեն:
Այսպիսով՝ լեզվաբանության ժամանակակից փուլում կարող են
լինել մեթոդներ, որոնց ծագումը կապվում է լեզվաբանության
պատմության նախորդ շրջանների հետ: Բացի այդ՝ ըստ հետազո-
տական այս կամ այն ոլորտում կիրառության՝ մեթոդները լինում են
երկու տիպի՝ ընդհանրական և մասնավոր⁵⁶: Որոշ լեզվաբանական
մեթոդներ ընդհանուր բնույթ ունեն և կիրառվում են նաև գիտության
այլ բնագավառներում: Դրանք սովորաբար գիտական հետազո-
տության ընդհանուր եղանակներ և միջոցներ են: Այդպիսի
ընդհանրական մեթոդներ են *մակաձուլությունը* (ինդուկցիա) և

⁵⁶ Տե՛ս

<http://les.academic.ru/674/%D0%9C%D0%B5%D1%82%D0%BE%D0%B4>,
Лингвистический энциклопедический словарь, М., 1990:

արտածությունը (դեդուկցիա), *վերլուծությունն* (անալիզ) ու *համադրությունը* (սինթեզ), *համեմատությունը*, *հակադրությունը*, *զուգահեռությունը*, *համարանությունը* (անալոզիա), *գիտափորձը* (էքսպերիմենտ) են:

Ընդհանրական մեթոդներից բացի՝ կան նաև մեթոդներ, որոնք բնորոշ են հետազոտական որևէ կոնկրետ ոլորտի: Այդպիսին են բուն լեզվաբանական մեթոդները:

Դժվար չէ նկատել, որ իր բոլոր դասակարգումներում Ջահուկյանն առանձնացնում է որոշակի հատկանիշներ: Բուն լեզվաբանական մեթոդների *դասակարգման* համար առանձնացվում է **հինգ հատկանիշ**⁵⁷:

1. *Համաժամանակություն* (սինխրոնիկություն) և *տարաժամանակություն* (դիսխրոնիկություն, պատմականություն): Ըստ այդմ՝ առանձնացվում և որոշվում են համաժամանակյա և տարաժամանակյա հետազոտության մեթոդները:

2. *Ներօբյեկտայնություն* (ինտերիորություն) և *արտաօբյեկտայնություն* (էքստերիորություն): Ներօբյեկտային ուսումնասիրության դեպքում ուսումնասիրության հիմքում ընկած է օբյեկտի կառուցվածքը, հետազոտությունը վեր է հանում կառուցվածքային առանձնահատկությունները՝ առանց դուրս գալու օբյեկտի սահմաններից: Իսկ արտաօբյեկտային ուսումնասիրության դեպքում՝ ընդհակառակը. հետազոտության նպատակն է պարզել տվյալ օբյեկտի և լեզվաբանական այլ օբյեկտների փոխհարաբերությունը:

⁵⁷ Տե՛ս Գ. Դձայկյան, *Общее и армянское языкознание*, Е., 1978, էջ 46-47:

3. *Համակենտրոնացում* և *բաշխում* (Ժամանակի և տարածության մեջ): Համակենտրոնացման դեպքում օբյեկտը դիտարկվում է որպես որոշակի ամբողջություն, որն ունի իր հստակ տեղը և դիրքը, իսկ բաշխման դեպքում օբյեկտը դիտարկվում է՝ ըստ որոշակի շրջանների, մակարդակների և դասերի:

4. *Արտալեզվական վերաբերություն* և *ներլեզվական վերաբերություն*: Մի դեպքում հետազոտողն առաջնորդվում է արտալեզվական տվյալներով (թե՛ պատմական փաստերով, թե՛ մյուս գիտությունների տրամադրած փաստերով), մյուս դեպքում՝ մնում է զուտ լեզվական երևույթների շրջանակում:

5. *Քանակականություն* և *որակականություն*: Քանակական մեթոդները կարող են կիրառվել ցանկացած հետազոտության մեջ, և եթե դրանք նպատակադրված չեն կիրառվում, ուստի կարելի է պայմանականորեն խոսել որակական մեթոդների մասին⁵⁸:

Այսպիսով՝ առանձնացնելով հինգ էական հատկանիշ, սակայն առաջնորդվելով դրանցից չորսով (քանակական մեթոդները դուրս է թողնում դասակարգումից)՝ Ջահուկյանը ստանում է 16 լեզվաբանական մեթոդ. դրանք ներկայացնում է համապատասխան աղյուսակով՝ ըստ տվյալ հատկանիշի առկայության կամ բացակայության: Նշենք, որ տարբեր հետազոտություններում կիրառելու համար այս մեթոդներն ընտրվում են՝ ըստ հետազո-

⁵⁸ Քանի որ Ջահուկյանի՝ լեզվաբանական մեթոդների դասակարգմանը վերաբերող շարադրանքը ռուսերեն է, ուստի աստենախոսության մեջ դրան վերաբերող որոշ տերմինների հայերեն համարժեքներ Ջահուկյանին չեն պատկանում, աստենախոսության պահանջներից էլնելով՝ առաջարկել ենք մենք:

տական բնագավառի և կոնկրետ նպատակի, ըստ լեզվաբանական գիտակարգերի և բաժինների առանձնահատկությունների, ինչպես նաև ըստ այնմ, թե որն է տվյալ հետազոտողի ընդհանուր հայեցակարգն ու սկզբունքը, կամ որ ուղղությանն է նա հարում:

Ինչ վերաբերում է Ջահուկյանի բերած նորույթին լեզվաբանական մեթոդների ուսումնասիրության բնագավառում, ապա պետք է նշել, որ այն միայն դասակարգմամբ չի սպառվում: Հեղինակի հետազոտական բեղուն գործունեության ընթացքում նրա ուշադրության կենտրոնում միշտ էլ եղել է համընդհանուր լեզվաբանական տեսություն ստեղծելու գաղափարը, որ կապված է կաղապարման մեթոդի հետ: Ջահուկյանը իր գործունեության տարբեր ժամանակահատվածներում անդրադարձել է կաղապարման մեթոդներին՝ զարգացնելով կաղապարի իր տեսությունը: Սակայն նախքան կաղապարի ջահուկյանական ըմբռնումը քննելը, տեսնենք, թե ինչ է կաղապարը, ինչպես է ծագել և ինչ դեր ունի լեզվաբանության մեջ:

Ա. ԿԱՂԱՊԱՐԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կաղապարը (մոդելը)⁵⁹ ուսումնասիրողի կողմից հետազոտական նպատակներով ստեղծված իրական կամ մտավոր կառուցվածք է, որը վերարտադրում, իր գործառույթներով նմանակում է (հիմնականում պարզեցված ձևով) ինչ-որ այլ իրական կառուցվածք (բնօրինակ)⁶⁰:

Լեզվաբանական կաղապարի հասկացությունը ի հայտ է եկել կառուցվածքային լեզվաբանության մեջ (Կ. Բյուլեր, Ջ. Հառիս, Չ. Հոքետ), սակայն գիտական լայն շրջանառության մեջ է մտել 20-րդ դարի 60-70-ական թթ.-ից՝ պայմանավորված մաթեմատիկական լեզվաբանության առաջացմամբ և լեզվաբանության մեջ կիրառման տիպային մեթոդների կիրառմամբ: Պետք է նշել սակայն, որ լեզվի քննության մաթեմատիկականացմանը անդրադարձել են դեռևս հին հնդկիկ քերականները (մ.թ.ա. 5-3-րդ դարերում): Պատահական չէ, որ որոշ լեզվաբաններ նմանություն են տեսնում հնդկիկ քերական Պանինիի վերլուծական մեթոդի և Ժամանակակից լեզվաբանական հոսանքներից մեկի՝ կառուցվածքաբանության (ստրուկտուրալիզմի) միջև: Իրոք, լեզվաբանական մոդելի առաջին նմանօրինակը Պանինիի աշխատության մեջ է: «Պանինին իր քննության մեջ կիրառում է այս կամ այն քերականական երևույթը հատուկ տառերով նշանակելու սկզբունքը՝ սրանով իսկ մոտենալով

⁵⁹ Մոդել էզրույթը ծագել է լատիներեն modulus բառից, որ թարգմանաբար նշանակում է «կերպար, տիպար, նմուշ»:

⁶⁰ Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь», М., 1990, էջ 304:

քննության մաթեմատիկականացմանը. այսպես, օրինակ, ք տառը նշանակում է տվյալ ձևույթի՝ շեշտից գուրկ լինելը բոլոր դիրքերում, և եթե Պանինին տալիս է *mi* բանաձևը, ապա այդ նշանակում է, որ բայական *mi* վերջավորությունը բոլոր դիրքերում անշեշտ է: Քննության այս եղանակն է, որ ապահովում է շարադրանքի համառոտությունը՝ ընդգրկման բացառիկ մեծությամբ և մանրամասնությամբ հանդերձ»⁶¹:

Ժամանակակից ամերիկյան լեզվաբանության հիմնադիրներից են լեզվաբաններ *Լ. Բլումֆիլդը* և *Է. Սեյիթը*: Վերջինս առաջ է քաշել լեզվի կադապարման խնդիրը, իսկ Բլումֆիլդի անվան հետ են կապվում նկարագրական լեզվաբանության հետազոտական մեթոդները: Սեյիթը կարծում է, որ յուրաքանչյուր լեզու մի ներփակ համակարգ է, որի անհատական ձևը՝ «կադապարը», խիստ կայուն է: Այդ «կադապարը» Սեյիթը գրկում է նյութական արժեքից, դիտում որպես գործառական հարաբերությունների համակարգ: Այսինքն՝ ըստ Սեյիթի՝ «լեզվի կադապարումը» նշանակալից չափով ինքնուրույն է և կախված չէ ոչ լեզվաբանական տիպի խաչաձևվող կադապարներից⁶²:

Նկարագրական լեզվաբանությունը ձևավորվեց Լ. Բլումֆիլդի անմիջական ազդեցության պայմաններում⁶³: Լ. Բլումֆիլդը, ուսումնասիրելով ամերիկյան հնդկացիների լեզուն պատմահամեմատական լեզվաբանության մեթոդներով, եկավ այն եզրակա-

⁶¹ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 24:

⁶² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., հ. 2, Ե., 1962, էջ 133-136:

⁶³ Տե՛ս Լ. Блумфилд, Язык, М., 2002, էջ 19-26:

ցության, որ այն լեզուները, որոնք չունեն գիր, քերականության և բառաֆոնոլոգի նկարագրություն, պետք է ուսումնասիրել վերլուծության նոր մեթոդներով: Ուստի անձանոթ լեզուների ուսումնասիրության դեպքում, երբ լեզվական ձևերի իմաստներն անհայտ են լեզվաբանին, լեզվական միավորների սահմանազատման և հաստատման համար անհրաժեշտ է ձևական չափանիշ՝ միավորների գուգադրում, այսինքն՝ խոսքում այս կամ այն միավորների դիրքը մյուս միավորների նկատմամբ: Բլումֆիլդը սակոչում է դիստրիբուցիա («բաշխում», անգլ. distribution բառից): Նա առաջարկում է նկարագրության մի մեթոդ, որն իր կարծիքով հաղթահարում է լեզվական ձևերի որոշման իմաստային չափանիշը:

Նկարագրական լեզվաբանության նպատակը ոչ թե ընդհանուր լեզվաբանական տեսություն ստեղծելն էր, որը կարողանա բացատրել լեզվական բոլոր երևույթները և դրանց փոխհարաբերությունները, այլ լեզվի համաժամանակյա նկարագրության և կադապարման մեթոդներ մշակելը (չնայած պատմական ուսումնասիրությունը ևս կարևորվում էր): Լեզվի նկարագրությունը բնորոշվում էր որպես լեզվական համակարգի հաստատում, որը որոշակի միավորների և դրանց ձևավորման կանոնների ամբողջությունն էր⁶⁴:

Նկարագրական լեզվաբանության մեթոդաբանությանը բնորոշ է իզոմորֆիզմը (զուգաձևություն), քանի որ այն և՛ հնչույթային, և՛ ձևաբանական մակարդակներում, անկախ դրանց էական

⁶⁴ Տե՛ս «Лингвистический энциклопедический словарь», М., 1990, էջ 130:

տարբերություններից, ներառում է միննույն փուլերը. 1-ին փուլում տեքստը բաժանվում է տվյալ մակարդակի համար նվազագույն միավորների, 2-րդ փուլում տրվում է լեզվի կառուցվածքային միավորների բաշխումը, 3-րդ փուլում կառուցվածքային տվյալ մակարդակում կառուցվում է լեզվական համապատասխան կադապարը:

Նկարագրական մեթոդը ենթադրում էր կադապարների բազմազանություն, ուստի կային ընտրության չափանիշներ. նպատակահարմար էր պարզ, տրամաբանորեն անհակասական լիակադապարը: Նկարագրական լեզվաբանության մեջ լեզվի նկարագրությունը պետք է ավարտվեր լեզվական կառուցվածքի ընդհանուր կադապարի կառուցումով, որը կներկայացներ տարբեր մակարդակների փոխհարաբերությունը:

Նկարագրական լեզվաբանության հիման վրա ծագել է *փոխակերպական (տրանսֆորմանցիոն)* մեթոդը, որը լեզվական կառուցվածքի վերլուծության ավելի արդյունավետ մեթոդ է, քան լեզվաբանության մեջ ընդունված մյուս մեթոդները: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ եթե լեզվի կադապարման անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորվում է նկարագրական լեզվաբանության ներկայացուցիչների աշխատություններում, ապա ուսումնասիրության հնարները հիմնականում ձևավորվել են ամերիկյան կիրառական լեզվաբանության ներկայացուցիչների կողմից:

Լեզվի նկարագրության նոր կադապարը, որը առաջարկում էին փոխակերպական վերլուծության կողմնակիցները, հակադրվում էր դասական նկարագրական քերականության կադա-

պարհին: Այս առումով՝ սերող քերականության նպատակը արմատապես տարբերվում է այն նպատակներից, որոնք հետապնդում է լեզվի նկարագրական ուսումնասիրությունը: Սակայն պետք է նշել, որ փոխակերպական մեթոդի կողմնակիցները հնչույթային և ձևույթային մակարդակներում կիրառում են հիմնականում նկարագրական վերլուծության արդյունքները, և ուսումնասիրության նպատակը կրկին լեզվի ձևային նկարագրությունն է: Ասվածից կարելի է եզրակացնել, որ փոխակերպական լեզվաբանությունը նկարագրական ուղղության զարգացման հաջորդ աստիճանն է:

Ամերիկյան լեզվաբանական դպրոցը աչքի է ընկնում մի էական հատկանիշով. այն գտնվում է մշտական շարժման մեջ: Դա առավելագույնս արտահայտվել է սահմանումների ու բնորոշումների բազմազանությամբ: Նույնիսկ հիմնական հասկացությունները տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնորոշում: Տերմինները ոչ միշտ համընդհանուր ճանաչում ունեն, հաճախ նույնիսկ դիպվածային բառի արժեք են ստանում:

Ամերիկյան լեզվաբանական գրականության մեջ կա երկու տերմին՝ հաճախ իմաստային առումով ոչ այնքան սահմանազատված միմյանցից. դրանք են pattern-ը և model-ը: Երկուսն էլ թարգմանվում են նույն կերպ՝ «կաղապար» կամ «մոդել»: Սակայն սրանք տարբեր ժամանակներում են կիրառվել: Առաջինը գիտական շրջանառության մեջ մտավ Է. Սեպիրի շնորհիվ: Վերջինս pattern ասելով հասկանում էր փաստերի ամբողջություն, որոնք ունեին

գոյաբանական նշանակություն⁶⁵: Երկրորդը (model) գիտական շրջանառության մեջ մտավ ավելի ուշ նկարագրական լեզվաբանության մեջ: Լեզվաբանական մոդել ասելով՝ հիմնականում հասկանում էին քերականության կառուցման ձև (a style of grammarmarking), կադապար, նյութի ներկայացման հիմնականախբ, հիմնամաս (a framework of presentation): Այսպես, Չ. Հոքետը լեզվի քերականական մոդելը բնորոշում է որպես վերաբերությունների ամբողջություն (a framework of reference), որի շրջանակներում լեզվաբանը հանգում է լեզվի քերականական կողմին և հիմնավորում իր հետազոտության արդյունքը⁶⁶: Ջ. Հառիսը գալիս է այն համոզման, որ լեզվաբանական կադապարը չբնորոշվող կամ մասամբ բնորոշվող նշանային համակարգ է, որը, այն բանից հետո, երբ նրա հատկանիշներին որոշակի նշանակություններ են վերագրվում, վերածվում է կառուցվածքային համակարգի: Այլ կերպ ասած՝ տարբեր կառուցվածքներ կարող են միևնույն կադապարը ունենալ, և ընդհակառակը՝ միևնույն կառուցվածքը կարող է տարբեր կադապարներով ներկայացվել⁶⁷:

Ժամանակակից լեզվաբանության մեջ «մոդել» տերմինի բովանդակությունը որոշակի չափով ընդգրկում է (հատկապես ըստ Լ. Ելմսլիի) նախկին «տեսություն» տերմինի բովանդակությունը:

⁶⁵ Տե՛ս E. Sapir, Sound patterns in language, «Language», 1925, vol.1, N 2, էջ 37-51:

⁶⁶ Տե՛ս Ch. Hockett, Two models of grammatical description, «Word», 1954, vol. 10, N 2-3, էջ 210:

⁶⁷ Տե՛ս Z Harris, The transformational model of language structure, «Antropological Linguistics», 1959, vol. 1, N 1, էջ 27-29.

Գտնում են, որ «մոդել» կարող է կոչվել միայն այն տեսությունը, որը որոշակի չափով ձևավորված և բավականին պարզորոշ է ներկայացված:

Այսպիսով՝ նկատի ունենալով լեզվաբանական կադապարի վերոնշյալ բնորոշումները՝ կարելի է եզրակացնել, որ գոյություն ունեն այնքան կադապարներ, որքան լեզվի տարբեր նկարագրություններ կան: Այդ իսկ պատճառով ամերիկյան գրականության մեջ լեզվաբանական կադապար ասելով հասկանում են նկարագրության այն ձևերը, որոնք պարտադրում են լեզվական նյութի տարբեր կառուցվածքայնացում (structuralization), հակառակ դեպքում այն կշփոթվի տարբեր ձևերով նկարագրելու հետ:

Կախված նրանից, թե ինչ տիպի լեզվաբանական մոդել կամ կադապար (pattern թե model) է կառուցվում, ժամանակակից ամերիկյան կառուցվածքաբանությունը հանգում է լեզվաբանական հետազոտությունների երկու տարբեր մեթոդաբանությունների: Դրանցից առաջինը, որը հետաքրքրվում է լեզվական փաստերով (data-oriented approach), բնորոշվում է որպես լեզվի մեջ վերջնական ճշմարտություն որոնելու հայեցակարգ (God's truth approach)⁶⁸: Երկրորդը հետաքրքրվում է նկարագրական մեթոդով և բնորոշվում է որպես հարմարեցման մոտեցում (hocus-pocus approach)⁶⁹:

⁶⁸ Տե՛ս A. Koutsoudas, The morpheme reconsidered, IJAL, 1963, vol. 29, N2, p. 160.

⁶⁹ Տե՛ս Ch. Hockett, Problems in morphemic analysis, «Language», 1947, vol. 23, N 4, p. 325.

Առաջինի կողմնակիցները լեզվական կառուցվածքն ընդունում են որպես օբյեկտիվ իրականություն, իսկ տարբեր հետազոտողների կողմից միևնույն նյութի հակասական և բազմազան բնորոշումները բացատրում են երկու ձևով. կա՛մ վերլուծության է ենթարկվել ոչ բավարար քանակությամբ նյութ, կա՛մ վերլուծությունը լիակատար չի եղել: Ի վերջո, նրանց նպատակը լեզվական կառուցվածքի վերաբերյալ որոշակի տեղեկություն ստանալն է:

Երկրորդի կողմնակիցները ևս ընդունում են լեզվական կառուցվածքի օբյեկտիվ իրականություն լինելը, սակայն լեզվաբանական վերլուծությունը համարում են խաղ յուրատեսակ նշաններով: Ընդ որում ենթադրվում է, որ կառուցվում են ոչ թե հենց սովյալ օբյեկտի (երևույթի), այլ նրա նկարագրության կաղապարները: Նման կաղապարների համարժեքությունը ճշտվում է նրանով, որ դրանք կարող են համապատասխանել մեկ այլ նյութի՝ առանց խախտելու տրամաբանական ճշմարտացիությունը, այսինքն՝ արդեն նկարագրված կաղապարով կարող են բնորոշվել նոր երևույթներ: Բնականաբար, լեզվաբանական կաղապարման ոչ միանշանակ լինելու խնդիրը առաջ են քաշել *hocus-pocus մեթոդաբանության* կողմնակիցները: Ի վերջո, նրանք եկել են այն համոզման, որ տարբեր լեզվաբաններ կարող են ուսումնասիրել միևնույն նյութը, սակայն հանգել տարբեր եզրակացությունների: Ինչպես փաստում է Յ. Նայդան, լեզվաբանության մեջ, ի

տարբերություն մաթեմատիկայի, չի կարելի ակնկալել միանշանակ արդյունք⁷⁰:

Լեզվաբանական կադապարտումը անպայմանորեն ենթադրում է վերացարկման (աբստրակցիայի) և իդեալականացման առկայություն: Արտահայտելով բնօրինակի էական հատկանիշները և շրջանցելով ոչ էականները՝ կադապարը դառնում է վերացական իդեալականացված օբյեկտ: Յուրաքանչյուր կադապար ամբողջանում է բնօրինակի հնարավոր կառուցվածքի վարկածի հիման վրա և ներկայանում է որպես բնօրինակի գործառական (ֆունկցիոնալ) նմանակ, որը թույլ է տալիս կադապարի վերաբերյալ գիտելիքները վերագրել բնօրինակին: Կադապարի համապատասխանության չափանիշ է գիտափորձը:

Յուրաքանչյուր կադապար պետք է լինի ձևային, այսինքն՝ կադապարը կազմող տարրերը և դրանց հարաբերությունները պետք է ներկայացվեն ակնհայտորեն, տրամաբանորեն չհակասող կերպով: Կադապարը պետք է ունենա բացատրական ուժ, այսինքն՝ ոչ միայն ներկայացնի փաստերը կամ գիտափորձի տվյալները, այլև կանխատեսի անհայտը՝ բնօրինակի հնարավոր վարքագիծը, որն ավելի ուշ արդեն կհաստատվի ուսումնասիրության տվյալներով կամ նոր գիտափորձերով:

Կադապարները, ըստ իրենց մեջ դիտարկվող օբյեկտի բնույթի, Յու. Ապրեսյանը բաժանում է երեք խմբի.

1.մարդու խոսքային գործունեության կադապար, որը ներկայացնում է որոշակի լեզվական գործընթացներ և երևույթներ,

⁷⁰Տե՛ս «Основные направления структурализма», М., 1964, էջ 204:

2.լեզվաբանական հետազոտության կադապար, որը ներկայացնում է հետազոտական այն ընթացակարգերը (պրոցեդուրա), որոնք լեզվաբանին օգնում են հայտնաբերել այս կամ այն լեզվական երևույթը,

3.անդրկադապարներ, որոնք ներկայացնում են խոսքային գործընթացի կամ լեզվաբանական հետազոտության պատրաստի կադապարների տեսական և փորձնական գնահատականը⁷¹:

Ըստ այնմ, թե լեզվի որ կողմն է կադապարվում, խոսքային գործընթացի կադապարները լինում են 2 տիպի. 1) քերականական ճշտության, որոնցով կարելի է լեզվի մեջ ճիշտը սխալից տարբերել, 2) գործառական, որոնք ներկայացնում են խոսքի բովանդակությունը (բովանդակության պլան) ձևի հետ (արտահայտության պլան) հարաբերակցելու կարողությունը:

«Մուտքային» և «ելքային» ինֆորմացիայի տիպերով պայմանավորված՝ քերականական ճշտության մոդելները լինում են ճանաչողական և սերոդ: Ճանաչողական կադապարը (Կ. Այդուկևիչի «մակարդակային քերականականությունը») որպես «մուտք» ստանում է բնական լեզվով տեքստի որոշակի հատված կամ դրա վերացական արտահայտումը արհեստական լեզվում, իսկ որպես «ելք» տալիս է պատասխան, թե արդյոք տվյալ հատվածը քերականորեն ճիշտ է, կանոնավոր է, թե անկանոն: Մերոդ կադապարի դեպքում (Ն. Խոմսկու «սերոդ քերականությունը»), ի տարբերություն ճանաչողականի, տեղի է ունենում հակառակը:

⁷¹ St' u Ю. Апресян, Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966, էջ 99-100:

Ն. Խոմսկու «սերող քերականության» առաջին տարբերակի քննադատական հաղթահարումը հանգեցրեց սերող իմաստաբանական կադապարների ստեղծման (Ջ. Լակոֆ), որը առնչություններ ունի խոսքային կամ համադրական կադապարների հետ:

Ըստ այնմ, թե խոսքային գործընթացը որ տեսանկյունից է կադապարվում՝ խոսողական թե լսողական, գործառական (ֆունկցիոնալ) կադապարները լինում են վերլուծական և համադրական: Վերլուծական են համարվում զանազան հնչույթաբանական կադապարները, ինչպես նաև դասական նկարագրական քերականության կադապարը: Համադրական կադապարները կիրառվում են ավելի ուշ՝ պայմանավորված փոխակերպական վերլուծության մեթոդաբանության զարգացմամբ: Որևէ լեզվի վերլուծական լիակադապարը որպես «մուտք» ստանում է տեքստի որոշակի հատված, իսկ որպես «ելք» հատուկ իմաստային անդրլեզվով դրա վերաբերյալ իմաստային պատկերացում է տալիս: Որևէ լեզվի համադրական լիակադապարը, լինելով վերլուծական լիակադապարի հակադրությունը, որպես «մուտք» ստանում է իմաստի որևէ հատվածի պատկեր, իսկ որպես «ելք» տալիս է տվյալ լեզվով բազմաթիվ հոմանշային տեքստեր, որոնք միննույն իմաստն են արտահայտում: Պետք է նշել սակայն, որ վերոնշյալ երկու տիպի կադապարների փոխհարաբերությունը ամերիկյան կառուցվածքաբանության մեջ հստակ չէ: Թերևս միայն Ջ. Հաոփսն է, որ համեմատաբար հստակ գնահատական է տալիս. նա այդ երկու


կաղապարները դիտարկում է որպես մեկը մյուսին փոխադարձաբար լրացնող⁷²:

Խոսքային գործընթացի կաղապարը լեզվաբանական կաղապարի կարևոր տիպերից է: Ի տարբերություն դրա՝ լեզվաբանական հետազոտությունների կաղապարները և անդրկաղապարները օժանդակ դեր են կատարում: Հետազոտական կաղապարները ստեղծված են այն հասկացությունների ընտրության օբյեկտիվ հիմնավորման համար, որոնց միջոցով լեզվաբանները նկարագրում են խոսքային գործընթացի կաղապարները (օր.՝ այս կամ այն լեզուների քերականությունները): Դրանք նվազեցնում են հետազոտության մեջ սուբյեկտիվ գործոնների դերը, ուստի դառնում են խոսքային գործընթացի կաղապարների համարժեքության չափանիշ:

Անդրկաղապարները չափանիշների և տեսական հիմնավորումների համակարգեր են, որոնց միջոցով միևնույն երևույթը կաղապարող մի քանի այլընտրանքային կաղապարներից կարելի է ընտրել լավագույնը: Անդրկաղապարները, որ ձևավորվել են մաթեմատիկական լեզվաբանության մեջ, մաթեմատիկական տեսություններ են, որոնց համար ուսումնասիրության օբյեկտ են ոչ թե առանձին լեզվաբանական հասկացությունները, այլ ամբողջական կաղապարված լեզուները:

Կաղապարների վերոնշյալ դասակարգումները նպատակահարմար ենք համարում ներկայացնել գծապատկերի տեսքով:

⁷² Տե՛ս Z Harris, նշվ. աշխ., էջ 27-29:



Այսպիսով՝ կաղապարում ոչ միայն լեզվական երևույթները և գործընթացները ներկայացնելու եղանակներից մեկն է, այլև լեզվի մասին մեր գիտելիքները ճշտելու օբյեկտիվ, գործնական չափանիշ:

Լեզվի ուսումնասիրության մյուս մեթոդների հետ միասնություն կազմելով՝ կադապարումը հանդես է գալիս որպես ավելի խոր ուսումնասիրության միջոց, որը ներկայացնում է խոսքային գործընթացի թաքնված երևույթները, ավելի պարզ կադապարներից դեպի բովանդակալից կադապարների անցումը՝ նպաստելով լեզվի եռության ավելի խոր բացահայտմանը:

Հայ լեզվաբանության մեջ կադապարման խնդրին առավել խորությամբ անդրադարձել են **Է. Աղայանը** և **Գ. Ջահուկյանը**: Է. Աղայանն իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ անդրադարձել է հայերենի բաղադրյալ բառերի կառուցվածքային բանաձևերի խնդրին: Նրա առաջարկած բանաձևերը կարևոր դեր ունեն հայերենի նկարագրության մեջ⁷³:

Ս. Գալստյանը «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ կիրառել է Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի հետազոտություններում ներկայացված սկզբունքները⁷⁴:

Լ. Հովսեփյանը «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ առաջ է քաշել բառակազմության՝ որպես գործընթացի, դինամիկ կադապարման սկզբունքը: Ի տարբերություն Գ. Ջահուկյանի՝ նա ներկայացնում է լեզվի մեջ

⁷³ Տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:

⁷⁴ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

իրապես գոյություն ունեցող բաղադրությունները, այլ ոչ թե դրանց ընդհանրական կամ լրիվ կաղապարը, որը, ըստ Ջահուկյանի, ընդգրկում է տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերը և որոշ դեպքերում կարող է չունենալ ոչ մի նմուշ: Հեղինակը նշում է, որ բառաբարդումն ու ածանցումը ընդգրկող լրիվ կաղապարը բարդ ու ծանրաբեռնված տեսք կունենար, հետևաբար դիմել է բառաբարդման ու ածանցման հիմնակաղապարներին⁷⁵:

Լ. Խաչատրյանը «Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ քննում է ժամանակակից հայերենի բառակազմական և ձևաբանական կաղապարները: Բառակազմական կաղապարները հեղինակը ներկայացնում է 2 կտրվածքով՝ բարդություններ և ածանցավոր կազմություններ: Ածանցավոր կազմություններն էլ իրենց հերթին ներկայացնում է երկու խմբով՝ նախածանցավոր և վերջածանցավոր կազմությունների կաղապարներ: Ինչ վերաբերում է ձևաբանական կաղապարներին, ապա դրանք քննում է ըստ գոյականի և բայական բառաձևերի հարացույցների⁷⁶:

Այսպիսով՝ կաղապարի հասկացությունը մուտք է գործել նաև հայ լեզվաբանություն և հիմնական մշակման ենթարկվել հատկապես Գ. Ջահուկյանի կողմից տարբեր աշխատություններում, մասնավորապես «Լեզվի համընդհանուր տեսություն» («Универсальная теория языка») աշխատության մեջ, որտեղ հեղինակը առաջ

⁷⁵ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:

⁷⁶ Տե՛ս Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:

Է քաշել *համընդհանուր լեզվաբանական կադապարի* հասկացությունը: Այն ոչ միայն նպաստում է հնարավոր և գոյություն ունեցող բոլոր լեզուների ուսումնասիրությանը, այլև ծառայում է որպես անդրկադապար: Հաջորդ բաժնում կներկայացնենք կադապարման՝ Գ. Ջահուկյանի ըմբռնումը, որը, աստիճանական զարգացման և մշակման ենթարկվելով, հանգեցրեց համընդհանուր լեզվաբանական կադապարի ստեղծմանը:

Բ. ԿԱՂԱՊԱՐԻ ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Սկզբնապես Ջահուկյանը ցանկացել է հանդես գալ մի ընդհանուր տեսական աշխատությամբ, շարադրել իր լեզվաբանական սկզբունքները, ապա անցնել հայոց լեզվի նկատմամբ նրանց կիրառմանը: Մակայն արդյունքը եղավ «*Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*» աշխատությունը, որ յուրատեսակ գիտափորձ է: Դրանից հետո Ջահուկյանը անցավ այս աշխատության ներածության մեջ արծարծված գաղափարների ավելի հանգամանալից ու ամբողջական շարադրմանը:

«*Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*» աշխատությունը ներկայացնում է Ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի ամբողջական քննությունը՝ «*Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը*» և «*Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*» մենագրություններում շարադրված ընդհանուր սկզբունքներով:

Ջահուկյանը նպատակ է դրել հստակորեն տարբերել լեզվի ձևական և իմաստային կողմերը (արտահայտության և բովանդակության պլանները) և որոշելով դրանց փոխհարաբերությունը՝ Ժամանակակից լեզուն ներկայացնել իր իրական վիճակով, օբյեկտիվորեն: Լեզվական երևույթների մանրատված դասակարգումների փոխարեն հանդես է բերում լեզվի կառուցվածքի ամբողջական պատկերը՝ այն կազմող բոլոր կողմերի և միավորների փոխկապակցության մեջ: Նկարագրությունը դարձնում է ըստ

հնարավորին հստակ և հակասություններից զերծ: Նշում է նաև, որ իր ուսումնասիրությունը ոչ թե *կառուցվածքային*, այլ *կառուցվածքա-իմաստային* է (структурно-семантическая), որը (նկատի ունենալով իր կիրառած մեթոդների որոշ առանձնահատկությունները) ավելի նպատակահարմար է համարում կոչել *հարաբերակցային*: Այն բնութագրում է հետևյալ կերպ. «Այսպես կոչված հարաբերակցական քերականությունը կառուցված է երկու հիմնական սկզբունքով. 1. քերականական կառուցվածքի նկարագրությունը կատարվում է բնական խոսքի մեջ արտահայտության միջոցների հաջորդման կարգին խստորեն համապատասխան, ընդ որում նախ արտածվում են ընդհանուր կանոններ, ապա քննվում է ամեն մի օղակն առանձին. 2. նկարագրության բոլոր փուլերում կատարվում է երեք գործողություն՝ արտահայտության պլանի կառուցվածքի տարրերի բացահայտում՝ անկախ բովանդակության պլանից, ապա բովանդակության պլանի կառուցվածքի տարրերի բացահայտում՝ անկախ արտահայտության պլանից և, վերջապես, կառուցվածքների փոխհարաբերության, այսինքն՝ ընդհանուր կառուցվածքի սահմանում: Այլ կերպ ասած՝ քննությունը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ «նախ տարրերել և ճանաչել առանձին-առանձին, ապա միացնել և ճանաչել ներքին կապը»⁷⁷:

Արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննության ուղղությամբ կատարվող որոնումները որոշ առումով նպատակ ունեն հաղթահարելու քերականության մեջ

⁷⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 5-6:

արտահայտության և բովանդակության պլանները խառնելու, դրանք հստակորեն չտարբերակելու, անհետևողական կերպով մեկից մյուսը անցումներ կատարելու փաստերը:

Հարաբերակցային մոտեցումը կարող է հանդես գալ երկու ձևով. կարելի է սկսել կամ արտահայտության պլանից ու արտահայտության միջոցներից և գնալ դեպի բովանդակության պլանը, կամ վարվել հակառակ ձևով: Ըստ այսմ՝ Ջահուկյանը տարբերում է *արտահարաբերակցական* (ձևա-հարաբերակցական) և *ներհարաբերակցական* (իմաստա-հարաբերակցական) քերականություններ: «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ քննությունը կատարվում է արտահարաբերակցական սկզբունքով. պատճառը Ջահուկյանի կարծիքով այն է, որ «մենք դեռևս չունենք բովանդակության տարրերի բացահայտման այնպիսի մի ընդհանրական բանալի (համընդհանուր ուսմունք), որ հնարավորություն տար թափանցելու բոլոր լեզուների բովանդակային կողմի մեջ»⁷⁸:

Ջահուկյանը համոզված է, որ գտել է այնպիսի ընդհանրական կատեգորիաներ, որոնք հնարավորություն են տալիս ընդգրկելու լեզվի կառուցվածքի բոլոր կողմերը: Մակայն մինչև ընդհանուր տեսության վերջնական մշակումը տալիս է «արտահարաբերակցական» քերականության ամբողջական շարադրանքը՝ «ներհարաբերակցականինը» թողնելով հետագային:

⁷⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 99:

Այստեղ Ջահուկյանը կաղապարների առանձին հատվածների արտահայտության միջոցների քննությունից բաշխման և փոխակերպման միջոցով անցում է կատարում դեպի բովանդակության պլանը: Բովանդակության տարրերը համակարգվում են ըստ արտահայտության միջոցների կաղապարային դիրքի՝ ըստ արտահայտության ձևերի ու եղանակների տարբերության:

Եթե *արտահարաբերակցական* քերականության մեջ տարբեր իմաստները միավորվում են ըստ ձևական ընդհանրության, ապա ներհարաբերակցական (իմաստահարաբերակցական) քերականության մեջ տարբեր ձևերն են միավորվում ըստ իմաստային ընդհանրության:

Ջահուկյանի խորին համոզմամբ լեզվի նկարագրությունը հենվում է հետևյալ կարևոր *սկզբունքների* վրա.

1. Անհրաժեշտ է հստակորեն տարբերել լեզվի մեջ արտահայտության և բովանդակության պլանները՝ քննելով դրանք առանձին-առանձին և համադրելով քննության արդյունքները:

2. Անհրաժեշտ է հստակորեն տարբերել անփոփոխակները (ինվարիանտ) փոփոխակներից կամ տարբերակներից (վարիանտ), այլ կերպ ասած՝ չշփոթել հիմնական միավորները այդ միավորների դիրքային (զուգորդային) տարբերակների հետ: Նպատակահարմար է անփոփոխակները առանձնացնել *աստիճանական երկատման* (դիխոտոմիայի) սկզբունքով: Ժամանակակից լեզվաբանության մեջ մշակվել են այնպիսի բաշխական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս, մնալով արտահայտության պլանում, շատ դեպքերում որոշել ձևայիններն ու այլաձևակները շարակարգային

(սինտագմատիկ) հարաբերությունների հիման վրա, բայց Ջահուկյանի խորին համոզմամբ հարցի վերջնական լուծումը չի կարող չկապվել արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության ընդհանուր հարցի հետ: Վերջին դեպքում հաշվի են առնվում հարացուցային (պարադիգմատիկ) հարաբերությունը և առաջնորդվում համադարձության (կոմուտացիայի) և սրա հետ միավորվող փոխարկման (սուբստիտուցիայի) սկզբունքներով: Մնալով արտահայտության պլանում և դիմելով բաշխման սկզբունքին՝ Ջահուկյանը հաշվի է առնում ստուգվող միավորների շրջապատների բնույթը. եթե տվյալ միավորների ձևաբանական շրջապատները կարող են լիովին համընկնել, ապա գործ ունենք երկու տարբեր ձևույթների էական հատկանիշներով տարբերվող անփոփոխակների հետ: Այլապես, եթե ստուգվող միավորները հանդիպում են միայն տարբեր շրջապատներում, նրանց տարբերությունը դիրքային պայմանավորվածություն ունի, ապա գործ ունենք միևնույն ձևույթի դիրքային տարբերակների, փոփոխակների, այլաձևակների հետ, որոնց տարբերությունները էական չեն, այսինքն՝ այդ միավորները գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ: *Համադարձության* և *փոխարկման* սկզբունքները կարող են կիրառվել և՛ միայն շարակարգային հարաբերությունների հաշվառմամբ՝ անկախ բովանդակությունից, և՛ ձևի ու բովանդակության փոխհարաբերության բնույթի բացահայտմամբ: Այսպիսով, գործ ունենք անփոփոխակների և փոփոխակների, էական և ոչ էական հատկանիշների տարբերակման երեք սկզբունքի հետ. ա) կարելի է պարզել այդ հարցը՝ մնալով

միայն արտահայտության պլանում և տեքստում (շարակարգորեն, սինտագմատիկորեն) հանդես եկող «ձևական» չափանիշների հիման վրա կռահելով իմաստային (բովանդակային) տարբերությունները. այդպես է վարվում ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը՝ տեքստը դիտելով որպես յուրատեսակ ծածկալեզվային տեքստ. այդ սկզբունքը Ջահուկյանը միակողմանի է համարում և կարծում, որ ընդհանուր քննության դեպքում պետք է անհրաժեշտորեն լրացվի: բ) Կարելի է մնալ արտահայտության պլանում և հաշվի առնել միայն հարացուցային (պարադիգմատիկ) հարաբերությունները՝ դրանցով պարզելով փոփոխակներն ու անփոփոխակները. այս սկզբունքը ևս գործում է միայն «ձևական» չափանիշներով և ինքնին միակողմանի է: գ) Կարելի է հաշվի առնել արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը, դրանք դիտել որպես միևնույն լեզվական երևույթների տարբեր կողմեր. սրանով իսկ ձեռք են բերվում տվյալ լեզվի էական հատկանիշները որոշելու վերջնական չափանիշներ: Ջահուկյանն այս սկզբունքն ավելի ընդհանուր է համարում և նշում, որ այն ավելի լավ է պարզում լեզվի կառուցվածքի առանձնահատկությունները: Անփոփոխակներն ու փոփոխակները և սրանց հետ կապված էական ու ոչ էական հատկանիշները բացահայտելիս Ջահուկյանն առաջնորդվում է *համադարձության* սկզբունքով:

3. Անհրաժեշտ է հստակորեն տարբերել լեզվի քննության տարբեր մակարդակները, մեկ մակարդակի համար ստացվող արդյունքները չվերագրել մյուսին և չընդհանրացնել: Այն, ինչ ճիշտ է շարահյուսական մակարդակով, կարող է ճիշտ չլինել ձևաբանական

մակարդակի համար: Այլ կերպ ասած՝ հարկավոր է նկատի ունենալ մակարդակների որակական տարբերությունները, նրանց կառուցվածքը պայմանավորող ուրույն հակադրությունները:

4. Անհրաժեշտ է հետևողականորեն կիրառել *գուգաձևության* (իզոմորֆիզմի) սկզբունքը, ըստ որի՝ տվյալ մակարդակի համար կիրառվող վերլուծության մեթոդները կարող են օգտագործվել և մյուս մակարդակի համար, թեև վերլուծության հետևանքով բացահայտվում են միայն տվյալ մակարդակին հատուկ հակադրություններ:

5. Հարկավոր է հստակորեն տարբերել լեզվի քննության *համաժամանակյա* (սինխրոնիկ) և *տարաժամանակյա* (դիսխրոնիկ) հայեցակետերը, մեկ ժամանակագրական կտրվածքում առկա երևույթները չվերագրել մյուսին, կառուցվածքը քննել իր ներքին փոխհարաբերություններով:

6. Հարկավոր է հստակորեն տարբերել լեզվի կառուցվածքը և նորման, տարբերել լեզվի կառուցվածքային քննությունը նրա նորմատիվ քննությունից: Կառուցվածքային քննության դեպքում կարող են հայտնաբերվել ոչ էական տարբերություններ, որոնք, սակայն, նորմայի առումով պետք է ուշադրության առնվեն: Կառուցվածքի համար կարևոր են էական հակադրությունները և հակադրվող անփոփոխակները, նորմայի համար կարևոր են նաև փոփոխակները կամ տարբերակները:

7. Պետք է պարզվի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը:

8. Քննությունը պետք է կատարվի *աստիճանավորության* և *ենթադասության* սկզբունքով, այսինքն՝ քննվող համակարգի կազմիչները պետք է դրվեն փոխկապակցական որոշ ենթադասության մեջ, ոչ թե կողք կողքի, այլ աստիճանական բարդացմամբ ու ենթակարգությամբ:

9. Պետք է հիշել, որ լեզվականն ու խոսքայինը ոչ այլ ինչ են, եթե ոչ իրականության արտացոլումները, և, հետևաբար, լեզվական և խոսքային միավորների ետևում պետք է բացահայտել իրական հարաբերությունները:

10. Լեզվական միավորների քննությունը պետք է ուղեկցվի զանազան կարգի աղյուսակներով և ամփոփիչ բանաձևերով, որոնք ապահովում են քննության ճշգրտությունն ու հստակությունը:

11. Պետք է փորձել բոլոր տարբերությունները (հակադրությունները) հանգեցնել մեկ հիմնականի (ոչ նշանակիր անդամ, немаркированный член), ապա հատկանիշների աստիճանական հավելմամբ (նշանակիր անդամ, որ կարող է ոչ նշանակիր լինել մի ուրիշի նկատմամբ, սա էլ մի երրորդի նկատմամբ ևն) ընդգրկել ամբողջ համակարգը: Այս սկզբունքը Ջահուկյանը կոչում է *մոնիզմի* սկզբունք: Բարդ միավորների հատկանիշներն էլ կարելի է վերլուծել աստիճանական բացառմամբ (*հետևողական բացառման սկզբունք*):

12. *Վերլուծությունը* և *համադրությունը* պետք է կիրառվեն հավասարապես և լրացնեն իրար: Այլ կերպ ասած՝ վերլուծական և համադրական (սերող) քերականությունները լեզվական երևույթների բացատրության և մոդելավորման միջոցներ են: Կարելի է ասել,

որ խոսքի մոդելավորման դեպքում, եթե նկատի ունենանք ն՛ հաղորդողին, ն՛ ընկալողին, տեղի է ունենում ն՛ համադրություն, ն՛ վերլուծություն, ուստի երկուսն էլ հավասարապես անհրաժեշտ են և լեզվաբանության մեջ պետք է լրացնեն իրար: Կադապարից դեպի տարրերը գնալիս կատարվում է *վերլուծություն*, տարրերից դեպի կադապարները գնալիս՝ *համադրություն*: Խոսողը կատարում է տարրերի ընտրություն և համադրություն սովյալ լեզվական կադապարների սահմանում՝ իրացնելով հնարավոր կարգերը իրական լեզվական միավորներով: Լեզվաբանը կատարում է վերլուծություն և դասակարգում՝ առանձնացնելով կադապարի անդամների իրացումները և դրանք խմբավորելով՝ բուն կադապարների բացահայտման նպատակով: Լսողը համադրում է և վերլուծում՝ անընդհատ գուգադրելով իր և խոսողի կադապարները:

13. «Որևէ կոնկրետ լեզվի քննությունը պետք է կատարել սկսելով արտահայտության պլանից և գնալով բովանդակության պլանը: Սրանով հնարավոր կլինի լեզվի քննությունը ազատել եկամուտ տարրերից, լեզուն դիտել այնպես, ինչպես նա կա»⁷⁹:

14. Քննության ստորին աստիճանը պետք է կազմի *տարրերիչ հատկանիշների մակարդակը*, այսինքն՝ հասնելով նվազագույն միավորներին՝ Ջահուկյանը դրանք էլ խմբավորում է ըստ էական տարրերիչ հատկանիշների: Դրանով հնարավորություն է ստեղծվում հատկանիշների փոքր քանակով բնութագրել միավորների ավելի մեծ քանակ (այնպես, որ վերջիններս առնվազն

⁷⁹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 21:

մեկ հատկանիշով տարբերվեն): Էական հատկանիշների քանակը և այդ հատկանիշներն ունեցող միավորների քանակը գտնվում են որոշակի կախման մեջ, որ Ջահուկյանն արտահայտում է մաթեմատիկորեն: Միավորների քանակը նշանակում է **U**-ով (լատ. unitas, ֆր. unite), յուրաքանչյուր տարբերիչ հատկանիշը՝ **m**-ով (ֆր. marque), այդ հատկանիշի բացակայությունը՝ **m***-ով, իսկ հատկանիշների ընդհանուր քանակը՝ **n**-ով, ապա միավորների տվյալ քանակի և դրանց նկարագրության համար պահանջվող հատկանիշների քանակի փոխհարաբերությունը արտահայտում է հետևյալ բանաձևերով.

$$U_{max}=(m+m^*)n \quad (1)$$

$$U_{min}=(m+m^*)n-1+1 \quad (2)$$

Եթե հատկանիշն ու նրա բացառումը հաշվի առնվեն միայն քանակապես՝ անկախ նրանց որակական տարբերությունից և **m+m***-ը փոխարինվի 2-ով, ապա կստացվեն ավելի պարզված հետևյալ բանաձևերը.

$$U_{max}=2n \quad (3)$$

$$U_{min}=2n-1+1 \quad (4)$$

Սա նշանակում է՝ 2 հատկանիշ ընտրելու դեպքում կարելի է նկարագրել առնվազն $2 \cdot 2 - 1 + 1 = 2 + 1 = 3$ և առավելագույնը՝ $2 \cdot 2 = 4$ միավոր. 3 հատկանիշ ընտրելու դեպքում՝ առնվազն $2 \cdot 3 - 1 + 1 = 2 \cdot 2 + 1 = 4 + 1 = 5$ և առավելագույնը՝ $2 \cdot 3 = 6$ միավոր ևն: Հիշյալ բանաձևը համապատասխանաբար շրջելով՝ կարելի է որոշել, թե միավորների տվյալ քանակի համար առնվազն քանի հատկանիշ պետք է ընտրել: Հասկանալի է, որ 5 միավորի նկարագրության համար 3

հատկանիշից պակաս հնարավոր չէ ընտրել: Այս նույն ձևով կարելի է պարզել, որ 5-8 միավորի նկարագրության մեջ կարելի է բավարարվել 3 հատկանիշով: Իրականում, սակայն, ինչպես նշում է Ջահուկյանը, բնական լեզուներում ոչ բոլոր «բաց տեղերն» են լցվում, և հանդես է գալիս 3-ից ավելի հատկանիշ: Դեռ ավելին. երբեմն յուրաքանչյուր միավոր բնորոշվում է մեկ հատկանիշով, այսինքն՝ հատկանիշների և միավորների քանակը հավասար է լինում: Պետք է պարզվի նաև հատկանիշների ներքին փոխհարաբերությունը, դրանք ևս պետք է դրվեն տրամաբանական որոշակի կապի մեջ: Այդպիսի հատկանիշներ պետք է բացահայտվեն թե՛ *արտահայտության*, թե՛ *բովանդակության* պլանների համար, և դրանք պետք է փոխկապակցության մեջ դրվեն:

Ջահուկյանը նկատի ունի ոչ միայն երկու հնարավորություն՝ այդ հատկանիշն ունենալը (+) կամ չունենալը (-), այլև երրորդը՝ չեզոքությունը (0): Այս դեպքում ավելի քիչ հատկանիշներով կարելի է ավելի շատ միավորներ նկարագրել, սակայն այս դեպքում կտուժի տրամաբանական ճշգրտությունը և մեքենայական հաշվման նպատակների համար հարկ կլինի նոր փոխակերպում կատարել:

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ հիմնական գծերով տրված է *լեզվական կադասարի ջահուկյանական ըմբռնումը*: Ըստ այդ ըմբռնման՝ *լեզվական կադասարները* բառաձևերի որոշակի կարգերի հետևողական շարքեր են, որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ:

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության երկրորդ բաժնի՝ «Ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի» մի մասը 1967 թ. հրատարակվել է «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» խորագրով: Սակայն այստեղ այն ներկայացվում է որոշ փոփոխություններով: Ողջ բաժինը կառուցված է Ջահուկյանի մշակած այսպես կոչված հարաբերակցական քերականության սկզբունքների մասնակի կիրառմամբ, որտեղ քննադատաբար օգտագործված են ավանդական և կառուցվածքային քերականությունների կարևորագույն նվաճումները:

Լեզվաբանական գրականության մեջ կադապարի և տիպի փոխհարաբերության մասին արտահայտված է 3 կարծիք.

1. ոմանք կադապարը և տիպը լիովին նույնացնում են՝ հավասարապես գործածելով այդ երկու անվանումներից մեկը մյուսի փոխարեն,

2. երկրորդները տիպը դիտելով որպես առկա կառուցվածքային միավոր՝ կադապարը համարում են նույն տիպը՝ միայն թե առնված որպես այլ միավորներ կազմելու օրինակ (նմուշ),

3. երրորդները կադապարը դիտում են որպես ավելի լայն հասկացություն, քան տիպը՝ գտնելով, որ կադապարը կարող է ընդգրկել մի քանի տիպ:

Կադապարի և տիպի ջահուկյանական ըմբռնումը մոտավորապես համընկնում է երրորդի հետ: Բառաձևը, տիպը և կադապարը Ջահուկյանը համարում է ընդհանրացման տարբեր աստիճաններ:

Տիպի գաղափարի քննարկումը պարզ է դարձնում կաղապարի ջահուկյանական ըմբռնումը: Կաղապար ասելով՝ պետք է հասկանալ տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերն ընդգրկող կառուցվածքային սխեման: Խոսքի մեջ կաղապարի մասերը կարող են լրացվել տարբեր չափով, և այս դեպքում կստացվեն մասնիկների տարբեր քանակ ընդգրկող տիպեր: Կաղապարի համար որպես օրինակ ընտրված բառաձևը Ջահուկյանը կոչում է կաղապարի նմուշ կամ օրինակ. այսպես, **քաղաք + ներ + ի + ն** բառաձևը կարող է որպես նմուշ ծառայել $A(((+ a) + b) + c)$ կաղապարի համար: Առկա մասնիկը նշանակում է m -ով, բացակա մասնիկը՝ m^* -ով (զրո մասնիկ), ապա տվյալ կաղապարին պատկանող տիպերի հնարավոր քանակը հաշվում *Նյուտոնի երկանդամի* բանաձևով՝

$$(m+m^*)n = mn + nmn-1m^* + n(n-1)/1\bullet 2 mn-2m^*2 + n(n-1)(n-2)/1\bullet 2\bullet 3 mn-3m^*3 + \dots nmm^*n-1 + m^*n:$$

Այսպես, **քաղաք(((+ներ)+ի)+ն)** եռամասնիկ կաղապարային նմուշը կարող է ունենալ $(m+m^*)3 = m3 + 3m2m^* + 3mm^*2 + m^*3$ տիպերը՝ 1 եռամասնիկ (*քաղաք + ներ + ի + ն*), 3 երկամասնիկ (*քաղաք + ներ + ի*, *քաղաք + ներ + ը*, *քաղաք + ի + ն*), 3 միամասնիկ (*քաղաք + ներ*, *քաղաք + ի*, *քաղաք + ը*) և 1 անմասնիկ (*քաղաք*), ընդամենը՝ 8 տիպ:

Ջահուկյանի համոզմամբ՝ գործնական տեսակետից որպես կաղապարային նմուշներ կարելի է ընտրել այն ձևերը, որոնցից հնարավոր է օրինակներ (նմուշներ) ընտրել բոլոր տիպերի համար: Եթե որոշ տիպերի համար տվյալ ձևը օրինակ չի տալիս, ապա գործ ունենք այլ կաղապարի հետ: Կաղապարային բանաձևի մեջ

մասնիկներն օժտվում են փակագծերով, եթե նրանց առկայությունը պարտադիր չէ: Մասնիկի պարտադիր առկայության դեպքում փակագծերը բացակայում են: Այսպիսով՝ կադապարային տարբերությունները որոշվում են մասնիկների (կամ նրանց փոխարինող միջոցների) *քանակով*, *դիրքով* և *պարտադրականությամբ*:

Ջահուկյանը չի բացառում, որ հնարավոր են դեպքեր, երբ տվյալ լեզվում միևնույն բառը ունենա մեկից ավելի կադապարներ, ինչպես, օրինակ, բայերը. այս դեպքում տարբերում է *կադապարային դասեր* (խմբեր), որոնք ընդգրկում են մի քանի կադապարներ:

Ջահուկյանը, անդրադառնալով կադապարների դասակարգման սկզբունքներին, նշում է⁸⁰.

1. Ըստ մասնիկների քանակի ընդգրկման լրիվության՝ տարբերում են *լրիվ կադապար* (полная модель) կամ *լիակադապար* և *մասնական կադապար* (частичная модель) կամ *մասնակադապար*: Լրիվ կադապարն ընդգրկում է տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերը և որոշ դեպքերում կարող է չունենալ ոչ մի նմուշ, մասնակադապարներն ընդգրկում են որոշ թվով տիպեր և փաստորեն ներկայացնում են լիակադապարի մասնակի կառուցվածքային դրսևորումները:

2. Ըստ մասնիկների վերլուծության՝ տարբերում են *մեծակադապար* (макромодель), որ ընդգրկում է բոլոր վերլուծելի

⁸⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 115-116:

(երբեմն այլ մասնիկների հետ ընդհանուր տարրեր ունեցող) կամ անվերլուծելի մասնիկները, և *մանրակաղապար* (микромодель), որ ընդգրկում է մեծակաղապարում ընդգրկված վերլուծելի մասնիկները և կառուցվում տվյալ վերլուծելի մասնիկի տարրերի համար: Մեծակաղապարային բանաձևերում նկատի չեն առնվում մասնիկների տարրերը, որոնք բերվում են մանրակաղապարների մեջ:

3. Ըստ համասեռության՝ տարբերում են *համասեռ* կաղապար (гомогенная модель), որ ինքնակա բնույթ ունի, և *տարասեռ* կաղապար (гетерогенная модель), որ ներկայացնում է երկու կաղապարի խառնուրդ:

Ջահուկյանը հիշատակում է նաև, որ ոչ մի բառ չունի բոլոր հնարավոր կաղապարները, տիպերն ու ձևերը, և քննության դեպքում վերացարկում է կատարվում առանձին բառերից:

«Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ Ջահուկյանը սահմանափակվում էր միայն համադրական բառաձևերի կաղապարներով, ուստի և խոսում էր միայն հիմքի և մասնիկների մասին: Ուսումնասիրության շրջանակների ընդլայնումը և բառաձևերի փոխարեն բառակապակցությունների ընդգրկումը (Ջահուկյանը նախադասությունները համարում է ստորոգական հարաբերությամբ կապված բառեր և բառակապակցություններ) սկզբունքային տարբերություններ չեն բերում կաղապարների ուսմունքի մեջ: Ձևաբանական կաղապարների դեպքում գործ ունենք հիմքերի և մասնիկների հետ, իսկ շարահյուսական կաղապարների դեպքում հիմքերի փոխարեն՝

այդ բառաձևերի հետ կապված (դրանք լրացնող) բառերի: Այսպիսով՝ բառաձևերի փոխարեն այստեղ ելակետ են ծառայում բառագուգորդումները, որոնք խմբավորվում են բառատիպերի, սրանք էլ՝ կաղապարի մեջ: Նույն համաբանությամբ հնարավոր են լրիվ և մասնակի, մեծ և մանր, համասեռ և տարասեռ կաղապարներ:

Ստատիկ քերականության մեջ կաղապարը ներկայացնում է շարակարգի հնարավոր սխեման, *դինամիկ* քերականության մեջ կաղապարի փոխարեն ստացվում է խոսքն ընդօրինակող մոդել, այսինքն՝ գործող մեխանիզմ, որ ընդօրինակում է խոսողի խոսելու գործընթացը: Այդ ընդօրինակումը, այսինքն՝ *դինամիկ մոդելի կառուցումը* Ջահուկյանը կոչում է *մոդելավորում*:

Լեզվական կաղապարների մեջ հատուկ նշանակություն ունեն *սերող կաղապարները*, որոնց նկարագրությունը տրված է Ն. *Խոմսկու* և ուրիշների կողմից: Այդ կաղապարները ապահովում են ստացվող միավորների, հատկապես նախադասությունների քերականական ճշգրտությունը, բայց ոչ իմաստայնությունը: Սակայն ներկայումս լեզվաբանական որոնումները գնում են այնպիսի կաղապարների ստեղծման ուղղությամբ, որոնք ի վիճակի կլինեն սերելու ոչ միայն քերականորեն ճշգրիտ, այլև բոլոր դեպքերում իմաստալից լեզվական միավորներ:

Ինչ վերաբերում է *Ս. Շահումյանի հարակցական սերող կաղապարին* (аппликативная порождающая модель), ապա Ջահուկյանի խորին համոզմամբ Շահումյանի կողմից ելակետային միավորների առանձնացումը խիստ պայմանական է, և, եթե նկատի

չունենանք որոշ կարգի լեզուներ, շատ դեպքերում դժվար իրագործելի:

Լ. Ելմսլեր ժամանակին խնդիր էր դրել տալ այնպիսի սկզբունքներ, որոնք հավասարապես կիրառելի լինեն լեզվի բոլոր կողմերի, այդ թվում թե՛ արտահայտության ու բովանդակության պլանների, թե՛ հարացուցային ու շարակարգային աստիճանների նկատմամբ: Սակայն նրա տված սկզբունքներով իմաստային վերլուծության որևէ ծավալուն փորձ չի կատարվել: Անդրադառնալով Ն. Խոմսկու և այլոց մշակած սերող կադապարների թերություններին՝ նա առաջարկում է իր մշակած ընդհանրական սերող կադապարը:

Ըստ Ջահուկյանի՝ ինչպիսի՞ն պետք է լինի լեզվի *ընդհանրական իդեալական կադապարը*:

1. «*Լեզվական կադապարների և նրանց տարբերիչ հատկանիշների փոխհարաբերության մասին*» հոդվածում Ջահուկյանը գրել է. «Ընդհանուր լեզվաբանության իդեալը այնպիսի կադապարի ստեղծումն է, որ լինի բավականաչափ *տնտեսող* (առանց բաց վանդակների), բավականաչափ *ընդհանրական* (բոլոր լեզուների նկատմամբ կիրառելի), բավականաչափ *միասնական* (հատկանիշների խստիվ համակարգային ընտրության դեպքում միևնույն սկզբունքներից ելնող) և բավականաչափ *սպառիչ* (լեզուն, langage իմաստով, իր բոլոր դրսևորումներով ընդգրկող)»⁸¹:

⁸¹ Տե՛ս «Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», Москва, 1970, էջ 7-22:

Այսպիսով՝ ընդհանրական սերող կաղապարում ա) բոլոր միավորները պետք է ոչ միայն քերականորեն ճիշտ լինեն, այլև իմաստալից (ի տարբերություն գոյություն ունեցող սերող կաղապարների), բ) կաղապարը պետք է կիրառելի լինի բոլոր լեզուների նկատմամբ, գ) ընդգրկի լեզվի բոլոր կողմերը և դ) սպառիչ բնույթ ունենա:

2. Ջահուկյանը ելնում է առաջին հայացքից շատ բնական թվացող մի սկզբունքից, այն է՝ լեզվի համակարգն ուսումնասիրելու և հասկանալու համար, ինչպես արդեն մանրամասն նշել ենք առաջին գլխի համապատասխան մասում, պետք է դուրս գալ այդ համակարգի սահմաններից: Լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ նյութական (մատերիական, սուբստանցիական) աշխարհի մի արտահայտությունը: Ջահուկյանը նախ քննում է իրական աշխարհի փոխհարաբերությունների հնարավոր տիպերը, ապա անցնում լեզվին՝ որպես այդ փոխհարաբերությունների դրսևորումներից մեկին: Լեզվի արտահայտության պլանը ոչ այլ ինչ է, եթե ոչ նյութական աշխարհի դրսևորում, լեզվի բովանդակային կողմը՝ նյութական աշխարհի արտացոլում: Այսպիսով՝ Ջահուկյանի մոտեցումը տրամագծորեն հակառակ է ն՝ Սոսյուրի ու Ելմսլևի իմանենտիզմին, ն՝ Ն. Խոմսկու և մյուսների ռացիոնալիզմին:

3. Լեզվաբանական ընդհանրական ուսմունք ստեղծելու համար պետք է նկատի առնել հատկանիշներն ու հարաբերությունները, առանձին լեզուները քննելիս՝ ն՝ հատկանիշներն ու հարաբերությունները, ն՝ դրանցով բնորոշվող միավորները:

4. Ջահուկյանը գտնում է, որ լեզուն ու խոսքը փոխհաջորդում են միմյանց, և դրանց փոխհարաբերությունը ճիշտ ներկայացնելու համար կառուցում է այնպիսի կաղապար, որ հանդես բերի այդ փոխհաջորդումը: Սերող քերականությունը փոխհաջորդական քերականություն է և մակածորեն (ինդուկտիվ կերպով) հենվում է լեզվի ու խոսքի նշված ըմբռնման վրա:

5. Ջահուկյանի խորին համոզմամբ նախադասությունը այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստները և ձևերը: Այդ պատճառով էլ ընդհանրական լեզվական կաղապարը կարող է լինել առաջին հերթին նախադասության կաղապար. այդ կաղապարից կարող են որոշ փոխակերպումներով ստացվել մյուս կարգի կաղապարները: Այս առումով նախադասության կաղապարը Ջահուկյանը համարում է *լիակաղապար* մյուս կարգի (մասնակի) կաղապարների համար, և այն հանդես է գալիս որպես *ընդհանուր լեզվական կաղապարի* հիմք: Մակայն քանի որ նախադասությունն էլ իրական աշխարհի որևէ կողմի լեզվական դրսևորումն է, ուստի նախադասության կաղապարի կառուցումը սկսվում է իրական աշխարհի հարաբերությունների և իրերի հատկությունների ուսումնասիրությունից:

Այսպիսով՝ իր կառուցելիք կաղապարը Ջահուկյանը կոչում է *ընդհանրական նյութա-համակցային կաղապար* (универсальная субстанционально-комбинаторная модель):

Ջահուկյանը նշում է, որ նախադասության օբյեկտիվ բովանդակության լիակաղապարը կազմելու համար պետք է թվել

նախադասության բոլոր հնարավոր անդամները՝ բառերի և բառակապակցությունների բոլոր հնարավոր գործառությունները: Կստացվեն բոլոր ածականների ու բայերի օբյեկտիվ տիպերը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ առարկաների գանազան տարբերությունների և հարաբերությունների դրսևորումներ: Սրանցից էլ կարելի է ստանալ գոյականներ ու մակբայներ:

Ջահուկյանի **կադապարման գործընթացն** ունի երկու փուլ:

1-ին փուլ. որոշ հատկանիշների հիման վրա առանձնացվում են գոյաբանական ընդհանուր կարգեր, որոնք վերջին հաշվով նախադասության անդամների նշանակումներ են: Ջահուկյանի ըմբռնմամբ՝ լայն առումով նախադասության անդամների և գոյաբանական կարգերի գաղափարները համընկնում են (սուբյեկտ-ենթակա, օբյեկտ-ինդիք, տարածություն-տեղի պարագա, ժամանակ-ժամանակի պարագա, նպատակ-նպատակի պարագա ևն):

2-րդ փուլ. գոյաբանական ընդհանուր կարգերը ստանալուց հետո կառուցվում է նախադասության ընդհանուր կադապարը, որտեղ իրար են փոխհաջորդում հիշյալ կարգերը՝ տալով տարբեր կարգի համակցություններ: Այս համակցությունների միջուկները ընդհանրական բայատիպերն են, որոնք կոնկրետ լեզուներում իրականանում են տարբեր չափերով և տարբեր հոմանիշներով: Սրանց միանում են նաև սուբյեկտիվ-իրադրական կարգերը:

Գոյաբանական (օբյեկտիվ-հաղորդային) կարգերը ստանալու համար Ջահուկյանը, հետևելով ժամանակակից տրամաբանության և մաթեմատիկայի պահանջներին, առարկաների

ամենաեական հատկություններն այնպես է ընտրում, որ դրանք չխաչաձևվեն⁸²: Առանձնացնում է այդպիսի *հինգ հատկանիշ*:

1. **Պարունակայնություն.** յուրաքանչյուր առարկա (objectum) ամենից առաջ բնորոշվում է որոշ պարունակությամբ (բովանդակությամբ): Օբյեկտը՝ որպես հատկանշվող, նշանակում է M-ով, իսկ պարունակությունը (պարունակվող լինելը)՝ որպես հատկանիշ, a-ով, ուստի պարունակայնությունը (օբյեկտի առնվելը իր պարունակությամբ) արտահայտում է **M(a)** բանաձևով:

2. **Բաղկացականություն.** յուրաքանչյուր առարկա կարող է հանդես գալ որպես որոշ բաղկացություն (ամբողջ): Բաղկացությունը նշանակում է b-ով, իսկ **M(b)** բանաձևով արտահայտում բաղկացականությունը՝ առարկայի (օբյեկտի) հանդես գալը որպես բաղկացություն:

3. **Հաշվականություն (քանակականություն).** ամեն առարկա (օբյեկտ) կարող է առնվել որպես հաշվական միավոր՝ մի այլ առարկայի չափը, կարգը են որոշելու համար: Թիվը նշանակում է c-ով, իսկ **M(c)** բանաձևով արտահայտում առարկայի (օբյեկտի) հաշվականությունը:

4. **Վիճակայնություն.** յուրաքանչյուր առարկա բնորոշվում է որոշ վիճակով, ընդ որում՝ առարկայի ամեն մի վիճակ

⁸² Ժամանակակից տրամաբանությունն ու մաթեմատիկան աքսիոմատիկ-արտաձական համակարգերին ներկայացնում են երեք հիմնական պահանջ՝ անհակասականություն, լրիվություն (տվյալ աքսիոմներից տվյալ բնագավառի բոլոր հնարավոր նախադասությունների արտաձման հնարավորություն) և փոխանկախություն (մեկը մյուսից չարտաձվելու պայման):

(առարկայական վիճակ) կարող է հանդես գալ որպես ինքնուրույն առարկա (օբյեկտ): Վիճակը (status) նշանակելով d -ով՝ $M(d)$ բանաձևով արտահայտում է վիճակայնությունը՝ առարկայի հանդես գալը որպես վիճակ:

5. Նշանայնություն. ամեն մի առարկա (օբյեկտ) կարող է հանդես գալ որպես մի այլ առարկայի փոխարինող-նշան: Նշանակելով նշանը e -ով՝ $M(e)$ բանաձևով արտահայտում է նշանայնությունը՝ առարկայի հանդես գալը որպես նշան: Նշանը նեղ առումով հանդես է գալիս որպես լեզվի նշան (առաջին հերթին որպես հնչանշան):

Ի վերջո ստացվում է առարկայի հատկությունների հետևյալ ընդհանուր բանաձևը՝

$M(a(b(c(d(e)))))$ կամ $M(a+(b+(c+(d+(e))))):$

Բերված հատկությունների առկայության և բացակայության հաշվառմամբ ստացվում է 25=32 կարգ (կատեգորիա): Եզրային կարգերի թիվը հաշվվում է 2^n բանաձևով (n -ը հատկությունների քանակն է), եզրային և միջակա բոլոր կարգերի թիվը՝ $2 \bullet 2^{n-1}$ բանաձևով:

Այսպիսով՝ *ընդհանրական լեզվական կադապարի* քննությունը պարունակում է հետևյալ չորս կարգի հասկացությունների հետևողական բացահայտումը.

1. **Գոյաբանական.** ամեն ինչ հանգեցվում է քննության առարկայի համար որոշակիորեն ընտրված հատկանիշների հիման վրա (պարունակականություն, բաղկացականություն, հաշվակա- նություն, վիճակայնություն և նշանայնություն) երեսուներկու

կատեգորիաների առանձնացմանը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ իմաստային նվազագույն բաղադրիչներ:

2. **Իմացաբանական-տրամաբանական.** նկատի են առնվում հիշյալ եզրերի միջև ըստ տվյալ կատեգորիաների հաստատվող հարաբերությունները: Տարբերվում է այդպիսի երեք կարգի հարաբերություն՝ 1. *համեմատություն* ($A=A$)՝ համեմատելի [$A=(A)$] և համեմատյալ [$(A)=A$], 2. *հակադրություն* ($A\rightarrow A$)՝ հակադրելի [$A\rightarrow(A)$] և հակադրյալ [$(A)\rightarrow A$], 3. *հակասություն* ($A-A$)՝ ժխտելի (դրական) [$A-(A)$] և ժխտյալ (բացասական) [$(A)-A$]: Ջահուկյանը, նկատի ունենալով համեմատվող եզրերի նույնությունն ու տարբերությունը, ինչպես նաև քննության առարկային միշտ սկզբնական դիրք հատկացնելու հետևանքով միայն հաջորդող եզրերը նշաններով օժտելու անհրաժեշտությունը, մտցնում է \rightarrow —ին հակադիր \leftarrow նշանը և ստանում վեց հնարավոր *հարաբերիչ*՝ 1) =, 2) \downarrow , 3) \rightarrow , 4) \leftarrow , 5) \leftrightarrow (\Leftrightarrow), 6) \rightarrow — ($\rightarrow\rightarrow$):

3. **Լեզվա-գործառական.** նկատի են առնվում տվյալ հատկանիշներն ունեցող և հարաբերվող եզրերի՝ լեզվական-նշանային կազմիչների գործառական արժեքները: Ջահուկյանը տարբերում է 1. ինքնին հարաբերվող՝ «անկախ» միավորներ կամ «գոյականներ», 2. գոյականներից կախված՝ առաջին աստիճանի կախյալ միավորներ՝ «որոշիչներ» («աձականներ»՝ այս բառի լայն առումով), 3. «որոշիչներից» կախված՝ երկրորդ աստիճանի կախյալ միավորներ՝ «մակորոշիչներ» («մակբայներ»՝ լայն առումով): Այս դեպքում հաշվի են առնվում ոչ միայն բառերը, այլև մասնիկները և դրանց փոխարինող միջոցներով արտահայտվող միավորները:

4. **Իրադրա-կոնտեքստային.** նկատի են առնվում այն տարրերը, որոնք ներկայացնում են առաջին երկու կարգի հասկացությունների իրականացումը ըստ հաղորդման իրադրության և կոնտեքստի, այսինքն՝ որոշում են առարկաների և վիճակների հարաբերությունը հաղորդման և կոնտեքստային շրջապատի նկատմամբ (դեմք, եղանակ, որոշյալ-անորոշություն, փոխարինում-ակնարկում):

Ամփոփելով նշենք, որ սկսած 1960-ական թվականներից՝ Ջահուկյանը բազմաթիվ հոդվածներով ու մենագրություններով առաջ քաշեց լեզվաբանական նկարագրության նոր եղանակ՝ լեզվի կառուցվածքի, լեզվական երևույթների քննության հարաբերակցական սկզբունքը, որի հիմքում ընկած է կադապարման մեթոդը: Ինչպես նշում է հեղինակը, «Յուրաքանչյուր լեզվական երևույթ քննելիս պետք է կառուցել նրա կադապարը: Վերջինս ոչ թե լեզվաբանի քմահաճ կառուցում է, այլ խոսողի մոտ տեղի ունեցող պրոցեսի արտացոլում: Կադապարը տալիս է հնարավոր կառուցվածքները, որոնք իրականացվում են խոսքային ակտերի մեջ»⁸³:

Կադապարի ջահուկյանական ըմբռնումն այսքանով չի սահմանափակվում: Հեղինակը այն զարգացնում է բազմաթիվ գիտական հոդվածներում և «*Ընդհանուր և հայ լեզվաբանություն*» («Общее и армянское языкознание») աշխատության մեջ, որոնք էլ հիմք են հանդիսանում հաջորդ՝ «*Լեզվի համընդհանուր տեսություն*»

⁸³ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 14:

(«Универсальная теория языка») աշխատության համար: Այստեղ հեղինակի ուսումնասիրության օբյեկտը ընդհանրական լեզվաբանական կադապարն է, որի քննությանը կանդրադառնանք հաջորդ բաժնում:

Գ. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Թեև կադապարի (մոդելի) հասկացությունը ժամանակակից գիտության էական հասկացություններից է և վաղուց է սկսել գործածվել լեզվաբանության մեջ, բայց չկա լեզվական կադապարի միասնական ըմբռնում: Ինչպես տեսանք նախորդ բաժնում, Ջահուկյանի կողմից մշակվել է համընդհանուր լեզվական կադապարի համակարգը, հետևաբար կադապարի նրա ըմբռնումն էլ տարբերվում է եղած ըմբռնումներից: Կադապարի իր ըմբռնումը հեղինակը հատկապես զարգացնում է *«Լեզվի համընդհանուր տեսություն»* («Универсальная теория языка») աշխատության մեջ: Մենագրության հիմքում ընկած առանձին գաղափարներ որոշ չափով ներկայացվել են հեղինակի նախորդ աշխատություններում ու հոդվածներում՝ սկսած 70-ական թվականներից:


«Լեզվի համընդհանուր տեսություն» («Универсальная теория языка») գրքի ստեղծման գաղափարը ձևավորվել է Ջահուկյանի ողջ գիտական գործունեության ընթացքում: Այդ առումով առաջին ազդակը եղել է հետաքրքրությունը փիլիսոփայության պատմության նկատմամբ, որի արդյունքում էլ ի հայտ եկավ լեզվական աշխարհը անհակասական համակարգով ներկայացնելու ձգտումը: Ի սկզբանե Ջահուկյանը գործածում էր միայն **ՀԼԿ** (*համընդհանուր լեզվաբանական կադապար*) տերմինը, այնուհետև նաև **ՀԼՏ** (*համընդհանուր լեզվաբանական տեսություն*) տերմինը: *Համընդհանուր լեզվաբանական տեսությունը* բաղկացած է երկու

հիմնական բաժնից՝ *համընդհանուր լեզվաբանական կաղապարի ուսումնառից* և *համընդհանուր տիպաբանությունից*: Առաջին դեպքում քննության է առնվում բոլոր լեզուների և լեզվի բոլոր կողմերի նկատմամբ կիրառելի կաղապարի կառուցվածքը, երկրորդ դեպքում՝ տարբեր լեզուներում տարբեր մակարդակների երկպլանային միավորների (ձևույթների, բառերի, շարույթի, նախադասությունների) ձևավորման սկզբունքները: Ընդհանուր ուղղությունը բնորոշվում է որպես *սուբստանցիոնալ (նյութահարաբերակցական) մոտեցում*, որն իր էությամբ կառուցվածքային մոտեցման զարգացումն է, քանի որ ձգտում է ներկայացնելու լեզվի ոչ միայն նկարագրությունը (description), այլև բացատրությունը:

Ինչպես նշել ենք նախորդ գլխում, Ջահուկյանն առանձնացնում է *լեզու* տերմինի երեք հիմնական գործածություն՝ *ընդհանուր*, *առանձին* և *անհատական*, ըստ այդմ էլ՝ լեզվաբանության երեք տիպ՝ *պանլեզվաբանություն*, *մոնոլեզվաբանություն* և *իդիոլեզվաբանություն*: Պանլեզվաբանությունը Ջահուկյանը կոչում է նաև *համընդհանուր լեզվաբանություն* կամ *լեզվի համընդհանուր տեսություն*: Համընդհանուր լեզվաբանական կաղապարների ուսումնասիրության տեսակետից կարևորվում է ինվարիանտ պանլեզվաբանությունը, քանի որ ՀԼԿ-ի կառուցումը վերջինիս հիմնական խնդիրն է: ՀԼԿ-ն սուբստանցիոնալ կաղապար է (տե՛ս ստորև):

Սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ կադապարները կարևոր դեր են խաղում: Կարելի է ասել, որ սուբստանցիոնալ լեզվաբանությունը նաև *լեզվի կադապարման տեսությունն է*:

Լեզվաբանության մեջ կադապարի մասին խոսելիս պետք է տարբերել ոչ միայն կադապարն ու նրա օբյեկտը, այլև դրանց փոխհարաբերությունը՝ փոխադարձ ուղղվածությունը՝ օբյեկտից դեպի կադապարը, և կադապարից դեպի օբյեկտը, հատկապես կադապարի տարրերից դեպի օբյեկտի տարրերը, այսինքն՝ *իրացում(ներ)ը*:



Կադապարը և նրա տարրերը կարող են ունենալ մեկից ավելի իրացումներ: Երկու օբյեկտի դիտարկման դեպքում պետք է նկատի ունենալ, որ կադապարի տարրերի և դրանց իրացումների միջև լիակատար համապատասխանություն չկա: Կադապարի տարրերը կարող են համընկնել, բայց ունենալ տարբեր իրացումներ, և հակառակը. տարբեր կադապարներ կարող են ունենալ միանման իրացումներ:

Համընդհանուր սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ լեզվաբանական կադապարներ կառուցելիս հաշվի են առնվում և՛ շարակարգային, և՛ հարացուցային կառուցվածքները:

Կաղապարի տարրերը, ըստ էության, ընդհանուր հատկանիշներ են, որոնք ընդգրկում են իրական աշխարհի բոլոր դրսևորումները՝ իրենց ընդհանրություններով և տարբերություններով: Ընդ որում՝ ՀԼԿ-ի մեջ այդ հատկանիշները տրվում են հնարավոր օբյեկտների առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա: Կաղապարը կառուցելիս տարրերը կարող են արտահայտվել ինչպես բառացի (անպայման միանշանակ և ստույգ բնորոշմամբ), այնպես էլ պայմանական ձևական միջոցներով՝ տառերով և թվերով (դրանց բովանդակության լիակատար բացահայտմամբ):

Կաղապարն ընդհանրապես առարկայի (օբյեկտի) ընդօրինակումն է: Քանի որ ուսումնասիրության առարկան լեզուն է, ուստի և լեզվաբանական կաղապարները պետք է բացահայտեն հենց լեզվի բուն կաղապարները: Եվ իրոք, ինչպե՞ս է մարդը խոսելիս ճիշտ դասավորում շարույթի և նախադասության անդամները, ինչպե՞ս է դրանք ենթարկում փոխկաղապարման: Հասկանալի է, որ մարդու գլխում կան լեզվական որոշակի կաղապարներ, որոնց բաղադրիչ բջիջները լրացվում են մեկ այս, մեկ այն կոնկրետ միավորներով՝ ըստ իրադրությունից բխող անհրաժեշտության:

Լեզվաբանական կաղապարը, ըստ հեղինակի մշակած համընդհանուր տեսության, լեզվական միավորների (վանկերի, բառերի, շարույթների, նախադասությունների ևն) կառուցվածքային բաղադրիչների (տարրերի) միջուկային և առմիջուկային տիպերի քանակի, հաջորդականության և պարտադրականության նշանա-

կումն է: Այսպես, եթե մենք ուզում ենք բացահայտել հայերենի բառակազմական կաղապարները, դիտարկում ենք հնարավոր բոլոր ձևերը, որոշում բառակազմական հիմքերի և ածանցների հնարավոր քանակը և հաջորդականությունը, առանձին բաղադրիչների պարտադրականության աստիճանը, սահմանում ընդհանրացման աստիճանները: Ըստ ընդհանրացման՝ տարբերվում են *ընդհանուր* և *մասնակի* կաղապարներ: Ընդհանուր կաղապարները նպատակ ունեն արտացոլելու ըստ հնարավորին բոլոր հնարավոր տիպերը, մասնակի կաղապարները արտացոլում են մասնակի դեպքերը:

Կաղապարի կառուցման առաջին փորձից սկսած՝ այն ենթարկվում է մասնավորեցման (բացատրման): Հետագա աշխատանքի ընթացքում երևում է դրա կիրառվելու կարողությունը, և պարզ է դառնում, թե ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել դրա մեջ: Ջահուկյանի համոզմամբ՝ առաջին հերթին պետք է ստուգել տարբեր կատեգորիաների (կարգերի) և նրանց եզրերի (տերմ) առանձնացման ճշգրտությունը:

ՀԼԿ-ն կառուցվում է *հինգ էական սկզբունքների* հիման վրա՝ **սուբստանցիոնալություն** (նյութականություն), **ընդհանրականություն**, **ամբողջականություն** (ինտեգրալություն), **միասնություն** (մոնիզմ) և **տնտեսում**:

1. Սուբստանցիոնալությունը (նյութականություն) սուբստանցիոնալ (հարաբերակցական) լեզվաբանության հիմնական սկզբունքն է: Այս սկզբունքով այն հակադրվում է ստրուկտուրալիզմի (կառուցվածքային) ուղղություններին: Ի

տարբերություն վերջինիս՝ հարաբերակցական լեզվաբանությունը լեզվի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է համարում դուրս գալ լեզվի սահմաններից և դիմել օբյեկտիվ իրականությանը:

2. **Ընդհանրականության** սկզբունքի համաձայն՝ ՀԼԿ-ն պետք է կիրառելի լինի բոլոր լեզուների նկատմամբ, ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ հնարավոր: Այն կառուցելիս պետք է նկատի ունենալ մարդկային լեզուն ընդհանրապես, այսինքն՝ լեզվի որոշակի իդեալական վիճակ: «Ճշգրիտ ընդհանրական կարող է լինել միայն այն կադապարը, որը հնարավորություն է տալիս նկարագրելու ցանկացած օբյեկտ. ոչ միայն լեզվաբանական, այլև արտալեզվաբանական, ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր»⁸⁴:

Լինելով իդեալական կառույց՝ ՀԼԿ-ն չի կարող պարունակել պատահական տարրեր: Այն պետք է կարողանա բացատրել և հասկանալի դարձնել առանձին լեզուների կառուցվածքների առանձնահատկությունները: Եթե մի կողմից՝ ՀԼԿ-ն կարելի է համարել առանձին լեզուների կադապարների ընդհանրություն, ապա մյուս կողմից՝ վերջիններս էլ կարող են համարվել ՀԼԿ-ի դրսևորումներ:

ՀԼԿ-ի կառուցումը, Ջահուկյանի կարծիքով, երկու **նպատակ** է հետապնդում.

1. հասկանալ լեզվի կառուցվածքը և գործելու մեխանիզմը՝ որպես հանրորեն-կազմակերպված մարդու սեփականություն,

⁸⁴ Г. Джаукян, Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, Москва, 1999, с. 26.

2. հնարավորություն տալ նկարագրելու և ներկայացնելու լեզվի կառուցվածքը և գործելու մեխանիզմը հնարավորինս ռացիոնալ (հիմնավորված) կերպով:

Բացարձակ կադապար կառուցելիս այդ երկու նպատակները պետք է համընկնեն:

3. **Ամբողջականություն (ինտեգրալության)** սկզբունքի համաձայն՝ ՀԼԿ-ն պետք է կիրառելի լինի լեզվի բոլոր կողմերի նկատմամբ, հնարավորություն տա նկարագրելու ոչ միայն արտահայտության և բովանդակության պլանների տարբերն առանձին-առանձին, այլև այն միավորները, որոնք ձևավորվել են տարբեր լեզուներում տարբեր համակցությունների արդյունքում:

Եթե ՀԼԿ-ն հնարավորություն է տալիս անմնացորդ նկարագրելու արտահայտության և բովանդակության պլանների տարբերը, ապա պարզ է, որ նրա միջոցով կարելի է նկարագրել նաև այն միավորները, որոնք ձևավորված են այդ տարրերից: Չէ՞ որ առանձին լեզուների տարբեր մակարդակների միավորների դիտարկումը ոչ այլ ինչ է, եթե ոչ դրանց արտահայտության և բովանդակության պլանների, ինչպես նաև վերջիններիս փոխհարաբերության բնորոշում:

Ամբողջականության սկզբունքը փաստորեն համընկնում է նկարագրության լրիվության սկզբունքի հետ: ՀԼԿ-ն հնարավորություն է տալիս անմնացորդ նկարագրելու լեզուն, այսինքն՝ ընդգրկելու լեզվի բոլոր կողմերը:

4. **Միասնության (մոնիզմի)** սկզբունքը լեզուն նկարագրելու, լեզվական կառուցվածքի բոլոր կողմերի վերլուծության և

համադրության ժամանակ պահանջում է միևնույն գործողությունը՝ կիրառել միևնույն մոտեցումը: Այս առումով հարաբերակցական լեզվաբանությունը հակադրվում է ավանդականին, որը արտահայտության և բովանդակության պլանների, տարբեր մակարդակների դեպքում կիրառում է տարբեր, իրար հետ չկապակցված սկզբունքներ և հասկացություններ:

Միասնության (մոնիզմի) սկզբունքը պահանջում է մարդկային լեզվի վերլուծությունը, այդ թվում նաև դրա իմաստային կողմը, հասցնել ավարտին, կանգ չառնել միջանկյալ օղակների վրա: Այսինքն՝ ընդգրկել ողջ կառուցվածքը և վերլուծությունը դարձնել ավարտուն, ինչպես որ պահանջում է առհասարակ ընդհանրական մոտեցում: ՀԼԿ-ն ապահովում է այդպիսի վերլուծություն: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն հասնելու բովանդակության պլանի անբաժանելի միավորներին, այլև սուբստանցիոնալության սկզբունքի հիման վրա դրանք համապատասխանաբար դնում է արտահայտության պլանի անբաժանելի միավորների կողքին: Ջահուկյանը նշում է, որ իմաստաբանական կողմի միասնական (մոնիստիկ) վերլուծության դեպքում չի կարելի կանգ առնել այնպիսի բաղադրիչների վրա, որոնք վերլուծելի են, այսինքն՝ առանձնացնել հատկանիշներ, որոնք առաջնային չեն, և չհամապատասխանեցնել իրար լեզվի տարբեր կողմերի՝ իմաստային տարբեր բևեռների վերլուծության արդյունքները:

Պետք է նկատի ունենալ, որ ՀԼԿ-ի կատեգորիաները (կարգեր) և եզրերը (տերմ) միանշանակ են. նկատի են առնվում դրանց իսիստ որոշակի առաջնային իմաստները: Ուստի

վերլուծության կամ համադրության ժամանակ չի կարելի անցնել երկրորդական (փոխաբերական) իմաստներին:

Քանի որ համընդհանուր տեսության մեջ գործում է միասնության (մոնիզմի) սկզբունքը, այսինքն՝ բոլոր միավորների կառուցվածքը քննվում է միևնույն սկզբունքով, ուստի և տարբերություն չկա ածանցավոր բառի կաղապարի և, ասենք, շարույթի կաղապարի կառուցման սկզբունքների միջև: Այստեղ էլ տարբերվում են միջուկային և առմիջուկային միավորներ, որոշվում է վերջիններիս ընդհանուր թիվը, հաջորդման հնարավոր կարգը և ներքին կախումները:

5. **Տնտեսման** սկզբունքը առավելագույն օբյեկտների նկարագրության դեպքում պահանջում է նվազագույն միջոցներ: Նյութահարաբերակցական լեզվաբանության մեջ այս սկզբունքը բնորոշվում է որպես խիստ մաթեմատիկական կախվածություն նկարագրելի օբյեկտների քանակի և այդ նպատակով ընտրված հատկանիշների քանակի միջև: ՀԼԿ-ի մեջ այդ փոխհարաբերությունը պետք է իդեալական լինի, այսինքն՝ այն պետք է հնարավորություն տա տարբերակելու օբյեկտների **2n** քանակ՝ ըստ հատկանիշների քանակի:

Այսպիսով՝ Ջահուկյանի ստեղծած լեզվի ընդհանրական կաղապարը «նախատեսված է որպես ամեն օբյեկտի նկարագրության միջոց, լեզվաբանական վերլուծությունն ու համադրությունը կատարվում է թե՛ **ֆիզիկական**, թե՛ **հոգեկան** բոլոր օբյեկտների նկատմամբ կիրառվող՝ ինդուկտիվ եղանակով ստացված և դեդուկտիվ ճանապարհով ստուգված որոշակի

բնութագրերի միջոցով: Եթե բնութագիրը նեղ իմաստով մեկնաբանենք որպես հատկանիշ, ապա կարելի է ասել հետևյալը. սուբստանցիոնալ լեզվաբանության մեջ հատկանիշի հասկացությունը (ըստ Յակոբսոնի մեկնաբանության ավելի լայն իմաստով՝ բնութագրի հասկացությունը) հարաբերակցվում է հարաբերության (Ելմսլի մեկնաբանությամբ) հասկացության հետ: Համարվում է, որ դրանք կապված են փոխադարձ փոխանցումայնությամբ և փոխարինելիությամբ, այսինքն՝ հատկանիշը հենվում է որոշակի հարաբերության, իսկ հարաբերությունը որոշակի հատկանիշի վրա»⁸⁵:

Նկատի ունենալով *հարաբերություն* և *հատկանիշ* տերմինների կարևորությունը լեզվաբանության մեջ՝ Ջահուկյանը տերմինաբանական ճշգրտումներ է կատարում. *հարաբերությունը* կոչում է **ռեյաստոր**, *հարաբերակցվող օբյեկտները*՝ **ռեյաստներ**, իսկ *ռեյաստորը* և *ռեյաստները* միասին՝ **ռեյացիա**: Նույն ձևով *հատկանիշը* կոչում է **մարկ**, *հատկանիշով բնորոշվող միավորը*՝ **մարկատ**, իսկ *մարկն* ու *մարկատը* միասին՝ **մարկացիա**: Այսպիսով՝ **ռեյացիան** ու **մարկացիան** տարբերվում են քանակով. **ռեյացիան** ենթադրում է նվազագույնը երեք բաղադրիչ՝ երկու **ռեյատ** և մեկ **ռեյատոր**, **մարկացիան**՝ մի բաղադրիչով պակաս՝ նվազագույնը մեկ **մարկատ** և մեկ **մարկ**: Ջահուկյանը **ռեյացիան** ներկայացնում է **RrR** բանաձևով, **մարկացիան**՝ **Mm** բանաձևով:

Պետք է նկատի ունենալ, որ կարելի է որոշակի հարաբերություն հաստատել նաև **ռեյատորների** միջև, բացի այդ՝ **մարկը**

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 32:

կարող է սեփական հատկանիշ ունենալ: Ջահուկյանը *ռեյաստորների ռեյաստորը* կոչում է **սուբռեյաստոր (p)**, *մարկի մարկը՝ սուբմարկ (u)*: Հաշվի առնելով վերջիններս՝ ստացվում են հետևյալ բանաձևերը՝ **(RrR)p (RrR)** և **Mmu**:

Ռեյացիայի և մարկացիայի փոխհարաբերության մասին խոսելիս կարելի է հաստատել ոչ միայն ռեյացիայի և մարկացիայի, այլև դրանց բաղադրիչների *փոխանցումայնությունը*: Այս երևույթը սովորաբար կոչում են *տրանսֆորմացիա (փոխակերպում)*, բայց հարաբերակցական լեզվաբանության մեջ, որտեղ նկատի է առնվում համապատասխան առաջնային կաղապարների հաստատումը, որոնցից էլ ստացվում են երկրորդայինները, նախընտրելի է *տրանսմոդեալավորում (փոխկաղապարում)* տերմինը:

Փոխակերպման (տրանսֆորմացիայի) գաղափարը քերականությանը հայտնի է եղել վաղուց, բայց այն հատուկ նշանակություն է ստացել 1950-ական թվականներից, այսպես կոչված սերող (գեներատիվ) քերականության ձևավորման կապակցությամբ, մի քերականություն, որ հայտնի է նաև որպես փոխակերպման (տրանսֆորմացիոն) քերականություն: Ենթադրվում է, որ լեզուն նախադասությունների բազմություն է, և որ վերջիններս սերվում են որոշակի միավորներից նախադասությունների կառուցվածքի և փոխակերպումների բանաձևերի օգնությամբ:

Ջահուկյանը խստորեն տարբերում է լեզվական միավորների բուն կաղապարները փոխակերպմամբ կամ փոխկաղապարմամբ ստացված միավորներից: Առաջին դեպքում նկատի են առնվում

«նորմալ» կառուցվածքները, երկրորդ դեպքում՝ կրկնվող տարրեր ունեցող միավորները, որոնք կարող են քննվել նորմալ տեսքի բերվելուց հետո:

Ջահուկյանի կողմից ներմուծված *փոխկաղապարման* (տրանսմոդելավորման) հասկացությունը տարբերվում է *փոխակերպման* հասկացությունից: Փոխակաղապարման հիմքում, բնականաբար, ընկած է կաղապարման հասկացությունը: Յուրաքանչյուր լեզվի համար պետք է որոշել նրա հնարավոր կաղապարները և պարզել, թե որոնք են սրանցից ինքնակա (համասեռ), և որոնք՝ տարբեր ինքնակա (համասեռ) կաղապարների փոփոխության ու միացման, այսինքն՝ փոխկաղապարման արդյունք. վերջիններս Ջահուկյանը կոչել է *տարասեռ* կաղապարներ:

Համասեռ կաղապարներում միավորի ամեն անդամ (բաղադրիչ) կատարում է իրեն հատուկ գործառույթ. այսպես, գոյականը հանդես է գալիս որպես գոյականական բառակապակցության գլխավոր անդամ՝ լրացյալ, ածականը և թվականը՝ որպես գոյականի լրացումներ, մակաձականը և մակթվականը՝ որպես այդ լրացումների լրացումներ:

Տարասեռ կաղապարներում կարող են տեղի ունենալ գործառույթյան փոփոխություններ՝ ածականը կարող է հանդես գալ գոյականի, գոյականը՝ ածականի (լրացման) գործառույթով: Այսպիսով՝ փոխկաղապարումը մի գործողություն է, որով համասեռ կաղապարներից կարող են ստացվել տարասեռ կաղապարներ: Նշանակում է՝ նախ որոշվում են տվյալ լեզվի համասեռ կամ բուն

կադապարները, ապա խոսվում է դրանց փոխկադապարման միջոցների ու եղանակների, այսինքն՝ տարասեռ կադապարների մասին: Սա հնարավորություն է տալիս խուսափել կրկնություններից: Այսպես, եթե քննվել են շարույթի և նախադասության կադապարները, ապա նախադասությունը շարույթի փոխկադապարելու դեպքում նախադասություն կառուցվածքի մասին այլևս հարկ չի լինում խոսելու: Բուն կադապարումը և փոխկադապարումը, այսինքն՝ համասեռ և տարասեռ կադապարների ստացումը կարող է կատարվել փոխհաջորդաբար:

Հին աշխարհից սկսած՝ հանդես է եկել լեզվական երևույթների քննության երկու եղանակ՝ *վերլուծություն* (անալիզ) և *համադրություն* (սինթեզ): Առաջին դեպքում բաղադրյալ միավորը բաժանվում է բաղադրիչների, երկրորդ դեպքում բաղադրիչներից ստացվում են բաղադրյալ միավորներ: «Համադրության ժամանակ մենք փաստորեն հանդես ենք բերում դինամիկ մոտեցում՝ ցույց տալով միավորի ստացումը (սերումը), վերլուծության ժամանակ հաճախ ստատիկ մոտեցում՝ ցույց տալով պատրաստի միավորի (սերման արդյունքի) բաղադրիչների կառուցվածքային փոխհարաբերությունը»⁸⁶:

Քանի որ լեզվի մեջ առկա են բաղադրյալների և բաղադրիչների փոխհարաբերության տարբեր աստիճաններ կամ մակարդակներ, ապա հարկավոր է եղել ամեն մակարդակի համար

⁸⁶ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 11:

որոշել այդ մակարդակի ստորին և վերին ենթամակարդակները ներկայացնող միավորները և վերջիվերջո որոշել ամենաստորին (անբաժանելի) և ամենավերին (այլ մակարդակի մեջ չմտնող) մակարդակային միավորները:

Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ տարբերվում են համընդհանուր լեզվաբանական կադապարը և միալեզվաբանական կադապարները, որոնք հնարավորություն են տալիս և՛ վերլուծության, և՛ համադրության: Համադրությունը կատարվում է ստորին մակարդակների միավորներից դեպի բարձր մակարդակի (մակարդակների) միավորները շարժվելով, վերլուծության ժամանակ շարժումը կատարվում է հակառակ ուղղությամբ: Առաջին դեպքում նպատակն է ստորիններից ավելի բարձր մակարդակների միավորների (մանրակադապարներից՝ մեծակադապարների), երկրորդ դեպքում՝ բարձր մակարդակի միավորներից (մեծակադապարներից՝ մանրակադապարների) բաղադրիչների ստացումը:

Քննարկման ամենաստորին մակարդակ է համարվում արմատական ձևույթների մակարդակը, ամենավերինը՝ երկբաղադրիչ բարդ նախադասության մակարդակը: Այս քննության դեպքում էլ չի թույլատրվում բաց թողնել օղակները և քննությունը կատարել ոչ անմիջաբար հաջորդող և ոչ անմիջաբար նախորդող միավորների միջոցով:

Ավանդական քերականության մեջ գոյականական շարույթների հարացույցները քննվում են որպես լոկ գլխավոր բառի՝ գոյականի թեքման (հոլովման) հարացույցներ, ընդ որում՝

հարացույցների մեջ չեն մտցվում վերջավորություններով չարտահայտվող դեպքերը: Ջահուկյանը հիմք է ընդունում հարացույցի լայն ըմբռնումը՝ այն վերագրելով ոչ միայն գոյականին, այլև գոյականական շարույթին: Բացի այդ՝ հարացույցի մեջ մտցնում է ոչ միայն հոլովական վերջավորությունները, այլև կապերը և շարադասության միավորները՝ *դասույթները* (առաջ և հետո դրվելու, անմիջաբար և միջնորդված հարելու եզրերով): Այս միջոցների համար Ջահուկյանը հաստատում է որոշակի ենթադասական հարաբերություն, որի մեջ առաջնայինը դասույթն է, երկրորդայինը՝ վերջավորությունը, երրորդայինը՝ կապը: Ընդհանուր բանաձևն է **դ(վ(կ))**: Նույն սկզբունքով էլ կազմվում է նախադասության հարացույցը: Վերջինս առաջին հերթին կազմում են շաղկապները: Եթե հաշվի առնվեն նաև շարադասության դրսևորումների կապակցական արժեքները, ապա կստացվի նախադասության հարացույցի կազմիչների **դասույթ (շաղկապ)** կամ **դ(շ)** հարաբերությունը:

Ջահուկյանը նախադասությունը դիտարկում է որպես որոշակի գործառական (ֆունկցիոնալ) կախվածություն $y=f(x_1, x_2, \dots, x_n)$, որտեղ ենթական (ձախակողմյան մասը) համարվում է գործառույթի (ֆունկցիա) իմաստը (կախյալ փոփոխելին), իսկ *արգումենտը* (անկախ փոփոխելին) մյուս ստորոգական մասն է: Նկարագրվող օբյեկտի (որպես որոշակի ենթակայի) բովանդակությունը ներկայացվում է դրան վերագրվող *կարգերի* (կատեգորիաների) և *եզրերի* (տերմ) միջոցով: Աջակողմյան մասում առանձնացնելով որոշակի հիմնական հասկացություն՝ որպես

ստորոգյալ, որը դիտարկվում է որպես *genus proximum* (մերձավոր սեռ) կարգ և *differentiae specificae* (տեսակային տարբերություններ) եզր, Ջահուկյանն ստանում է հետևյալ հարաբերությունը.

$$S = P \{nknt\}$$

S-ը ենթական է, **P**-ն՝ հիմնական հասկացությունը (ստորոգյալ), **k**-ն՝ կարգը, **t**-ն՝ եզրը (տերմ):

Եթե տարբերակվեն նաև ստորոգյալի հիմնական դրսևորումները՝ ըստ կարգերի խմբի (գոյորոշ **Ph**, առգոյորոշ **St** և հոգևոր **Ps**), ապա կստացվի հետևյալ հարաբերությունը.

$$S = ((Ph) (St)) (Ps)\{nknt\}$$

ՀԼԿ-ն առավել ընդհանուր հասկացությունների՝ կատեգորիաների (կարգ) և առավել սահմանափակ հասկացությունների՝ եզրերի (տերմ) համակարգված ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս տարբերել օբյեկտներն իրարից և որոշել դրանց հարաբերություններն իրար նկատմամբ: *Նկարագրել օբյեկտը* կամ բնորոշել այն հարաբերակցական լեզվաբանության մեջ նշանակում է նրան վերագրել ՀԼԿ-ի այս կամ այն կարգերն ու եզրերը (տերմ) կամ հերքել դրանց առկայությունը: Այսպիսով՝ յուրաքանչյուր միավորի համար կարելի է առանձնացնել նրա առավել բնորոշ հատկանիշը, որով այն տարբերվում է մյուսներից:

Ինչի՞ հիման վրա է որոշվում կարգերի (կատեգորիաներ) և եզրերի (տերմ) այս կամ այն քանակը, ինչո՞վ ենք համոզվում, որ դրանք ընդգրկուն են, սպառիչ, և ինչպիսի՞ հատկանիշներով են բնորոշվում դրանց հարաբերությունները:

Ինչպես արդեն նշվել է, ՀԼԿ-ն կառուցված է *ինդուկտիվ* (մակաձական) և *դեդուկտիվ* (արտաձական) եզրահանգումների հիման վրա: Մի կողմից՝ ի մի են բերված տարբեր լեզուների կառուցվածքներում առկա կարգերը (կատեգորիաներ), որոշված են հիմնական իմաստաբանական արտադրիչները բովանդակության պլանի համար և տարրերի տարբերակիչ հատկանիշները՝ արտահայտության պլանի միջոցները և եղանակները, մյուս կողմից էլ՝ հաշվի են առնված հնարավոր օբյեկտների ընդհանուր հատկանիշները, որոշված են դրանց բաղկացուցիչ հատկանիշները: Այս առումով ՀԼԿ-ի կառուցման մեթոդը կարելի է բնորոշել որպես *ենթադրյալ-արտաձական մեթոդի* տարբերակ: Այլ կերպ ասած՝ տարբեր լեզուների փաստերի ուսումնասիրության և համեմատության հիման վրա կառուցված է ցանկացած օբյեկտի հատկանիշների որոշակի համակարգ, այնուհետև տարբեր լեզուների լեզվական կառուցվածքի տարբեր մակարդակներում դրա կիրառումով ստուգվում է դրա պիտանելիությունը: Գտնված են այն հարակցական հիմքերը, որոնք բոլոր դեպքերում թույլ են տալիս ստանալ միևնույն կարգերը (կատեգորիաներ) և եզրերը (տերմ): Հիմնական դժվարությունը տարբեր կարգերի (կատեգորիաներ) համար միևնույն քանակի և տիպի եզրերի (տերմ) որոշումն է: Այս առումով կադապարը լիակատար ճշգրիտ չի կարելի համարել, բայց Ջահուկյանի համոզմամբ ՀԼԿ-ն հիմնականում արդարացնում է իրեն: Չնայած այդ ամենին՝ Ջահուկյանը նշում է, որ կարգերի (կատեգորիաներ) անվանումները հիմնականում պայմանական են,

և դրանք պետք է ընկալել առաջնային՝ ոչ փոխաբերական իմաստներով:

Որոշելով կարգերի (կատեգորիաներ) կազմը և դրանցից յուրաքանչյուրի համար համապատասխան եզրը (տերմ)՝ Ջահուկյանը ուշադրությունը կենտրոնացնում է այն բանին, որ դրանք հիմնականում համընկնում են այն *գործառույթների* հետ, որոնք ավանդաբար համարվում են նախադասության բաղադրիչների տրամաբանական տիպեր: Այստեղից էլ հեղինակը համաբանություն է սահմանում ՀԼԿ-ի և նախադասության այն մասի միջև, որը վերագրվում է ենթակային (սուբյեկտ) որպես ստորոգյալ լայն (տրամաբանական) առումով՝ ընդգրկելով նաև այդ վերագրումը արտահայտող կապը: Միննույն ենթակայի՝ որպես նկարագրության օբյեկտի առկայության դեպքում կարելի է ասել, որ հնարավոր (դրան վերագրվող) ստորոգյալների քանակը որոշում է դրա ողջ բովանդակությունը: Հաշվի առնելով, որ արտահայտության պլանի տարրերը հնարավոր է ներկայացնել նաև որպես որոշակի ենթակա, կարելի է ասել, որ օբյեկտի նկարագրության ողջ գործընթացը բոլոր հնարավոր կարգերի (կատեգորիաներ) և եզրերի (տերմ) հետևողական վերագրումն է դրան: Սրանով են պայմանավորված ՀԼԿ-ի *ընդհանրականությունն* ու *ամբողջականությունը* (ինտեգրալություն):

Այն հանգամանքը, որ բոլոր լեզուների նախադասությունների կառուցվածքի մեջ կան միննույն տիպի նախադասություններ (միննույն գործառական իմաստներ), հատկապես ստորոգյալի, լրացումների, պարագաների տրամաբա-

նական միևնույն տեսակներ, փաստում է, որ այդ բոլոր լեզուներն ունեն ընդհանրական հիմք և արտահայտում են իրականության միևնույն կողմերը, այսինքն՝ ունեն միևնույն *հարաբերակցական հիմքերը*:

Ջահուկյանը նշում է, որ նկարագրվող օբյեկտի բովանդակության մեջ չկա որպես ենթակա հանդես եկող մի որևէ բան, որ հնարավոր չլինի արտահայտել ստորոգելիական մասում: Ընդ որում՝ կարելի է ճշգրիտ որոշել յուրաքանչյուր իմաստ, տարբերել այն մյուս իմաստներից այս կամ այն *տիպական իմաստով* (genus proximum) և *տարբերակիչ հատկանիշով* (differentia specifica):

Եթե ցանկացած օբյեկտ կարելի է համարել ենթակա և արտահայտել ստորոգելիական մասում, ապա նախադասության մեջ կարելի է որոշել ցանկացած լեզվական միավորի բովանդակություն: Այսինքն՝ բոլոր լեզվական միավորների բովանդակության մեջ չկա մի որևէ բան, որ չգտնվի նախադասության բովանդակության մեջ և հնարավոր չլինի արտահայտել նախադասությունով:

Անդրադառնալով լեզվաբանությանը և տեքստի շարահյուսությանը՝ Ջահուկյանը նշում է, որ տեքստի մեջ չեն կարող լինել այնպիսի կարգեր (կատեգորիաներ), որոնք բացակայում են նախադասության մեջ, կարող են լինել միայն առանձին կարգերի տարբեր իրացումներ:

ՀԼԿ-ի մեջ, ինչպես նշել ենք նախորդ գլխում, նախ առանձնացվում են հիմնական կարգերը (կատեգորիաներ), որոնք

բնորոշում են ֆիզիկական օբյեկտը, ապա նշանային կարգերը: Դրանք առանձնացնելիս հաշվի են առնվում օբյեկտների բնորոշ գծերը՝ հատկանիշները: Այդ կարգերը բնորոշում են նյութական առարկաները (*գոյորոշ կամ ատրիբուտիվ կարգեր*), սրանց հարաբերությունները (*առգոյորոշ կամ առատրիբուտիվ կարգեր*), սրանց նշանային դրսևորումները (*նշանային կարգեր*) և նշանային կարգերի նյութալեզվական դրսևորումների փոխակերպումները (*իրադրական կարգեր*): Սրանց մեջ հիմնականը գոյորոշ կարգերն են, որոնց կիրառումը առարկաների հարաբերությունների նկատմամբ տալիս է առգոյորոշ կարգերը, նշանի և առարկայի կախումնային ու պատճառական հարաբերությունները բնորոշում են նշանային կարգերը, նշանային կարգերի գոյորոշ-առգոյորոշ դրսևորումները՝ իրադրական կարգերը:

Իրադրական կարգերը, լինելով նշանային կարգերի նյութալեզվական դրսևորումները, ոչ իրադրական անդամների իրադրական դրսևորումներն են: Ինչ վերաբերում է *նշանային կարգերին*, ապա դրանք կարող են հանդես գալ կամ դիտվել մասամբ որպես ոչ նշանային անդամների նշանային դրսևորումները:

ՀԼԿ-ի մեջ *գոյորոշ կարգերը* (կատեգորիաները) ութն են՝ չորսը՝ նյութական (կազմ, կախում, թիվ, դաս), չորսը՝ *ոչ նյութական*՝ տարածական (ձև, ուղղություն, չափ, տեղ՝ դիրք):

Հարաբերակցական լեզվաբանությունը ենթադրում է, որ ֆիզիկական օբյեկտները բնորոշող կարգերը (կատեգորիաներ) դրանց փոխհարաբերությունները բնորոշող կարգերի համաբա-

նություններն են՝ և՛ ստատիկ, և՛ դինամիկ: Ջահուկյանն առաջնային ութ կարգերն անվանում է **գոյորոշ** (**սուբստանտիվ**), երկրորդայինները՝ **առգոյորոշ** (**ատրիբուտիվ**): Բաղկացականության գոյորոշ (սուբստանտիվ) կարգերին համապատասխանում են ֆիզիկական վիճակի առգոյորոշ (ատրիբուտիվ) կարգերը: Սակայն գոյորոշ (սուբստանտիվ) և առգոյորոշ (ատրիբուտիվ) կարգերի փոխհարաբերությունը ոչ միայն տրամաբանական հիմք ունի, այլև դրսևորվում է բառերի իմաստափոխության մեջ, օր.՝ տան առաջ (դիրք) - ճաշից առաջ (ժամանակ) նն:

Դիտարկված *տասնվեց կարգերի (ֆիզիկական օբյեկտները բնորոշող կարգերի)* ընդհանուր փոխհարաբերությունը Ջահուկյանը ներկայացնում է հետևյալ աղյուսակի տեսքով⁸⁷ (տե՛ս Հավելված 3):

Հոգևոր երևույթները բնորոշելու համար Ջահուկյանը ներմուծում է հինգերորդ հատկանիշը՝ *հոգևորը* կամ *նշանային-հոգևորը*: Հոգևոր կարգը ներկայացնելով որպես մի այնպիսի ամբողջություն, որն անհնար է բացատրել վերոնշյալ կարգերով և դրանց եզրերով (տերմ)՝ Ջահուկյանն առանձնացնում է կախման և պատճառի փոխհարաբերության երեք տեսակ: Նկատի են առնվում այն հարաբերությունները, որտեղ առնվազն մեկ ռեյաստը հոգևոր երևույթ է: Հոգևոր ռեյաստը նշանակվում է շրջված ձևով (ոչ թե R, այլ Я): Արդյունքում ստացվում են կախման և պատճառի երեքական հնարավոր տիպեր. 1. *ընկալում (RrЯ)*, 2. *մոդալություն (RрЯ)*,

⁸⁷ Տե՛ս Г. Джаукян, Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, Москва, 1999, էջ 38:

3. գիտակցում (ՅրԳ), 4. մտածողություն (ՅրԲ), 5. արտահայտություն (ՅրՐ), 6. հաղորդակցում՝ կամ խոսք (ՅրԸ):

Հոգևոր կարգի եզրերը (տերմ) ֆիզիկականի եզրերի հետ միասին հնարավորություն են ստեղծում բնորոշելու մարդու հոգևոր գործունեությունը, արտացոլելու դրա զանազան կողմերը:

Ջահուկյանը վերոնշյալին հավելում է, որ եթե ֆիզիկական օբյեկտների նկարագրության դեպքում կարելի է հստակ սահմանազատել իրերն ու դրանց վիճակները, ապա հոգևոր գործունեության նկարագրության դեպքում պետք է նկատի ունենալ, որ գործ ունենք այնպիսի վիճակների հետ, որոնք վիճակայնության են ենթարկվում միայն ֆիզիկական իրերի համաբանությամբ: Ուստի այս դեպքում տասնվեց կարգերն էլ (և՛ գոյորոշ, և՛ առգոյորոշ) հանդես են գալիս⁸⁸:

Այսպիսով՝ կարգերի (կատեգորիաներ) դասակարգումը հիմնվում է հինգ հատկանիշների վրա: Ընդ որում՝ դրանց առանձնացումը կատարվում է աստիճանաբար, կարելի է ասել՝ ստորոգյալից կախված, որն էլ իր հերթին բնորոշվում է իրեն վերագրվող կարգերի բնույթով:

Ինչպես նշել ենք, հարաբերակցական լեզվաբանության մեջ առանձնանում են ոչ թե երկու (հակադիր) կամ երեք (հակադիր և միջին) *եզրեր* (տերմ), այլ հիմնականում վեց՝ իրենց դրական գնահատականով, որոնց համար հնարավոր են նաև բացասական գնահատականներ:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչու են առանձնացվում վեց եզրեր, պետք է նկատի ունենալ ռեյացիան և մարկացիան փոխհարաբերության մեջ: Եթե կարգերն արտահայտում են *ռեյատորի ընդհանուր հատկանիշը*, որը մարկացիայում դարձել է մեկ այլ ռեյատի հատկանիշ (մարկ), ապա եզրերը (տերմ) արտահայտում են ռեյատորի տիպը ռեյատի նկատմամբ, այսինքն՝ *ռեյատի հատկանիշը*: Ըստ ռեյատի քանակի՝ առանձնանում է ռեյացիայի երեք դեպք: Ռեյացիայի հիմնական տիպն այն է, որտեղ կա երկու ռեյատ՝ **R1R2**: Այս դեպքում հնարավոր է ռեյատորի երեք տիպ.

1. r-ը R1-ի նկատմամբ,
2. r-ը R2-ի նկատմամբ,
3. r-ը և՛ R1-ի, և՛ R2-ի նկատմամբ:

Եթե R1-ը և R2 –ը փոխհարաբերության մեջ են $R1 \rightarrow R2$ ($r \Rightarrow$), ապա R1-ը կբնորոշվի որպես $R1 \rightarrow$, իսկ R2 –ը՝ որպես $\rightarrow R2$: Պետք է նշել, որ երկու ռեյատի դեպքում դրանց հարաբերությունը կարող է փոխադարձ լինել, այդ դեպքում յուրաքանչյուր ռեյատ կբնորոշվի \leftrightarrow :

Ինչ վերաբերում է մեծ քանակի ռեյատներով ռեյացիաներին, ապա այստեղ ռեյատորի նոր տիպ չկա, տարբերությունը միայն քանակային է:

Ջահուկյանն առանձնացնում է **վեց եզր** (տերմ)՝ դրանք ներկայացնող օբյեկտներին տալով տրամաբանական բնորոշումներ: Եզրերը ներկայացնում ենք աղյուսակի տեսքով:

	Անվանումը	Նկարագրությունը	Նշանը
1	հիմնական	սա	→
2	հակադիր	մյուսը	←
3	միջին	և՛ սա, և՛ մյուսը	→—
4	համատեղական	ո՛չ սա, ո՛չ մյուսը	↔ կամ ↔
5	անդրադարձ	ինքը	↵
6	չեզոք	հարաբերություն չունեցողը	● կամ ○

Միայն տեղի (դիրքի) կարգի դեպքում եզրերը, բացի չեզոքից, կունենան համապատասխանաբար երեքական դրսևորում՝ 1) →(առջևում), ↗(աջ կողմում), ↑(վերևում), 2) ← (հետևում), ↙ (ձախ կողմում), ↓ (ներքևում), 3) →—₁ (միջև), →—₂ (մեջ), →— (ներսում), 4) ↔₁ (հորիզոնականորեն), ↔₂ (կողմնականորեն), ↔₃ (ուղղահայացորեն), 5) ↶₁ (եզրերում), ↶₂ (շրջակայքում), ↶₃ (դրսում):

Տեսականորեն տարբեր կարգերով բնութագրվող անդամները պետք է հանդես գան գծայնորեն՝ հաջորդեն իրար, իսկ եզրերով բնութագրվող միավորները լինեն այդ անդամների տեսակները, գտնվեն հարացուցային հարաբերության մեջ: Սակայն իրականում, ինչպես նշում է Ջահուկյանը, «այդպիսի ուղղագիծ համապատասխանություն չի լինում»⁸⁹:

⁸⁹ Գ. Ջահուկյան, Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և նախադասության անդամների ուսմունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 1, Երևան, 1989, էջ 31:

ՀԼԿ-ի քանակական (հաշվելի) կարգերը կարող են ունենալ ինչպես մոտավոր և ընդհանրացված, այնպես էլ ճշգրիտ և առանձնակի դրսևորումներ: Առաջին դեպքում օգտագործվում են ընդհանուր քանականիշ բառեր՝ *բոլոր, շատ, քիչ* ևն, երկրորդ դեպքում՝ համապատասխան թվականներ՝ *մեկ, երկու, երեք* ևն: Թվային նշանակումներն ընկած են եզրայինների միջև, այսինքն՝ միջին եզրի ճշգրտված նշանակումներն են:

ՀԼԿ-ի կարգերի դասավորությունը բխում է նրանց դասակարգման հիմքում ընկած հատկանիշների փոխհարաբերությունից և ընդհանրական բնույթ ունի: Հատկանիշների տեղերի փոփոխությունը կարող է առաջ բերել դասավորության որոշակի փոփոխություն՝ առանց հարաբերակցության խախտման: Այսպիսով՝ ՀԼԿ-ի կարգերի դասավորությունը յուրատեսակ անփոփոխակ է, որ կարող է հիմք ծառայել առանձին լեզուների նախադասության անդամների տիպաբանական փոխհարաբերության որոշման համար:

ՀԼԿ-ի միջոցով որոշվող կարգային (կատեգորիական) և եզրային իմաստները տարբեր լեզուներում հանդես են գալիս արտահայտության տարբեր միջոցներով: Ջահուկյանի խորին համոզմամբ չկա այնպիսի իդեալական լեզու, որ ունենա բոլոր կարգերի և եզրերի համար արտահայտության միջոցների և եղանակների լիովին տարբերակված համակարգ: Սրա հետ կապված՝ կոնկրետ լեզուներում գոյություն ունեն նախադասության անդամների արտահայտման միջոցների համանիշության և

համանունության՝ որպես բնական լեզվի համար անխուսափելի երևույթներ:

Ջահուկյանը նշում է, որ իրականում չի կարող լինել մի այնպիսի նախադասություն, որ ունենա բոլոր անդամները, այսինքն՝ հանդես գա բոլոր հնարավոր օղակների իրացմամբ: Լեզվական ընդհանուր կաղապարը կարող է հանդես գալ միայն մասնակի դրսևորումներով:

Այսպիսով՝ ՀԼԿ-ի համակարգը կարգերի (կատեգորիաների) որոշակի փոխհարաբերությամբ հնարավորություն է տալիս

1. պարզելու նախադասության անդամների ներքին կապը,
2. յուրաքանչյուր լեզվի համար որոշելու նրանց հատուկ արտահայտության միջոցների ու եղանակների փոխհարաբերությունը,
3. հասկանալու լեզվի կառուցվածքը և գործելու մեխանիզմը՝ որպես հասարակական կազմակերպված մարդու սեփականություն,
4. նկարագրելու և ներկայացնելու լեզվի կառուցվածքը և գործելու մեխանիզմը հնարավորինս ռացիոնալ (հիմնավորված) կերպով:

Ջահուկյանի՝ կաղապարման մեթոդները կիրառվել են այլ լեզվաբանների կողմից լեզվական զանազան երևույթներ ուսումնասիրելու համար: Դրանք կարող են հիմք հանդիսանալ նաև տեքստերի իմաստային թարգմանությունների համար:

ԳԼՈՒԽ 3 ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Գ. Ջահուկյանը նորամուծություններով է հանդես եկել նաև լեզվի տեսության բնագավառում: Հատկապես պետք է նշել քերականական կարգերի և խոսքի մասերի նոր դասակարգումները, ստորոգման, շարույթի, բայասեռի, դերանունների և լեզվական այլևայլ հարցերի քննությունը, նոր որակումներն ու բնորոշումները: Սույն գլխում անդրադառնում ենք վերոնշյալ հարցերի ջահուկյանական մեկնաբանություններին: Նպատակահարմար ենք գտել դրանց քննությունը ներկայացնել առանձին-առանձին:

Ա. ՀՆՉՈՒՅԹԻ ՉԱՀՈՒԿՅԱՆՍԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Հնչույթի ըմբռնումը ընդհանուր լեզվաբանության կարևոր խնդիրներից է, և ընդունված է համարել, որ հնչույթի գաղափարը առաջ է քաշվել նոր ժամանակներում: Սակայն ինչպես նկատել է Ջահուկյանը, հնչույթի սաղմերը ի հայտ են եկել շատ ավելի վաղ, օրինակ՝ հնչույթների տարբերակման սկզբունքների և մեթոդների կիրառումը հայոց այբուբենում կամ Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանության և մեկնությունների մեջ⁹⁰: *Հնչույթ (ֆոնեմա)* տերմինը լեզվաբանություն մուտք է գործել 19-րդ դարի երկրորդ կեսից և որպես ինքնուրույն լեզվական միավոր

⁹⁰Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954, էջ 62-67, 70-72, 127-133, 163-165:

սկսել է գործածվել հատկապես Բողուն և Կուրտենեի աշխատությունների շնորհիվ⁹¹: Լեզվաբանական գրականության մեջ՝ թե՛ հայ, թե՛ արտասահմանյան, հնչույթի ըմբռնման տարբեր մեկնաբանություններ կան: Ջահուկյանը հնչույթի այդ տարբեր տեսությունները հանգեցնում է *երկու հարցադրման պատասխանների*.

1. Հնչույթների առանձնացման համար պետք է հիմք ընդունել լեզվակա՞ն, թե՞ արտալեզվական հատկանիշները,

2. Հնչույթները պետք է դիտել որպես նյութական-ֆիզիկակա՞ն, թե՞ որպես իդեալական-հոգեկան-գիտակցական եություններ:

Իհարկե, հնչույթի ըմբռնման ավանդական, տարածված տեսությունների կողքին ի հայտ են եկել նորերը՝ ձգտելով լրացնել և կատարելագործել նախկին ըմբռնումները, տալ նոր մեկնաբանություններ: Ահա այդպիսի մի նոր ըմբռնում է ներկայացնում Ջահուկյանը՝ հնչույթի գաղափարը քննելով համընդհանուր լեզվաբանական կադապարի ընձեռած հնարավորություններով: Հեղինակի համոզմամբ՝ առանց այդ սկզբունքների իմաստավորման և հետևողական կիրառման՝ հնչույթի ուսմունքը չի կարող հանդես գալ միասնական տեսական հիմքով և զերծ մնալ էկլեկտիզմից:

Ինչպես նշել ենք համապատասխան բաժնում, Ջահուկյանը տարբերակում է լեզվի ուսումնասիրության ընդհանրական հայեցակետը առանձնականից՝ յուրաքանչյուրի մեջ էլ համապա-

⁹¹ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 533:

տասխանաբար առանձնացնելով փոփոխակային և անփոփոխակային տիպերը: Ըստ այդմ էլ՝ ընդհանուր հնչույթաբանությունը ընդհանուր անփոփոխակային լեզվաբանության և ընդհանուր տիպաբանության, իսկ այս կամ այն լեզվի կոնկրետ հնչույթաբանությունը առանձնական անփոփոխակային լեզվաբանության բաժինն է: Ընդհանուր լեզվաբանության մեջ սահմանվում են բոլոր հնարավոր տարբերակիչ հատկանիշները, բոլոր հնարավոր կարգերն ու եզրերը, որոնցով կարող են տարբերվել իրարից մարդկային հնչյուններն ընդհանրապես, իսկ ընդհանուր տիպաբանության մեջ պարզվում են տարբեր լեզուների հնչույթային համակարգերի տիպերը:

Ըստ համընդհանուր լեզվաբանական կադապարի սկզբունքներից մեկի՝ *նյութականության*՝ լեզվական ցանկացած երևույթ ուսումնասիրելիս պետք է դուրս գալ դրա սահմաններից: Հետևաբար՝ հնչույթների բնույթը, տարբերություններն ու ընդհանրությունները, նրանց քանակային կազմը և համակարգային հակադրությունները հասկանալու և բացատրելու համար պետք է դիմել ֆիզիկական և ֆիզիոլոգիական տվյալների: Ջահուկյանը, հնչույթը սահմանելով «որպես հնչյուն, որ իբրև այդպիսին է ընկալվում տվյալ լեզվական հանրության մեջ գործող նորմայով»⁹², հանգում է այն եզրակացության, որ բացի նյութականությունից՝ պետք է նկատի ունենալ նաև ընդհանուր հասարակական արժեքը:

⁹² Գ. Ջահուկյան, Ընդհանուր և հայ հնչույթաբանության մի քանի հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 1, 1984, էջ 3-16:

Ինչպես նշել ենք լեզվի և խոսքի փոխհարաբերության՝ ջահուկյանական ըմբռնման քննության մեջ, Ջահուկյանը լեզուն՝ որպես հասարակական երևույթ, հակադրում է խոսքին անհատի լեզվի միջոցով: Նմանապես նաև հնչույթը՝ որպես հասարակական երևույթ, հակադրվում է խոսքի մեջ հանդես եկող հնչյունին անհատի լեզվին հատուկ համապատասխան միավորի միջոցով: Այսինքն՝ Ջահուկյանը հակադրվում է այն հետազոտողներին (Սոսյուր, Տրուբեցկոյ), որոնք հնչույթը՝ որպես հասարակական երևույթ, հարաբերում են խոսքային հնչյունին՝ առանց նկատի ունենալու հնչույթի անհատական-հոգեբանական մեկնաբանությունը: Այսպիսով՝ Ջահուկյանն առանձնացնում է հնչյունի հետևյալ տիպերը՝

1. *Համայնահնչյուն*՝ որպես մարդկային լեզվի նվազագույն բաղադրիչ,
2. *Հանրահնչյուն*՝ որպես լեզվական տվյալ հանրության մեջ տարբերակվող միավոր,
3. *Անհատահնչյուն*՝ որպես լեզվական տվյալ հանրության անդամների մեջ հնչույթի դրսևորում,
4. *Խոսքի հնչյուն*՝ որպես խոսքի տարր, որ անհատի լեզվի տարբեր իրացումներում տարբեր բնույթ ունի:

Անդրադառնալով հնչույթների ժամանակակից քննության եղանակներին՝ Ջահուկյանը նշում է, որ ամենաթոռուցիկ քննությունն անգամ աչքի է ընկնում նկարագրության սկզբունքների անմիօրինակությամբ: Սակայն համընդհանուր լեզվաբանական կադապարի միջոցով հնարավոր է լուծել նաև այս խնդիրը: Ըստ այդ

կադապարի *միասնության* կամ *մոնիզմի* սկզբունքի՝ որակական տարբերություն չկա հնչյունի կամ որևէ այլ միավորի նկարագրության սկզբունքների ու եղանակների միջև: Այսպես, կարելի է գուգահեռներ տանել հնչյունի նկարագրության և նախադասության անդամների բնույթի անվանումների միջև, ինչպես օրինակ՝ *արտաբերության տեղ* և *տեղի պարագա*:

Հնչյունները հանդես են գալիս ոչ միայն որպես *հարացույցի* տարրեր (արտաբերական հատկանիշների հակադրություններով բնորոշվող), այլև՝ որպես *շարակարգի* տարրեր (որպես հնչաշղթայի նվազագույն բաղադրիչներ): Հնչաշղթայի բաղադրիչների հարաբերությունը հեղինակը ներկայացնում է որպես ներառական հարաբերություն՝ հետևյալ կադապարային բանաձևով.

***հնչյուն* \subseteq *վանկ* \subseteq *հնչաբառ* \subseteq *հնչաշարույթ* \subseteq *հնչադասություն* \subseteq ...*հնչաշղթա*:**

Այստեղ բազմությունների տեսությունից առնված \subseteq նշանը արտահայտում է ներառական հարաբերությունը, *հնչաշարույթ* ասելով՝ հեղինակը նկատի ունի հնչատակտը, իսկ *հնչաշղթան* ավարտուն հնչախոսքն է:

Ըստ համընդհանուր լեզվաբանական կադապարի *տնտեսման* սկզբունքի՝ 2^ա քանակի հնչյունների տարբերակման և նկարագրման համար առանձնացվում են **n** քանակի հատկանիշներ: Իսկ միավորներին տվյալ հատկանիշների հատուկ լինելը և չլինելը արտահայտվում է *Նյուտոնի երկանդամի բանաձևով* (պլյուսների և մինուսների բաշխումով): Սակայն, ինչպես նշում է Ջահուկյանը, այս իդեալական տնտեսումը հնարավոր է միայն համընդհանուր

իդեալական կադապարի դեպքում: Իսկ ինչ վերաբերում է առանձին լեզուներին, ապա դրանք, ունենալով պատմականորեն ձևավորված հնչույթային սահմանափակ անդամներով համակարգեր, հեռու են իդեալական կադապարի հնարավոր բոլոր տիպերի օգտագործումից: Հետևաբար՝ այս սկզբունքը չի կիրառվել որևէ լեզվի հնչույթային համակարգի նկարագրության նկատմամբ: Հնչույթային նկարագրությունների դեպքում հատկանիշների քանակը հիմնականում համընկնում է հնչույթների քանակին, այսինքն՝ յուրաքանչյուր հնչույթ բնորոշվում է մեկ հատկանիշով:

**Բ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԶԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՄԲՈՆՈՒՄԸ**

Քերականական կարգի ըմբռնումը լեզվաբանության մեջ կենտրոնական դեր ունի: Բավական է ասել, որ լեզվի քերականական կազմը բնութագրվում է որպես «լեզվին բնորոշ քերականական կարգերի ամբողջություն և համակարգ»⁹³: Քերականական կարգերի տարբեր մեկնաբանություններ կան՝ կապված դրանց ծավալի և բովանդակության այլևայլ բացատրությունների, լեզվական համակարգում ունեցած դերի, արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության հետ: Սակայն քերականական կարգերի համընդհանուր մեկնաբանության կամ ընդհանուր դասակարգման որևէ հաջող փորձ դեռևս չկա:

Առաջին հերթին պետք է մատնանշել քերականական կարգի հասկացության **ծավալի** հակասական մեկնաբանությունները: Ինքնին հասկանալի է, որ քերականական կարգ ասելով պետք է նկատի ունենալ լեզվի քերականական կազմը, այսինքն՝ ձևաբանական և շարահյուսական միջոցներով արտահայտված իմաստները: Քերականական կարգերը սովորաբար հենց այս կերպով էլ ընկալվում են. ժամանակակից ուղղությունները լեզվաբանության ուսումնասիրության խնդիր են դարձնում գրեթե միայն քերականական կազմը: Սակայն երբեմն ավանդական քերականության մեջ քննվում են այնպիսի երևույթներ, որոնք

⁹³ Տե՛ս В. Н. Головин, Введение в языкознание, М., 1966, էջ 151:

քերականական խնդիրների ուսումնասիրության շրջանակից դուրս են:

Ֆ. դը Սոսյուրը կարծում է, որ լեզուն «քերականական համակարգ» է⁹⁴՝ դրանով իսկ հանգելով քերականական կարգի լայն ըմբռնման: Հետևաբար՝ այդ համակարգում ընդգրկվում են այն բոլոր միավորները, որոնք որևէ կերպ առնչվում են քերականությանը: Այսինքն՝ ոչ միայն ինքնին քերականական կարգերը, այլև դրանցով բնութագրվող բառերի խմբերը՝ խոսքի մասերը:

Նմանատիպ լայն ըմբռնում է ներկայացնում նաև Ա. Ռեֆորմատսկին⁹⁵:

Քերականական կարգի էլ ավելի լայն ըմբռնում է ներկայացվում սերող քերականության մեջ, որտեղ ցանկացած հասկացություն՝ թե՛ որպես բաղադրիչների կառուցվածք բնութագրվող, թե՛ ենթակարգերը, համարվում են քերականական կարգեր⁹⁶:

Հայտնի է, որ քերականական կարգերը երկպլանային միավորներ են, այսինքն՝ ունեն ն՝ արտահայտության, ն՝ բովանդակության պլաններ: Հենց այս առանձնահատկությունն էլ հիմք է տալիս քերականական կարգերի միակողմանի բնութագրման: Որոշ հետազոտողներ առաջնություն են տալիս *բովանդակության պլանին*՝ իմաստային կողմին՝ հանգելով լոգիցիզմի և

⁹⁴ Տե՛ս Փ. де Соссюр, Курс общей лингвистики, Е., 1999, էջ 38:

⁹⁵ Տե՛ս А. А. Реформатский, Введение в языкознание, М., 1967, էջ 317:

⁹⁶ Տե՛ս Н. Хомский, Аспекты теории синтаксиса, М., 1972, էջ 61:

փսիխոլոգիզմի, մյուսներն էլ սահմանափակվում են *արտահայտության պլանով*⁹⁷ երբեմն հանգելով ֆորմալիզմի:

Քերականական կարգերի տրամաբանական մեկնաբանությունը բնորոշ էր այսպես կոչված տրամաբանական քերականությանը 17-18-րդ դարերում և 19-րդ դարի առաջին կեսին: Լեզվաբանության մեջ հոգեբանական ուղղության ներկայացուցիչների շրջանակում տարածված էր հոգեբանական մեկնաբանությունը, որ եկել էր փոխարինելու լոգիցիզմին: Ա. Շախմատովը՝ որպես հոգեբանական ուղղության ներկայացուցիչ, քերականական կարգը բնորոշում էր որպես «հարաբերության մասին պատկերացում՝ բառի հիմնական իմաստին զուգահեռ և բառից բխող»⁹⁷: Քերականական կարգի՝ շախմատովյան մեկնաբանությունը հետագայում գտնում է համախոհներ, ինչպես Ն. Պոսպելովը, Ն. Կուզնեցովը ևն:

Արտահայտության պլանին առաջնություն էին տալիս այսպես կոչված ձևական քերականության ներկայացուցիչները, հատկապես Ֆ. Ֆորտունատովը և նրա հետևորդները, որոնք քերականական կարգերը համարում էին բառերի ձևական-քերականական ցուցիչների դասեր: Ավելի նեղ իմաստով քերականական կարգերի ձևական ըմբռնումը բնորոշ է նաև ամերիկյան նկարագրական լեզվաբանությանը, հատկապես մինչև սերող քերականության ի հայտ գալը:

⁹⁷ “Из трудов А. А. Шахматова по современному русскому языку”, М., 1952, с. 29.

Քանի որ քերականություն ասելով հասկանում ենք ձևաբանությունը և շարահյուսությունը, քերականական կարգերն էլ լինում են երկու տիպի՝ *ձևաբանական* և *շարահյուսական*: Նկատի ունենալով ձևաբանության և շարահյուսության փոխհարաբերության տարբեր մեկնաբանությունները՝ տարբեր հետազոտողներ առաջնությունը տալիս են մեկին կամ մյուսին: Ոմանք նախապատվությունը տալիս են ձևաբանությանը, հետևաբար՝ քերականական կարգերը բնորոշելիս հենվում են ձևաբանական արտահայտության վրա, ինչպես, օրինակ, Ֆորտունատովի դպրոցի ներկայացուցիչները: Ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված է ձևաբանությունը տարրալուծել շարահյուսության մեջ: Որոշ հետազոտողներ, համարելով, որ ձևաբանական ցանկացած կարգ իմաստավորվում է շարահյուսության մեջ, քերականական կարգերը ներկայացնում են՝ ելնելով շարահյուսությունից: Նրանք համոզված են, որ քերականական կարգերի էությունը կարելի է հասկանալ միայն շարահյուսությունից ելնելով: Սա էլ իր հերթին հանգեցնում է սահմանների վերացմանը ձևաբանական և շարահյուսական կարգերի միջև:

Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները՝ Ջահուկյանը կարծում է, որ քերականական կարգերը բնորոշելիս պետք է հաշվի առնել հետևյալ *հանգամանքները*.

1. Քերականական կարգի հասկացությունը չի կարելի ընդլայնել՝ դրա մեջ ներառելով և՛ ինքնին քերականական կարգերը, և՛ այն լեզվական միավորները, որոնք բնութագրվում են որոշակի քերականական կարգերով: Այսինքն՝ քերականական կարգի

հասկացությունը պետք է միատարր լինի, ընդ որում՝ խոսքի մասերը՝ որպես քերականական կարգեր, միավորում են բազմատարր միավորներ՝ բառային և քերականական դասերը: Այնպիսի բազմիմաստ խոսքի մասեր, ինչպիսիք են գոյականը, ածականը, բայը ևն, ներառում են և՛ բառային, և՛ քերականական իմաստները: Հետևաբար՝ 1) խոսքի մասեր ասելով՝ պետք է նկատի ունենալ միայն իմաստակիր այն բառերը, որոնք ունեն նաև քերականական իմաստներ, 2) քերականական կարգերը պետք է համարել «ձևույթների» դասեր՝ այն իմաստով, որով դիտարկում են Ժ. Վանդրիկերը, Ժ. Մարուզն և մյուսները, այսինքն՝ քերականական արտահայտության բոլոր միջոցների և դրանց իմաստների արտահայտման դասեր (քերականական ձևույթներ, բառերի՝ քերականական նշանակություն ունեցող հերթագայություններ և շարադասություն, այսպես կոչված սուպերսեգմենտային ձևույթներ և պրոսոդեմներ), 3) խոսքի մասերի անհաջող բնորոշումը որպես բառաքերականական կարգեր, այսինքն՝ այս անվանումը վերաբերում է այն կարգերին, որոնք միջանկյալ դիրք ունեն ինքնին քերականական և բառակազմական կարգերի միջև, ինչպես՝ գոյականի մեջ սեռը (հմմտ. սեռը ածականի մեջ) և դեմքը դերանվան մեջ (հմմտ. դեմքը բայի մեջ):

2. Քերականական կարգի հասկացությունը բնորոշելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն երկպլանային բնույթ ունի, այսինքն՝ միաժամանակ և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններին է պատկանում: Հետևաբար՝ քերականական կարգերի դիտարկման դեպքում պետք է առանձնացնել 1) *ինքնին*

քերականական կարգերը՝ որպես արտահայտության և բովանդակության պլանների միավորների ամբողջություն (չնայած որոշ դեպքերում իրենց առանձին դրսևորումներում այս կամ այն կարգերը, օր.՝ սեռը, կարող են գրկվել որոշակի իմաստից), 2) *հասկացական կարգերը*, 3) *նյութական (ձևական) արտահայտության միջոցները*: Նշենք, որ լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ քերականական կարգերն առանձնացրել է *Օ. Եսպերսենը*, սակայն դրանց ճշգրիտ բնորոշում այդպես էլ չի տրվել: Իր «Քերականության փիլիսոփայություն» աշխատության մեջ նա մի կողմից՝ հասկացական կարգերը համարում է արտալեզվական, մյուս կողմից՝ նշում, որ դրանք անպայման պետք է լեզվական իմաստ ունենան⁹⁸: Ի. Մեշչանինովը և մյուս հետազոտողներն ընդգծում են հասկացական կարգերի լեզվական բնույթը. Ի. Մեշչանինովը նշում է, որ այն հասկացական կարգերը, որոնք լեզվի մեջ շարահյուսական և ձևաբանական ձևավորում են ստանում, վերածվում են հասկացական կարգերի⁹⁹: *Ս. Բոնդարենկոն*, հետևելով հենց այս դիրքորոշմանը, «հասկացական կարգեր» տերմինը փոխարինում է «գործառական-իմաստային կարգեր» տերմինով¹⁰⁰: Հարց է ծագում. արդյո՞ք նպատակահարմար է խոսել հասկացական կարգերի մասին, մի՞թե դրանք նույնական չեն տրամաբանական և հոգեբանական կարգերի

⁹⁸ Տե՛ս Օ. Եсперсен, Философия грамматики, М., 1958:

⁹⁹ Տե՛ս Ի. Мещанинов, Члены предложения и части речи, М.-Л., 1945, էջ 196:

¹⁰⁰ Տե՛ս Ա. В. Бондаренко, Грамматическая категория и контекст, Л., 1971, էջ 32-34:

հետ: Ջահուկյանի համոզմամբ՝ պատասխանը պետք է բացասական լինի: Հասկացական կարգերն առանձնացվում են լեզուների քերականական վերլուծության հիման վրա: Օր.՝ սեռի հասկացական կարգը գրեթե չի հետաքրքրում տրամաբաններին և հոգեբաններին, բայց այն շատ կարևոր է քերականության տեսակետից: Հեղինակը հասկացական կարգերի երկու տիպի բացատրություն է ներկայացնում. 1) հասկացական կարգերն ընդհանրական կարգեր են, որ կոնկրետանում են առանձին լեզուների կառուցվածքի մեջ, 2) հասկացական կարգերն առանձին լեզուների կարգեր են, որ մասնակիորեն հանդես են գալիս որպես քերականական, մասնակիորեն՝ որպես բառախմաստային կարգեր: Սակայն, Ջահուկյանի կարծիքով այս հարցը չպետք է տարակարծությունների տեղիք տա, քանի որ լեզվից լեզու տարբերվում են ոչ միայն արտահայտության ձևերը, այլև արտահայտվող իմաստները: Կարելի է վեր հանել ընդհանրական հասկացական կարգեր, բայց դրանք, կախված պատմական զարգացման ընթացքում ձևավորված իրականության ընկալումից, հասարակական-տնտեսական միջավայրից, լեզվական համակարգից, կարող են տարբեր կերպ ըմբռնվել: Այսպիսով՝ անհրաժեշտ է խոսել ինչպես *ընդհանրական*, այնպես էլ *մասնավոր* հասկացական կարգերի մասին:

3. Քերականական կարգերը ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ է ճշգրիտ պատկերացում ունենալ հենց ինքնին քերականության և լեզվաբանության մեջ դրա հստակ տեղի մասին, նկատի ունենալ տիպաբանական տարբերությունները, հստակ

որոշել ձևաբանության և շարահյուսության փոխհարաբերությունը: Ջահուկյանը համոզված է, որ այս պահանջից ցանկացած շեղում կարող է բնորոշումը դարձնել կա՛մ լայն, կա՛մ նեղ ու մասնավոր: Մրա հետ կապված՝ պետք է ուշադրություն դարձնել քերականական կարգի կառուցվածքին և հստակ բնորոշել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են *քերականույթը* և *ձևաբանական տարբերակիչ հատկանիշը*: Ընդ որում՝ իրավիճակը ոչ միշտ է նպաստավոր: «Քերականույթ» տերմինը ներմուծել է ամերիկացի լեզվաբան *Կ. Փայքը*, բայց, ինչպես հաճախ լինում է, այս տերմինը տարբեր կերպ է գործածվել: *Քերականույթ* ասելով՝ պետք է հասկանալ քերականական կարգի նվազագույն անդամը, որ հակադրվում է մյուսներին: Քերականական կարգը պետք է կազմված լինի առնվազն երկու հակադիր անդամից (քերականույթ), որոնցից մեկը նշույթակիր (ունի որոշակի հատկանիշ), մյուսը՝ ոչ (չունի որոշակի հատկանիշ): Այսպես, օր.՝ թվի կարգը ռուսերենում, հայերենում և այլ լեզուներում բաղկացած է երկու քերականույթից՝ եզակի թվի և հոգնակի թվի քերականույթներից: Մինչդեռ գոյություն ունեն բազմաթիվ կարգեր՝ բաղադրիչների՝ նշույթակիր և ոչ նշույթակիր լինելու տարբեր աստիճանով: Այդպիսի կարգը ռուսերենում և հայերենում հոլովի կարգն է: Ցանկացած քերականույթ տվյալ կարգի համակարգում այս կամ այն հատկանիշով հակադրվում է մյուս անդամներին: Սակայն այս ամենից չի կարելի ենթադրել, թե «իմաստային առումով քերականույթը տրոհելի միավոր է, այսինքն՝ այն կարող է ներկայացվել որպես որոշակի իմաստային հատկանիշների

ամբողջություն»¹⁰¹: Քերականությամբ, ինչպես նաև քերականական կարգը, Ջահուկյանը համարում է *երկպլանային* էություն, և չնայած ձևականորեն այն հանդես է գալիս միայն բառերի հետ կապված, բայց ամեն դեպքում այն համարվում է միավոր: Իսկ միավորը հնարավոր չէ տրոհել հատկանիշների. դրանք տարբեր տիպի հասկացություններ են: Ինչպես ցանկացած իրակություն (օր.՝ մարդ, ջուր, լույս են), այնպես էլ քերականությամբ հատկանիշների ամբողջություն չէ, չի տրոհվում ըստ հատկանիշների, այլ բնորոշվում կամ չի բնորոշվում հատկանիշներով: Իհարկե, ցանկացած կարգ կարող է բնորոշել այս կամ այն բառը, և այդպիսով նրա համար հանդես գալ որպես քերականական հատկանիշ, բայց դա նրա էությունը չէ: Քերականական կարգերի և քերականությունների փոխհարաբերությունը հասկանալու համար պետք է նկատի ունենալ հետևյալը: Եթե իմաստակիր բառերի փոփոխությունների կադապարը կառուցենք՝ դրա մեջ ներառելով ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական արտահայտության միջոցները, ինչպես ձևությունները, այնպես էլ հերթագայությունները, բառերի շարադասությունը և սուպերսեգմենտային միջոցները, այսինքն՝ այս բոլոր միջոցները ներկայացնել որպես ձևությունների որոշակի պատճառահետևանքային կապ՝ անկախ դրանց արտահայտման կոնկրետ ձևից, ապա առանձին կարգերը կբնութագրվեն շարակարգորեն, քերականությունները՝ հարացույցային ձևով. կարգերը կարող են միաժամանակ հանդես գալ բառերի դեպքում, քերականությունները՝ ոչ: Բառերի դեպքում առանձին

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

կարգերի միջև առկա է «ն՛, ն՛» *հարաբերություն* (կոնյունկցիա), կարգերի բաղադրիչների՝ քերականությունների միջև՝ «կա՛ն, կա՛ն» *հարաբերություն* (դիզյունկցիա): Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է հանդես գալ տվյալ կարգի միայն մեկ քերականությո՛ւթ: Քերականական կարգերի և քերականությունների առանձնացման այս սկզբունքը Ջահուկյանը կիրառում է հայոց լեզվի քերականական վերլուծության մեջ¹⁰²:

4. Քերականական կարգի բնորոշման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգային իմաստը առավել ընդհանրացված իմաստ է: Չնայած այս պահանջը միշտ չէ, որ հաշվի է առնվում: Օր.՝ Ռ. *Բուդաղովը* քերականական կարգերը բնորոշում է որպես «քերականական հասկացություններ, որ ձեռք են բերում ձևաբանական և շարահյուսական արտահայտություն»¹⁰³: Ջահուկյանը բավական համոզիչ ձևով հակադրվում է այս տեսակետին՝ նշելով, որ նախ՝ մեկ քերականական իմաստը չի կարող կարգ կազմել, երկրորդ՝ իմաստների ամբողջությունը չի կազմում կարգ, եթե դրանք չեն հակադրվում միմյանց, երրորդ՝ չի կարելի առանձին քերականական կարգի մեջ առանձնացնել հակադրվող իմաստների ամբողջություն, եթե այն հնարավոր է մտցնել մյուսի մեջ. դա վերաբերում է միայն մեկ կարգային համակարգի ենթակարգերին:

¹⁰² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Ե., 1967, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

¹⁰³ P. Будагов, Очерки по языкознанию, М., 1953, с. 148.

Այսպիսով՝ քերականական կարգի ջահուկյանական ըմբռնումը կարելի է սահմանել հետևյալ կերպ. քերականական կարգը այլ կարգերի մեջ չընդգրկվող երկու կամ ավելի քերականությունների ամբողջություն է, որ բովանդակության պլանում հակադրվում է մեկ կամ ավելի հատկանիշներով և արտահայտվում է ձևաբանական և շարահյուսական միջոցներով:

Ջահուկյանը առաջ է քաշում նաև *քերականական կարգերը մեկ միասնական համակարգով* ներկայացնելու հարցը: Պետք է նշել, որ լեզվաբանության մեջ մինչև Ջահուկյանի հարցադրումը նմանատիպ փորձ չի արվել: Չնայած դրան՝ քերականական կարգերը մեկ միասնական համակարգով ներկայացնելու, դրանց ներքին կապերի և փոխհարաբերության բացահայտման հարցերը լեզվաբանության առանցքային խնդիրներից են, ինչպես փիլիսոփայության և տրամաբանության համար ընդհանուր կարգերի դասակարգման հարցը: Մինչդեռ եթե ընդհանուր կարգերի փոխհարաբերության հարցը փիլիսոփաներին հետաքրքրել է որպես փիլիսոփայության կարևորագույն խնդիր, ապա լեզվաբանության մեջ, դժբախտաբար, այդպես չէ. նման հարցադրում նույնիսկ չի արվել: Քերականության տեսությանը վերաբերող աշխատություններում քերականական կարգերը, ինչպես արդեն նշել ենք, սովորաբար դիտարկվում են ավանդական մոտեցմամբ, ընդ որում՝ առանց հիմնավորման և իմաստավորման: Ինչ վերաբերում է դիտարկվող քերականական կարգերի փոխհարաբերություններին, ապա դրանք մասնավոր բնույթ ունեն և չեն ընդգրկում ողջ համակարգը:

Նախ պարզենք, թե ինչ նկատի ունի Ջահուկյանը՝ «մեկ միասնական համակարգով ներկայացնել» կամ «քերականական կարգերի ներքին կապերի իմաստավորում» ասելով: Քերականական կարգերը որպես մեկ միասնական համակարգ ներկայացնել, իմաստավորել դրանց ներքին կապերը նշանակում է գտնել այնպիսի հատկանիշներ, որոնք հնարավորություն կտան ընդգրկելու դիտարկվող ողջ կարգերը, այսինքն՝ կատարել դրանց դասակարգում եզակի հատկանիշների հիման վրա: Հարց է ծագում. ո՞ր հատկանիշների մասին է խոսքը: Եթե նկատի առնվեն ձևական հատկանիշները, ապա դրանք լեզվից լեզու կտարբերվեն, և յուրաքանչյուր լեզվի համար պետք է փնտրել նրան բնորոշ կարգերի համակարգ: Եթե նկատի առնվեն բովանդակության պլանում առանձնացվող միավորները, ապա խնդիրն ավելի կբարդանա: Ջահուկյանի խորին համոզմամբ հենց այսպիսի դասակարգումը կարող է բացահայտել քերականական կարգերի ներքին կապը: Սակայն միայն քերականական կարգերի սահմաններում հարցի լուծումը պայմանական կլինի, քանի որ քերականական կարգերի մասին խոսելիս սահմանափակվում է իմաստների քանակը, և դիտարկվում են միայն այն իմաստները, որոնք արտահայտվում են քերականական միջոցներով: Ջահուկյանը քերականական կարգերի դիտարկման ժամանակ առաջարկում է լուծել *երեք խնդիր*՝ դիտարկել բոլոր հնարավոր քերականական իմաստները (բովանդակության պլանի տարրերը՝ անկախ արտահայտության պլանի տարրերի ձևից), այնուհետև՝ բոլոր հնարավոր արտահայտման միջոցները՝ անկախ իմաստներից, և վերջապես՝

դրանց փոխհարաբերությունը: Առաջին խնդիրը, ըստ երևույթին, համընկնում է հասկացական կարգերի և ընդհանուր փիլիսոփայական կարգերի առանձնացման խնդրին:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ քերականական կարգերի՝ Ջահուկյանի վերլուծությունը կարող է լինել միայն խնդրի լուծման առաջին քայլը: Այդ վերլուծությունը իմաստաբանական է և չի առնչվում արտահայտության միջոցներին:

1. ԲԱՅԱՍԵՌԻ ՀԱՐՑԸ

Անդրադառնալով բայական կարգերի քերականական առանձնահատկություններին՝ Ջահուկյանը փորձում է որոշել բայասեռի տեղը բայական կարգերի շարքում: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, այս դեպքում շատ կարևոր է հատկանիշների ընտրությունը: Դրանք պետք է այնպես ընտրել, որ ընդհանուր և տարբերիչ լինեն բայասեռի և բայական մյուս կարգերի համար: Բացի այդ՝ պետք է ընդգրկեն բայական բոլոր կարգերը: Այսինքն՝ անհրաժեշտ է դասակարգումը կատարել՝ ըստ այդ կարգերի համար առավել ընդհանուր հատկանիշների:

Ճշգրիտ և տնտեսող ցանկացած դասակարգման դեպքում նախ և առաջ պետք է որոշել դասակարգվող միավորների ճշգրիտ քանակը, տվյալ դեպքում՝ բայական կարգերի քանակը: Անհրաժեշտ է նաև դրանց բնորոշ հատկանիշների համեմատաբար ամբողջական նկարագրություն: Մինչդեռ Ջահուկյանը կարծում է, որ այդ կարգերի ճշգրիտ քանակը հնարավոր չէ նշել մի քանի

պատճառներով: Նախ՝ ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ՝ հատկապես բայի տեսությանը վերաբերող, չկա դրանց ամբողջական ցանկը: Երկրորդ՝ երբեմն որոշ հետազոտողներ այս կամ այն հայտնի քերականական կարգերն առանձնացնում են որպես ինքնուրույն կարգեր: Երրորդ՝ արտահայտության և բովանդակության պլանների ոչ հստակ սահմանազատումը, մասնավորապես ծայրահեղ ձևական մոտեցումը, երբեմն հանգեցնում են նրան, որ առանձնացվում են կարգեր, որոնք չունեն հստակ իմաստային բովանդակություն: Չորրորդ՝ բայի՝ որպես միջուկի ըմբռնումը երբեմն հանգեցնում է նրան, որ բայական կարգերն ընդհանրապես նույնացվում են շարահյուսականին, և բայական կարգերի շրջանակը ընդլայնվում է:

Հետևաբար՝ Ջահուկյանն առաջարկում է սահմանափակվել այն կարգերով, որոնց առանձնացման ճշտությունը կասկած չի հարուցում, և որոնք բնորոշ են եթե ոչ բոլոր, ապա գոնե հայտնի լեզուներին: Ըստ այդմ՝ առանձնացնում է հետևյալ ութ կարգերը՝ **կերպ, բայասեռ, ժամանակ, տիպար, եղանակ, դաս, դեմք, թիվ**: Իհարկե, պետք է նշել, որ այս ամենը վերջնական և բացարձակ չէ: Այսպես, օր., *կերպի* կարգը սովորաբար համարում են ավելի ընդհանուր կարգի՝ *արժույթի* մասնավոր դրսևորում, սակայն Ջահուկյանը չի առանձնացնում *արժույթի* կարգ, քանի որ այն համարում է շարահյուսական կարգ, որն իր լայն ըմբռնմամբ մասամբ համընկնում է *բայասեռի* կարգին (հարաբերությունը ենթակային): *Մեռը*՝ որպես կարգ, փաստորեն համարվում է *դասի* կարգի մասնավոր դրսևորում, և ըստ այդմ էլ *սեռի* մասին ասվածը

կարելի է ասել նաև *դասի* մասին: Փաստորեն Ջահուկյանը դիտարկումից դուրս է համարում և՛ այն կարգերը, որոնք առանձնացվում են միայն որոշ լեզուների համար և քիչ տարածում ունեն, և՛ այն կարգերը, որոնք կարելի է ներառել իր ներկայացրած կարգերի շարքում: Այսպիսով՝ Ջահուկյանի ցուցակից դուրս են մնում *տարբերակի*, *ակնհայտության-ոչ ակնհայտության* կարգերը, որոնք առանձնացվում են որոշ կովկասյան լեզուների համար, *հաստատման-ժխտման*, *էքսպրեսիվության* (անզլերենի բայի վերլուծական ձևերի համար) կարգերը¹⁰⁴, որոնք կարելի է համարել ժամանակի և խոնարհման (ավելի ճիշտ *մոդալության*) կարգերի մասնավոր դրսևորումներ:

Նշված բայական ութ կարգերի դասակարգման համար, ըստ համընդհանուր լեզվաբանական կադապարի տնտեսման սկզբունքի, հեղինակն առանձնացնում է *հատկանիշների հետևյալ նվազագույն քանակը*. 1) *իմանենտություն*, այսինքն՝ ներքին պատկանելությունը բային (համապատասխանում է *առատրիբուտիվության*, *ընթացայնության* հատկանիշին), 2) *առարկայնություն*, այսինքն՝ հատկանիշի անմիջական արտահայտությունը առարկային (համապատասխանում է ՀԼԿ-ի *ատրիբուտիվություն* հատկանիշին), 3) *սուբյեկտաիքադրայնություն*, այսինքն՝ կողմերի և հաղորդակցման գործընթացի տարածաժամանակային կոորդինատների արտահայտությունը խոսող սուբյեկտի դիրքերից, այլ կերպ՝ ստորոգայնությունը (պրեդիկատիվությունը)՝ այս բառի ամենալայն իմաստով՝ իրացման իր բոլոր միջոցներով: Բայի

¹⁰⁴ Տե՛ս Ա. Смирницкий, Морфология английского языка, М., 1959:

համար ներփակ (իմանենտ) համարվում են *կերպը, բայասեռը, ժամանակը* և *տիպարը*, առարկայական են *կերպը, բայասեռը, դեմքը* և *դասը*, սուբյեկտաիրադրային են *բայասեռը, ժամանակը, դեմքը* և *եղանակը*: Այս բոլորը Ջահուկյանը ներկայացնում է գծապատկերի տեսքով, որի հիման վրա էլ որոշում է բայասեռի տեղը բայական կարգերի շարքում: Պարզվում է՝ միայն բայասեռն ունի բոլոր հատկանիշների դրական բնորոշում, այսինքն՝ բնորոշվում է բոլոր երեք հատկանիշներով: Իսկապես, անհնար է պատկերացնել բայն առանց բայասեռային բնորոշման. եթե նույնիսկ բայասեռը չունի որոշակի արտաքին ձևաբանական ցուցիչներ, միննույն է, այն ընկալվում է ակտանտների՝ հարաբերության մասնակիցների հիման վրա: Ըստ այդմ՝ պարզ է, որ *առարկայնությունը*՝ առարկայական հարաբերությունների արտահայտությունը, նույնպես համարվում է բայասեռի բնորոշ հատկանիշ: Երրորդ հատկանիշին՝ *իրադրայնությանը* Ջահուկյանն անդրադառնում է ավելի հանգամանակից կերպով: Ըստ առարկաների միջև հարաբերությունների օբյեկտիվ արտահայտության՝ փաստորեն չկա տարբերություն *կերպի* և *բայասեռի* միջև: Երկու դեպքում էլ կարևոր է առարկաների միջև հարաբերության արտահայտությունը, մինչդեռ առաջին դեպքում գործող սուբյեկտի և գործողության օբյեկտի օբյեկտիվ փոխհարաբերությունը ներկայացվում է այնպես, ինչպես որ այն կա իրականում, երկրորդ դեպքում խոսողի ուշադրության կենտրոնում դրանցից մեկն է՝ որպես նախադասության ենթակա: Նախադասության այսպես կոչված ակտուալ անդամատման տեսությունը, որ առաջ է քաշվել

Պրահայի լեզվաբանական դպրոցի՝ հատկապես Վ. Մատեզիուսի կողմից, որոշակի լույս է սփռում այս կարգերի փոխհարաբերության վրա: Ինչպես հայտնի է, Վ. Մատեզիուսը առանձնացնում է նախադասության *ակտուալ և ձևական անդամատումը*՝ ժխտելով «հոգեբանական սուբյեկտ և պրեդիկատ» տերմինները, որոնք սովորաբար հակադրվում են քերականական ենթակային և ստորոգյալին: Ջահուկյանի ըմբռնումը որոշակիորեն տարբերվում է Մատեզիուսի մոտեցումից: Նախ՝ Ջահուկյանը անհաջող է համարում «ձևական անդամատում» տերմինը, քանի որ իր ըմբռնմամբ այն ունի բավական որոշակի իմաստային հիմք, երկրորդ՝ Ջահուկյանը վերջինը հասկանում է ավելի լայն իմաստով՝ նկատի ունենալով ոչ միայն այնպիսի կառույցների բայասեռային հակադրությունները, ինչպես «Պողոսը սպանեց Պետրոսին» և «Պետրոսը սպանվեց Պողոսի կողմից», երբ խոսողի ուշադրության կենտրոնում սպանվածն է, այլև այնպիսի դեպքերը, ինչպես «Պետրոսը սպանվեց» և «Տեղի է ունեցել սպանություն», երբ նախադասության կառուցվածքը կախված է խոսողի իմացության աստիճանից: Այսպիսով՝ պետք է տարբերակել օբյեկտիվ անդամատումը սուբյեկտիվ-իրադրայինից կամ սուբյեկտիվ-հաղորդակցականից, երբ միննույն օբյեկտիվ հարաբերությունը ներկայացվում է տարբեր կերպ՝ կախված կոնկրետ իրադրությունից, խոսքի առանձին օղակների հաջորդականությունից, խոսողի իմացությունից, այն բանից, թե ինչն է նրա ուշադրության կենտրոնում, ինչ է դնում նախադասության կենտրոնում: Այսպիսով՝ Ջահուկյանի ըմբռնմամբ՝ *բայասեռը*

համարվում է սուբյեկտիվ-իրադրայնության հնարավոր իրացումներից մեկը: Մասնավորապես, այն միջանկյալ դիրք է գրավում *կերպի* և *եղանակի* կարգերի միջև:

2. ՏԻՊԱՐԻ ՀԱՐՑԸ

Քերականական կարգերի համակարգում որոշակիորեն առանձնանում է *տիպարի* քերականական կարգի ջահուկյանական ըմբռնումը: Այն հենվում է *բայի* ձևաբանական կառուցվածքի վերլուծության և *անվան* քերականական դասի հետ անցկացված զուգահեռի վրա: Այն մասամբ համապատասխանում է *արժույթի* (արժեքականություն, валентность) ըմբռնմանը: Լեզվաբանության մեջ արժույթի ըմբռնումն առաջ է քաշել Ս. Կացնելսոնը, սակայն տերմինը շրջանառության մեջ է դրել Լ. Տենիերը: Արժույթը բնութագրվում է որպես ակտանտների քանակ (բայի արտահայտած գործողության և եղելության մեջ ընդգրկված առարկաների քանակ), որոնք կարող են կցվել բային (հարաբերության ուղղությունը): Սակայն, ի տարբերություն *արժույթի*, որ հենվում է շարահյուսական հարաբերությունների վրա, Ջահուկյանը կարևորում է ձևաբանական չափանիշները: Այսինքն՝ արժույթը տիպարի շարահյուսական, իսկ տիպարը արժույթի ձևաբանական արտահայտությունն է¹⁰⁵:

¹⁰⁵Տե՛ս <http://les.academic.ru/174/%D0%92%D0%B0%D0%BB%D0%B5%D0%BD%D1%82%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>,

Лингвистический энциклопедический словарь, М., 1990:

Բայասեռի քերականական կարգը բնութագրվում է արժույթի այդ երկու կողմերի՝ եղելության մեջ ընդգրկված առարկաների քանակի ավելացմամբ (պատճառականություն) և ուղղության փոփոխությամբ (կրավորականություն)՝ ըստ հաղորդակցման կարիքների: Ըստ այդմ՝ Ջահուկյանը սահմանում է *տիպարային երեք իմաստ*.

1. **Գործողային՝** անցողական, արտակայական: Այս տիպարի դեպքում իրական աշխարհի երևույթների շղթայից լեզվակիրներն առանձնացնում են մի եղելություն՝ այն բնութագրելով որպես պատճառահետևանքային հնարավոր հարաբերություն:

2. **Վիճակային՝** անանցողական, ներակայական: Այս տիպարի դեպքում եղելությունը դիտարկվում է ինքնակայորեն՝ անկախ այդ հարաբերությունից:

3. **Փոխարկային:** Այս տիպարի դեպքում նկատի է առնվում արտահայտվող հատկանիշի փոփոխականությունը, այսինքն՝ տեղի է ունենում հատկանիշի անցում իր հակադիր եզրին:

Այս երեք իմաստները սերտորեն կապված են կերպային իմաստների հետ, ուստի պատահական չէ, որ դրանք արտահայտվում են կերպային տարբերիչների միջոցով:

Եթե *գործողայնություն* և *վիճակայնություն* հակադրությունն արտահայտվի որպես մեկ հատկանիշի երկու հնարավոր հակադիր եզրեր (գործողայնություն - ոչ գործողայնություն կամ անցողականություն - անանցողականություն), իսկ *փոխարկայնությունը՝* որպես փոխարկայնություն - ոչ փոխարկայնություն,

Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները

ապա տեսականորեն հնարավոր կլինի 4 եզր՝ *անանցողական - փոխարկային, անանցողական - ոչ փոխարկային, անցողական - փոխարկային, անցողական - ոչ փոխարկային*: Ջահուկյանը նշում է, որ տարբեր լեզուներում այդ չորս եզրերից ոչ բոլորը կարող են իրականանալ տիպարի կարգի ներսում:

Գ. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԸ

Խոսքի մասերի դասակարգման հարցը լեզվաբանության մեջ միշտ էլ լայն քննարկման է ենթարկվել: Մասնագիտական գրականության մեջ խոսքի մասերի դասակարգման տարատեսակ սկզբունքներ կան: Ինքնատիպ և հետաքրքիր դասակարգում է ներկայացրել նաև Ջահուկյանը, դասակարգում՝ ըստ *կադապարման մեթոդի*: Այս դասակարգումը, ինչպես նշում է հեղինակը, լեզվաբանության մեջ որպես այդպիսին ձևակերպվում է առաջին անգամ: Այդ սկզբունքը հնարավորություն է տալիս խուսափելու մյուս սկզբունքների միակողմանիությունից և բառերը քննելու իմաստաքերականական բոլոր հատկանիշների ամբողջության մեջ: Այստեղ բացառվում են կադապարային դասակարգումից կատարվող շեղումները, և մի կողմ է թողնվում ձևաբանական չափանիշներից ելնող դասակարգումը: Նշենք, որ Ջահուկյանը խոսքի մասերի դասակարգման խնդրին անդրադարձել է իր տարբեր աշխատություններում և հոդվածներում՝ Ժամանակի ընթացքում փոքր-ինչ փոփոխելով և կատարելագործելով սկզբունքները¹⁰⁶: Բայց նախքան իր բուն դասակարգմանն անդրադառնալը, ինչպես լեզվական և լեզվաբանական ցանկացած հարց քննելիս հեղինակն անդրադառնում է խոսքի մասերի՝ մինչ այդ հայտնի սկզբունքներին: Այն է՝ *իմաստաբանական* (Ս. Պալա-

¹⁰⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969; Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974; Խոսքի մասերի կադապարային դասակարգումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, հ. 1, էջ 16-30:

սանյան, Գ. Սևակ, Ս. Աբրահամյան, Վ. Բրյունդալ, Ա. Գարդիներ), *գործառական-շարահյուսական* (Մ. Աբեղյան, Է. Աթայան), *ձևաբանական* (Գ. Ջահուկյան), *համադրական* (Է. Աղայան, Ա. Ղարիբյան): Չանդրադառնալով նշված սկզբունքների քննությանը՝ նշենք միայն որ *ձևաբանական սկզբունքը* կապված է հարացույցային-կատեգորիական մոտեցման հետ և մասնակիորեն դրսևորվել է Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ: Ըստ այս սկզբունքի՝ հեղինակը նախ առանձնացնում է *հոլովվող բառեր* (գոյականներ) և *խոնարհվող բառեր* (բայեր), ապա՝ հոլովվողների մեջ, ըստ հոլովման տիպերի, *գոյական անուններ* և *դերանուններ*: Հետագայում հեղինակի աշխատություններում հաղթահարվում է խոսքի մասերի դասակարգման այս նախնական մոտեցումը:

Խոսքի մասերի դասակարգման սկզբունքներ ընտրելիս Ջահուկյանն առաջարկում է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք: Նախ՝ պետք է նկատի ունենալ, որ բառերի խոսքիմասային դասակարգումն, ըստ էության, չի տարբերվում այլ կարգի միավորների դասակարգումից: Հետևաբար՝ դասակարգման ժամանակ պետք է ելնել հատկանիշների ամբողջությունից, բացի այդ՝ հատկանիշների քանակը պետք է որոշվի դասակարգվող միավորների թվով: Օր.՝ հայերենի դեպքում, եթե ընդունենք, որ խոսքի մասերի թիվը չի կարող փոքր լինել 8-ից և մեծ 16-ից, ապա հատկանիշների քանակը կլինի առնվազն 4: Ինչ վերաբերում է հատկանիշների ընտրությանը, ապա այն պետք է կատարել՝ մնալով

միննույն սկզբունքի սահմաններում կամ դիմելով տարբեր սկզբունքների:

Ջահուկյանը համոզված է, որ իմաստաբանական, գործառական և ձևաբանական սկզբունքների պարզ միացումը չի կարող գոհացուցիչ արդյունքներ տալ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ խոսքի մասերի իդեալական դասակարգումը և ձևայթալին իմաստների դասակարգումը նույնական են, քանի որ իդեալական անձև-անջատական լեզվում բառը համընկնում է ձևայթի հետ: Հետևաբար՝ պետք է հաշվի առնել բոլոր ձևայթալին իմաստները: Այսինքն՝ պետք է առանձնացվեն ոչ միայն «լիմաստ» բառերը, այլև «ոչ լիմաստ»-ները, քանի որ «լիմաստ» բառերը «ոչ լիմաստ»-ների հետ գուգակցվելու ունակություն ունեն:

Քննելով «գուս» իմաստաբանական դասակարգումը՝ հեղինակն իրավացիորեն նշում է, որ այն չի կարող լինել լեզվաբանական դասակարգում. դա ավելի շատ տրամաբանական դասակարգում կլինի: Մինչդեռ խոսքիմասային դասակարգման մեջ հաշվի են առնվում բառերի՝ խոսքի մեջ կատարած հիմնական գործառույթները: Բացի այդ՝ բառային միավորների հասկացությունը պետք է տարբերել բառերի հասկացությունից: Խոսքի մասերը ոչ թե բառեր են, այլ բառային միավորների խմբեր:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ Ջահուկյանը եզրակացնում է, որ հայերենի խոսքի մասերի դասակարգումը պետք է սկսվի *ձևաբանական* և *բառակազմական* չափանիշներից և լրացվի *իմաստային* ու *գործառական* չափանիշ-

ներով: Ուստի ***խմաստային դասակարգման*** համար առանձնացնում է չորս *հատկանիշ*.

1. **Գոյակազմություն**, որ նշանակում է ոչ թե որպես գոյականի, այլ գոյականի և նրա հետ կապված բոլոր կարգի բառատիպերի նշանակում: Այս հատկանիշով միավորվող բառային միավորները ցույց են տալիս առարկա, առարկայի անուն, առարկայի հատկանիշ կամ հարաբերություն: Այդ բառային միավորներն են *գոյական անունը, ածականը, թվականը, կապը, դերանունը, հոդը*: Ի դեպ՝ հոդը համարվում է լայն առումով դերանվան դրսևորում և միայն առանձին բառ լինելու դեպքում է այս շարքին դասվում:

2. **Դրադրայնություն**. այս հատկանիշը պետք է լայն առումով հասկանալ. այն բոլոր խոսքի մասերի նշանակում է, որոնք իրադրական բնույթ ունեն: Դրանք են *դերանունը, հոդը, ձայնարկությունը, եղանակական բնույթի բառերն ու բառ-մասնիկները*:

3. **Մակադրականություն**: Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնց բնորոշ է խոսքի մեջ այլ խոսքի մասի հարելը, նրանից կախման մեջ մտնելը, նրան այս կամ այն առումով լրացնելը: Դրանք են *ածականը, թվականը, որոշիչ դերանունը, մակբայը, եղանակական բառերը և բառ-մասնիկները: Կապը և շաղկապը* այս խմբի մեջ չեն մտնում, քանի որ դրանք նշում են լրացական կապի առկայություն, բայց ինքնին չեն լրացնում:

4. **Էանշություն**: Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնք ցույց են տալիս իրենց նշած օբյեկտի

Էությունը, նրա էական կողմը: Դրանք են *գոյականը, ածականը, բայը, որական մակբայը, անձնացուցական դերանունները, իրադրական մակբայը, ձայնարկությունը*:

Այսպիսով՝ ըստ վերոնշյալ հատկանիշների՝ Ջահուկյանն առանձնացնում է 16 խոսքի մաս՝ *ածական դերանուն, քանակական դերանուն և հոդ, գոյական դերանուն, հարաբերական դերանուն, ածական, թվական, գոյական, կապ, իրադրական մակբայ, բառ-մասնիկ, ձայնարկություն, եղանակական բառեր, որական մակբայ, քանակական մակբայ, բայ, շաղկապ*:

Առաջնորդվելով գործառական հատկանիշներով՝ Ջահուկյանը հիմք է ընդունում հետևյալ 4 հատկանիշներ.

1. **Հաղորդակազմություն:** Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնք հանդես են գալիս որպես նախադասության և բառակապակցության անդամ: Դրանք են *գոյականը, ածականը, թվականը, դերանունը, բայը, մակբայը*:

2. **Միագործառություն:** Այս հատկանիշով միավորվում են այն խոսքի մասերը, որոնք կապվում են միևնույն կարգի բառերի հետ: Դրանք են *գոյականը, ածականը, մակբայը, եղանակական բառերը, կապը, ստորադասական շաղկապը*:

3. **Ինքնահաղորդայնություն:** Այս հատկանիշով միավորվող խոսքի մասերը կարող են հանդես գալ որպես ինքնուրույն հաղորդակցական միավոր, այսինքն՝ նախադասություն կազմել: Դրանք են *բայը, գոյականը, ձայնարկությունը, եղանակական բառերը*:

4. **Լրացականություն:** Այս հատկանիշով միավորվող «լիմաստ» բառերը իրենց իմաստը կարող են լրացնել «լիմաստ» բառերով, «ոչ լիմաստ»-ները՝ «լիմաստ» և «ոչ լիմաստ» բառերով: Դրանք են *գոյականը, ածականը, թվականը, ձայնարկությունը, եղանակական բառերը, բառ-մասնիկները, կապերը:*

Այսպիսով՝ խոսքի մասերի *գործառական* դասակարգմամբ Ջահուկյանը ստանում է 12 խոսքի մաս՝ *գոյական, ածական, մակբայ, բայ, դերանուն, եղանակական բառեր, կապ, ստորադասական շաղկապ, ձայնարկություն, բառ-մասնիկ, համադասական շաղկապ:*

Հայերենի բառերի *ձևաբանական դասակարգում* կատարելիս, ինչպես արդեն նշել ենք, Ջահուկյանը նկատի ունի նրանց *հոլովականության* և *խոնարհականության* հատկանիշները: Այսինքն՝ դերբայները բային հատկացնելու դեպքում բայը կբնորոշվի հոլովականության և խոնարհականության հատկանիշներով, դերբայները գոյականների, ածականների, մակբայների մեջ բաշխելու դեպքում՝ միայն խոնարհականության:

Բառակազմական դասակարգումը պահանջում է ընտրել ոչ թե բառակազմական որևէ հատկանիշ, այլ բառակազմական միջոցների մի ամբողջություն:

1. **Կրկնություն:** Քերականական կրկնությունը ծառայում է որպես մակբայակերտման միջոց:

2. **Իսկական և անիսկական բարդություններ:** Իսկական բարդությունը հատուկ չէ դերանուններին, թվականներին և չթեքվող խոսքի մասերին:

3. **Նախաձանցում:** Եթե բացառենք ժխտական նախամասնիկները, ապա հատուկ է բայերին: Մյուս խոսքի մասերը նախաձանցներ են ունենում, երբ ածանցվում են բայերից:

4. **Վերջաձանցում:** Հատուկ է այն «լիմաստ» խոսքի մասերին, որոնք բնորոշվում են վերջաձանցների նյութական խմբերով: Դրանք են գոյականները, ածականները, բայերը, մակբայները:

Ընդհանրացնելով խոսքի մասերի դասակարգման՝ վերոնշյալ բոլոր սկզբունքները՝ Ջահուկյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Այս կամ այն կոնկրետ լեզվի խոսքի մասերի քննության ժամանակ հնարավոր է երկու մոտեցում՝ 1) կամ ելնել ընդհանրական իմաստաբանական-գործառական դասակարգումներից, 2) կամ ելնել տվյալ լեզվի ձևաբանական, շարահյուսական ու բառային միջոցների բաշխումից ու փոխհարաբերությունից...»¹⁰⁷: Իր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ հեղինակն առաջնորդվում է երկրորդ մոտեցումով և այդ սկզբունքը կոչում է **համադրական-կադասպարային**: Ըստ այդմ՝ խոսքի մասերի տիպերը որոշվում են լեզվակադասպարային բաշխման միջոցով: Ըստ արտահայտության և բովանդակության պլանների՝ հաշվի են առնվում *մակարդակային* (ստորոգական և ոչ ստորոգական միավորների) և *աստիճանային* (բառային միավորների և բառակապակցությունների) տարբերությունները:

¹⁰⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 147:

Այսպիսով՝ *ձևաբանության բաժնում* տարբերվում են հարացույցային երկու կաղապարներ՝ հոլովման և խոնարհման: Ըստ այդմ՝ առանձնացվում են հոլովվող բառեր՝ *գոյականներ*, և խոնարհվող բառեր՝ *բայեր*: Ըստ հոլովման երկու կարգի դրսևորման՝ առանձնացվում են *գոյական անուններ* և *գոյական դերանուններ*: Ըստ հոլովման և խոնարհման վերլուծական դրսևորումների՝ առանձնացվում են *ձևաբանական բառ-մասնիկները* (*մի* անորոշ հոդ, արգելականի *մի*, *պիտի* եղանակիչ, *եմ*, *լինել*, *տալ* օժանդակ բայեր):

Շարահյուսության բաժնում ըստ գոյականական բառակապակցության կաղապարի՝ առանձնացվում են երեք կարգի որոշիչ բառեր՝ *դերանվանական ածական*, *թվական ածական* (կարող է ունենալ մակորոշիչ բառ՝ *մակթվական*), *ածական* (կարող է ունենալ մակորոշիչ բառ՝ *մակաածական*), ինչպես նաև՝ հարաբերիչ բառեր՝ *կապեր*:

Ըստ բայական բառակապակցության կաղապարի՝ առանձնացվում են որոշիչ բառեր՝ *մակբայներ*, և հարաբերիչ բառեր՝ *ստորադասական շաղկապներ*:

Նախադասությանը հարող բառերի կաղապարի մեջ առանձնացվում են նաև *ձայնարկություններ* և *եղանակական բառեր*: Սրանցից բացի՝ Ջահուկյանի խորին համոզմամբ պետք է տարբերակել նաև *եղանակական բառ-մասնիկները*, որոնք եղանակավորում են ոչ թե նախադասություններ, այլ առանձին բառեր, և *համադասական շաղկապները*, որ կարող են հարաբերել միակարգ խոսքի մասեր և համադասական նախադասություններ:

Այսպիսով՝ ըստ *համադրական-կադապարային դասակարգման*՝ Ջահուկյանն ընդունում է 14 խոսքի մաս՝ *գոյական անուն, գոյական դերանուն, բառ-մասնիկ, բայ, դերանվանական ածական, թվական ածական, ածական, կապ, մակբայ, ստորադասական շաղկապ, ձայնարկություններ, եղանակական բառեր, եղանակական բառ-մասնիկներ, համադասական շաղկապ*։

Իր այս համադրական-կադապարային դասակարգումը Ջահուկյանը զարգացնում է «Խոսքի մասերի կադապարային դասակարգումը» հոդվածում։ Այստեղ խոսքի մասերի կադապարները կառուցելու համար կարևորում է հետևյալ հատկանիշները.

1. Կադապարը պետք է լինի ամենածավալունը, այսինքն՝ պետք է պարունակի բոլոր հնարավոր տարբերակված անդամները։

2. Այդ անդամները չպետք է կրկնվեն նույնությամբ, չպետք է փոխարինվեն գործառական համարժեքներով, չպետք է լինեն փոխանցման, փոխարինման, փոխակերպման արդյունք։

3. Կադապարի անդամները պետք է քննվեն ըստ հիմնական գործառության, այսինքն՝ «ըստ բնության», այլ ոչ թե ըստ երկրորդական գործառության, այսինքն՝ «ըստ դրության»։

4. Ինչպես արդեն նշել ենք, նկատի են առնվում ոչ միայն «լիմաստ», այլև «ոչ լիմաստ» խոսքի մասերը։

Այս ամենը հաշվի առնելով՝ Ջահուկյանը նախ առանձնացնում է հիմք ծառայող նախադասությունը՝ իր հետ կապված նախադասություններով և կրկնվող տարրերով. այն է՝ *Հուր*

ստացվեց, որ փախստականներն ապաստանել են երկու շատ մեծ և բազմամարդ քաղաքներում: Այսպիսով, եթե Գրիգորյանը փախստականներից ավելի արագ շարժվեր դեպի այդ երկու շատ մեծ քաղաքները, և ամեն ինչ խիստ գաղտնի կատարվեր, ապա հույս կլիներ օպերացիան հաջողությամբ ավարտելու: Այնուհետև դրանից ընտրում է կադապարային նմուշը. Այսպիսով, եթե ավելի արագ շարժվեր դեպի այդ երկու շատ մեծ քաղաքները և...

Փաստորեն հիմք նախադասությունից հեղինակը հանում է պարբերությունը կազմող երկու նախադասություններից առաջինը (դրա մասին ակնարկում է *այսպիսով*-ը), դուրս է գալիս բարդ նախադասության մեջ մտնող գլխավոր նախադասությունը (ստորադասության մասին ակնարկում է *եթե*-ն), համաստորադաս նախադասություններից երկրորդի մասին ակնարկում է *և*-ը, երեք գոյականական միավորներից երկրորդի համեմատության խնդրի մասին ակնարկում է *ավելի*-ն: Ի վերջո ստացվում է 12 անդամից բաղկացած կադապարային նմուշ, որի բաղադրիչներից 5-ը (այսպիսով, եթե, ավելի, դեպի, *և*) *հարաբերիչներ* են, 6-ը (արագ, այդ, երկու, շատ, մեծ, քաղաքները)՝ *հարաբերվողներ*, 1-ը (շարժվեր)՝ *հարաբերվող* ու *հարաբերող*:

Քանի որ բայի և գոյականի փոխհարաբերության հարցը քերականության մեջ երեք կերպ է լուծվում, այն է՝ բայը ստորադասվում է գոյականին, գոյականը ստորադասվում է բային, գոյականը և բայը հավասարագոր, ըստ հանգամանքների իրար լրացնող բառային միավորներ են, ապա, ինչպես նշում է

Ջահուկյանը, ստացվում են կադապարային կարգի հիերարխիական տարբեր սխեմաներ:

Ըստ **առաջին սկզբունքի**՝ բայը թվականի և ածականի հետ միևնույն մակարդակին է դասվում, մակբայը, մակածականն ու մակթվականը հանդես են գալիս որպես լրացումներ: Մակբայի լրացումները կոչվում են *առմակբայ*: Հեղինակը նշում է, որ այս սխեման ճիշտ կլինի, եթե հաստատվի, որ մակթվականը, մակածականն ու մակբայը միևնույն դասին են պատկանում, իսկ առմակբայը ժխտվի:

Ըստ **երկրորդ սկզբունքի**՝ գոյականը դասվում է մակբայի մակարդակին, իսկ թվականն ու ածականը դիտվում են որպես լրացման լրացումներ: Այստեղ առմակբայը չի դասվում մակբայի շարքին, չի էլ ժխտվում, ուստի հեղինակի համոզմամբ այս սխեման իրեն չի կարող արդարացնել:

Ըստ **երրորդ սկզբունքի**՝ գոյականն ու բայը դասվում են միևնույն մակարդակին, իսկ մակբայը, թվականն ու ածականը հանդես են գալիս լրացական միավորների մակարդակում: Հեղինակը նշում է, որ այս սխեման իրեն կարդարացնի, եթե ապացուցվի մակբայների լրացումներ առանձնացնելու անհրաժեշտությունը:

Այնուհետև ըստ այս երեք սկզբունքների՝ Ջահուկյանը գծում է համապատասխանաբար 6 սխեմաներ՝ առմակբայի առկայությամբ և բացակայությամբ: Հայերենի համար նպատակահարմար է համարում 2-րդ սկզբունքը, քանի որ մակածականներն ու առմակբայները հիմնականում համընկնում են: Ուստի՝ կարծում է,

որ չարժե դրանք առանձնացնել, այլ պետք է մի խմբի մեջ դասել՝ կոչելով *մակլրացականներ*:

Քերականության մեջ միանշանակ չէ «ոչ լիմաստ» բառերի խոսքիմասային արժեքի հարցը: Ջահուկյանը յուրատեսակ լուծում է առաջարկում: Քանի որ *այսպիսով*-ի տիպի բառերը և բուն եղանակականները կարող են հանդիպել կողք կողքի, ապա դրանց համար առաջարկում է *անկասպ* տերմինը: Քանի որ համադասական և ստորադասական շաղկապները հակադրվում են իրար, ուստի ստորադասականի համար առաջարկում է *ստորակասպ*, համադասականի համար՝ *համակասպ* տերմինները: Քանի որ *ավելի*-ի տիպի բառերը քերականական մասնիկների դեր են կատարում, դրանք կոչում է *բառ-մասնիկներ*:

Այսպիսով՝ «ոչ լիմաստ» բառային միավորների 5 տեսակ է ընդունում՝ *անկասպ*, *ստորակասպ*, *համակասպ*, *կասպ*, *բառ-մասնիկ*:

Նախադասություններն ու նրանց մասերը երանգավորող բառային միավորները բաժանվում են 2 խմբի.

1. Բառային միավորները, որ եղանակավորում են ողջ նախադասությունը, կոչում է *ընդհանուր եղանակավորող*: Այս խմբին են դասվում զգացական-հորդորական բառերը՝ ձայնարկությունները, պատասխանական բառերը, խոսողի վերաբերմունքն արտահայտող բառերը: Քանի որ պատասխանը կապված է հարցման հետ, պատասխանական բառերը կոչում է *իմացարկություն*, վերաբերողական-եղանակական բառերը՝ *եղանակական*:

2. Բառային միավորները, որ երանգավորում են «լիիմաստ» բառերը, կոչում է *մասնակի եղանակավորող*: Մրանց համար էլ առաջարկում է *երանգական* տերմինը:

Այսպիսով՝ հայերենում, ըստ *կաղապարային դասակարգման*, Ջահուկյանն ընդունում է 16 խոսքի մաս՝ *գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, մակլրացական, կապ, ստորակապ, համակապ, առկապ, բառ-մասնիկ, ձայնարկություն, իմացարկություն, եղանակական, երանգական*:

Խոսքի մասերի քննությունը Ջահուկյանն ավարտում է *անտարրորոշության (սինկրետիզմ), փոխանցման, փոխակերպման, փոխարկման* գաղափարների քննությամբ՝ առանց որոնց, կարծում է, որ ոչ միայն անհասկանալի կլինի մի շարք միավորների բնույթը, այլև՝ խոսքի մասերի տեսության մի շարք կողմեր: Այսպես, *անտարրորոշություն* է կոչում տարբեր խոսքի մասերի ձևական չտարբերակվածությունը: Այսինքն՝ միևնույն բառը, առանց ձևական տարբերության, կարող է հանդես գալ որպես տարբեր խոսքի մասեր և կաղապարում գրավել տարբեր դիրքեր: Օր.՝ խավարը և՛ գոյական է, և՛ ածական:

Փոխանցումը բխում է լեզվի գործառության ներքին բնույթից: Այս դեպքում լեզվի խնայողության բնական միտումից ելնելով՝ բառերը, հիմնական գործառությամբ հանդես գալուց բացի, երկրորդական գործառությամբ են հանդես գալիս: *Փոխարկումը* միևնույն կաղապարային դիրքում տարբեր բառերի միմյանց փոխարինելն է: Խոսելու ընթացքում հաճախակի է լինում, իսկ լեզվաբանը կատարում է միտումնավոր: *Փոխակերպումը*

նախադասության կամ նրա մասերի գործառական այնպիսի փոխանցում է, որն ուղեկցվում է քերականական համապատասխան փոխարինումով: Այս կապակցությամբ պետք է առանձնացնել դերանունը, որի էությունն է համարվում այլ խոսքի մասերին փոխարինելը:

Այսպիսով՝ պետք է նշել, որ խոսքի մասերի դասակարգման ջահուկյանական մոտեցումը, իրոք, նոր խոսք է հայ լեզվաբանության պատմության մեջ: Հիշատակելի է, որ Ջահուկյանի դասակարգումներն աչքի են ընկնում ոչ միայն դասակարգման նախկին սկզբունքների մեկնաբանության տեսակետից, այլև բավական ինքնատիպ և նորովի մոտեցումներ են առաջարկում: Չնայած այս դասակարգումը, հավանաբար որոշակիորեն բարդ լինելու պատճառով, գործնականում (բացի հեղինակի աշխատություններից) չի կիրառվել, այնուամենայնիվ, դասակարգման ջահուկյանական մոտեցումը մի նոր և կարևոր քայլ է հայ լեզվաբանական մտքի զարգացման գործում:

Դ. ՍՏՈՐՈԳՄԱՆ ՀԱՐՑԸ

Ջահուկյանը հանգամանալից կերպով անդրադարձել է նաև ստորոգման քննությանը, մասնավորապես «Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները» հոդվածում¹⁰⁸: Թեև ստորոգումը նախադասության էական հատկանիշներից է, բայց հեղինակի համոզմամբ այն ոչ միշտ է ճիշտ մեկնաբանվում: Հետևաբար՝ Ջահուկյանն իր առաջ խնդիր է դնում կատարելու որոշակի ճշգրտում: Ինչպես ցանկացած լեզվաբանական խնդրի քննության դեպքում, այս դեպքում ևս հեղինակը նախ անդրադառնում է թե՛ հայ, թե՛ արտասահմանյան լեզվաբանության ներկայացուցիչների մեկնաբանություններին (*Ս. Պալասանյան, Ս. Աբեղյան, Վ. Մատեղիու*), ներկայացնում նրանց ստեղծած ուսմունքի դրական կողմերն ու թերությունները, ապա կատարում որոշակի ճշգրտումներ և մեկնաբանություններ:

Որպես թերություն՝ Ջահուկյանն առաջին հերթին մատնանշում է *ստորոգման գաղափարի որոշակի նեղացումը*: Այսպես՝ միտում է նկատվում ստորոգումը կապելու միայն բայի հետ, իսկ ստորոգման արտահայտիչ համարվում է դիմավոր բայը: Բացի այդ՝ ստորոգումը դիտարկվում է որպես հատկանիշի վերագրում ենթակային: Դժվար չէ նկատել, որ նման մոտեցման դեպքում քննությունից դուրս են մնում միակազմ նախադասությունները: Հաճախ որոշ քերականներ ստորոգման էությունն

¹⁰⁸ Գ. Ջահուկյան, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1985, հ. 1, էջ 29-32:

այնքան են նեղացնում, որ այն դիտարկվում է սուկ որպես ենթակայի և ստորոգյալի հարաբերություն, և երկրորդական պլան է մղվում արտալեզվական իրադրության հետ բովանդակության հարաբերության հարցը: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, թերի է մնում նաև ստորոգման արտահայտության և բովանդակության պլանների հստակ որոշման հարցը: Օրինակ՝ հնչերանգը որպես հավասարազոր հատկանիշ դրվում է ստորոգման կողքին, մինչդեռ հնչերանգը միայն արտահայտության պլանին է պատկանում:

Վերոնշյալ խնդիրների լուծումը Ջահուկյանին հանգեցնում է երկու կարևոր հարցադրման. 1) ստորոգումը դիտել որպես նախադասության ներքի՞ն, թե՞ արտաքին հարաբերություն, 2) ստորոգման մեկնաբանության հիմքում դնել միայն լեզվակա՞ն կողմը, թե՞ նաև տրամաբանական և հոգեբանական չափանիշները: Ըստ այս հարցերի պատասխանների՝ հեղինակն առանձնացնում է ստորոգման չորս հիմնական ըմբռնում՝ համապատասխան սահմանումներով: Մակայն քննության հենց սկզբից հեղինակը հարկ է համարում հրաժարվել երկու սահմանումներից, այն է՝ 1. ստորոգումը նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի և ստորոգյալի հարաբերություն է, 2. ստորոգումը նախադասության հիմքում ընկած դատողության բովանդակության հարաբերությունն է արտալեզվական իրադրությանը: Ինչպես նշվել է վերևում, առաջին սահմանման դեպքում քննությունից դուրս են մնում միակզավ նախադասությունները, իսկ երկրորդի դեպքում նախադասության բովանդակությունը հանգեցվում է դատողության

բովանդակությանը, որ մեխանիկական տեղափոխություն է, ուստի այդ սահմանումները թերի են:

Ինչ վերաբերում է հաջորդ երկու սահմանումներին (1. ստորոգումը տրամաբանական կամ հոգեբանական ենթակայի (սուբյեկտի) և ստորոգյալի (պրեդիկատի) հարաբերություն է, 2. ստորոգումը նախադասության բովանդակության հարաբերությունն է արտալեզվական իրադրությանը), ապա հեղինակը, ըստ էության, դրանք ճիշտ է համարում, սակայն ստորոգման էության բացահայտումը տեսնում է այդ երկու սահմանումների մերձեցման մեջ, ինչպես նաև տրամաբանության և հոգեբանության բնագավառից ստորոգման խնդիրը լեզվաբանության բնագավառ տեղափոխելու մեջ: Ստորոգման հարցը լեզվաբանորեն բացատրելու փորձ առաջին անգամ կատարել է Վ. Մատեզիուսը նախադասության ակտուալ անդամատման ըմբռնման մեջ¹⁰⁹: Ըստ այդմ՝ տրամաբանական կամ հոգեբանական ենթակայի փոխարեն առաջ է քաշվում *թեմայի*, իսկ տրամաբանական կամ հոգեբանական ստորոգյալի փոխարեն՝ *ռեմայի* գաղափարը: Նկատի ունենալով, որ թեման լեզվականորեն կարող է արտահայտված չլինել, Ջահուկյանը ստորոգումը սահմանում է հետևյալ կերպ. «... ստորոգումը նախադասության ենթահիմքի (թեմայի) և մակաբերյալի հարաբերությունն է, որի դեպքում երկրորդի

¹⁰⁹ Sté u B. Матезиус, О так называемом актуальном членении, “Пражский лингвистический кружок”, М., 1967:

արտահայտությունը պարտադիր է, առաջինինը՝ ոչ»¹¹⁰: Այսինքն՝ միակազմ նախադասությունների դեպքում կարևորվում է ստորոգյալի լեզվական արտահայտությունը՝ անկախ նրա խոսքիմասային պատկանելությունից: Պետք է նշել սակայն, որ այս սահմանումը ևս Ջահուկյանը վերջնական չի համարում, քանի որ ստորոգման դեպքում իրականում ոչ թե երկանդամ, այլ եռանդամ հարաբերություն է՝ *հաղորդող – հաղորդում – հաղորդման իրադրություն*: Բացի այդ՝ ստորոգման էությունը բացահայտելու համար դեռ որոշակի ճշգրտումների կարիք կա: Մասնավորապես, Ջահուկյանը տարբերակում է *ստորոգումը* և *ստորոգայնությունը* կամ *իրադրայնացումը*: Եթե ստորոգումը նախադասությանը հատուկ քերականական կարգ է, ապա ստորոգայնությունն ավելի լայն է՝ քերականական կարգերի մի ամբողջություն: Այսինքն՝ ստորոգայնությունը նախադասության այն բոլոր միջոցներն են, որոնցով նախադասության բովանդակությունը իրադրականանում է և կապվում արտալեզվական իրադրությանն ու համատեքստին: Որպես ստորոգայնության կարգեր՝ Ջահուկյանը նշում է *եղանակավորությունը*, *սեռայնությունը*, *իրադրական ժամանակայնությունը* և *դիմացուցայնությունը*:

Ինչ վերաբերում է ստորոգման արտահայտության և բովանդակության պլանների հարցին, ապա Ջահուկյանի համոզմամբ ստորոգումն օժտված է թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլաններով: Արտահայտության միջոցները

¹¹⁰ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 88:

կարող են տարբեր լինել, ուստի չի կարելի ստորոգումը կապել բայի հետ, քանի որ առանց բայի ևս կարող է արտահայտվել:

Ստորոգյալի առկայության-բացակայության հարցին անդրադառնալիս Ջահուկյանը նշում է, որ ստորոգումը միշտ ենթադրում է ստորոգյալ. «միակազմ նախադասությունների դեպքում ստորոգյալն անհրաժեշտորեն տրված է որպես մակաբերյալ կամ ասույթ (ռեմա), իսկ ենթական որպես ենթահիմք (հիմք, թեմա) բառապես չի տրված. երկկազմ նախադասությունների դեպքում երկուսն էլ առկա են»¹¹¹: Այսինքն՝ հնարավոր է ստորոգյալի *բացահայտ* (էքսպլիցիտ) և *անբացահայտ* (իմպլիցիտ) առկայություն:

Ինչպես ցանկացած քերականական կարգ, այնպես էլ ստորոգումը, Ջահուկյանի կարծիքով, պետք է ունենա իր բաղադրիչները՝ եզրերը կամ քերականույթները: Հեղինակն առանձնացնում է ստորոգման *երեք եզր*՝ *ընկալական* կամ *կրական* (արտահայտվում է հնչերանգով), *վերագրական* (արտահայտվում է էական բայով), *եղելական* (արտահայտվում է բայական վերջավորություններով և դրանց փոխարինող վերլուծական ձևերով):

Այսպիսով, նկատի ունենալով վերոնշյալ բոլոր հանգամանքները, Ջահուկյանը բացահայտում է ստորոգման էությունը և այն սահմանում հետևյալ կերպ. ստորոգումը նախադասության իրադրացման կամ ստորոգայնության դրսևորումն է:

¹¹¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 90-91:

Ե. ՇԱՐՈՒՅԹԻ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Շարույթի գաղափարը քերականություն ներմուծվել է նոր ժամանակներում, և լեզվաբանության մեջ շարույթի տարբեր ըմբռնումներ կան: Այսպես՝ Ֆ. դը Սոսյուրը *շարույթ (սինտագմա)* ասելով հասկանում էր խոսքի մեջ իրար հաջորդող առնվազն երկու միավորների կապակցություն՝ անկախ այդ միավորների մակարդակային բնույթից: Ի. Բոդուեն դե Կուրտենեն շարույթ ասելով հասկանում էր բառի շարահյուսական ամեն մի գործածություն¹¹²: Սակայն հետագայում շարույթը այլ կերպ է ըմբռնվում. Բոդուեն դե Կուրտենեի առաջարկած իմաստով չի գործածվում առհասարակ, իսկ սոսյուրյան իմաստն ավելի է նեղանում, և շարույթը սկսում է գիտակցվել որպես միջին օղակ բառի և նախադասության միջև: Այնուամենայնիվ, շարույթի սահմանների հստակեցման խնդիրը մնում է առկա: Որոշ հետազոտողներ (Լ. Շչերբա, Ա. Ռեֆորմատսկի) ժխտում են շարույթի ինքնուրույնությունը և այն կապում նախադասության անդամի հետ, ոմանք (Ս. Կարցևսկի) այն համարում են բառակապակցությանը հարաբերակից միավոր, և այլն:

Հայ լեզվաբանության մեջ շարույթի ըմբռնմանն առավել խորությամբ անդրադարձել է Ջահուկյանն իր տարբեր աշխատություններում և հոդվածներում: Անդրադառնալով նախադասության վերլուծության ավանդական եղանակին՝ հեղի-

¹¹² Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 486:

նակը նշում է, որ այդ դեպքում թեև հաշվի է առնվում նախադասության կառուցման աստիճանականությունը, բայց հաճախ դժվարություններ են առաջանում: Օրինակ՝ դժվար է որոշել բառի ճշգրիտ սահմանը կամ խոսքիմասային արժեքը, երբ կան մեկ բառի արժեք ունեցող բառախմբեր: Հետևաբար՝ հեղինակը, ի տարբերություն նախադասության վերլուծության ավանդական եղանակի, նախընտրում է կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչների առաջ քաշած նախադասության վերլուծության աստիճանական երկատման եղանակը: Այս դեպքում բառախմբով արտահայտված միավորների վերլուծության խնդիր չի առաջանում:

Ընդունված է կարծել, որ նախադասության և բառի միջև որպես միջանկյալ օղակ բառակապակցությունն է: Սակայն Ջահուկյանը բոլորովին համամիտ չէ այս տեսակետին: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, կան մեկ բառով արտահայտված նախադասություններ, իսկ այս փաստը հերքում է վերոնշյալ տեսակետը: Այսինքն՝ պետք է առանձնացվի մի այնպիսի միավոր, որն ընդգրկի և՛ բառը, և՛ բառակապակցությունը՝ որպես նախադասության կառուցվածքի մեկ միավոր: Ահա այդպիսի միավոր Ջահուկյանը համարում է շարույթը¹¹³: Քանի որ տարբեր մակարդակային միավորների հարաբերությունը ներառական հարաբերություն է, որի դեպքում յուրաքանչյուր բարձրակարգ միավոր կարող է պարունակել մեկ կամ մեկից ավելի ստորակարգ միավոր, ուստի Ջահուկյանը հրաժարվում է *բառակապակցությունից* որպես անկախ մակարդակային միավորից և որպես

¹¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Շարույթ, Երևան, 1996, էջ 9:

այդպիսին դիտում *շարույթը*: Շարույթը կարող է բաղկացած լինել մեկ կամ մեկից ավելի բառերից, մինչդեռ բառակապակցությունը ենթադրում է մեկից ավելի բառերի կապակցություն, այսինքն՝ բառակապակցությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ շարույթի մի դրսևորումը:

Շարույթի և բառակապակցության տարանջատման հարցն առաջադրվել է դեռևս խորհրդային լեզվաբանության մեջ: Սակայն, ինչպես նշում է Ջահուկյանը, ժամանակակից ուսմունքները շարույթի և բառակապակցության նկարագրության «լրիվություն» չունեն, քանի որ նկատի են առնվում անդամների միայն ստորադասական հարաբերությունները, իսկ համադասական հարաբերությամբ կապվող միավորները դուրս են մնում քննությունից: Համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ հեղինակը լուծում է նաև այս խնդիրը *փոխկադապարման* շնորհիվ, որը ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված *փոխակերպման* գաղափարի հետագա զարգացումն է¹¹⁴: Ըստ փոխկադապարման գաղափարի՝ առանձնացվում են *առաջնային* կամ *համասեռ* և *երկրորդային* կամ *տարասեռ* շարույթներ: Առաջնային շարույթները լիանշանակ բառերն են՝ իրենց սովորական լրացումներով կամ առանց լրացումների: Առաջնային շարույթների անդամների թիվը սահմանափակ է: Երկրորդային շարույթները հենց փոխկադապարված շարույթներն են: Դրանց անդամների թիվը սահմանափակված չէ: Փոխկադապարումը կարող է լինել *ներքին* և *արտաքին*: Ներքին փոխկադապարումը

¹¹⁴ Այս մասին մանրամասն տե՛ս երկրորդ գլխում:

գլխավոր և լրացական անդամների խոսքիմասային փոխանցումն է՝ ըստ «լրացման լրացում ↔ լրացում ↔ լրացյալ» բանաձևի: Արտաքին փոխկադապարումն ունի երկու հիմնական դեպք՝ *համադասում* և *ստորադասում*: Համադասման դեպքում տեղի է ունենում նույն գործառույթն ունեցող անդամների համատեղում, երկրորդի դեպքում՝ շարություններից մեկի գլխավոր անդամի գործառական փոխակերպում և շարության ներմուծում մեկ այլ շարության մեջ: Շարության բնույթը որոշվում է ըստ գլխավոր անդամի բնույթի:

Շարության նորմալ կառուցվածքը որոշվում է **((m1)m)M** բանաձևով, որտեղ **M**-ը լրացյալն է (նշյալը, նշակիրը, մարկատը), **m**-ը՝ լրացումը (նիշը, հատկանիշը, մարկը), **m₁**-ը՝ ենթալրացումը (ենթանիշը, ենթահատկանիշը, սուբմարկատը): Ջահուկյանը բուն շարության անվան տակ հասկանում է *գոյականական շարույթը*, ուստի լրացյալը գոյականն է, լրացումը՝ բուն որոշիչները՝ ածականը և թվականը, ենթալրացումը՝ մակորոշիչները՝ մակածականը և մակթվականը:

Բոլոր կարգի որոշիչները (նաև մակորոշիչները) և փոխակերպմամբ ստացված հատկացուցիչները, բացահայտիչները, ինդիքները, սահմանափակիչները բուն նախադասության անդամներ չեն, այլ շարության կամ բառակապակցության անդամներ: Շարության ինքը, բաղկացած լինի մեկ բառից թե բառակապակցությունից, կատարում է նախադասության մեկ անդամի գործառույթ: Ուստի շարությունների կազմում կարող են տարբերակվել ենթաշարություններ, որոնք միջուկների լրացումներն են՝ իրենց լրացումներով հանդերձ:

Ջահուկյանը ներմուծում է նաև *գերշարույթի* գաղափարը՝ մեկից ավելի շարույթների միացումը մեկ շարույթի մեջ: Այն շարույթները, որոնք, բացի բուն անդամներից, ունեն նաև փոխակերպված անդամներ, Ջահուկյանը կոչում է *լրացված շարույթներ* կամ *գերշարույթներ*, իսկ այն շարույթները, որոնց մեջ կատարված են անդամների տեղաշարժեր, *փոխակերպված (փոխկադասարկված) շարույթներ* կամ *փոխշարույթներ*: Գերշարույթը կարող է բաղկացած լինել և՛ առաջնային, և՛ երկրորդային շարույթներից:

Հեղինակը հստակեցնում է նաև *շարույթի* և *հնչաշարույթի* առանձնացման սահմանները: Հայտնի է, որ չկա իմաստակիր միավորների և նրանց համապատասխանող հնչական միավորների սահմանների լիարժեք համընկնում, ուստի հնչաշարույթը կարող է ընդգրկել մեկից ավելի շարույթներ, ընդմիջարկվել բառերով կամ շարույթներով ևն: Այսինքն՝ պետք է տարբերակել շարույթը որպես երկպլանային, և հնչաշարույթը որպես միապլանային միավոր:

Թվում է՝ շարույթը պետք է կատարի նախադասության մեկ անդամի գործառույթ, սակայն քանի որ առանձնացվում են երկրորդային շարույթներ, ինչպես նաև ուղղագիծ համապատասխանություն չկա շարույթի և հնչաշարույթի միջև, ուստի նախադասության անդամների և շարույթների առանձնացումը չի կարող համընկնել: Հետևաբար՝ շարույթի առանձնացման հիմնական չափանիշը կառուցվածքային է, նախադասության անդամինը՝ շարահյուսական: Շարույթը առանձին մակարդակ է կազմում, իսկ նախադասության անդամը

ցույց է տալիս այն գործառույթը, որով կարող են հանդես գալ շարույթները:

Համեմատելով շարույթը և նախադասությունը՝ հեղինակը նշում է, որ ի տարբերություն նախադասության՝ շարույթի համար ստորոգման հատկանիշը էական չէ: Եթե այն համընկնի նախադասության հետ, ստորոգում կունենա, իսկ եթե չհամընկնի, չի ունենա: Եթե նախադասությունը կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի շարույթից, շարույթն էլ կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառից:

Այսպիսով՝ անդրադառնալով ավանդական քերականության քննությանը, մասնավորապես շարույթի ըմբռնմանը՝ Ջահուկյանը որոշակի ճշգրտումներ է անում և հստակեցնում շարույթի՝ իր ըմբռնումը: Ըստ այդմ՝ շարույթը միջին դիրք է գրավում բառի և նախադասության միջև, այսինքն՝ շարույթը չի կարող փոխարինվել բառակապակցությամբ, կարող է բաղկացած լինել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի բառից, որոնց կապակցման համար ստորոգման հատկանիշը պարտադիր չէ:

ԳԼՈՒԽ 4

ՏԵՐՄԻՆԱՍԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՏԵՐՄԻՆԱՍԵՂԾՄԱՆ ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Գ. Ջահուկյանը հանդես է եկել մի շարք նորամուծություններով ոչ միայն լեզվաբանական տեսության մշակման, տեսական նշանակություն և կարևորություն ունեցող շատ խնդիրների ու հարցերի սպառիչ ձևակերպումով, այլև այս բնագավառում նոր տերմիններ ստեղծելու առումով¹¹⁵: Հեղինակի հայացքների զարգացմանը զուգահեռ՝ որոշակի զարգացում է ապրել նաև տերմինակերտումը: Այսինքն՝ տվյալ հասկացության զարգացումը անմիջական կապ ունի այն արտահայտող տերմինի զարգացման հետ: Ինչպես նշում է Լ. Ղազանյանը, «նոր բառերը ընդհանուր առմամբ ի հայտ են գալիս տարերայնորեն, դրանք կերտող հեղինակներին գտնելը սովորաբար դժվար է: Իսկ նոր տերմինների երևան գալը միշտ էլ պայմանավորված է նոր հասկացության յուրացմամբ»¹¹⁶: Ջահուկյանի աշխատությունները

¹¹⁵ Թե՛ *տերմինային* արժեք ունեցող, թե՛ *անվանակարգային* միավորները պայմանականորեն կոչում ենք *տերմին* ընդհանուր անվանումով չանդրադառնալով տերմինի և անվանակարգի սահմանազատման խնդրին և զանազան տեսակետներին:

¹¹⁶ Լ. Ղազանյան, Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, Ե., 1977, էջ 213-214:

առատ են ընդհանուր լեզվաբանական նոր տերմիններով, որոնք հավանաբար ստեղծվել են աշխատանքի պահին՝ շարադրանքի ընթացքում, լեզվական նոր երևույթներ արտահայտելու, նոր ըմբռնումներն անվանելու կամ միջազգային տերմինաբանությունը հայերեն դարձնելու նպատակով: Չնայած այս ամենին՝ հեղինակի տերմինակերտման առանձնահատկություններին՝ որպես ուսումնասիրության առանձին բնագավառի, բոլորովին անդրադարձ չի եղել: Երբեմն միայն ժամանակակից որոշ հետազոտողներ տարբեր նկատառումներով դիմել են այս կամ այն տերմինի քննությանը: Ատենախոսության սույն գլխում քննության ենք առնում լեզվաբանական նորաստեղծ տերմինների խնդիրը Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում:

Լեզվաբանական տերմիններն ու լեզվաբանական հասկացություններն արտահայտող տերմինային կապակցությունները նախապես քարտազրել ենք Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններից, կազմել Ջահուկյանի գործածած ընդհանուր լեզվաբանական տերմինների բառացանկ, որը, սակայն, սույն աշխատանքում չենք ներկայացնում, ներկայացնում ենք միայն այդ տերմինների տեսական քննությունը՝ հարկ եղած դեպքում անդրադառնալով առանձին հետաքրքրություն ներկայացնող որոշ տերմինների: Քանի որ որոշ աշխատանքներ շարադրված են միայն ռուսերեն, իսկ ինչպես կտեսնենք, Ջահուկյանը նաև ռուսերեն տերմիններ է կերտել, ուստի անդրադառնում ենք ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն նորաստեղծ տերմինների քննությանը:

Գիտության ցանկացած բնագավառի տերմինաբանություն չի կարող միատարր և անփոփոխ լինել: Ժամանակի ընթացքում լեզվական և արտալեզվական որոշակի գործոնների ազդեցությամբ տերմինային ենթահամակարգերում կարող են փոփոխություններ լինել: Լեզվաբանության պատմության մեջ նոր տերմիններ սովորաբար ի հայտ են գալիս որոշակի բնագավառում ունեցած նոր ձեռքբերումների, նոր ուղղությունների և հայեցակարգերի ձևավորման, ինչպես նաև նախկին տեսությունների և ուղղությունների քննադատության շնորհիվ:

Ջահուկյանի աշխատություններում լեզվաբանական նորաստեղծ տերմինների առկայությունը գերազանցապես պայմանավորված է հեղինակի նոր ըմբռնումներով ու հայեցակետով, նոր մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև նոր տեսություն առաջ քաշելու հանգամանքով: Նման տերմինները կարելի է բնորոշել որպես տվյալ տեսության հասկացությունների համակարգի միավորներ: Այսինքն՝ Ջահուկյանի տերմինաբանությունը ընդհանուր առմամբ կարելի է համարել *համընդհանուր լեզվաբանական տեսության տերմինաբանություն*: Այստեղ տեղ են գտել հիմնականում վերացական և ընդհանուր տեսական տերմիններ: Քանի որ նորաստեղծ տերմինները հիմնականում արտահայտում են վերացական հասկացություններ, ըստ խոսքիմասային դասակարգման՝ գերիշխում են գոյականական և ածականական կազմությունները:

Երբեմն լեզվական տվյալ հասկացությունը այնպիսի զարգացում է ապրում, որ հին տերմինի իմաստը հակասում է նոր

ըմբռնմանը, ուստի անհրաժեշտություն է առաջանում հին տերմինի փոխարեն նոր տերմին կիրառել: Այդպիսի տերմիններ կան նաև Ջահուկյանի աշխատություններում. հեղինակը տարբեր պատճառներով առաջարկել է նորաստեղծ տերմիններ: Որպես այդպիսիք կարելի է նշել քերականագիտական որոշ նորաստեղծ տերմիններ, ինչպես՝ *անկապ*, *ստորակապ*, *համակապ* ևն: Հեղինակը համոզված է, որ համադասական շաղկապները հակադրվում են ստորադասական շաղկապներին ճիշտ այնպես, ինչպես կապերին: Հետևաբար՝ առաջարկում է *համադասական* շաղկապները կոչել *համակապ*, իսկ *ստորադասականները*՝ *ստորակապ* տերմիններով:

Բողունն դե Կուրտենեն կարծում էր, որ լեզվաբանության հետազոտական մեթոդները պետք է ավելի ու ավելի մոտենան ճշգրիտ գիտությունների մեթոդներին¹¹⁷. այդպես էլ ժամանակին վարվեց Ջահուկյանը, իսկ դա, բնականաբար, չէր կարող չարտահայտվել տերմինաբանության մեջ. պատահական չէ, որ հեղինակը որոշ տերմիններ փոխառել է ճշգրիտ գիտություններից կամ դիմել է պատճենման միջոցին: Այսպիսով՝ Ջահուկյանի տերմինաբանության մեջ առանձնանում են նաև այնպիսի տերմիններ, որոնք փոխառված են գիտության այլ բնագավառներից՝ որևէ կոնկրետ իմաստով կամ ընդհանուր գիտական նշանակությամբ: Այսպիսի տերմինները, ինչպես կտեսնենք

¹¹⁷ См. у В. С. Минавичев, Фонетическая терминология в трудах И. А. Бодуэна де Куртене, “Лингвистическая терминология и прикладная топонимастика”, Москва, “Наука”, 1964, էջ 7-30:

համապատասխան բաժնում, նորաստեղծ են միայն բովանդակային առումով: Դրանք սովորաբար փոխառված են մաթեմատիկայից, տրամաբանությունից, փիլիսոփայությունից, ինֆորմատիկայից և այլ բնագավառներից, ինչպես օրինակ՝ *կարգ - категория, ընկալցիա - реляция, терм, сигнификатор, транспозитор, транспозиция* ևն: Տերմինների փոխներթափանցումը, ըստ էության, դրական տեղաշարժ է: Ինչպես գիտենք, լեզվի զարգացման ճանապարհներից մեկը հենց փոխառություններն են: Բնականաբար, այս տերմինները նոր իմաստավորում են ստանում Ջահուկյանի տեսության մեջ: Թեև որոշ հետազոտողներ մաթեմատիկական տերմինների ներթափանցումը լեզվաբանության բնագավառ իիստ բացասական են համարում՝ կարծելով, որ դրանք չեն նպաստում լեզվաբանության զարգացմանը և այս ոլորտում չեն կարող յուրացվել¹¹⁸, բայց Ջահուկյանի աշխատություններում դրանց առկայությունը ըստ պատշաճի հիմնավորված և արդարացված է: Օրինակ՝ Ջահուկյանը, անդրադառնալով երկրորդական ձևայինների երկու տիպերին՝ բառակազմական և բառաքերականական, առաջինը կոչում է *транспозитор*, երկրորդը՝ *сигнификатор* տերմինով: Նշենք, որ *сигнификатор* տերմինը լատիներենից թարգմանաբար նշանակում է «ցուցումներ տվող» և աստղագիտության բնագավառի տերմին է, որ կիրառվում է մոլորակի բնորոշման դեպքում: Ինչ վերաբերում է *транспозитор* տերմինին, ապա այն այդ ձևով լեզվաբանական գրականության մեջ առաջին անգամ է հանդիպում: Գիտության մեջ

¹¹⁸ Տե՛ս Օ. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1960, էջ 8:

տարածված է մաթեմատիկական *транспозиция* տերմինը, որ կիրառվում է թե՛ լեզվաբանական, թե՛ երաժշտական գրականության մեջ: Լեզվաբանական գրականության մեջ այն կիրառվում է հետևյալ իմաստով՝ *լեզվական մի ձևի կիրառություն մյուսի փոխարեն*: Ջահուկյանը, փաստորեն նեղացնելով այդ իմաստը, բառակազմական այն ձևույթը, որի շնորհիվ մի խոսքի մասից մեկ այլ խոսքի մաս է կազմվում, կոչել է *транспозитор*, իսկ *транспозиция* տերմինով բնորոշում է կադապարի բաղադրիչների ներքին փոփոխությունը:

Терм-ը մաթեմատիկական-տրամաբանական ոլորտի տերմին է, որ կիրառվում է *որևէ օբյեկտի կամ երևույթի արտահայտում* իմաստով: Ջահուկյանի տեսության մեջ այն կիրառվում է որպես *համընդհանուր լեզվաբանական կադապարի առավել սահմանափակ հասկացությունների ամբողջություն*:

Պետք է նշել սակայն, որ փոխառությունները հայ լեզվաբանական տերմինաբանության մեջ սովորաբար երկար կյանք չեն ունեցել. դրանք հիմնականում հայերեն համարժեքներով են փոխարինվել: Այս ասպարեզում մեծ ներդրում է ունեցել հատկապես Ջահուկյանը: Ինչպես կտեսնենք հաջորդ ենթազվխում, հեղինակն իր աշխատություններում առաջարկել է օտար տերմինների հայերեն համարժեքներ, որոնց մեծ մասը բավական հաջող են և լիարժեք կիրառություն ունեն արդի լեզվաբանական գրականության մեջ: Ընդ որում՝ հաճախ հեղինակը հավասարապես գործածում է թե՛ օտար տերմինը, թե՛ հայերեն համարժեքը: Այսպես, հավասարաչափ կիրառվում են *ատրիբուտիվ* և *գոյորոշող*

տերմինները, *սուբստանցիոնալ* և *հարաբերակցական*, *մոնիզմ* և *միասնություն*, *ինտեգրալություն* և *ամբողջականություն*, *ռեմա* և *վերաբերյալ*, *թեմա* և *ենթահիմք* և այլն:

Հաճախ նորաստեղծ տերմինաբանության մեջ ի հայտ են գալիս որոշակի հակասություններ և անհետևողականություն: Երբեմն դա պայմանավորված է լինում հասկացության ոչ ճշգրիտ ըմբռնումով, երբեմն՝ տարբեր հետազոտողների լեզվամտածողությամբ և հայեցակետով, երբեմն էլ՝ հասկացությունը ոչ լիարժեք արտահայտելու կարողությամբ: Ինչպես գիտենք, տերմինավորման մեջ շատ կարևոր է լինել հետևողական, մոտ հասկացություններ արտահայտող տերմինները չպետք է շփոթել, դրանք պետք է խիստ սահմանազատված կիրառություն ունենան: Ջահուկյանը բազմիցս անդրադարձել է այս խնդրին՝ հատկապես հնչյունաբանության տերմինաբանության կապակցությամբ: Հետևաբար՝ շատ կարևոր է, որ յուրաքանչյուր հետազոտող ներկայացնի իր ստեղծած տերմինի հասկացության սահմանները: Տերմինաստեղծման այս ուղին է ընտրել Ջահուկյանը: Հավանաբար հենց այդ նկատառումն է հիմք հանդիսացել, որ հեղինակն իր գրեթե բոլոր նորաստեղծ տերմինները աշխատել է մեկնաբանել կամ սահմանել: Պատահական չէ, որ իր աշխատությունների թե՛ անմիջական շարադրանքում, թե՛ ծանոթագրություններում հեղինակը ներկայացնում, պատճառաբանում և հաճախ հիմնավորում է այս կամ այն նորաստեղծ տերմինի առկայությունը: Պետք է նշել, որ առանց այդ մեկնաբանությունների գրեթե անհնար կլիներ կողմորոշվել հեղինակի տերմինաբանության մեջ:

Լ. Ղազանչյանը նշում է, որ տերմինի *պատճառաբանվածության-չպատճառաբանվածության* խնդիրը տերմինակազմության օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև տերմինների կերտման գործում ունի կարևորագույն նշանակություն: Այն առնչվում է նաև տերմինների ազգային և միջազգային ձևերի ընտրության, տերմինաբանության մեջ փոխառությունների հարցին¹¹⁹: Ինչ վերաբերում է Ջահուկյանի կերտած տերմինների պատճառաբանվածության-չպատճառաբանվածության հարցին, ապա դրանք գերազանցապես պատճառաբանված են, որն ակնհայտորեն երևում է թե՛ ընդհանուր բառից, թե՛ բառակազմական բաղադրիչներից: Չնայած դրան՝ ինչպես շատ հետազոտողների, այնպես էլ Ջահուկյանի աշխատություններում տեղ են գտել նաև *կամայական նորակազմություններ*: Դրանք հիմնականում պատահական բնույթ են կրում, և դժվար չէ նկատել, որ դրանց կիրառման ոլորտը հեղինակի աշխատությունների սահմանից այն կողմ չի անցնում: Նշենք, որ նմանատիպ տերմինների առկայությունը Ջահուկյանի աշխատություններում երբեմն խճողում է ընդհանուր շարադրանքը, և նման դեպքերում կարելի է անտեղի և ավելորդ համարել դրանց առկայությունը: Այսպես, օրինակ, հեղինակը, ստորադասական նախադասությունների սովորական տիպից բացի, առանձնացնում է ևս երկու տիպ՝ դրանք կոչելով՝ *субстантивно-маркатный тип предложения*,

¹¹⁹ Լ. Ղազանչյան, Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, Ե., 1977, էջ 222:

адъективно-маркный тип предложения: Մրանցից առաջինը հեղինակը բնորոշում է որպես որոշյալ տիպի նախադասություն, երկրորդը՝ որոշիչ տիպի: Այսինքն՝ միանգամայն պարզ է հեղինակի տեսակետը, և կարիք չկա անհարկի ծանրաբեռնել և բարդացնել շարադրանքը:

Ջահուկյանի նորաստեղծ տերմինահամակարգում կան նաև այնպիսի տերմիններ, որոնք իրենց կայուն տեղն ունեն ոչ միայն հեղինակի տերմինահամակարգում, այլև ընդհանուր լեզվաբանական տերմինաբանության բնագավառում: Հետևաբար՝ դրանք անվերապահորեն կարելի է համարել համընդհանուր կիրառելի և ընդունելի, ինչպես՝ *համընդհանուր լեզվաբանական կադապար, հենք (տեքստ), իմակ (սեմա), իմույթ (սեմեմա), քերականույթ (գրամեմա), ձևակ (մորֆ), այլաձևակ (այլոմորֆ)* ևն: Այսպիսով՝ Ջահուկյանի աշխատություններում առկա են և՛ կենսունակ՝ համընդհանուր ընդունելի և կիրառելի, և՛ ոչ կենսունակ՝ կամայական նորաստեղծ տերմիններ:

Երբեմն լեզվական միևնույն երևույթը տարբեր հետազոտողներ տարբեր տերմիններով են կոչում: Այսինքն՝ տերմինավորման համընդհանուր սահմանված չափանիշ չկա, և բնականաբար երբեմն կամայական, երբեմն էլ բավական հիմնավոր, բայց խիստ տարբեր տերմիններ են առաջարկվում միևնույն երևույթի անվանման համար: Սովորաբար դա ի հայտ է գալիս հին կամ ավանդական տերմինները նորերով փոխարինելու հետևանքով: Մակայն լինում են դեպքեր, երբ նմանատիպ երևույթ նկատվում է միևնույն ժամանակաշրջանում գործող հետազոտող-

ների աշխատություններում: Այսպես, օրինակ, կառուցվածքային լեզվաբանության մեջ տարածված *алло-* մասնիկով կազմությունները Է. Աղայանը հայերեն փոխարինում է *ենթ-* ձևով (տե՛ս Է. Աղայանի աշխատություններում), սակայն Ջահուկյանը կողմնակից է բուն իմաստով համարժեքին՝ *այլ-* մասնիկով, ինչպես *алломорф – այլաձևակ*: Ջահուկյանը դեմ է նաև *կոնտեքստ* բառի *խոսքաշար* տերմինին, առաջարկում է *համահենքած* տարբերակը:

Ա. Ռեֆորմատսկին նշում է՝ տերմինները պետք է այնպես կերտված լինեն, որ հնարավոր լինի կազմել նրանց տերմինային փունջը, դրանով են տարբերակվում նաև հաջողված և անհաջող տերմինային կազմությունները¹²⁰: Նշենք, որ Ջահուկյանը բավական հետևողական է եղել նաև այս հարցում: Նոր տերմին ստեղծելիս, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, պետք է հաշվի է առնել ոչ միայն տերմինի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, կապը լեզվի ընդհանուր բառապաշարի օրինաչափություններին, այլև տերմինի դյուրահնչունությունը, կարճությունը, բառաբարդմամբ և ածանցմամբ այլ տերմիններ ու տերմինային կապակցություններ ստեղծելու հնարավորությունը: Հեղինակի առաջարկած տերմիններն այս առումով շատ կենսունակ են: Ավելին՝ երբեմն հեղինակն անձամբ առաջարկել է տերմինային այս կամ այն բառափունջը, ինչպես օրինակ՝ *մարկ- մարկացիա- մարկատ- սուրմարկատ* կամ *առկապ-ստորակապ-համակապ* ևն: Չնայած հեղինակի ստեղծած տերմինները, հատկապես ռուսերեն

¹²⁰ Տե՛ս А. Реформатский, Что такое термин и терминология, Москва, 1959, էջ 14:

տերմինները, բառաբարդմամբ և ածանցմամբ այլ տերմիններ ու տերմինային կապակցություններ կազմելու հնարավորություն ունեն, սակայն, այնուամենայնիվ, շատ խրթին են և բարդ:

Ջահուկյանի տերմինաբանության բնորոշ առանձնահատկություններից է լեզվաբանական միջազգային տերմինները հայերեն համարժեքներով փոխարինելու խնդիրը: Իհարկե, ընդհանուր առմամբ օտար տերմինի հայացումը դրական երևույթ է: Սակայն եթե նկատի ունենանք դրանց անհամեմատ մեծ քանակը Ջահուկյանի աշխատություններում, ապա չենք կարող չնշել, որ դրանց առատությունը իսկապես խրթին ու բարդ է դարձնում հեղինակի խոսքը, և երբեմն դժվարացնում է հեղինակի ըմբռնումների ընկալումը: Բոլորովին չցանկանալով նսեմացնել Ջահուկյանի մեծ դերն ու ներդրումը բազմաթիվ նոր տերմինների, ինչպես նաև հայերեն համարժեքների ստեղծման գործում, այնուամենայնիվ, նշենք, որ հեղինակի աշխատություններում կան որոշ նորաստեղծ տերմիններ, որոնց առկայությունը այնքան էլ արդարացված չէ:

Ամփոփելով պետք է նշել, որ Գ. Ջահուկյանի կերտած լեզվաբանական տերմինները բազմազան են, դրանց մեծ մասը լեզվաբանական գրականության մեջ դեռևս լայն կիրառություն չի գտել, դրանց կիրառման ոլորտը հիմնականում սահմանափակվում է Գ. Ջահուկյանի աշխատություններով: Որպես հավելում նշենք սակայն, որ ժամանակակից ուսմունքների, ուղղությունների, մեթոդների տերմինաբանության մշակման առումով անգնահատելի

Է Ջահուկյանի դերը, քանի որ լեզվաբանական գանազան տերմիններ առաջարկել և կիրառության մեջ է դրել հենց նա:

**Բ. ՆՈՐԱՍՏԵՂԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՎ**

Լեզվաբանական տերմիններն ու լեզվաբանական հասկացություններ արտահայտող տերմինային կապակցությունները, ինչպես նշել ենք, նախապես քարտազրել ենք Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններից: Հայերեն տերմինները համեմատել ենք հայերեն լեզվաբանական բառարանների¹²¹, ռուսերեն տերմինները՝ էլեկտրոնային լեզվաբանական բառարանների¹²² բառամթերքի հետ, առանձնացրել Գ. Ջահուկյանի ստեղծած տերմինները, հարկ եղած դեպքում համեմատել տերմինային նույն իմաստն արտահայտող հայերեն տերմինների հետ, կատարել դրանց դասակարգումը՝ ըստ տարբեր սկզբունքների: Սույն ենթագլխում անդրադառնում ենք լեզվաբանական նորաստեղծ տերմինների քննությանը՝ առաջարկելով հետևյալ դասակարգումները:

¹²¹ Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան; Ա. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան; Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան; Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան:

¹²² <http://dic.academic.ru/>, «Термины и понятия лингвистики: Лексика. Лексикология. Фразеология. Лексикография», «Словарь лингвистических терминов», «Пятиязычный словарь лингвистических терминов», «Словарь лингвистических терминов (Т.В. Жеребило)»:

Դասակարգում՝ ըստ բնագավառի:

Գ. Ջահուկյանի լեզվաբանական հետազոտությունների շրջանակները շատ լայն են, լայն ընդգրկում ունի նաև այդ բնագավառները ներկայացնող տերմինաբանությունը, սակայն նկատի ունենալով հեղինակի ընդհանուր լեզվաբանական աշխատությունները՝ **ըստ բնագավառի**՝ առաջարկում ենք առանձնացնել բուն **ընդհանուր լեզվաբանական** և **քերականագիտական** (լեզվի տեսությանը վերաբերող) տերմիններ:

Առաջին՝ բուն ընդհանուր լեզվաբանական տերմիններ խմբում ընդգրկում ենք այնպիսի տերմիններ, որոնք վերաբերում են լեզվաբանական և տեսական այնպիսի հարցերի, ինչպիսիք են լեզվաբանական կարգերը (կատեգորիաները), լեզվական և արտալեզվական իրակությունների փոխհարաբերությունները, ինչպես նաև տերմիններ՝ վերաբերող լեզվաբանության բաժիններին, լեզվական մակարդակների և ենթամակարդակների դասակարգմանը, լեզվական միավորների ու դրանց տարբերակիչ հատկանիշների առանձնահատկություններին, լեզվաբանական կադապարների տիպերին:

Այս խմբում ենք ընդգրկել նաև համընդհանուր լեզվաբանական կադապարի տերմինաբանությունը՝ սկզբունքների, կարգերի և եզրերի համապատասխան տերմիններով, սակայն նկատի ունենալով դրանց առատությունը՝ դրանց քննությունը ներկայացրել ենք առանձին:

Ջահուկյանը առանձնացնում է լեզու տերմինի երեք հիմնական գործածություն՝ *ընդհանուր*, *առանձին* և *անհատական*, և ըստ այդմ՝ դրանք ուսումնասիրող գիտությունները՝ *панлингвистика*, *монолингвистика*, *идиолингвистика*: Այս երեք գիտակարգերի համար, ըստ բնույթի և նպատակի, առանձնացնում է *инвариантная* (անփոփոխակալյին) և *вариативная* (փոփոխակալյին) տարատեսակները՝ ստանալով վեց լեզվաբանական գիտակարգեր՝ նոր տերմինաբանությամբ՝ *инвариантная панлингвистика*, *вариативная панлингвистика*, *инвариантная монолингвистика*, *вариативная монолингвистика*, *инвариантная идиолингвистика*, *вариативная идиолингвистика*: *Панлингвистика*-ն կոչում է նաև *универсальная теория языка* (լեզվի համընդհանուր տեսություն) կամ *универсальная лингвистика* (համընդհանուր լեզվաբանություն):

Անդրադառնալով լեզվական մակարդակներին և մակարդակային միավորներին՝ Գ. Ջահուկյանն առաջարկում է նոր բաշխում՝ համապատասխան տերմինաբանությամբ, ընդ որում՝ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն տերմինների դեպքում մակարդակային բաժինների և ենթաբաժինների կազմության միասնական սկզբունք է կիրառվում. մակարդակային բաժինները կազմվում են - *գիտություն*, ենթաբաժինները՝ *բանություն* բաղադրիչներով, ռուսերենի դեպքում՝ *-логия* և *-ика* բաղադրիչների կիրառմամբ:

Օրինակ՝ *բան* միավորի համար առանձնացնում է *բանային* մակարդակ և *բանագիտություն* բաժին: Այս համաբանությամբ էլ կազմում է *բանույթային* կամ *բանահիմքային*, *շարային*, *դասույթային*, *շարույթային*, *նախադասական*, *ասույթային*,

լրասույթային, հենքային, հինույթային կամ պարբերային, լիահինույթային մակարդակների և դրանց համապատասխան բաժինների անվանումները՝ արմատաբանություն, բառույթաբանություն կամ հիմքաբանություն, շարագիտություն, դասույթաբանություն, շարույթաբանություն, նախադասագիտություն, ասույթաբանություն, լրասույթաբանություն, հենքագիտություն, հինույթաբանություն կամ պարբերաբանություն, լիահինույթաբանություն¹²³:

Ռուսերենի համար համապատասխանաբար առանձնացնում է лексический уровень և лексикология բաժին: Նույն համաբանությամբ էլ կազմում է մյուս մակարդակների և դրանց համապատասխան բաժինների անվանումները՝ *таксема (շար) - таксематический (շարային) - таксология (շարագիտություն), текстома (պարբերություն/հինույթ) - текстематический (պարբերային/հինույթային) - текстематика (պարբերաբանություն/հինույթաբանություն), синтекстема (լիահինույթ) - синтекстематический (լիահինույթային) - синтекстематика (լիահինույթաբանություն), протасематический (սույլթային) - протасематика (սույլթաբանություն), сентенция (լրասույթ) - симпротасематический (լրասույթային) - симпротасематика (լրասույթաբանություն)* ևն: Ընդ որում՝ այս դեպքում Ջահուկյանը կարևորում է, որ մակարդակների և ենթամակարդակների ներառման հարաբերությունն արտահայտվի

¹²³ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 11-12:

նաև տերմինակազմության մեջ, ինչպես օրինակ՝ *ризематика - сирризематика, текстематика - синтекстематика* ևն:

Երկրորդ՝ **քերականագիտական տերմիններ** խմբում ընդգրկում ենք լեզվի տեսությանը վերաբերող տերմինները՝ սկսած հնչյունաբանությունից մինչև տեքստաբանություն: Թեև լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ քերականագիտական տերմինները սովորաբար ավանդական տերմինների շերտին են պատկանում, բայց Ջահուկյանը նորարար և ստեղծագործ մոտեցում է դրսևորել նաև այս բնագավառում:

Օր.՝ **տեքստ** բառի *հենք, հինվածք, բանվածք, հագնուրդ, հորինվածք, հյուսվածք* և այլ հնարավոր թարգմանություններից Գ. Ջահուկյանը գերադասում է **հենքը**, որից էլ կազմում է **հենքագիտություն, համահենքած** (կոնտեքստ բառի համարժեքը) և **լիահենքած** բառերը: Տեքստի համար առաջարկված *խոսքաշար* տերմինը Ջահուկյանը անհաջող է համարում նախ՝ որպես լեզվի միավոր, երկրորդ՝ խոսքաշարից դժվար է կազմել կոնտեքստ բառի համարժեք. *համախոսքաշար* և *խոսքակապակցություն* ձևերը ևս անհաջող է համարում: Նրա կարծիքով հաջողված չէ նաև **բնագիր** բառը, որովհետև տեքստը կարող է լինել ոչ միայն գրավոր, այլև բանավոր:

Ջահուկյանը նշում է, որ կան **բառույթ** տերմինի տարբեր մեկնաբանություններ, բայց ինքը նկատի ունի *բառակազմորեն ձևավորված (պարզ կամ բաղադրյալ) լրիմաստ* բառը (*գոյականը, ածականը, թվականը, մակբայը, դերանունը, բայը*): Այն մոտավորապես համընկնում է *բառահիմքի* հետ, բայց առնված անկախ

բառաձևից: Գ. Ջահուկյանը առանձնացնում է **արմատահիմք** տերմինը (տե՛ս լեզվի մակարդակներին նվիրված բաժնում):

Առանձնացնում է **հնչաշարույթ** տերմինը. *հնչաշարույթ* ասելով՝ հեղինակը հասկանում է նախադասության՝ հնչական հատկանիշներով վերլուծության արդյունքում ստացված անդամները¹²⁴:

Օր.՝ Օժանդակ բառերի համար առաջարկում է նոր տերմին՝ *прилог*՝ *предлог* և *послелог* բառերից:

Կադապարի բաղադրիչների ներքին փոփոխության համար առաջարկում է *транспозиция* տերմինը, որի մասին խոսել ենք նախորդ ենթագլխում, իսկ նույն մակարդակի երկու կադապարների մասնակի կամ ամբողջական միավորումը մեկ կադապարի մեջ կոչում է *унификация* տերմինով, որը թեև լեզվաբանական գրականության մեջ գործածվող տերմին է, բայց ավելի լայն իմաստով, այն է՝ *որևէ առարկայի, երևույթի մեկ միասնական ձևով արտահայտումը*: Այս երկու տերմիններից էլ Ջահուկյանը համապատասխանաբար առանձնացնում է կադապարների երկու տիպ՝ նոր տերմիններով՝ *транспонированная модель*, *унифицированная модель*:

Բայական շարույթից բացի՝ մյուս տիպի շարույթների լրացումները երկու խմբի է բաժանում և կոչում հետևյալ նոր տերմիններով՝ *наприлагательный вид синтагмы* և *начислительный вид синтагмы*:

¹²⁴ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 121:

Соуровневое словосложение տերմինով կոչում է *բառակազմությունը՝ նույն մակարդակի միավորների հիման վրա, իսկ վերին մակարդակի միավորների հիման վրա՝ межуровневое словосложение*:

Լիահինույթի (синтекстема) ներքին կառուցվածքի համար առաջարկում է *контекстема* տերմինը:

Դասակարգում՝ ըստ կազմության:

Գ. Ջահուկյանի տերմինաստեղծման հիմնական միջոցը մեր լեզվի բառակազմական ներքին հնարավորությունն է: Լեզվաբանական գրականության մեջ սովորաբար լեզվաբանական տերմինները, ըստ կազմության, հետևյալ խմբերի են բաժանվում՝ *պարզ, ածանցավոր, բարդ, բարդ - ածանցավոր, բաղադրյալ*: Մենք ևս առաջնորդվել ենք այս դասակարգմամբ:

Տերմինաբանության այս կամ այն բնագավառը նոր տերմիններով համալրվում է մասամբ նաև լեզվի սովորական բառերի տերմինացման շնորհիվ: Գ. Ջահուկյանի տերմինաբանության մեջ այս սկզբունքով տերմինացվել են որոշ պարզ բառեր: Օրինակ՝ **հենք**, հինելը, գործվածքի երկայնակի ձգվող թելերը, տերմինային իմաստով՝ տեքստ:

Օր.՝ **շար**, շարք, շարան, տերմինային իմաստով՝ բառերի կապակցություն՝ դասույթ, շարույթ:

Պետք է նշել, որ Գ. Ջահուկյանի կողմից առաջարկված նոր տերմինները, որոնք արձանագրված չեն բառարաններում,

հիմնականում կերտված են հայերենի և ռուսերենի բառակազմական ամենակենսունակ կաղապարների համաձայն: Ռուսերեն նոր տեմիները հիմնականում կերտված են նախաձանցմամբ և վերջաձանցմամբ:

Լեզվաբանական տերմինների դերում, ինչպես հայտնի է, խոսքի մասերից գերազանցապես կիրառվում են գոյականները և ածականները (վերջիններս էլ փոխանվանաբար): Հետևաբար, լեզվում գոյություն ունեցող տարբեր խոսքի մասեր կերտող բազմաթիվ վերջաձանցներից լեզվաբանական տերմինների կազմության մեջ հիմնականում հանդես են գալիս գոյականակերտ և ածականակերտ վերջաձանցները:

Նախաձանցավոր հայերեն տերմինների կազմությանը մասնակցել են *ենթ-*, *մակ-*, *առ-*, *համ-*, *հար-*, *նախ-*, *ստոր-* և այլ նախաձանցներ: Նախաձանցները տերմինների կազմության ժամանակ հիմնականում միանում են վերջաձանց ունեցող բառերին: Օրինակ՝ *մակթվական* (թվականի լրացում), *մակածական* (ածականի լրացում), *մակլրացական* (մակածական, մակթվական, առմակբայ), *առմակբայ* (մակբայի լրացում), *համակապ* (համադասական շաղկապ), *ստորակապ* (ստորադասական շաղկապ), *առկապ* (այսպիսով-ի տիպի բառերը և բուն եղանակականները), *համահնչուն* (պանֆոնա), *համահենքած* (կոնտեքստ), *առնախահենք* (երկրորդական առմիջուկային բաղադրիչ), *նախահենք* (հենքի ներածող մասը), *առվերջահենք* (երկրորդական առմիջուկային բաղադրիչ), *ենթահիմք* (թեմա):

Նախաձանցավոր ռուսերեն տերմինների կազմությանը մասնակցել են *гипер-, гипо-, идио-, ин-, кон-, моно-, пан-, сим-+про-, -син-, -социо* և այլ նախաձանցներ և մասնիկներ, որոնք հիմնականում հունալատինական ծագում ունեն, բուն ռուսերեն մասնիկները (*меж-, про-, со-*) հազվադեպ են: Օրինակ՝ *инвариантная монолингвистика, идиоллингвистика, панлингвистика, междуровневая модель, соуровневая (одноуровневая) модель, междуровневое словосложение (միջմակարդակային բառակազմություն՝ կից մակարդակների միավորների միջոցով), соуровневое словосложение (բառակազմություն նույն մակարդակի միավորների միջոցով), протасематика (առարարականություն), симпротасематика (լրատարարականություն), синтекстематический подуровень (լիահի-նությունային ենթամակարդակ):*

Сема տերմինից կազմում է *пансема, идиосема, социосема* տերմինները, ընդ որում՝ *пансема*-ն համընդհանուր լեզվաբանական կաղապարի կարգերի ցանկացած միավորն է կամ եզրը:

Ենթամակարդակային բազմատարր միավորները կոչում է *гиперлексема, гиперсинтагма, гиперсимпротасема, гипертекстема* տերմիններով, իսկ ենթամակարդակային միատարր միավորները՝ *гипотекстема, гиполексема, гипосинтагма, гипосинпротасема*:

Կինետիկ նվազագույն միավորները գիտական զբաղմունքի մեջ ընդունված է կոչել *կին* տերմինով: Երբեմն *фонема* և *морфема* տերմինների համաբանությամբ առանձնացնում են *кинема* և *кинеморф* տերմինները: Սակայն Ջահուկյանը, հնչյունական երևույթների համապատասխան տերմինների

համաբանությամբ, ինչպես *панфон, социофон*, կինետիկ նվազագույն միավորների համար առաջարկում է *идиокин, панкин, социокин* տերմինները:

Վերջածանցավոր հայերեն տերմինների կազմությանը մասնակցում են *-ություն, -ական, -ույթ, -ակ, -յալ* և այլ վերջածանցներ: Օրինակ՝ *իմացարկություն* (պատասխանական բառեր), *վերաբերական* (եղանակական, վերաբերողական-եղանակական բառեր), *հինույթ* (պարբերություն), *ձևակ* (մորֆ), *նշույթ* (маркер), *իմակ* (սեմա), *իմույթ* (սեմեմա), *մենիմույթ* (մոնոսեմ), *երկիմույթ* (դիսեմ), *վերաբերյալ* (ոեմա):

Հայ լեզվաբանական գրականության մեջ հայերեն *-ույթ* և համապատասխանաբար ռուսերեն *-ема* մասնիկներով տերմիններ սկսել են գործածվել խորհրդային շրջանից: Բացառություն չեն կազմում նաև Ջահուկյանի աշխատությունները: Ինչպես նշում է Լ. Ղազանյանը այդ ածանցով կազմված կառույցները հիմնականում արտահայտում են լեզվական տարբեր միավորների կառուցվածքային բնույթը¹²⁵: Ջահուկյանի աշխատություններում, հատկապես փոխառյալ տերմինների հայերեն համարժեքների կերտման դեպքում, գերիշխում են *-ույթ* և *-ակ* ածանցներով կազմությունները:

Վերջածանցավոր ռուսերեն տերմինների կազմությանը մասնակցում են *-ат/ят, -атор/-ятор, -ация, -ема, -ика, -иция, -логия* և այլ վերջածանցներ ու մասնիկներ: Օրինակ՝ *лексема* (*բառույթ*),

¹²⁵ Տե՛ս Լ. Ղազանյան, Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, էջ 288:

протасематика (шапկաթափառություն), протасеология (նախադասագիտություն), таксология (շարագիտություն), тагматика (դասակարգություն), маркация, маркат, релятор, релят, унификация, транспозиция, сигнификатор:

Բառաբարդմամբ կերտվում են *բարդ* և *բարդ - ածանցավոր* տերմինները: Բարդ տերմինների կառույցը մի շարք առավելություններ ունի: Նախ՝ դրանով արտահայտվում են բարդ հասկացություններ: Երկրորդ՝ դրանց շնորհիվ խուսափում ենք բազմիմաստությունից, քանի որ տերմինային իմաստները պատճառաբանված են իրենց բաղադրիչների հիմնական և երկրորդական ձևային արդեն հայտնի իմաստներով: Այս կաղապարը կենսունակ է, և դրա նմուշով ստեղծվում են բազմաթիվ նոր բարդ տերմիններ: Հայերենի համար լեզվաբանական բարդ տերմինների բնորոշ կաղապարը երկանդամ կառույցներն են: Ըստ բաղադրիչների միացման միջոցի՝ բարդ տերմինների մեջ առանձնանում են երկու տիպի կառույցներ՝ *հոդակապավոր* և *անհոդակապ*: Օրինակ՝ **բառախումբ** (խոսքիմասային մեկ արժեք ունեցող բառերի խումբ), **արմատահիմք** (սկզբնահիմք), **բնահենք** (հենքի միջուկ, բուն հենք), **վերջահենք** (հենքի վերջավորող մասը), **շարակարգ** (սինտագմա), **հնչատակտ** (հնչաշարույթ), **անհատահնչյուն** (հնչյունի անհատական դրսևորումը), **հանրահնչյուն** (սոցիոֆոնա):

Ինչպես նշում է Լ. Ղազանյանը, գիտության մի որևէ բնագավառի ամբողջ տերմինների մոտավորապես 70%-ը

բաղադրյալ տերմիններն են¹²⁶: Փաստորեն, ժամանակակից տերմինաբանական համակարգերի բնորոշ գիծը վերլուծականության ձգտումն է (այսինքն՝ բաղադրյալ անվանումների կառուցումը): Գ. Ջահուկյանի լեզվաբանական տերմինների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տերմինների գերակշռող մասը այս կառույցով չեն կերտված, սակայն հեղինակի աշխատություններում տեղ են գտել նաև այդպիսիք: Ըստ բաղադրիչների քանակի՝ տերմինների այս տիպի մեջ առանձնանում են երկանդամ և եռանդամ կառույցներ: Օրինակ՝ *համընդհանուր լեզվաբանական տեսություն, համընդհանուր լեզվաբանական կադապար, հարաբերակցական քերականություն, инвариантная лингвистика, вариативная лингвистика, универсальная теория языка, субстанционно-комбинаторная модель (նյութաշարաբերակցական), идиолингвистическая модель, универсальная лингвистическая модель, идиолингвистическое понятие, монолингвальное понятие, маркационное изменение термов, реляционное изменение термов, унифицированная модель նն*:

Դասակարգում՝ ըստ ձևի և բովանդակության հարաբերակցության:

Առաջարկում ենք Գ. Ջահուկյանի աշխատություններում կիրառված լեզվաբանական տերմինների հետևյալ դասակարգումը՝ **ըստ ձևի և բովանդակության հարաբերակցության**.

¹²⁶ Տե՛ս Լ. Ղազանչյան, Լեզվաբանական տերմինների կառուցվածքա-իմաստային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 8, Ե., 1977, էջ 303:

1. **նորաստեղծ տերմին (նոր ձև, նոր բովանդակություն).**

Օր.՝ *անհատահնչյուն, առկապ, ստորակապ, համակապ, առնակրայ, մակըրացական, մակածական, մակթվական, հինույթ, արմատահիմք, դասույթ, մարկ, մարկատ, մարկացիա, ռեյաստոր, ռեյատ, ռեյացիա, սուբմարկ* և այլն:

Մասնավորապես անդրադառնանք դրանցից մի քանիսին: **Հինույթ** կամ **պարբերություն** ասելով՝ հեղինակը հասկանում է պարբերության և՛ գրավոր, և՛ բանավոր արտահայտությունը որպես *հենքի* (տեքստի) նվազագույն միավոր. **լրահինույթը** կազմված է մեկ կամ ավելի պարբերություններից, ինչպես **լրասույթը**՝ մեկ կամ ավելի ասույթներից, **շարույթը**՝ մեկ կամ ավելի դասույթներից, **դասույթը**՝ մեկ կամ ավելի բառույթներից:

Դասույթ ասելով՝ հասկանում է բառը որպես լիմաստ շարահյուսական նվազագույն միավոր, այսինքն՝ լիմաստ բառը՝ բառույթը՝ իր համադրական և վերլուծական բոլոր ձևերով, որոնցով նա շարակարգային հարաբերության մեջ է մտնում այլ լիմաստ բառերի հետ. բառաձևը դասույթի մի դրսևորումն է, ձևաբանությունը՝ **դասույթաբանության** մի մասը: Ռուսերենի դեպքում առաջարկում է *тагма* (*դասույթ*) տերմինը:

Ջահուկյանի աշխատություններում կիրառվում են նաև հետևյալ նորաստեղծ տերմինները՝ **релятор** (ռեյաստոր), **релят** (ռեյատներ), **реляция** (ռեյացիա), **марк** (մարկ), **маркат** (մարկատ), **маркация** (մարկացիա), **субмарк** (սուբմարկ), **субрелятор** (սուբռեյաստոր): Գիտական գրականության մեջ *релятор* տերմինը կիրառվում է հետևյալ նշանակությամբ՝ բառ կամ նշան, որ կիրառվում է

բազմիմաստ տերմինի իմաստների տարբերակման համար¹²⁷: Սակայն, կարծում ենք, որ Ջահուկյանը այս տերմինները կերտելիս առաջնորդվել է մեկ այլ սկզբունքով, այդ իսկ պատճառով էլ տերմինների այս շարքն ընդգրկել ենք հետևյալ խմբում: Այսպես, անգլերեն *mark* բառն ունի *նշան, տարբերանշան* իմաստը, իսկ *relation* բառը՝ *հարաբերություն*: Կարծում ենք՝ հենց այս բառերն են եղել Ջահուկյանի տերմինների հիմքում, որոնցով էլ վերջածանցման և նախածանցման շնորհիվ հեղինակը կազմել է տերմինների վերոնշյալ փունջը: Ինչ վերաբերում է դրանց հասկացական բնորոշմանը, ապա այն ներկայացված է համընդհանուր լեզվաբանական կադապարի տերմինաբանության մեջ:

Բառույթային/բառահիմքային ենթամակարդակի միավորի համար առաջարկում է *лексема* տերմինը (բառույթ/բառահիմք):

Ասույթ ասելով՝ հասկանում է պարզ նախադասությունը, **լրասույթ** անվան տակ՝ ընդհանրապես նախադասությունը (sentence), ինչպես բարդ, այնպես էլ պարզ:

Ջահուկյանը կարծում է, որ *абзац* (պարբերություն) տերմինն անհաջող է հենքային մակարդակի ենթամակարդակի միավորի համար, քանի որ նկատի է առնվում միայն գրավոր ձևը, ուստի նոր տերմին է առաջարկում՝ կազմելով այն тагма-синтагма, протасема-синпротасема տերմինների կազմության համաբանությամբ՝ *текстема* (պարբերույթ/հինույթ):

¹²⁷ <http://dic.academic.ru/>,

Словарь-справочник терминов нормативно-технической документации.

2. տերմինի վերախմաստավորում (նոր բովանդակություն),

Օր.՝ **Բառախումբ** լեզվաբանական գրականության մեջ սովորաբար նշանակում է *բառերի խումբ, բառակապակցություն*, Գ. Ջահուկյանը այս տերմինը կիրառում է հետևյալ նոր իմաստով՝ *խոսքիմասային մեկ արժեք ունեցող բառերի խումբ*: Օր.՝ «ոչ մի կերպ չեմ կարող» նախադասության մեջ *ոչ մի կերպ* կապակցությունը մակբայական մեկ արժեք ունի, *ոչ միայն – այլև* եռաբառ կապակցությունը՝ շաղկապական մեկ արժեք և այլն¹²⁸:

Նմանապես նոր իմաստավորում է ստացել **բառ-մասնիկ** տերմինը. այն հայտնի էր հետևյալ իմաստով՝ *մասնիկ, ոչ ինքնուրույն քերականական ձևույթ*, որը բառային ձևույթի հետ կազմում է շեշտային միավոր կամ բառ: Գ. Ջահուկյանը նշում է, *քանի որ ավելի-ի տիպի բառերը քերականական մասնիկների դեր են կատարում, դրանք կոչենք բառ-մասնիկներ*¹²⁹:

Կարգ կամ ռուս. **категория** հասկացությունը շատ ոլորտների է բնորոշ, հաճախ կիրառվում է *դաս* տերմինի փոխարեն, Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն հասկացական դաս է, որ ունի բովանդակության և արտահայտության պլան՝ իրենց փոխհարաբերության առանձնահատկություններով, և որը բաղկացած է երկու հակադիր միավորներից՝ եզրերից (терм): Այն ՀԼԿ-ի առավել ընդհանուր հասկացությունների ամբողջությունն է:

¹²⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 120:

¹²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 36:

Терм (եզր) տերմինը ևս կիրառվում է այլ կերպ, քան ընդունված է ժամանակակից գիտության մեջ, որտեղ կիրառվում է *արտահայտություն, բնորոշում* իմաստներով: Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն համընդհանուր լեզվաբանական կադապարի առավել սահմանափակ հասկացությունների ամբողջությունն է, որ կարգերի՝ առավել ընդհանուր հասկացությունների հետ հնարավորություն է տալիս տարբերակել օբյեկտներն իրարից և որոշել դրանց փոխհարաբերության տիպը:

Текстология (հենքագիտություն) տերմինը նույնպես նոր իմաստով է կիրառվում: *Лигвистика текста* և *грамматика текста* տերմինների փոխարեն Ջահուկյանը նախընտրում է այս տերմինը, թեև վերջինս պատմաբանասիրական գիտակարգի տերմին է և ենթադրում է բանասիրական տեքստերի ուսումնասիրում և վերծանում, սակայն Ջահուկյանը այն կիրառում է նոր իմաստով՝ որպես լեզվական բարձրագույն մակարդակի միավորն ուսումնասիրող գիտություն:

3. **օտար տերմինի հայերեն համարժեքի ստեղծում (նոր ձև),**

Օր.՝ *հենք* (տեքստ), *համահնչյուն* (պանֆոնա), *հանրահնչյուն* (սոցիոֆոնա), *համահենքած* (կոնտեքստ):

Ռեմա տերմինի *ասույթ, ասույթի միջուկ* հնարավոր թարգմանությունների փոխարեն կիրառում է **վերաբերյալ** տերմինը:

Սովորաբար Գ. Ջահուկյանի բոլոր աշխատություններում նորաստեղծ տերմինները կամ նոր իմաստավորում ստացած տերմինները սահմանվում են, հաճախ սահմանումները

հաստատվում են համապատասխան օրինակներով: Այսպես, «Универсальная теория языка» աշխատությունն ունի ծանոթագրությունների հարուստ բաժին, որտեղ և հիմնականում ներկայացվում են հեղինակի՝ այս կամ այն տերմինին նախընտրություն տալու հիմնավորումները: Երբեմն իր աշատություններում հեղինակը փակագծում ներկայացնում է տվյալ տերմինի օտար տարբերակը: Նկատվում են դեպքեր, երբ նույն հասկացությունը կամ իմաստը տարբեր աշխատություններում տարբեր տերմիններով է արտահայտվում: Օր.՝ որպես *ինդուկցիա* տերմինի հայերեն համարժեք «Շարահյուսական ուսումնասիրություններ» աշխատության մեջ կիրառում է **ներածում** տերմինը, իսկ մյուս աշխատություններում՝ **մակածում**:

Հստակ չեն նաև **նշույթակիր**, **նշանակիր** և **նշակիր** (նշույթ - маркер), **հնչաշարույթ** և **հնչատակտ**, **հինույթ** և **պարբերություն**, **տեքստագիտություն** և **հենքագիտություն** և այլ տերմինների կիրառման սահմանները:

Լեզվաբանական որոշ տերմինների հայերեն համարժեքներ, որոնք առաջարկել է Գ. Ջահուկյանը, տեղ են գտել Ա. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանում»:

Ամփոփելով նշենք, որ լեզվաբանական այս նորաստեղծ տերմինների համակողմանի քննությունը կարող է նպաստել ոչ միայն Ջահուկյանի լեզվաբանական ըմբռումները ճիշտ ընկալելու, այլև լեզվաբանական միասնական տերմինների հաստատմանը:

**Գ. Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՂԱՊԱՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Տեսության զարգացումը անմիջականորեն կարող է ազդել տվյալ տեսության տերմինների հիմքում ընկած հասկացությունների ըմբռնման վրա: Բացի այդ՝ ինչպես պնդում է Լ. Ղազանյանը, «այս կամ այն տերմինը հասկանալու համար նախ և առաջ պետք է ծանոթ լինել համապատասխան տեսությանը, որից հետո նոր պետք է որոշել այդ իսկ տեսության շրջանակներում տվյալ տերմինի գրաված տեղը»¹³⁰: Հետևաբար՝ Ջահուկյանի լեզվաբանական տերմինները ճիշտ ըմբռնելու և հասկանալու համար պետք է նախ ծանոթ լինել նրա համընդհանուր լեզվաբանական տեսությանը, ապա տերմինակերտման սկզբունքներին: Համընդհանուր լեզվաբանական կադապարի ուսմունքն արդեն քննել ենք համապատասխան գլխում, այժմ անդրադառնանք տերմինաբանությանը:

Ինչպես նշել ենք համապատասխան բաժնում, Ջահուկյանին իր ողջ գիտական գործունեության ընթացքում ուղեկցել է լեզվի և լեզվաբանության ուսումնասիրության ընդհանրական ուսմունք ստեղծելու գաղափարը: Ի վերջո հեղինակը առաջ է քաշում մի այդպիսի ընդհանրական տեսություն, որն իր ողջ գիտական գործունեության ընթացքում հարստացնում, զարգացնում ու

¹³⁰Լ. Ղազանյան, Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, Ե., 1977, էջ 257:

կատարելագործում է: Որպես նոր ուսմունք, լեզվի ուսումնասիրության նոր մոտեցում, բնականաբար, այս տեսությունը ներկայացվում է նոր տերմինաբանությամբ: Բուն տեսությունը Ջահուկյանը կոչում է **համընդհանուր լեզվաբանական տեսություն** բաղադրյալ տերմինով: Այս տեսության հիմքում ընկած է կադապարի գաղափարը, որը հեղինակը համապատասխանաբար կոչում է **համընդհանուր լեզվաբանական կադապար**: Ինչպես բազմիցս նշել ենք, համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ գործ ունենք վերացական հասկացությունների հետ, ուստի տերմինները ածականներ և գոյականներ են: Այս տեսության շրջանակում ներկայացվում են ինչպես նոր տերմիններ, այնպես էլ բազմաթիվ ընդհանուր-գործածական բառեր, որոնք տերմինացել են:

Քննելով Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կադապարի ուսմունքը՝ նկատում ենք, որ որոշ զուգահեռներ կարելի է տանել Լ. Ելմսլի առաջ քաշած գլոսսեմատիկական տեսության հետ՝ ոչ միայն բուն տեսության, այլև տերմինակերտման տեսակետից: Եթե Լ. Ելմսլի գլոսսեմատիկական տերմինների թիվը հարյուրից անցնում է, ապա Ջահուկյանի կերտած տերմինների քանակը կիսով չափ զիջում է (շուրջ 60): Բացի այդ՝ և՛ Լ. Ելմսլը, և՛ Ջահուկյանը առանձնացնում են հինգ էական սկզբունքներ (համապատասխան տերմինաբանությամբ), որոնց հիման վրա կառուցվում է տեսությունը: Ավելին՝ այդ սկզբունքներից երկուսը նույնական են (*ընդհանրականություն, տնտեսում*): Ինչ վերաբերում է Ջահուկյանին, ապա նա *սկզբունքներն* անվանում է հետևյալ տերմիններով՝ *նյութականություն* կամ *սուբստանցիոնալություն*

(*субстанциональность*), *ընդհանրականություն* (*универсальность*), *ամբողջականություն* կամ *ինտեգրալություն* (*интегральность*), *միասնություն* կամ *մոնիզմ* (*монистичность//монизм*), *տնտեսում* (*экономность//экономия*): Այս տերմինների հիմքում ընկած բառերը նոր իմաստավորում չեն ստացել, պարզապես տերմինացման ճանապարհին իմաստը փոքր-ինչ նեղացել է:

Համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ Ջահուկյանը ներմուծում է *փոխկադապարման* (*трансмоделирование*) հասկացությունը, որի հիմքում ընկած է կադապարման գաղափարը, և հասկացվում են կադապարմների անդամների և առանձին կադապարմների փոխադարձ անցումները: Այսպիսով՝ հեղինակը հստակորեն տարբերակում է *փոխկադապարման* (*трансмоделирование*) հասկացությունը *փոխակերպման* հասկացությունից:

Ըստ *լեզու* հասկացության ընդհանրացման աստիճանների՝ Ջահուկյանը լեզվաբանական կադապարմների երեք տիպ է առանձնացնում: Ընդ որում՝ կադապարմների տերմինային անվանումները համապատասխանեցնում է դրանք բնորոշող բնագավառներին, այն է՝ պանլեզվաբանություն – *պանլեզվաբանական կադապար*, մոնոլեզվաբանություն – *մոնոլեզվաբանական կադապար*, իդիոլեզվաբանություն – *իդիոլեզվաբանական կադապար*: Պանլեզվաբանական կադապարները հեղինակը բնորոշում է որպես *ընդհանրական* կամ *համընդհանուր*, հետևաբար՝ նրա աշխատություններում այս երկու հոմանիշ տերմինները հավասարապես կիրառվում են:

Ջահուկյանի տեսության մեջ, ինչպես նշել ենք, մեծ կարևորություն ունեն *հատկանիշ* և *հարաբերություն* հասկացությունները: Հեղինակը այս հասկացություններին առնչվող տերմինաբանական որոշ ճշգրտումներ է կատարել: *Հարաբերությունը* կոչում է **релятор** (ռելյատոր), *հարաբերակցվող օբյեկտները*՝ **релят** (ռելյատներ), իսկ *ռելյատորը* և *ռելյատները* միասին՝ **реляция** (ռելյացիա): Նույն ձևով *հատկանիշը* կոչում է **марк** (մարկ), *հատկանիշով բնորոշվող միավորը*՝ **маркат** (մարկատ), *մարկն* ու *մարկատը* միասին՝ **маркация** (մարկացիա), իսկ *ռելյատորների ռելյատորը*՝ **субрелятор** (սուբռելյատոր), *մարկի մարկը*՝ **субмарк** (սուբմարկ):

Կարգերի եզրերի երկու տիպի փոփոխություններն էլ ներկայացնում է համապատասխան տերմիններով՝ **маркационное изменение термов, реляционное изменение термов:**

ՀԼԿ-ն ներկայացնելով որպես *կարգերի (категория)* և *եզրերի (терм)* ամբողջություն՝ Ջահուկյանն առանձնացնում է կարգերի և եզրերի իմբեր, ինչպես նաև այդ կարգերի բնորոշող հատկանիշները՝ համապատասխան տերմինաբանությամբ: *Կարգ* և *եզր* տերմիններին անդրադարձել ենք տերմինների դասակարգման բաժնում, ուստի այստեղ չենք ներկայացնի: ՀԼԿ-ի տեսության մեջ ի սկզբանե («О принципах построения универсальной лигвистической модели» հոդվածում) առանձնացվում էր կարգերի չորս խումբ՝ **սուբստանցիոնալ - գոյաբանական, տրամաբանական -**

*ինացաբանական, իրադրական, լեզվագործառական*¹³¹:

Սուբստանցիոնալ–գոյաբանական կարգերը դասակարգվում էին՝ ըստ երեք հատկանիշի՝ *նյութականություն, բաղկացականություն, որակայնություն*: Հոգեկան երևույթների նկարագրության համար ներմուծվում է *նշանայնություն* հատկանիշը: Իրադրական կարգերն առանձնացվում են՝ ըստ նշանային կարգերի՝ առանց հատուկ անվանումների: Ինչ վերաբերում է լեզվագործառական կարգերին, ապա առանձնացվում է երեք դրսևորում՝ *անկախ անդամ, կախյալ անդամ, երկրորդ աստիճանի կախյալ անդամ*:

Սկզբնական շրջանում Ջահուկյանը թեև հարստացնում է ՀԼԿ-ի տերմինաբանությունը, բայց այդ շրջանի աշխատություններում տերմինաբանությունը փոքր-ինչ անորոշ և տարերային է: Հետագայում հեղինակն իր առաջ խնդիր է դնում նաև որոշ ճշգրտումներ և ընդհանրացումներ կատարել: Հետևաբար՝ իր հետագա աշխատություններում, հատկապես վերջինում («*Լեզվի համընդհանուր տեսություն*»), բավական ճշգրտված և խնամքով տարորոշված տերմինների ավելի կուռ համակարգ է ներկայացվում: Նյութական առարկաները բնորոշող կարգերը հեղինակն անվանում է *գոյորոշող* կամ *ատրիբուտիվ* (атрибутивные категории), առարկաների հարաբերությունները բնորոշող կարգերը՝ *անգոյորոշող* կամ *անատրիբուտիվ* (субстантивные категории), իսկ նշանային

¹³¹ Ջահուկյանի գիտական ըմբռումները, այդ թվում կադապարի ուսմունքը, ողջ գիտական գործունեության ընթացքում մշակվել և կատարելագործվել է: Բնականաբար տերմինաբանությունը անմասն չէր կարող մնալ, և համապատասխանաբար փոփոխվել են նաև այդ ըմբռումներն արտահայտող տերմինները:

դրսևորումները՝ **նշանային - հոգևոր** կարգեր (знаковые (психические) категории):

Հետագայում կատարվել են նաև կարգերի դրսևորումների և անվանումների, եզրերի և հատկանիշների խմբավորման և դրանց անվանումների ճշգրտումներ: Հեղինակը մանրամասն քննում է բոլոր հնարավոր դեպքերը, առանձնացնում հատկանիշները և դրանցից յուրաքանչյուրի համար համապատասխան տերմին ընտրում: Բոլոր կարգերի և եզրերի համար առաջարկվել են համապատասխան անվանումներ: Ինչպես բազմիցս նշել է Ջահուկյանը, միասնական տերմինային համակարգի մշակումը բավական դժվարություններ է ստեղծել: Ե՛վ հայերենում, և՛ ռուսերենում քերականական կարգերի անվանումները սովորաբար ածականներ են, որոնք կապակցվում են սվյալ կարգի անվանումի հետ: Ջահուկյանը, նկատի ունենալով դա, համանման ձևով կազմել է նաև **եզրերի** ածականական անվանումները՝ դրանք ներկայացնող օբյեկտներին տալով տրամաբանական բնորոշումներ: Այսպես, առանձնացվում է վեց եզր (տերմ)՝ **հիմնական** (основной), **հակադիր** (противоположный), **միջին** (средний), **համատեղական** (совместительный), **անդրադարձ** (рефлексивный /возвратный), **չեզոք** (нейтральный /абсолютный):

Ֆիզիկական օբյեկտները բնորոշող կարգերի համար առանձնացվում է չորս **հատկանիշ**՝ **սյարունակայնություն** (вещественность//пространственность), **բաղկացականություն** (интериорность//содержательность), **հաշվականություն** (качественность//количественность), **վիճակայնություն** (субстантивность):

Հոգևոր երևույթները բնորոշելու համար Ջահուկյանը ներմուծում է հինգերորդ հատկանիշը: Հեղինակի սկզբնական աշխատություններում այս հատկանիշը կոչվում էր *նշանայնություն*, սակայն «*Լեզվի համընդհանուր տեսություն*» աշխատության մեջ նախընտրում է *հոգևոր* (духовность), երբեմն նույնիսկ *նշանային-հոգևոր* տերմինը (знаково-духовность): Այսինքն՝ *նշան* ասելով հասկանում է ոչ միայն օբյեկտի ներքին, այլև արտաքին՝ ֆիզիկական կողմը, ոչ միայն օբյեկտի բնորոշումը, այլև դրա ընկալումը: *Հոգևոր* տերմինը լայն նշանակություն ունի. դրա մեջ ներառվում են և՛ այն ամենը, ինչ բնորոշում է օրգանական կյանքի ֆիզիկական կողմը, և՛ զգայական բոլոր դեպքերը, երբ պատճառահետևանքային կապ է ստեղծվում օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև: Այսինքն՝ *հոգևոր* կարգի (կատեգորիա) հիմքում ընկած են *կախման* և *պատճառի* կարգերը:

Այսպիսով՝ ՀԼԿ- *գոյորոշ* կարգերն են *կազմ* (состав), *թիվ* (число), *կախում* (зависимость), *դաս* (порядок), *ձև* (форма), *չափ* (мера), *ուղղություն* (направление), *տեղ*՝ *դիրք* (позиция/место), *առգոյորոշ* կարգերը՝ *ընթացածն* (качество), *հաճախայնություն* (кратность), *պատճառայնություն* (причинность), *կերպ* (аспект), *տևողություն* (течение), *համեմատություն* (сравнение), *փոփոխություն* (изменение), *ժամանակ* (время): *Նշանային* կարգերը հետևյալն են՝ *ընկալում* (восприятие/познание), *մոդալություն* (модальность), *գիտակցում* (сознание), *մտածողություն* (мышление), *արտահայտություն* (материальная выраженность), *հաղորդակցում* կամ *խոսք* (коммуникация):

Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները

Որպես ամփոփում նշենք, որ լեզվաբանական այս տերմինների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հեղինակի ընդհանուր լեզվաբանական հայացքների համակողմանի ներկայացման տեսակետից: Բացի այդ՝ լեզվաբանական այս տերմինները բուն ընդհանուր լեզվաբանության և քերականագիտության բնագավառների ընդգրկման առումով կարող են առանձին և ծավալուն ուսումնասիրության նյութ դառնալ:

SUMMARY

The aim of this study is to represent G. Jahukyan's role in the field of regulation and specification of some general linguistic issues, origination, and application of linguistic theory and new principles, processing of linguistic methods and demonstrating a series of other questions in a new way. The aim of the research also is to reveal the most profound ideas that will promote the development of not only the Armenologie but also of general linguistic conception. In addition, the objective appreciation of the author's theory is important for the further development of general linguistic issues.

The modernity of the monograph lies in a non-satisfactory research of G. Jahukyan's general linguistic views, as well as the principles of creation of new terms. The works of G. Jahukyan have had great influence on his contemporaries and subsequent generations. The author's general linguistic views are important not only in terms of touching upon theoretical issues but also in the historical development of linguistics. G. Jahukyan proposed new linguistic methods, developed a new concept of language study and critically presented the works of some representatives of structural linguistics.

By undertaking the research of general linguistic views of the distinguished linguist, we have meant the services rendered by G. Jahukyan not only to the development of Armenian but also to international linguistic thought, in the field of giving scientific and accurate solutions to various general linguistic issues. The novelty and practical significance of the monograph lie in the fact, that the present research, being the first attempt of the comprehensive evaluation of G. Jahukyan's general linguistic heritage, can further to form an overall notion about G. Jahukyan scientist. It may be useful to specialists involved in G. Jahukyan's scientific heritage or in the history of general and Armenian linguistics, as well as to the students of professional faculties.

The monograph consists of an introduction, four chapters with the corresponding subchapters, bibliography, and appendixes. The principle underlying the distribution of monograph chapters was Janukyan's grouping and coordination of material, that is, to examine the issues of the linguistic field in such way: the issues of linguistic theory, the issues of linguistic method, the issues of language theory. At the end, the study of the characteristic of term-creation is also represented, that although belongs to the field of linguistic theory, but it is appropriate to examine separately because the volume of term inclusion is wide and refers to different domains.

The introduction presents the goals and issues of the work, the level of issue's exploration, and a small review about G. Jahukyan's general linguistic activity is also represented.

The first chapter (The issues of linguistic theory) consists of three subchapters, represents the acquisitions of the famous linguist, that were made in the field of giving scientific and exhaustive answers to the questions of the linguistic theory. The most attention was paid to Jahukyan's interpretations of some issues, at the same time noticing acquisitions of the modern and further linguistic thought.

The second chapter (The issue of linguistic method. The usage of modeling methods) consists of three subchapters. Referring to the problems in the field of linguistic methodology, G. Jahukyan makes a few observations, is specifying the meanings of terms method, technique, and methodology, carrying out the classification of linguistic methods. G. Jahukyan's conception of modeling is represented, that by gradual development and processing led to the creation of the general linguistic model.

The third chapter (The issues of language theory) consists of five subchapters, represents G. Jahukyan's conception of the issues of language theory. G. Jahukyan has also made innovations in the afore-mentioned domain. Especially memorable are the new classifications of grammatical

categories and parts of speech, new evaluations and definitions of predication, syntagma, voice, pronouns and other linguistic issues.

The fourth chapter (Characteristic of term creation) that consists of three subchapters, represents the issue of newly created linguistic terms in general linguistic works of G. Jahukyan, it is offered the classification of newly created terms according to the domain, according to the structure, as well as according to the form and content ratio.

РЕЗЮМЕ

Цель монографии – представить роль Г. Джаукяна в разработке и применении новой лингвистической теории и принципов описания языка, внедрении новых методов исследования, разъяснении и упорядочении некоторых общелингвистических понятий, новой интерпретации языковых фактов, а также – наиболее полно выявить те идеи ученого, которые реально могут способствовать дальнейшему развитию не только армянского языкознания, но и лингвистической науки в целом. Объективная оценка вклада ученого важна также с точки зрения определения дальнейших задач, стоящих перед современной лингвистикой.

Актуальность монографии обусловлена недостаточной изученностью общелингвистических взглядов Г. Джаукяна, а также принципов и особенностей его терминоворочества в области языкознания. Труды Г. Джаукяна оказали значительное влияние на его современников и лингвистов последующих поколений. Общелингвистические взгляды автора важны не только с точки зрения разработки чисто теоретических вопросов, но также в плане исторического развития лингвистической науки в целом. Г. Джаукян выдвинул новые методы исследования, разработал новую концепцию изучения языка и дал критическую оценку трудов некоторых представителей структурной лингвистики.

Изучение общелингвистических взглядов Г. Джаукяна важно также с точки зрения подчеркивания заслуг выдающегося ученого не только в арменистике, но и в развитии мировой лингвистической мысли в целом, в выдвигании и точных научных решениях многих спорных проблем.

Научная новизна и практическое значение заключаются в том, что настоящее исследование, как первая попытка всестороннего представления и оценки общелингвистического наследия

Г. Джаукяна, будет способствовать дальнейшему изучению научного творчества ученого и в других отраслях языкознания и может представлять определенный интерес для лингвистов, занимающихся общим и армянским языкознанием, а также для студентов филологических факультетов.

Монография состоит из введения, четырех глав с соответствующими разделами, , списка использованной литературы и приложений. В распределении глав исследования лежит джаукяновский принцип рассмотрения лингвистических проблем в следующей последовательности: вопросы теории лингвистики, вопросы методов исследования, вопросы теории языка. Особенности джаукяновского терминотворчества представлены в отдельной главе, т. к. хотя вопросы терминологии относятся к области лингвистической теории, но более целесообразно их отдельное рассмотрение ввиду многочисленности новообразованных терминов и их принадлежности к разным отраслям языкознания.

Во **Введении** представляются цели и задачи исследования, степень изученности вопроса, а также дается краткий обзор общелингвистической деятельности Г. Джаукяна.

Первая глава – “Вопросы теории лингвистики” – состоящая из трех разделов, представляет достижения выдающегося лингвиста в плане исчерпывающего научного разъяснения теоретических вопросов языкознания. Особое внимание уделено оригинальным джаукяновским интерпретациям некоторых вопросов лингвистической теории на фоне современной ему лингвистической мысли и ее последующего развития.

Вторая глава – “Проблема лингвистического метода; применение методов моделирования” – состоит из трех разделов. Рассматривая проблемы в области лингвистической методологии, Г. Джаукян делает ряд ценных наблюдений, уточняет значения терминов *метод*, *методика*, *методология*, дает классификацию методов

лингвистических исследований. В этой главе представляется также джаукяновское понимание моделирования, последовательное развитие которого приводит автора к созданию универсальной лингвистической модели.

Третья глава – “Вопросы теории языка” – состоит из пяти разделов и содержит джаукяновские интерпретации вопросов теории языка. Ученый разработал новые идеи и положения также в этой области. Особого упоминания заслуживают новые классификации грамматических категорий и частей речи, рассмотрение вопросов, связанных с характеристикой различных языковых единиц и явлений, в частности, определением предикации, синтагмы, глагольного залога, сущности местоимения и многих других проблем.

Четвертая глава – “Особенности терминотворчества” – состоящая из трех разделов, посвящена проблеме применения в трудах Г. Джаукяна по общему и армянскому языкознанию многочисленных новых терминов, созданных самим автором. В монографии предложены классификации джаукяновской терминологии по отраслям языкознания, по их словообразовательной структуре, а также по их формально-семантической соотносительности.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Գևորգ Բեգլարի Ջահուկյան», Նյութեր ՀՀ գիտնականների կենսամատենագիտության, հ. 58, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 71 էջ:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան. 2 հատորով, Երևան, «Հայաստան», 1976, հատոր 1, Ա-Ձ, 929 էջ, հատոր 2, Ղ-Ֆ, 1615 էջ:
3. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 401 էջ:
4. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ., 1978, 324 էջ:
5. Խաչատրյան Լ., Բառակազմական և ձևաբանական կադապարները ժամանակակից հայերենում, Երևան, «Զանգակ-97», 2011, 272 էջ:
6. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, ԳԱԱ հրատ., 1987, 375 էջ:
7. Ղազանյան Լ., Լեզվաբանական տերմինների կառուցվածքա-իմաստային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 8, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 139-153:
8. Ղազանյան Լ., Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 200-335:

9. Նազարյան Ա., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, «Ապոլոն» հրատ., 1993, 656 էջ:
10. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, 316 էջ:
11. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 1987, 686 էջ:
12. Պետրոսյան Հ., Գրախոսություն. *Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հատոր I, Երևան, 1960, 635 էջ, հատոր II, Երևան, 1962, 603 էջ, «Պատմաբանասիրական հանդես», ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964, հ. 4, էջ 239-242:*
13. Ջահուկյան Գ., Ընդհանուր և հայ հնչույթաբանության մի քանի հարցեր, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, հ. 1, էջ 3-16:
14. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, «Միտք», 1967, 92 էջ:
15. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 587 էջ:
16. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 319 էջ:
17. Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հտ. 1-2, Երևան, Երևանի համալս. հրատ., 1960-1962, 635 էջ, 602 էջ:

18. Ջահուկյան Գ., Խոսքի մասերի կադապարային դասակարգումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1976, հ. 1, էջ 16-30:
19. Ջահուկյան Գ., Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և նախադասության անդամների ուսմունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևանի համալս. հրատ., 1989, հ. 1, էջ 13-32:
20. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, «Միտք», 1969, 291 էջ:
21. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Երևան - Բեյրութ, «Համագգային», 2000, 406 էջ:
22. Ջահուկյան Գ., Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, «Ասողիկ», 2003, 165 էջ:
23. Ջահուկյան Գ., Շարույթ, Երևան, Գ. Ջոհրապի անվ. արտոնագրվ. համալս. հրատ., 1996, 23 էջ:
24. Ջահուկյան Գ., Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», ՀԿԿ կենտկոմի հրատ., 1985, հ. 1, էջ 29-32:
25. Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, ԵՂՀ հրատ., 1954, 396 էջ:
26. “Из трудов А. А. Шахматова по современному русскому языку”, Москва, Гос. учебно-пед. издат. мин. просв. РСФСР, 1952, 270 с.

27. “Лингвистический энциклопедический словарь”, Москва, Ин-т языкознания АН СССР, Сов. энцикл., 1990, 682 с.
28. “Новое в лингвистике”, т. 4, Москва, “Прогресс”, 1965, 590 с.
29. “Основные направления структурализма”, Москва, “Наука”, 1964, 360 с.
30. Апресян Ю., Идеи и методы современной структурной лингвистики, Москва, “Просвещение”, 1966, 305 с.
31. Ахманова О., Словарь лингвистических терминов, Москва, “Советская Энциклопедия”, 1966, 608 с.
32. Блумфилд Л., Язык, Москва, “Прогресс”, 1968, 608 с.
33. Бондаренко А., Грамматическая категория и контекст, Ленинград, “Наука”, 1971, 116 с.
34. Будагов Р., Очерки по языкознанию, Москва, Изд. Академии наук СССР, 1953, 279 с.
35. Виноградов В., Памяти академика Льва Владимировича Щербы (1880-1944): Сборник статей. Л.: Изд-во Ленинградского гос. ун-та им. А. А. Жданова, 1951, 320 с.
36. Головин В., Введение в языкознание, Москва, “Высшая школа”, 1966, 329 с.
37. Джаукян Г., Общее и армянское языкознание, Ереван, АН Арм. ССР. Ин-т языка им. Р. Ачаряна, 1978, 334 с.
38. Джаукян Г., Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике, Москва, “АН РФ”, 1999, 315 с.
39. Джаукян Г., О соотношении лингвистических единиц и их различительных признаков, “Теоритические и практические вопросы преподавания иностранных языков”, Москва, “Наука”, 1970, с. 7-22.

40. Ельмслев Л., Прологомены к теории языка, “Новое в лингвистике”, вып. 1, Москва, Издательство иностранной литературы, 1960, 464 с.
41. Есперсен О., Философия грамматики, Москва, Издательство иностранной литературы, 1958, 400 с.
42. Лайонз Дж., Введение в теоретическую лингвистику, Москва, “Прогресс”, 1978, 544 с.
43. Мартине А., Основы общей лингвистики, “Новое в лингвистике”, вып. 3, Москва, Издательство иностранной литературы, 1963, 568 с.
44. Матезиус В., О так называемом актуальном членении, “Пражский лингвистический кружок”, Москва, “Прогресс”, 1967, с. 239-245.
45. Мещанинов И., Члены предложения и части речи, Москва-Ленинград, Изд-во АН СССР, 1945, 321 с.
46. Минавичев В., Фонетическая терминология в трудах И. А. Бодуэна де Куртенэ, “Лингвистическая терминология и прикладная топонимастика”, Москва, “Наука”, 1964, 133 с.
47. Мовсесян А., Рец. на кн.: Джаукян Г., История языкознания, т. 1-2, Ер., 1960-1962, т. 1, 1960, 635 с.; т. 2, 1962, 602 с., “Вопросы языкознания”, 1965, № 5, Москва, Изд. Академии наук СССР, с. 133-137.
48. Реформатский А., Что такое термин и терминология, Москва, “Наука”, 1959, с. 4-28.
49. Реформатский А., Введение в языкознание: Учебник для вузов, Москва, “Просвещение”, 1967, 544 с.
50. Смирницкий А., Морфология английского языка, Москва, Изд-во литературы на иностранных языках, 1959, 440 с.

51. Смирницкий А., Объективность существования языка, материалы к курсам языкознания, Москва, Изд. Московского университета, 1954, 34 с.
52. Соссюр Ф. де, Курс общей лингвистики, Екатеринбург, Изд-во Урал. ун-та, 1999, 432 с.
53. Соссюр Ф. де, Труды по языкознанию, Москва, “Прогресс”, 1977, 695 с.
54. Степанов Ю., Методы и принципы современной лингвистики, Москва, “Наука”, 1975, 313 с.
55. Степанов Ю., Туманян Э., Рец. на кн.: Джаукян Г. Б. Общее и армянское языкознание, “Известия Академии наук СССР. Серия литературы и языка”, т. 39, н. 2, Москва, “Наука”, 1980, с. 174-177.
56. Хамоян М., Новое в армянском и общем языкознании, «Պատմաբանասիրական հանդես», Изд. Академии наук ССРА, 1979, н. 4, с. 278-281.
57. Хемп Э., Словарь американской лингвистической терминологии, Москва, “Прогресс”, 1964, 264 с.
58. Хомский Н., Аспекты теории синтаксиса, Москва, Изд-во Моск. ун-та, 1972, 129 с.

59. Gleason H. A., An introduction to descriptive linguistics, Holt, Rinehart and Winston, 1961, 503 p.
60. Harris Z., The transformational model of language structure, «Antropological Linguistics», 1959, vol. 1, N 1, p. 27-29.
61. Hockett Ch., Problems in morphemic analysis, «Language», Vol. 23, No. 4, «Linguistic Society of America», Oct. - Dec., 1947, p. 321-343.

62. Hockett Ch., Two models of grammatical description. «Word», vol. 10, N 2-3, Washington, D.C., 1954, p. 210-231.
63. Koutsoudas A., The morpheme reconsidered, IJAL, vol. 29, N2, The University of Chicago Press, 1963, p. 160-170.
64. Sapir E., Sound patterns in language, «Language», 1925, vol.1, N 2, p. 37-51.
65. Trager G., The field of linguistics, “Studies of linguistics (Occasional papers 1)”, Norman (Oklahoma), Battenburg press, 1949, p. 8.
66. <http://dic.academic.ru/>, Словарь-справочник терминов нормативно-технической документации, academic.ru, 2015.
67. <http://dic.academic.ru/contents.nsf/lingvistic/>, Розенталь Д. Э., Теленкова М. А., Словарь лингвистических терминов, Словарь-справочник лингвистических терминов, Изд. 2-е., Москва, “Просвещение”, 1976.
68. <http://dic.academic.ru/contents.nsf/marusov/?f=YWNjbw%3D%3D&t=YWdnZQ%3D%3D&nt=90>, Ж. Марузо, Словарь лингвистических терминов, Москва, Издательство иностранной литературы, 1960.
69. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/3407/%D0%A1%D0%A2%D0%A0%D0%A3%D0%9A%D0%A2%D0%A3%D0%A0%D0%90, “Философская энциклопедия” в 5-х т., Москва, «Советская энциклопедия», под редакцией Ф. В. Константинова, 1960-1970.
70. http://homepages.tversu.ru/~ips/Hist_06.htm#6.1, Сусов И. П., История языкознания, Москва, 2006.

71. <http://les.academic.ru/174/%D0%92%D0%B0%D0%BB%D0%B5%D0%BD%D1%82%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>,
,
Лингвистический энциклопедический словарь, Москва, Советская энциклопедия, Гл. ред. В. Н. Ярцева, 1990.
72. http://lexicology_dictionary.academic.ru/, Жеребило Т., Термины и понятия лингвистики: Лексика. Лексикология. Фразеология. Лексикография, Словарь-справочник, Назрань, “Пилигрим”, 2011.
73. http://lingvistics_dictionary.academic.ru/, Жеребило Т., Словарь лингвистических терминов, Изд. 5-е, исправлено и дополнено, Назрань, Изд-во “Пилигрим”, 2010.

Հավելված 1

Լեզվաբանության պատմության շրջանաբաժանումը

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ		
Ստատիկ - վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան. հին լեզվաբանություն (լեզվաբանական գիտելիքների սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջ)		
	Ենթաշրջանի անվանումը և ժամանակաշրջանը	Նկարագրությունը
1	Ապոստերիորիստական իզոյացիոնիզմ (հին դարեր)	Սկիզբ առնող լեզվաբանական գիտելիքները հանդես են գալիս իրարից գրեթե անկախ կենտրոններում (երկրներում) և առանձին բնագավառներում (լեզվի ու գրի ուսուցում, փիլիսոփայություն, բանասիրական աշխատանք):
2	Ապրիորիստական դոգմատիզմ (միջին դարերից մինչև վաղ միջնադար)	Տեղի է ունենում լեզվաբանական գիտելիքների որոշ փոխանցում ազդեցության մի քանի սահմանափակ ոլորտների ներսում և դրանց ենթարկում եկեղեցու և իշխող կրոնական գաղափարախոսության պահանջներին:
3	Էմպիրիկ- տեխնիկական, ռացիոնալիստական ունիվերսալիզմ (վերածնության շրջան և 13-18-րդ դարեր)	Աստիճանաբար հաղթահարվում են ինչպես լեզվաբանական ազդեցության ոլորտների սահմանափակությունը, այնպես էլ եկեղեցու և կրոնի կաշկանդող ազդեցությունը, մեծանում են լեզվաբանական աշխատանքի շրջանակները:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ		
Պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման շրջան. նոր լեզվաբանություն (XIX դ.)		
	Ենթաշրջանի անվանումը և Ժամանակաշրջանը	Նկարագրությունը
1	Ծագումնաբանական (գենետիկական) կումպարատիվիզմ (19-րդ դարի կեսը)	Հանդես է գալիս պատմահամեմատական լեզվաբանությունը՝ որպես փիլիսոփայությունից, բանասիրությունից և լեզվի դպրոցական գործնական ուսուցումից անկախ բնագավառ՝ իր ուրույն խնդիրներով ու մեթոդով, լեզվաբանության ուշադրության կենտրոնում գտնվում են ծագումնաբանական խնդիրները:
2	Վերականգնողական (ռեկոնստրուկտիվիստական) կումպարատիվիզմ (19-րդ դարի երրորդ քառորդը)	Մի կողմից բնական գիտությունների (կենսաբանության) և հոգեբանության, մյուս կողմից՝ լեզուների համեմատության ուղղությամբ կուտակված նյութը տեղաշարժեր են առաջ բերում պատմահամեմատական լեզվաբանության զարգացման բնագավառում: Փորձ է արվում պարզել համեմատվող նախաձևերը և վերականգնել համեմատվող լեզուներին ծնունդ տված հիմք-լեզուները:
3	Օրինասահմանչական (նոմոթետիկական) էվոլյուցիոնիզմ	Մի կողմից բնական գիտությունների բնագավառում կատարված հայտնագործությունները,

<p>(19-րդ դարի վերջին քառորդը)</p>	<p>հոգեբանության հետագա նվաճումները, մյուս կողմից՝ լեզվաբանության մեջ մի շարք կարևոր հնչյունական օրենքների հաստատումը ստեղծում են այն համոզմունքը, որ լեզվաբանությունը կարելի է համարել ճշգրիտ օրենքներով առաջնորդվող գիտություն:</p>
------------------------------------	---

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ									
Միաստեմային-վերլուծական լեզվաբանության ձևավորման շրջան. Ժամանակակից լեզվաբանություն (XX դ.)									
Ենթաշրջանի անվանումը և Ժամանակաշրջանը									
Նկարագրությունը									
1	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="text-align: center; vertical-align: middle;">Նախաստվետական, արտասահմանյան լեզվաբանություն</td> <td style="text-align: center; vertical-align: middle;">1.1</td> <td style="text-align: center; vertical-align: middle;">Ֆունկցիոնալիստական սինթոնիզմ (20-րդ դարի սկզբից մինչև 20-ական թվականներին)</td> <td>Գրեթե բոլոր լեզվաբանական ուղղությունները հանդես են գալիս 19-րդ դարի վերջին քառորդում տիրապետող երիտքերականական ուղղության միակողմանի պատմականության, լեզվի ամբողջականության տրոհման (ատոմիզմի), նեղ էմպիրիզմի քննադատությամբ:</td> </tr> <tr> <td style="text-align: center; vertical-align: middle;">Կառուցվածքային (ատրուկտուրային) դեմիստացիոնիզմ (20-րդ դարի 20-ական թվականների վերջերից մինչև 20-րդ դարին)</td> <td style="text-align: center; vertical-align: middle;">1.2</td> <td></td> <td>Լեզվի կառուցվածքային իմանենտքնությունը համարվում է լեզվաբանության միակ հիմնական բնագավառը և սահմանազատում լեզուն այլ երևույթներից ու լեզվաբանությունը այլ գիտություններից: Ձևավորվում են լեզվաբանության և այլ գիտությունների միջև կանգնած մի շարք միջգիտակարգեր:</td> </tr> </table>	Նախաստվետական, արտասահմանյան լեզվաբանություն	1.1	Ֆունկցիոնալիստական սինթոնիզմ (20-րդ դարի սկզբից մինչև 20-ական թվականներին)	Գրեթե բոլոր լեզվաբանական ուղղությունները հանդես են գալիս 19-րդ դարի վերջին քառորդում տիրապետող երիտքերականական ուղղության միակողմանի պատմականության, լեզվի ամբողջականության տրոհման (ատոմիզմի), նեղ էմպիրիզմի քննադատությամբ:	Կառուցվածքային (ատրուկտուրային) դեմիստացիոնիզմ (20-րդ դարի 20-ական թվականների վերջերից մինչև 20-րդ դարին)	1.2		Լեզվի կառուցվածքային իմանենտքնությունը համարվում է լեզվաբանության միակ հիմնական բնագավառը և սահմանազատում լեզուն այլ երևույթներից ու լեզվաբանությունը այլ գիտություններից: Ձևավորվում են լեզվաբանության և այլ գիտությունների միջև կանգնած մի շարք միջգիտակարգեր:
Նախաստվետական, արտասահմանյան լեզվաբանություն	1.1	Ֆունկցիոնալիստական սինթոնիզմ (20-րդ դարի սկզբից մինչև 20-ական թվականներին)	Գրեթե բոլոր լեզվաբանական ուղղությունները հանդես են գալիս 19-րդ դարի վերջին քառորդում տիրապետող երիտքերականական ուղղության միակողմանի պատմականության, լեզվի ամբողջականության տրոհման (ատոմիզմի), նեղ էմպիրիզմի քննադատությամբ:						
Կառուցվածքային (ատրուկտուրային) դեմիստացիոնիզմ (20-րդ դարի 20-ական թվականների վերջերից մինչև 20-րդ դարին)	1.2		Լեզվի կառուցվածքային իմանենտքնությունը համարվում է լեզվաբանության միակ հիմնական բնագավառը և սահմանազատում լեզուն այլ երևույթներից ու լեզվաբանությունը այլ գիտություններից: Ձևավորվում են լեզվաբանության և այլ գիտությունների միջև կանգնած մի շարք միջգիտակարգեր:						
2	<p>Սովետական լեզվաբանություն (20-րդ դար)</p>	Ձևավորվում է մարքսիստական դիալեկտիկամատերիալիստական փիլիսոփայության հիմքի վրա՝ իր զարգացման ընթացքում հաղթահարելով իդեալիստական և վուլգար մատերիալիստական կոնցեպցիաների ազդեցությունը:							

Հավելված 2

Շրջանաբաժանման բնութագրերը

Լեզվի քննության հատկանիշներ	Առաջին շրջան	Երկրորդ շրջան	Երրորդ շրջան
1.Ըստ ժամանակային գործոնի հաշվառման	Ստատիկ (ստատիկ, սինխրոնիկ)	Պատմական (խտորիկ, դիախրոնիկ)	Կառուցվածքային-ժամանակագրական (ստրուկտուրային խրոնոլոգիկ, պանխրոնիկ)
2.Ըստ նյութի քննության տիրապետող մեթոդի	Ստատիկ-վերլուծական (ստատիկ-անալիտիկ)	Համեմատական (կոմպարատիվիկ)	Միստեմային-վերլուծական (սիստեմային անալիտիկ, պոլիսպերացիոնալիկ)
3.Ըստ լեզվի կառուցվածքային տարրերի փոխհարաբերության	Միասնակա-նությունը և համադրականությունը (ինտեգրիկ և սինթետիկ)	Տրոհայնությունը (ատոմիկ)	Միստեմայնությունը ու զուգաձևությունը (սիստեմատիկ և իզոմորֆիկ)
4.Ըստ լեզվական վերլուծության հիմնական միավորների բնույթի	Բառատառային (լեքսիկ, էլեմենտիկ, լիտերիկ, ստեյխիկ)	Արմատահնչյունային (ռադիցիկ և ֆոնետիկ)	Ձևային (մորֆեմատիկ և ֆոնոլոգիկ)
5.Ըստ որևէ կոնկրետ դրսևորման	Բանասիրական-գրային (ֆիլոլոգիկ)	Բանավոր-խոսքային (ֆոնացիոնիկ)	Ֆունկցիոնալ-տարբերակված (ֆունկցիոնալ

Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները

(բնագավառի)			դիֆերենտիզմ)
6.Ըստ ուսումնասիրության նպատակի	Նորմատիվ (նորմատիվիզմ)	Ծագումնաբանական (գենետիզմ)	Նկարագրական (դեսկրիպտիվիզմ, էքսպլիկատիվիզմ)
7.Ըստ լեզվաբանության առարկայի տարածական ընդգրկման և ընդհանրացման աստիճանի	Առանձնական (սինգուլարիզմ)	Մասնական (պարտիկուլարիզմ)	Ընդհանրական (ունիվերսալիզմ, գեներալիտիվիզմ)
8.Ըստ լեզուների փոխհարաբերության ըմբռնման ու մեկնաբանության	Մեկուսացված (իզոլյացիոնիզմ)	Ծագումնաբանական-համեմատական (գենետիկական կոմպարատիվիզմ)	Ընդհանրական տիպաբանական-ծագումնաբանական (տիպոլոգիական-գենետիկական ունիվերսալիզմ)
9.Ըստ լեզվի ու հարակից երևույթների և լեզվաբանության ու իմացության մյուս բնագավառների կապի և դրա ըմբռնման	Չտարրորոշված (սինկրետիզմ)	Կախյալ (դեպենդենտիզմ)	Անկախ ու ինքնակա (ինդեպենդենտիզմ և իմանենտիզմ, դելիմիտատիվիզմ)
10.Ըստ լեզվի և մտածողության ու	Նույնացված (իդենտիֆիցիզմ)	Տարբերակված (դիֆերենտիզմ)	Հարաբերակցված (ռելյացիոնիզմ)

գիտակցության փոխհարաբերության ըմբռնման և մեկնաբանության			
11.Ըստ տեսության մշակման տիրապետող մեթոդի	Դեդուկտիվիզմ	Ինդուկտիվիզմ	Հիպոթեզիզմ
12.Ըստ արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության ըմբռնման	Մոնիզմ	Մեխանիցիզմ	Ինտերոբյացիոնիզմ
13.Ըստ արտահայտության պլանի հիմնական միավորի ընտրության	Ստոյխիզմ	Ֆոնիզմ	Ֆոնեմատիզմ
14.Ըստ շարահյուսական կառուցվածքի հիմնական միավորի ընտրության	Սինտագմատիզմ	Պրոպոզիցիոնալիզմ	Ռեյացիոնիզմ

Հավելված 3

Համընդհանուր լեզվաբանական կադապարի կարգերի հատկանիշները

	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ			
	Պարունակայնություն	Բաղկացականություն	Հաշվականություն	Վիճակայնություն
Կազմ	+	+	+	+
Ընթացաձև	+	+	+	-
Թիվ	+	+	-	+
Հաճախայնություն	+	+	-	-
Կախում	+	-	+	+
Պատճառայնություն	+	-	+	-
Դաս	+	-	-	+
Կերպ	+	-	-	-
Ձև	-	+	+	+
Տևողություն	-	+	+	-
Չափ	-	+	-	+
Համեմատություն	-	+	-	-
Ուղղություն	-	-	+	+
Փոփոխություն	-	-	+	-
Դիրք (տեղ)	-	-	-	+
Ժամանակ	-	-	-	-

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐԻ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

The National Academy of Sciences of the Republic of Armenia
H.Acharian Institute of Language

MERI A. SARGSYAN

GENERAL LINGUISTIC VIEWS OF G. JAHUKYAN

Национальная академия наук Республики Армения
Институт языка имени Р. Ачаряна

МЕРИ А. САРГСЯН

ОБЩЕЛИНГВИСТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ

Г. ДЖАУКЯНА



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, Թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 200
Ք. Երևան, Մայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ISBN 978-9939-50-381-3



9 789939 503813